281.6

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑ



ՅՈՒՆԻՍ - ՅՈՒԼԻՍ

1994

ՀՏ

ՏԱՐԻ

ԵՐԱՐՈՒՅՑ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յովհաննու – Յովելեան

1994

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1874042 72-95

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Սուրբ Հոգու կենսաւորող շնորհների ներքո, մի՛շտ նախանձախնդիր ոգով, Հայ Եկեղեցին շարունակում է քրիստոնեական քարոզչությունը, նրա հայացումը, սակայն, առանց կղզիացման քրիստոնեական ընդհանրական մեծ ընտանիքից:

Ինչպես Հոգեգալստյան նշանավոր օրվան, երբ «բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել... Աստծո մեծագործություններ մասին», այնպես էլ այսօր Ս. Հոգու գալստյան մեծահամբավ տոնի առթիվ բացենք մեր հոգիները Ս. Հոգու շնորհների հանդեպ և ականջալուր լինենք Պետրոսի խրատխուսիչ աստվածաշունչ խոսքերին. «Ապաշխարեցե՛ք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը, որովհետև խոստումը ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռավորների համար, որոնց կկանչի մեր Տեր Աստվածը» (Գործք Բ 38—39):

Քրիստոսի համբարձումից հետո Ս. Հոգին ստանձնեց միխթարչի և առաջնորդի առաքելությունը:

Քրիստոսից հետո մենք չմնացինք մենակ ու լքված, նա մեզ առաքեց երկնային Հոր Ս. Հոգին. այդ Ս. Հոգով է, որ մենք շարունակում ենք ապրել, աղոթել, սիրել և **սիրո հաղորդակցության** մեջ մնալ: Սուրբ Հոգին անսպառ աղբյուրն է, «յորմէ բաշխի տիեզերականն շնորհք»:

Կենդանարար Ս. Հոգին շարունակում է բողբոջեցնել մեր սրտերում երկնային Տիրոջ վառ ու անսպառ սերը: Սիրո հոգին շարունակում է շաղկապել մեր սրտերը, զի մե՛կ ենք Ս. Հոգով և ամբողջական ենք Քրիստոսի խորհրդավոր մարմնով: Նա սրբազան հաղորդություն է սիրո մեջ և ճանաչումն այդ սիրով հաստատված միաբանական կյանքի:

Այդ Սուրբ Հոգով է, որ շարունակում ենք հավատալ Քրիստոսին և մընալ քրիստոնյաներ աշխարհի վրա:

Նա մեր երկրային կյանքի ճշմարիտ ուղեցույցն է.

— Օրհնեա՛լ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Եվ երկնային կյանքի սրբանորոգ առաջնորդը.

— Սուրբ Հոգին կենդանարար, գովեցէ՛ք:

Այսօր էլ, նույն կենդանապարգև զորությամբ, առաջնորդն ու մղիչն է ընդհանրական Եկեղեցվո, շնորհողն ու քավիչը: Մեր սրտերին թարմություն ու պարզություն ափողն ու կենդանացուցիչը, համայնն ու ընդհանրականը: Կյանքը խմորողն ու օծողը, կյանքի ամենաբուժ պարգևիչը.

Սուրբ, սուրբ, սուրբ Հոգի, լի՛ ես երկինք և երկիր, ինչպես նաև մեր սրտերը քեզանով:

Բխումն ի Հօրէ,—մեր սրտերից բիւեցրու քեզ հաճելի խոսքեր ու գործեր, քեզ փառաբանելու երգեր ու հիմներ, քանզի առանց քո շնորհների կյանքը կդառնա նանիր ու տարտամ. «Աղբիւր կենաց՝ բաշխող շնորհաց Հոգիդ իջեալ ի բարձանց, զանապական պարգևս քո բաժանեցեր յառաքեալսն» (Շարակնոց), այսօր էլ շարունակիր քո շնորհները ափռել մեզ վրա:

Մեր աղաչանքը քեզ շնորհաբեր Ս. Հոգի.
Ուղարկի՛ր մեզ վրա քո խնդությունը,
որ է արագավազ ու կազդուրիչ.
քո միսիթարությունը, որ է հանդարտող ու ամոքիչ.
քո շռայլությունը, որ է հարստացնող ու պարգևիչ.
քո զորությունը, որ է գոտեպնդող ու զննիչ.
Օծի՛ր մեզ ներսից ու դրսից քո համբույրներով.
Օ՜, ամենազոր Ս. Հոգի, համազոր երկնային Հոր
և փառավորակից Տեառն մերո և Փրկչին Հիսուսի
Քրիստոսի:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գոհունակությամբ հայտնում ենք, որ ս. թ. Հունիսի 8-ին Փարիզից Մայր Աթոռ վերադարձավ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը Փարիզում բժշկական քննությանց ենթարկվեց Փարիզի հայտնի «Հոթել Դիյո» հիվանդանոցում՝ ուղղակի հսկողության ներքո Պրոֆեսոր Բերնադուի: Բժշկական ստուգումները կատարվելուց հետո, Պրոֆեսոր Բերնադուի հանձնարարությամբ Վեհափառը վերադարձավ Հայաստան՝ շարունակելու իր բուժումը Պրոֆեսորի ցուցումներով:

Վեհափառ Հայրապետին «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորելու էին եկել ՀՀ Կառավարության վարչապետ Տիար Հրանտ Բագրատյանը և Սբ. Էջմիածին վանքի բարձրաստիճան հոգևորականներ:

Հայոց Հայրապետին մաղթում ենք քաջառողջություն և երկար կյանք:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
10 Հունիս 1994

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետը իր ջերմագին շնորհակալություն է հայտնում Մայր Աթոռիս բարերարներ Տիարք Ճորճ և Ճոնի Քյուրքճյաններին, այն բացառիկ հոգատար վերաբերմունքի համար, որ վայելեց Նորին Սրբությունը՝ նրանց կողմից Փարիզի Hôtel Dieu հիվանդանոցում գտնված ժամանակ Պրոֆ. Բերնադուի տևական հսկողության ներքև: Վեհափառ Հայրապետը իր մասնավոր գնահատանքն է հայտնում Տիար Ճորճ Քյուրքճյանին և Տիկին Դայանա Քյուրքճյանին՝ տևապես նրանց որդիական հուժ հոգատար վերաբերմունքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր ջերմ գոհունակություն է հայտնում Փարիզի Հայոց Եկեղեցական Վարչության և հատկապես Փարիզի Առաջնորդ և Ֆրանսիայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ Արքեպիսկոպոս Նագգաշյանի բացառիկ ուշադիր վերաբերմունքի համար հիվանդանոցում նրա գտնվելու օրերին՝ 24 Մայիսից մինչև 8 Հունիս:

Թող Տերը քաջառողջ ու երկար կյանք պարգևի նրանց բոլորին եկեղեցաշեն գործոց հաջողությամբ և ընտանեկան երջանկությամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 Հունիս 1994

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՑԿՅԱՆՆ ՊԱՏՎՈ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ

ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Տիտրոյտ

Բարեաց պարգևատու Աստուծոյ ողորմութեամբ, այս տարի լրանում են ութսուն տարիները Ձեր եկեղեցական ծառայութեանց, նախ իբրև դպիր, ապա որպէս սարկաւագ և յետայնու բազմաթիւ տարիներ, եկեղեցական վարչական մարմիններու ժրաջան նուիրեալ գործիչ, որպէս ատենապետ կամ անդամ թեմական, համայնքային վարչութեանց:

Դուք կը հանդիսանաք բացառիկ անձնաւորութիւն մը՝ թէ՛ որպէս եկեղեցանուէր հաւատաւոր հայորդի, թէ՛ որպէս համազգային մեծ բարերար, թէ որպէս երկար տասնամեակներ անզուգական նախագահը Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, այժմ ցկեանս պատուոյ նախագահ:

Մեծայարգ Տիար, նախախնամութիւնը Ձեզ շնորհած է բարոյական ամուր նկարագիր, բարի սիրտ ու առաքինի վարք, գործարար մարդու անցման տաղանդ, ազգի ու Մայր Հայրենիքի իրաւ շահերու պայծառ գիտակցութիւն, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատմական առաքելութեան նկատմամբ անսասան հաւատք:

Անվարան կարելի է վկայել թէ Դուք քսաներորդ դարու բազմաշնորհ մեծագոյն ափիւռքահայն էք: Ձեր անունը և մեծահամբաւ իրագործումները յարգանքով ու երախտագիտութեամբ պիտի յիշատակուին հայոց պատմութեան մատեանին մէջ: Ձեր օրինեալ կեանքը նաև բարոյական յաղթանակն է մեր ժողովուրդին:

Երջանիկ ենք վկայելու նաև Ձեր առատաձեռն նուիրաբերումները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որոնց գլուխ-գործոցը կը հանդիսանայ Վեհարանիս կողքին կառուցուած Գանձատունը՝ Ալեք և Մարի Մանուկեան թանգարանի երկյարկանի շքեղ շինութիւնը, պարծանքը մեր օրերի իրագործումների շարքին:

Ահա այսպիսի փառահեղ վաստակով, իբրև պանծալի զաւակ հայ ազգի, Դուք՝ Տիար Ալեք Մանուկեան, կանգնած էք Հայ Եկեղեցւոյ և համայն մեր ժողովուրդի առաջ, եկեղեցական Ձեր ծառայութեանց ութսուն տարիներու աւարտին:

Ձեր յուզումով և բարձր գնահատանքով կ'ողջունենք այս յիշարժան տարեդարձը և Մեր աղօթքը կ'առաքենք առ Բարձրեալն Աստուած, որ տակաւին ապրիք երկար տարիներ՝ խաղաղութեամբ ու բարօրութեամբ և նորանոր բարի գործոց պսակաւորումներով:

Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 28 Յունուարի
1994 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 2023



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 26-ին հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ ամավերջի հանդիսություն: Հանդիսությունը նախագահում է Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հանդիսությանը ներկա են Վանական խորհրդի անդամները, Մայր Աթոռի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր գերշ. Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողություն ու այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը ներածական խոսքով բաց է անում հոգևոր ճեմարանի ավագ վերակացու արժ. Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: Հանդիսությունն ողկցվում է ուսանողության ուժերով պատրաստած խմբերգերից, երգերից, արտասանություններից կազմված գեղարվեստական մի ծրագրով:

Զ լսարանի սան բարեշնորհ Գարեգին արկ. Աղաբաբյանը, հանուն ուսանողության, ընթերցում է որդիական ջերմ զգացումներով տոգորված երախտագիտական մի ուղերձ՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, Վանական խորհրդի անդամներին, հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին, որից հետո տեսուչ արբազան հայրը՝ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, բովանդակալից մի զեկուցումով ներկայացնում է ճեմարանի մեկ տարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքների համառոտ, բայց ամբողջական պատկերը՝ կանգ առնելով ուսանողության թվի, դասախոսական կազմի, ուսանողական ներքին կյանքի և այլ մանրամասնությունների վրա:

Զեկուցման ավարտին գերշ. արբազան հայրը ներկայացնում է մրցանակաբաշխության արդյունքները 1993—94 ուսումնական տարվա ընթացքում ուսման առաջադիմության և վարքի ու բարքի մեջ աչքի ընկնող ուսանողների, որոնք Հուսիկ արքեպիսկոպոսից և Ասողիկ եպիսկոպոսից ստա-

համբույրով ստանում են իրենց մրցանակները՝ ներկաների խանդավառ և քաջալերիչ ծափողջույնների ներքո:

Շնորհավորության և օրհնության իր հայրական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Բարեշնորհ սարկավագներ, սիրելի սաներ, շատ հարգելի դասախոսներ և ներկաներ,

Այս օրը ինձի օր է մեզ համար: Անցած աշնան օրերից ցանված մեր անդաստանները այս ամռան սկզբին իրենց բերքն է, որ տվեցին, Ավետարանի պատգամով՝ մի տեղ երեսուն, մի տեղ վաթսուն և հարյուր: Այդ սերմերի մի մասը հավանաբար ընկավ փշերի մեջ, մի մասը՝ ժայռի վրա, մի մասն էլ՝ ճանապարհներին: Բայց այսօր որքան ուրախալի է, երբ տեսնում ենք, որ այդ սերմերից շատերը պարարտ և բերրի հողի վրա են ընկած, գեղեցկորեն ծաղկած և արդյունավորված: Ավելի մեծ ուրախություն չէր կարող գոյություն ունենալ մեր վանքում, քան այսօրվա ուրախությունը, որ եղավ թագն ու պսակը անցած օրերի ուրախությանց:

Ավարտական լսարանի սիրելի սարկավագներ, դուք վաղվանից պիտի կոչվեք ժողովրդի ծառայության: Ինչպես Ավետարանն է ասում, հունձքը բազում է, սակայն մշակների թիվը՝ քիչ: Դուք այն քիչ մշակներից եք, որ դուրս պիտի գաք հավաքելու բերքը, ինչպես հնձվորն է դուրս գալիս: Տա Աստված, որ ձեր հավաքելիք բերքը լինի օգտակար և դառնա թագն ու պսակը ձեր կյանքի: Մարդու կյանքի նպատակը ինչ ու վայելք, փառք ու պատիվ փնտրելը պետք չէ լինի, այլ՝ Աստուծո սուրբ Սեղանին, մեր ժողովըրդին, այո՛, տառապած մեր ժողովրդին ծառայելը: Եթե դուք կարողանաք որևէ մեկի վիրավոր սրտին ամենաղոյզն սպեղանին հասցնել, ավելի լավ արդյունքի հասած չեք լինի ձեր ընտրած ասպարեզում, քան ինչ որ ակնկալեցիք այդ անհատի համար:

Սիրելի սաներ, ամառային արձակուրդի օրերը հասել են: Դուք պիտի վերադառնաք ձեր տները կամ աշխատանքի անցնեք այս կամ այն տեղ: Երբեք չմտածեք, թե ինչ որ ամբարեցիք անցնող ուսումնական տարվա ընթացքում, բավական է ձեզ: Ձեր ստացածի վրա չպետք է կափարիչը դնեք ու պպասեք: Պետք է ձեր ուսումը շարունակվի անվերջ, անընդհատ: Ձեր ձեռքից գրքերը պետք չէ ցած դնեք, այլ ընթերցեք ամեն օր՝ ինչքան հնարավոր է շատ գիտելիքներ ձեռք բերելու համար, որովհետև ձեր կյանքի այս շրջանում է մանավանդ, որ պարտիք լցնել ձեր մտքի շտեմարանները ապագա ցրտին, փոթորկին դիմանալու համար: Ուստի ձեր ազատ ժամանակը իզուր մի՛ վատնեք, այլ այդ ազատ ժամանակը օգտագործեցեք լավագույն ձևով՝ ձեր հոգին և միտքը լցնելով: Հոգին ևս կարևոր է մտքի հետ: Ձեր հոգու սնունդը մեր Եկեղեցին է, մանավանդ, մեր Եկեղեցու արբերն են, մեր Եկեղեցու երախտավորներն են և մեր արբազան գրականությունն է, որ ձեր հոգին պիտի կերտի: Այդ հոգով է, որ իսկական մարդը պիտի կերպարանավորվի, ձևավորվի ձեզնից ամեն մեկի մեջ:

Սիրելի դասախոսներ, այս տարի ևս ցրտաշունչ ձմեռը մեզ բավական խանգարեց: Հակառակ դրան, սակայն, ձեզնից շատերը, հավանաբար ըըր-

տից դողալով, հիվանդ վիճակում, պարտքի գիտակցությունից մղված՝ կարողացան աշխատանքի գալ ու իրենց պարտքը կատարել: Ես գիտեմ, որ ձեզ տրված նյութական վարձատրությունը ձեր աշխատանքի փոխարեն չնչին է, բայց ես համոզված եմ նաև, որ այսպիսի հաստատության մեջ ձեզ համար ավելի կարևոր է Աստուծո հատուցածը: Եվ վստահ եղեք, որ Աստված կյանքում ամեն ինչ գիտի, դիտում է, տեսնում, գնահատում և մեր ամեն մեկի կարիքներին պիտի հասնի: Մաղթում եմ, որ առաջիկա տարի ավելի աշխուժով, ավելի հաստատակամ, ավելի պատրաստ և ամբողջական նվիրումով մենք բոլորս կարողանանք մեր աշխատանքները ի մի բերել՝ այս հրաշալի կյանքի փեթակը՝ հոգևոր ճեմարանը, ավելի արդյունավետ դարձնելու համար: Այս հաստատության մեջ գիտության ձայնը երբեք պետք չէ կտրվի, աշխատանքի թափը երբեք պետք չէ դադարի, որովհետև այստեղից է բխում մեր Եկեղեցու կյանքի աղբյուրը:

Սիրելի ներկաներ, ինչպես տեսնում եք, այսօր մենք 1993—94 ուսումնական տարվա հանդիսավոր փակումն ենք կատարում: Վստահ եմ, դուք ևս հեռվից կամ մոտիկից հետևում եք հոգևոր ճեմարանի կյանքին: Հավանաբար հարազատներ ունեք ուսանողների մեջ. քաջալերեցեք նրանց, որպեսզի նրանք գիտակցությամբ նվիրվեն այն կոչման ձայնին, որ հնչում է իրենց էության մեջ, անսան այդ ձայնին և գան մեր Եկեղեցու անդաստանները ծառայության:

Թող Աստված իր օրհնությունը առատապես բաշխի հոգևոր ճեմարանին, մեր դասախոսական կազմին, ուսանողությանը և ամբողջ հավատացյալ ժողովրդին: Նաև իմ մաղթանքն է այս առթիվ, որ Աստված բժշկություն պարգևի մեր սիրելի Հայրապետին, որ այս օրերին հիվանդության պատճառով չկարողացավ ներկա գտնվել այս հանդիսությանը:

Ձեզ բոլորիդ մաղթում եմ բարի ընթացք, բարի ճանապարհ:

Սույն հանդիսությունը ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

«Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան,
որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս,
փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է»:
(ՄԱԹ. Ե 18)

Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի գեղեցկատես դահլիճն իր հյուրընկալ դռներն էր բացել ամենքի առջև: Ներկա էին ոչ միայն միաբանության անդամներ, ուսանողներ, այլև հյուրեր թե՛ Հայաստան աշխարհից և թե՛ արտերկրից: Եկել էին կրկին անգամ զգալու, վերապրելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավերժությունն ու անպարտելիությունը պարագրող զգացումը, զի այն նոր մշակները, ովքեր, իրենց հոգու ճվիռումն ու մտքի խոնարհությունը շաղախած Քրիստոսի ճշմարիտ լույսին, իրենց անձը, որպես կենդանի պատարագ, դրած Մեծ Պատարագյալի և մեր հավատի սուրբ սեղանին, ուխտեցին լինել Ատենաճայիս Սերմի սերմնացանները, ողջ հնազանդությամբ յուրաքանչյուր հավատացյալի համար դառնալ Մարդացյալ Աստծո սիրո թարգմանը, ինքնուճայաբերմամբ, ինքնաճվիռումով առաջնորդել հավատացյալ հոտին դեպի հավիտենություն...

Ծայրագույն վարդապետական թեզի պաշտպանության համար առաջին խոսքը տրվում է Միքայել վարդապետ Աջապահյանին, ապա՝ Նաթան վարդապետ Հովհաննիսյանին: Ներկայացվող թեմաներն էին «Սբ. Կղեմես եպիսկոպոս Հռոմեացի» և «Պետրոս Քյոթյուրը և իր «Հաւաքաբանական Աստուածաբանութիւն» աշխատությունները: Հոգեշնորհ հայրերը նախ ներկաներին հակիրճորեն փոքրիկ ծանոթությամբ հաղորդակից են դարձնում

թեզերի բովանդակությանը, գրելու շարժառիթներին, նպատակներին, այնուհետև պատասխանում հանձնաժողովի անդամների հարցերին:

Ի վերջո, դահլիճում ինչում է հանձնաժողովի վճռական խոսքը: Ամենքն ուրախ են: Շատ են շնորհավորանքի խոսքերը, ողջագուրանքները: Ուրախության անթաքույց զգացումով է Միքայել և Նաթան վարդապետներին շնորհավորանքի խոսքեր ասում հանձնաժողովի նախագահ, Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, մաղթում, որ նրանք լինեն քաջ հովիվներ ու Ավետարանի անձնուրաց մշակներ, պայծառակերպեն իրենց հոտի կյանքը քրիստոսավանդ ուսուցումներով ու հորդորներով, լինեն մշտարթուն սերմանողներ, «քանզի զայդ որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով եւ հնձեսցէ, եւ որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ եւ հնձեսցէ» (Բ ԿՈՐՆԹ. Թ 7):

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Ծայրագույն վարդապետական թեզի պաշտպանությունն ավարտվում է: Հոգեշնորհ հայրերը, հանձնաժողովի անդամները, Ներսես սրբազանի ուղեկցությամբ, գնում են դեպի Վեհարան՝ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնանքի խոսքը:

Ջերմ սիրով ու գոհունակության ժպիտով է ընդունում նրանց ազգիս Վեհափառը, ցանկանում հաստատուն մնալ իրենց կոչման մեջ, լինել արդարության ջերմ պաշտպաններ, ճշմարտության համար, որ է հիմնասյուն մեր հավատքը, անդադար մարտնչողներ, որպեսզի Քրիստոսից արձակված շողշողուն ու կենսատու լույսով լուսավորվի մարդկային կյանքի գիշերը: Նաև նվիրելով ժամացույցներ՝ պատվիրում է ի խորոց սրտի ընկալել ու ըստ արժանվույն գնահատել այն ժամանակը, որի սահմաններում է պարփակվում մարդ արարածի երկրավոր կյանքը, ջանալ ապրած յուրաքանչյուր օրը դարձնել անբիծ ու անթառամ մի ծաղիկ՝ կյանքի հաղթության պսակը կալնելու համար:

* * *

«Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի զանձն իւր
եւ բարձցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ»
(ՄԱՐԿ. Ը 34)

Ասովաճորդու այս խոսքերը, որպես խավարոտ ճանապարհի լուսեղեն կանթեղներ և որպես հավերժության առհավատչյաներ ունենալով, հոգեշնորհ հայրերը Մայր տաճարում խոնարհվեցին Տիրամոր պատկերի առջև, ապա, համակ սեր ու հեզություն դարձած, ականջալուր եղան գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի ամեն մի խոսքին, որոնցով շնորհվելու էին ծայրագույն վարդապետական իշխանության տասն աստիճանները:

Ուսում ողջամիտ վարդապետության, Հին և Նոր Ուխտերի իմացություն, դավանություն ուղղափառ հավատի, ընդունում Սուրբ Երրորդության՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն որպես համագո Աստվածություն և Քրիստոսի մարդեղության, ինչպես նաև հրաժարում «յամենայն հերձուածողաց»,—ահա

պահանջները, որ ներկայացվում են մտքի ու հոգու այն մշակներին, ովքեր փորձում են սեփական կյանքը վերածել մշտավառ փարոսի՝ հանուր հավատացյալ հայ ժողովրդի լուսավորության համար:

Աստիճան առ աստիճան, ավագ սարկավագի ձեռքից վերցնելով գավազանը, Ներսես սրբազանն այն տալիս է սուրբ հայրերին և ամեն մի աստիճանի հետ պատվիրում մխիթարել վշտացյալներին, համայն ժողովրդին, Սուրբ Հոգուց փոխանցվող կարողությամբ լինել միջնորդ Աստծո և մարդկանց միջև, բարեխոսել Աստծուն պիղծերի, մեղավորների համար, անհավատներին դարձի բերել, տգետներին իմաստնացնել, ամենքի համար դառնալով պողատու և արդյունարար մի ծառ, ըստ Աստծո կամքի, զի առնելով և ուսուցանելով պիտի իենք մեծարվեն:

Տրվող աստիճանների հետ համատեղ է՛լ ավելի են մեծանում վարդապետներին ավանդվելիք Տիրոջ կողմից սահմանված պատվիրան-հորդորները, խրատ-խորհուրդները, որոնց հնազանդ ու երդվյալ կրողներն ու կամակատարներն են դառնում Միքայել և Նաթան հայր սուրբերը, որպեսզի, ելնելով աստվածային առաքինությունների ամենայն բարձր ու դժվարին կատարը, քարոզեն «զբանն Աստուծոյ»: Իսկ ութերորդ աստիճանով նրանք առնում են «զօրութիւն ի Քրիստոսէ լինել իբրեւ զվէմ անշարժելի և դրանց դժոխոց, համարձակ քարոզել և մի՛ երկնչել ի մահուանէ...»:

Յուրաքանչյուր աստիճանի տվչություն ուղեկցվում է համապատասխան աղոթասացությամբ և սքանչելի շարականների երգեցողությամբ:

Ի վերջո, Ներսես սրբազանը շնորհում է նաև վերջին՝ տասներորդ կատարյալ աստիճանը, որ լրացնում է «զթիւ չորեքտասանեւորդին, քանզի առեր զշնորհս Հոգւոյն Սրբոյ՝ կատարել զհնգեսին մտաւոր բանսն ի մէջ եկեղեցւոյ՝ զոր առաքեալն կարգաւորէ, այս ինքն՝ սաղմոսել, վարդապետել, և յայտնել զբանս, ի լեզուս խօսել..», որի փոխարեն Ինքը՝ Տեր Հիսուս, հոգեշնորհ հայրերին պահելու է քաղցրությամբ, «ամրացուցէ օրհնութեամբ, զսիրտս և զխորհուրդս, զբանս և զգործս, զմուտս և զելս ընդ ամրաճաճոյկ աջովն»՝ հզոր ձեռքերով, բարձր բազուկներով «եօթնապատիկ պայծառութեամբ» հեղելով նրանց վրա Սուրբ Հոգու շնորհների ճառագայթները:

Տվչությունն ավարտվում է: Ներկաները մեկ առ մեկ մոտենում են նորընծա ծայրագույն վարդապետներ Միքայել Աջապահյանին և Նաթան Հովհաննիսյանին, համբուրում աջը, խնդրում լինել ճշմարիտ թարգմանը Քրիստոսի լուսեղեն խոսքերի և ուսուցումների, ինչպես նաև կենդանի քարոզիչը «կենաց բանի» և, որպես պատասխան նրանց խնդրանքի ու հաստատումն սեփական ուխտի, ասես հայր սուրբերի սիրագորով հայացքներից առ հանրություն են փոխանցվում սաղմոսերգուի անկրկնելի ու փառավոր խոսքերը. «Ողորմեա ինձ, Աստուած, ողորմեա ինձ, զի ի քեզ հուսացաւ անձն իմ. ի հովանի թեւոց քոց յուսացայց...» (ՍՍՂՄ. ԾԷ):

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 23-ին, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը հոգևոր ուրախության մեջ էր: Այդ օրը Լուսավորչատեսիլ Միածնաէջ տաճարում, ձեռամբ Մայր Աթոռիս դիվանապետ և հոգևոր ճեմարանի վերատեսուչ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռի երկու միաբաններ Հոգեշնորհ Տ. Առաքել աբղ. Քարամյանի և Տ. Թադեոս աբղ. Զիրեկյանցի մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչությունը: Հոգեշնորհ Հայր Սուրբերը նախապես իրենց վարդապետական թեզերն էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին և հոգևոր ճեմարանի հարկից ներս հաջողությամբ պաշտպանել դրանք: «Ճշմարտութեան վարդապետ, գերահանճար հռետոր և սուրբ հաւատոյ, անյաղթ ախոյեան»՝ Գրիգոր Տաթևացին շատ գեղեցկորեն է բնութագրել ՎԱՐԴԱՊԵՏԻ կոչումն ու առաքելությունը. «Վարդապետն իշխան է բանից, որ հրամայէ և ուսուցանէ, Եկեղեցւոյ տեսական իմաստասէր, որ մեծաք և բանիւ տեսանէ և քննէ և ուսուցանէ և խրատէ զաշակերտս, իսկ ինքա զժողովուրդս»: Այս խորը գիտակցությամբ էլ Մայր Աթոռի երիտասարդ միաբանները Իջման Ս. Սեղանի առջև ծնրադիր, մեր հայրերի սրբազան աղոթքներով և շարականներով պարուրված, Սրբազան Հոր ձեռքից ստացան վարդապետական գավազան կրելու իրավունքը, որով պարտավորվեցին պահպանել և պաշտպանել իրենց վստահված հոտը զանազան փոթորիկներից:

Արարողության ավարտին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը շնորհավորելով նորընծա վարդապետներին, իր բովանդակալից խրատականում շեշտում է Հայ Եկեղեցու կյանքում վարդապետի ձվիրական կոչման կարևորությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝ մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով, և ցանկանում, որ ձվիրումով և անշահախնդրությամբ ծառայեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Տ. ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԱՐԱՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. հուլիսի 20-ին Մարտունու շրջանի Երանոս գյուղում:

1969—1979 թթ. սովորել և ավարտել է տեղի Պերճ Պռոշյանի անվան միջնակարգ դպրոցը:

1979—80 ուս. տարում սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական մասնաճյուղում, ապա, 1980 թ., ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան և համատեղ 1985 թ. հեռակա կարգով ավարտել մանկավարժական ինստիտուտը:

1982—84 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո նորից ուսումը շարունակել է հոգևոր ճեմարանում: 1988 թ. մայիսի 12-ին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սաֆթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ և նշանակվել «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն» տնօրեն:

1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ Եփրեմ Սասնցի Աֆապարյան կաթողիկոսի «Մեկնութիւն Յովնանու մարգարէի» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:

1989 թ. հունիսի 11-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989 թ. օգոստոսի 25-ից նշանակվել է Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ:

1992 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի կողմից նշանակվել է Սյունյաց թեմի փոխառաջնորդ՝ Գորիս քաղաքում:

1993 թ. ապրիլի 3-ից նշանակվել է Արարատյան հայրապետական թեմում որպես առաջնորդական փոխանորդի օգնական և Մասնի ավագանի հոգևոր տեսուչ:

1994 թ. հունիսի 3-ին պաշտպանել է իր վարդապետական թեզը՝ Առաքել Սյունեցու «Ամենայն չար տանջելի է» թեմայով:

Տ. ԹԱԴԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋԻՐԵԿՅԱՆ

Ծնվել է 1961 թ. սեպտեմբերի 16-ին Երևան քաղաքում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է Երևանի Զարենցի անվան միջնակարգ դպրոցը:

1982 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1986 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1987 թ. ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը:

1987—89 թթ. սովորել և աստվածաբանության թեկնածուի գիտական աստիճանով ավարտել է Մոսկվայի հոգևոր ակադեմիան՝ պաշտպանելով «Հայ-կաթոլիկ հարաբերությունները Կիլիկյան թագավորության շրջանում (1080—1375 թթ.)» թեզը:

1989 թ. սեպտեմբերի 10-ին Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի:

1990—1992 թթ. ծառայել է Գուգարաց թեմում, որպես հոգևոր հովիվ:

1992 թվականից պաշտոնավարում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

1994 թ. հունիսի 3-ին պաշտպանել է «Սուրբ Իգնատիոս Անտիոքացի» վարդապետական թեզը:





ՎԻՐԱՀԱՅՑՈՑ ԹԵՄՈՒՄ

Մայիսի 27-ին, ուրբաթ.—Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր տաճարի բակում հանգչող մեծ գուսան Սայաթ-Նովայի շիրիմը վերստին իր շուրջն էր համախմբել քնարերգության սիրահարներին: Սայաթնովյան 80-րդ Վարդատոնը վերստին հավաստեց սիրո, բարության, արվեստի չխամրող հմայքը:

Հանդեսի սկզբում Տ. Գևորգ եպս. Սերապդարյանը, հոգևոր դասի մասնակցությամբ, հոգեհանգստյան պաշտոն մատուցեց Սայաթ-Նովայի շիրիմի մոտ:

Հոգեհանգստից հետո կատարվեց Վարդատոնի բացումը: Տոնահանդեսի մասնակիցներին Վրացական պետության ղեկավար Էդուարդ Շևարդնաձեի անունից ողջունեց տիար Սանդրո Կավսաձեն:

Ելույթ ունեցան Վրաստանի հայ մտավորականության ներկայացուցիչները և հյուրեր Հայաստանից:

Վերջում Առաջնորդարանում տրվեց հոգեճաշ:

* * *

Մայիսի 28-ին, շաբաթ: Աջարիայի «Վերածնունդ» հայկական բարեգործական մշակութային ընկերության հրավերով Բաթումիում էր գտնվում Վրաստանի մշակութային ընկերության պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին ՀՀ փոխվարչապետի աշխատակազմի ղեկավար Փիլիպոսյանը, Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Լևոն Խաչատրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերապդարյանը, Վրաստանի հայկական մշակութային բարեգործական ընկերության նախագահ Հենրիկ Մուրադյանը և ուրիշներ:

Մայիսի 29-ին, կիրակի: Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում տեղի ունեցավ կիրակնօրյա քարոզ և մեղքերի թողության արարողություն, որը կատարեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

1992-ի փետրվարի 26-ին Աջարիայի Հանրապետության նախագահ տիար Ասլան Աբաշիձեի կողմից տեղի հավատացյալ հայկական համայնքին հանձնած Սուրբ Փրկիչ եկեղեցին նորոգվում է և շուտով իր դռները կբացի հազարավոր հավատացյալների առաջ:

* * *

Հունիսի 5-ին Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն:

Վիրահայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը սարկավագ ձեռնադրեց դպիր Հովհաննես Հարությունյանին:

Այնուհետև, հունիսի 11-ին, շաբաթ օրը, նույն եկեղեցում, երեկոյան ժամերգությունից հետո, Հովհաննես սրկ. Հարությունյանը ստացավ քահանայական կոչում:

* * *

Հունիսի 12-ին, կիրակի օրը, Երկրորդ ծաղկազարդի տոնին, Ս. Գևորգ Մայր եկեղեցում ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը և, հընթացս ս. պատարագի, ամուսնացյալ քահանա ձեռնադրեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Հարությունյանին՝ վերանվանելով նրան Տ. Հուսիկ քահանա:

Տ. Հուսիկ քահանա հայրը ծնվել է 1970 թ. հունիսի 18-ին՝ ավագ քահանա Տ. Եղիշեի ընտանիքում: Ամուսնացած է, ունի դուստր: 1987-ին ավարտել է Թբիլիսիի թիվ 93 դպրոցը, այնուհետև մեկնել զինվորական ծառայության: 1992-ին ավարտել է հոգևոր ճեմարանի քահանայական դասընթացները Ս. Էջմիածնում:

Իր հոգևոր ծառայությունները Ս. Գևորգ Մայր եկեղեցում նորընծա քահանան կսկսի 40-օրյա պահեցողության և աղոթքից հետո:

* * *

Հունիսի 17-ին, ուրբաթ: Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում, ժամը 11-ին, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակի և նրա տիկնոջ՝ Նելլի Մեհնադարաշվիլի-Ղազարյանի եղեռնական մահվան 23-րդ տարելիցին:

Հուզիչ դամբանական խոսքով հանդես եկավ գերշ. Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Արարողությանը մասնակցում էին հայ և վրաց մտավորականներ, ուսանողներ և ուխտավորներ: Վերջում առաջնորդարանում տրվեց հոգեճաշ:

* * *

Հունիսի 19-ին, կիրակի.—Տոն Հոգեգալստյան: Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քահանա Հարությունյանը:

Թումանյանական այս օրերին վիրահայությունը ևս անմասն չմնաց Ս. Գևորգ եկեղեցում մատուցվող պատարագին: «Հայր մեր»-ից առաջ գերշ. Տ. Գևորգ եպիսկոպոսը հավուր պատշաճի իր քարոզից հետո վեր հանեց Հ. Թումանյանի անմահ հիշատակը, որին հաջորդեց հոգեհանգստյան պաշտոնը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Մաղթանք Հայրապետական՝ 1441-ին Կաթողիկոսական Աթոռը Սիս մայրավայրից Ս. Էջմիածին փոխադրության առթիվ:

Առաջնորդարանում կազմակերպած հյուրասիրությունից հետո, ուխտավորները ուղևորվեցին դեպի քաղաքի Խոջիվանքի հայկական մշակույթի գործիչների Պանթեոն և թարմ ծաղիկներ դրեցին Մեծ Լոռեցու շիրմաքարին:

* * *

Հունիսի 23-ին, հինգշաբթի: Թբիլիսիի Սուլխան Սաբա Օրբելիանիի անվան մանկավարժական ինստիտուտի Հովհաննես Թումանյանի անվան լսարանում տեղի ունեցավ բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի շրջանավարտների հրաժեշտի ցերեկույթը, որը բացեց հայ գրականության ամբիոնի վարիչ, դոցենտ Էմմա Ախուրյանը:

Շրջանավարտներին ողջունեց և Միջազգային Հայկական Համաժողովի Թբիլիսիի մասնաճյուղի անունից ճվերներ հանձնեց տիար Գիվի Շահնազարը:

Գերազանցիկ շրջանավարտներ Ռիմա Զորանյանը (Ախալցխա) և Խաթումա Ղարագուլյանը (Բաթումի) պարգևատրվեցին Վ.իրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի կողմից:

* * *

Հունիսի 26-ին, կիրակի.—Տոն Եղիա Մարգարեի: Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Հովհաննես ավ. քհն. Դանիելյանը:

Հավարտ ս. պատարագի գերշ. Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը դամբանականով հանդես եկավ կոմս Լոռիս Մելիքովի ծննդյան 170-ամյակի առթիվ (Միքայել Լոռու Մելիքյան): Դամբանականից հետո կատարվեց հոգեհանգիստ կոմս Լոռիս Մելիքովի (1824—1888) գերեզմանի մոտ, ուր թաղված են նաև գեներալ-լեյտենանտ Արշատ Տեր-Ղուկասյանցը (1819—1881), գեներալ-ադյուտանտ Հովհաննես Լազարյանցը (1820—1879), գեներալ-մայոր Բեհբութ Շեշկովսիկյանցը (1837—1878):

Հիշատակի օրվա կապակցությամբ Առաջնորդարանում տրվեց հոգեճաշ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 2-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա տոնին պատշաճող քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

* * *

Հունիսի 4-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելև ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 5-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի:

* * *

Հունիսի 11-ին, շաբաթ.—Սրբոցն Ներսիսի Մեծի Հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

Հունիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը:

* * *

Հունիսի 18-ին, շաբաթ.—Գիւտ ճշխաբաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

Հունիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորէն քհն. Մարությանը:

* * *

Հունիսի 26-ին, կիրակի.—Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

Հուլիսի 2-ին, շաբաթ.—Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ առաքելոյն:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Արշակ ավ. քհն. Խաչատրյանը:

* * *

Հուլիսի 9-ին, շաբաթ.—Յիշատակ Տապանակին հնոյ և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 10-ին, կիրակի.—ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց (Տես էջ 27):

* * *

Հուլիսի 11-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նշան ավ. քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 16-ին, շաբաթ.—Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդըխտոյ կուսին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

* * *

Հուլիսի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կաևաղայի Հայոց Ս. Վարդան եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գեղարդ քհն. Կարապետյանը:

* * *

Հուլիսի 23-ին, շաբաթ.—Սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրան քհն. Գըլըճյանը:

* * *

Հուլիսի 30-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանցը:

ԿՐՈՆԱ — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ՝ ԱՂԲՅՈՒՐ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ»

(5 հունիսի 1994 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարակաւն):
«Որովհետև այստեղ ծագեց մեզ լույսը Հայաստան աշխարհում»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Անցյալ շաբաթվա ընթացքում մեր Եկեղեցին տոնախմբեց հիշատակը իր պանծալի սրբերի այն փաղանգի, որ հիմնական դեր էր խաղացել Հայաստան աշխարհում քրիստոնեական կրոնի վերջնական հաստատման գործում: Անցյալ երկուշաբթի և երեքշաբթի օրերին Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերի դարավոր կամարների տակ վերարժևորվեց, տոնախմբությամբ և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ, անկորնչելի հիշատակը Հռիփսիմյանց և Գայանյայց կույսերի, որոնք իրենց թանկ ու փրկարար արյունը թափեցին վասն սիրույն Քրիստոսի և վասն ազգի մարդկան: Հինգշաբթի օրը հիշատակն էր Ս. Հովհաննու Կարապետի և Աթանագինյա եպիսկոպոսի: Հատուկ տոնախմբություն կատարվեց Ս. Շողակաթի անվան վանքում: Իսկ երեկ, շաբաթ օրը, սիրելի հավատացյալներ, մեր Եկեղեցին տոնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապի բանտից ազատման հիշատակը: Ինչպես մեր պատմիչներն են վկայում, նա Արտաշատի բանտում տասնչորս տարի արգելափակվել էր իբրև մահապարտ: Նրան գցել էին այդ գուբը, որպեսզի թունավոր իժերն ու սողուններն ուտեն նրա կյանքին: Աստվածային մեծ հրաշքով պահպանվեց նրա կյանքը այնտեղ: Ըստ գրավոր մի ավանդության, ամեն օր Աստուծո հրեշտակը մի պատառ կնոջ կերպարանքով Սրբին էր բերում մի նկանուկ հաց և մի փարչ ջուր, և այդպիսով Սրբի կյանքի թելը երկարեց:

Կամոքն Աստուծո, մեր Լուսավորիչը ապրեց Խոր Վիրապում, որպեսզի կատարվեր հրաշքների մեծագույնը Հայոց աշխարհում: Գրից, այն է՝ մահվան գերեզմանից նա հարություն առավ և մեր ժողովրդի պատմության մեջ բացեց մի նոր էջ, մի նոր դարագլուխ, որ հայկական պետության կողմից քրիստոնեության հռչակումն էր իբրև պետական կրոն:

Հայոց Տրդատ Գ թագավորն իր կատարած չարագործությունների համար հիվանդացավ: Պատմիչն ասում է, որ նա խոզի կերպարանք ստացավ, թողեց պալատն ու հեռացավ դեպի Երասխի ճահճուտները: Երկար ժամանակ նա սույն հիվանդությամբ տառապեց: Իր ընտանիքը և թագավորության պատասխանատու անձինք մտահոգ էին արքայի առողջությամբ:

Տրդատի քույր Խոսրովադուխտը երկնային միջամտությամբ մի երազ-տեսիլք է ունենում, որով նրան ի վերուստ հայտնվում է, թե իր եղբայրը կարող է բժշկվել Խոր Վիրապում բանտարկված Գրիգորի ձեռքով միայն, որի գոյության արդեն իսկ վաղուց մոռացության էր տրվել: Ստա իշխանի գլխավորությամբ անմիջապես պատգամավորներ են ուղարկվում Արտաշատ՝ Գրիգորին բանտից ազատելու: Բանտապետն ու պահակները երկմտում են Գրիգորի ողջ լինելու մասին: Երբ նրանք ձայն են տալիս գբի բերանից, պատասխան են ստանում Գրիգորի կողմից: Դուրս են հանում նրան գբից, լվանում, թանկարժեք զգեստներ հագցնում և շտապ հասցնում են Վաղարշապատ: Այստեղ Գրիգորի երկյուղած արտաբուխ աղոթքներով և անհողդողդ հավատով հայոց հիվանդ արքան բժշկվում է և դառնում իր գահի տերը:

Ի տես արքայի ապաքինման, քրիստոնեական կրոնի հրով տոգորված ամբողջ արքայական ընտանիքը, ազնվականներն ու ողջ հայ ժողովուրդը դարձի են գալիս հեթանոսությունից՝ սուրբ մկրտություն ստանալով:

Ըստ մեր պատմիչների՝ Ագաթանգեղոսի և Բյուզանդի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապի բանտից ազատվելուց հետո, որպես առաջին կաթողիկոս, երկար տարիներ ապրեց և ծառայեց Վաղարշապատում: Նա իր ժամանակը մեծ մասամբ քարոզությամբ և աղոթքով էր անցկացնում: Հաճախ գիշերները դուրս էր գալիս քաղաքի պարիսպներից և ամբողջ գիշերը աղոթում էր ամայության մեջ: Մի գիշեր Աստված հրաշալի տեսիլքի արժանացրեց նրան, իբրև պատասխան իր ջերմեռանդ աղոթքների: Տեսանողի աչքերի առաջ բացվում են երկնքի դռները, լույսերի հեղեղի միջից երկնային սերովբեներով շրջապատված Աստվածորդին իջնում է Այրարատյան աշխարհ: Տեսիլքի փառավոր լույսը, իբրև շողակաթ, մնում է միառժամանակ երկնքում որպես աստվածային սիրո արտահայտություն և ապա, իջնելով ներքև, ամփոփվում է այն վայրում, ուր այսօր կառուցված է հայ ժողովրդի սրբություն սրբոց Միածնատէջ այս խորանը: Այդ լույսը իր ճառագայթներով դարձավ հոգևոր կաթ և սնեց մեր ժողովրդին իր ողջ պատմության ընթացքում, մեզ տալով հույս ու հավատ, եռանդ ու սիրանք:

Սիրելի հավատացյալներ, այսօր տոնն է կաթողիկե Սուրբ Էջմիածնի, այսինքն՝ Սբ. Էջմիածնում Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետության հիմնադրման տոնը: Որքա՜ն հոգեթով է և սիրանքներով լեցուն մեր Եկեղեցու հիմնադրման պատմությունը, և որքա՜ն սրտառուչ են դրա մանրամասները: Քիչ ազգեր կան աշխարհի վրա, որոնք այնքան փառավոր հրաշապատում ավանդություններ ունեն իրենց Եկեղեցու հիմնադրության հետ առնչված: Մենք, իբրև փառավոր մշակույթ ունեցող ժողովուրդ, պարտավոր ենք խորապես գիտակցել մեր անցյալի հոգևոր ժառանգության ար-

ժեքները և գործուրանքով պահպանել մեզ հասած ամեն մեկ պատառիկ, դրվագ և ավանդություն մեր անցյալի պատմության հետ առնչվող:

Հայ ժողովուրդը շուրջ հազար յոթ հարյուր տարի է, ինչ ավանդապահն է երկնատուր հրաշալի մի տեսիլքի՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի միջոցով մեզ շնորհված: Թեև առաջին դարում Քրիստոսի սուրբ առաքյալներ Թադեոսն ու Բարթողիմեոսը Հիսուսի վարդապետության սերմերն արդեն ցանել էին հայոց աշխարհում, սակայն սուրբ Հռիփսիմյանց, Գայանյանց, Սուքիասյանց, Սանդուխտ կույսի և ի մասնավորի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անձնական հավատով, նրա կրած չարչարանքներով և ծանր զոհողություններով հնարավոր դարձավ մեր երկրում ցանված սերմերը աճեցնել և պտղաբեր դարձնել:

Իբրև քրիստոնյա ժողովուրդ, մենք անցյալում շատ ենք հալածվել և տառապել: Միաժամանակ, սակայն, իբրև քրիստոնյաներ, մեր իմացական և հոգևոր շնորհներով միշտ էլ փայլել ենք ազգերի ընտանիքում: Ամեն մի դժվարությունից կարողացել ենք գտնել ելք և ուղիներ ու հաճախ հառնել ենք մեր մոխիրներից:

Հավատացյալ քույրեր և եղբայրներ, ամուր կանգնենք մեր հայրերի հավատի վեմի վրա, հարատևորեն ձգտենք արդարության և խաղաղության, արտեռանդն աղոթենք, որ Աստված լսի մեր աղերսը, փարիսեցվի կարծրացած, ապարացած սրտերը, վերացնի ազգամիջյան ատելությունը և մեզ պարգևի երջանիկ օրեր: Ինչպես մեր հավատի հայրը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ, իր ջերմեռանդ աղոթքներով կարողացավ երկնքից երկիր իջեցնել Աստվածորդուն, նույն ջերմեռանդությամբ, հոգևոր հրայրքով աղոթենք մեր ներկայի և ապագայի համար:

Այս առթիվ հիշում եմ Սբ. Ներսես Շնորհալու հետևյալ հոգեշունչ աղոթքը. «Սիոնի՛ որդիներ, արթնացե՛ք, լույսի հարսին ավետի՛ս տվեք, թե քո փեսան իր հարությամբ հաղթեց մահի իշխանությանը. նա գալիս է իր փառքով քեզ պսակելու, ընդառա՛ջ ել պճնված զարդերով, երգի՛ր նոր երգ ևրա՛ջեցյալներից հարուցյալին, կյանքի պտղին»:

Այս օրը, մեր դարավոր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հիմնադրության տոնդարձի օրը, մեր սրտագին մաղթանքն է, որ մեր եռամեծ սրբերի և հայրերի նախանձախնդրությունը, հավատը և զոհողության ոգին, որոնցով պըրվեցին մեր Եկեղեցու հիմքերը, ապրեն և զորանան մեր մեջ՝ տալով մեզ եռանդ, ներշնչանք և հայրենասիրություն, որպեսզի բոլորով սրտիվ կարողանանք ծառայել Աստուծո հավիտենական փառքին և մեր ժողովրդի հավերժությանը:

Իսկապես «իջավ Միածինը երկնքից և փառքի լույսը՝ Նրա հետ»: «Եկեք կառուցենք սուրբ խորանը լույսի, քանզի այստեղ ծագեց մեզ լույսը Հայաստան աշխարհում»: Ամեն:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊ. ՊՈՂՈՍՊԱՆՅԱՆ

«ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»
(10 հուլիսի 1994 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Սրբեա Տէր, զմեղուցեալ քո ծառայիցս զգայարան, և շնորհեա տեսանել զքեզ և լսել զհայրական զձայնն, եթէ դա է Որդի իմ սիրելի» (Շարականն):

«Սրբիր, ով Տեր Աստված, մեղուցյալ քո ծառայի զգայարանները և շնորհիր տեսանել Քեզ և լսել Քո Հայրական ձայնը, թե Նա է Իմ սիրելի Որդին»:

Շարականագրի այս խոսքերը հիշեցնում են մեզ այսօրվա տաղավար ա՛յս տոնը, Քրիստոսի Այլակերպության տոնը: Ըստ Ավետարանի, որտեղ մենք կարդում ենք համապատասխան Մատթեոս, Մարկոս և Ղուկաս Ավետարանների մեջ, թե ինչպես Հիսուս մի օր, աղոթելու համար լեռ բարձրանալիս, Իր հետ առավ Իր երեք աշակերտները՝ Սիմեոն Պետրոսին, Զեբեդյան եղբայրներ Հակոբոսին և Հովհաննեսին և բարձրացավ լեռ՝ աղոթելու: Մենք կարծում ենք և հավատում, որ այդ սուրբ լեռը Թաբոր լեռն էր, որտեղ Հիսուս սկսավ աղոթել առ Բարձրյալն Աստված, և աշակերտները հոգնած սկսան մրափել ու քնանալ: Հանկարծ, ինչպես կրկին Ավետարանն ասում է, Հիսուսի դեմքը պայծառացավ, ինչպես արեգակը, և Իր զգեստը դարձավ սպիտակ, ինչպես ձյուն, և դեմքն ու զգեստը փայլում էին այնպես, ինչպես արեգակն էր փայլում. «Եւ լուսաւորեցաւ երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս» (ՄՏԹ. ԺԷ 2): Իսկ աշակերտները, տակավին քուն, հանկարծ զարթնեցին և տեսան, որ Քրիստոս Իր դեմքով և զգեստով փայլում է արևի նման, և Իր կողքին կանգնած են Եղիան և Մովսեսը և խոսում են Քրիստոսի վերջին օրերի մասին, որը պիտի պատահի տակավին Իր հրաշափառ մուտքով Երուսաղեմ: Այնքան հաճելի էր մթնոլորտը, որ Պետրոս, դառնալով մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսին, ասաց. «Մեզի համար լավ կլինի երեք տաղավար պատրաստել այստեղ. մին Քեզ, մին Մովսեսի և մյուսը Եղիայի»: Եվ ահա այդ ժամանակ մի ամպ եկավ և ծածկեց երկնակամարը, և ամպի միջից Աստուծո ձայնը կրկնեց այն, ինչ որ ասել էր, երբ Քրիստոս մկրտվում էր Հորդանան գետի մեջ. «Դա է Որդի Իմ սիրելի ընդ որ հաճեցա դմա լուարուք» (ՄՏԹ. ԺԷ 5) («Դա է Իմ սիրելի Որդին, որին Ես հաճեցա, Նրան լսեցեք»):

Ահա, սիրելիներ, այլակերպությունը Քրիստոսի ըստ երեք ավետարանիչների՝ Մատթեոս, Մարկոս և Ղուկաս:

Հիսուս Իր այս այլակերպության վկա դարձրեց Իր երեք աշակերտներին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, և հրամայեց, որ ոչ ոքի չպատմեն այս եղելությունը, մինչև Իր հարությունը: Այսօր այդ պատմությունը մեզ հասած է ավետարանիչներով և Պետրոս առաքյալի իսկ կենդանի վկայությամբ, որ ասում է. «Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն» (Բ ՊԵՏ. Ա 18) («Եվ այս խոսքը մենք իսկ լսեցինք երկնքից եկող, որ Նրա հետ էինք սուրբ լեռան վրա»): Այսինքն՝ Հիսուս որպես մարդ երեսուներեք տարիներ գործեց երկրավոր այս կյանքում, բայց եկավ փաստելու Իր աշակերտներին, որ Ինքը որպես մարդ գործում է այս աշխարհիս վրա, բայց երբեք իղեհից չի անջատված աստվածությունը, որովհետև Նա փայլեց արեգակի նման, և ասում են նաև արեգակից ավելի ուժեղ, ինչու չէ, Քրիստոս կարող է փայլի ավելի ուժեղ, քան արեգակը, որովհետև Ինքն է ստեղծիչը արեգակի:

Իսկ մենք՝ մեղավորներս, որպեսզի կարողանանք տեսնել և ըմբռնել ու հասկանալ այդ լույսը, պետք ունենք, ինչպես իմ քարոզի սկզբում ասացի, ըստ շարականագրի խոսքերի. «Ով Աստված, մաքրիր մեր զգայարանները, որպեսզի մենք կարողանանք տեսնել և լսել»: Այո, արտաստվոր աչքեր պետք չեն և ոչ էլ արտաստվոր ականջներ՝ Աստծուն տեսնելու և Աստուծո խոսքերը լսելու, այլ պետք են սրբված և մաքուր զգայարաններ, մեղքից հեռացած, մեղքի կեղտից մաքրված զգայարաններ, որպեսզի մենք կարողանանք տեսնել և զգալ այնպես, ինչպես երեք առաքյալները տեսան և զգացին Թաբոր լեռան վրա: Առաջին նախապայմանը մեղքերից ազատվելն է, առաջին նախապայմանը Աստված տեսնելու և Աստծուց լսելու՝ մեղքերից ձերբազատվելն է: Եվ պատահական չէ, որ մենք այսօր մեր կիրակնօրյա արարողությունը սկսենք հրաժարվելով սատանայից և մեր մեղքերի խոստովանությամբ: Այլապես, ով իր մեղքը չի խոստովանում, ով չի հրաժարվում սատանայից, իրավունք չունի ո՛չ մոտենալու, ո՛չ տեսնելու և ո՛չ էլ լսելու Աստուծո դեմքը կամ Աստուծո խոսքը: Երանի այն մարդուն, որ իր երկրավոր կյանքն ապրում է այնպես, որ հասնում է նրա վախճանին մաքուր զգայարաններով, որով և կարժանանա Աստվածտեսության ու կլսի երկնքի ու երկրի Տիրոջ ձայնը:

Այսօր մեր ժողովրդի համար և՛ Վարդավառ է, և՛ Այլակերպություն, և՛ Պայծառակերպություն: Վարդավառ, Այլակերպություն և Պաճառակերպություն... Մեր Եկեղեցվո հայրերի հրաշագործ իմաստությունը կտեսնենք նաև այս երեք բառերի մեջ: Հայկական դարավոր սովորություն եղած Վարդավառը մեր քրիստոնյա հայրերը չմոռացան, նրա վրա ավելացրին գեղեցիկ և հրաշալի Այլակերպությունն ու Պայծառակերպությունը՝ խառնելով դարավոր ազգայինը ճշմարիտ քրիստոնեականի հետ և տալով նրան գեղեցիկ բառեր, ինչպես այլակերպություն է և պայծառակերպությունը: Բոլոր ազգերը Քրիստոսի Այլակերպությունը հորջորջում են որպես Կերպարանափոխություն, իսկ մենք այն կոչում ենք Պայծառակերպում՝ տալով ավելի ճշմարիտ, պայծառ ու աստվածային իմաստ: Ահա իմաստությունը մեր հայրերի, որոնք չմոռացան այն, ինչ որ նախաքրիստոնեական էր, զայն խառնեցին միաստվածության ճշմարիտի հետ, որպեսզի մեր Եկեղեցին ճշմարտապես դառնա հայկական և քրիստոնեական: Ով հայ քրիստոնյա է, պետք է ընդունի իր Եկեղեցու հայկականությունը և իր Եկեղեցու քրիստոնեականությունը. հավասարապես չմոռանալ մեկը՝ մյուսի համար: Մեր Եկեղեցու համար այսօր և՛ Վարդավառ է, և՛ Պայծառակերպություն:

Ահա, սիրելիներ, հակիրճ ձեզ Վարդավառի կամ Այլակերպության այս տոնը: Քրիստոսի Այլակերպությունը բացահայտումն է Իր աստվածության: Հոր Աստծու իսկ արտահայտությամբ՝ «Դա է Որդի իմ սիրելի», սիրելի Որդին, որը չարչարվեց, խաչվեց և մահ ճաշակեց մարդկության մեղքերի համար ու, ավելի քան որևէ ժողովուրդ, հայ ժողովուրդը ընդօրինակեց այն՝ ցույց տալով իր ընդունումը և կատարյալ հավատքը «Սիրելի Որդուն» և նրա Աստվածության՝ մի Աստվածություն, որը Տերն է երկնքի ու երկրի, ինչպես սաղմոսերգուն ասում է. «Զհիւսիս և զնաւրաւ դու արուարեր. Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն» («Դու ես ստեղծել հյուսիսն ու հարավը, Թաբորը և Հերմոնը քո անվամբ են ցնծում»): Քրիստոսն է աշխարհի տերն ու տիրակալը, Ինքն է ստեղծիչը և Ինքն է կերտիչը ամեն ինչի: Այսօր, որպես Իր ժողովուրդը, որը փնտրում է արդարություն և խաղաղություն, մեր աղոթքն է և աղաչանքը, սաղմոսերգուի հետևողությամբ Ո՛վ Տեր Աստված, տուր արդարություն և խաղաղություն Մոավյան լեռներից մինչև քառագագաթ Արագածը և Մասյաց լեռներից մինչև սեգ Սիփանը: «Երիցք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և զասնալ է Տէր զի դատել զերկիր: Դատէ զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ»: ԱՄԵՆ:

ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՓԱՔՅԱՆ

ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷՋԵՐԻՑ

ԽՈՍՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՁԵՎԱՑԻ

Փոթորկահույզ և առեղծվածային կյանք ու դաժան ճակատագիր է ունեցել Ժ դարում ապրած և ստեղծագործած Հայ Եկեղեցու երախտավորներից Ս. Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով եպիսկոպոս Անձևացին:

Ժ դարում սկզբնավորված և լայն ծավալումներ գտած վանական շարժումը հանդիսացավ Հայ Եկեղեցին սնուցող ամրյունատար երակը, որի շնորհիվ Եկեղեցին կարողացավ պատնեշ լինել բոլոր շեղումներին և գեղծումներին: Հենց այս հանգամանքը գիտակցելով էր, որ ամենաերջանիկ Անանիա Ա Մոկացի հայրապետը, լինելով վանական միջավայրից դուրս եկած անձնավորություն, խրախուսեց և աջակցեց ճգնակեցական կյանքի ծավալմանը: Հատկապես այս ժամանակաշրջանում ծաղկեցին վանքերը, որոնց մեջ իր հոչակով առանձնանում էր, Ասողիկի բնութագրմամբ, «Մեծ փիլիսոփա» Անանիա վարդապետ Նարեկացու հիմնադրած Նարեկա վանքը («պաշտօնապայծառ երգեցողովք և գրական գիտողօք»)[1], որի դպրոցի ազդեցություն են կրում և որի անվան հետ են կապված այնպիսի հեղինակություններ, ինչպիսիք են Ս. Գրիգոր Նարեկացին և վերջինիս հայրը՝ Խոսրով եպիսկոպոս Անձևացին:

Խոսրով եպիսկոպոս Անձևացին (900—963)[2], ամենահակասական և առ այսօր հատակորեն չմեկնաբանված, ինչպես նաև ըստ արժանվույն չգնահատված հեղինակներից է: Մեր մատենագրության և բանասիրության մեջ նրա մասին շատ կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Հայտնի չեն Անձևացու ծննդյան և մահվան թվականները, ինչպես նաև իր՝ Անձևացյաց վիճակում գործունեության մանրամասները: Մեկ փաստ ապակյուն հատակ է, որ նա ապրել և գործել է Ժ դարում, և նրա գործունեության բուն շրջանը համընկնում է Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի (941—965) հայրապետության տարիներին, այսինքն՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսն ապրել է մինչև 965 թ., որովհետև Անանիա Մոկացու «Պատճառ յաղագս զԽոսրով Նզովելոյ զԱնձևացեաց եպիսկոպոսն» թղթում Անձևացին արդեն մահա-

---

[1] Ասողիկ, էջ 178:

[2] Այս պայմանական տարեթվերը վերցրել ենք Նորայր եպս. Պողարյանից. տե՛ս **Նորայր եպս. Պողարեան**, «Հայ գրողներ Ե—ԺԴ դարերի», Երուսաղէմ, 1971 թ., էջ 141;

ցած է. «Զոր հարկեալ ի հրամանէն Աստուծոյ կտրել հրեղէն սրովն և զբաժինն ընդ կեղծաւորսն դնել*, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն»[3]:

Ծնվել է Վասպուրականի Շատախ գավառի Շար գյուղում[4]: Ոչ մի ճյուղ չկա, թե որտեղ է սովորել և ինչ կրթություն է ստացել Խորով Անձևացին, միայն մի քանի հպանցիկ տեղեկություններ են հաղորդում Մելքիսեդեկ եպիս. Մուրադյանցը և Հայր Միքայել վրդ. Չամչյանը: Մելքիսեդեկ եպիսկոպոսը ենթադրում է, որ «սա իւր մանկական հասակէն հետամուտ կը լինի ուսման և գիտութեան»[5], իսկ Միքայել Չամչյանը ստուգապես խոսում է նրա ստացած հունական կրթության մասին. «Որ ի մանկութեան վարժեալ յունումն իմաստից հելլենական դպրութեանցն»[6]: Թե այս մասին որտեղի՞ց է վերցրել Մ. Չամչյանը, մեզ հնարավոր չեղավ պարզել, քանզի որևէ մատենագրական աղբյուր չի խոսում սույն փաստի մասին և միայն մնում է եզրակացնել, որ այս կարծիքը հիմնված է այն հանգամանքի վրա, որ Անձևացու գործերի մեջ զգացվում է Հույն Եկեղեցու արևարողակարգերին և ներքին կյանքին հույժ տեղյակ լինելը, ինչպես նաև ընդհանրական Եկեղեցու հայրերի գործերից մեջ բերված բազմաթիվ վկայությունները: Չունենալով համապատասխան աղբյուրներ՝ մենք վերապահորեն ենք մոտենում այս խնդրին: Խոսրով Անձևացու կրթության հարցի հետ կապված մի շատ հետաքրքիր տեղեկություն ևս գրավեց մեր ուշադրությունը: Անանիա Մոկացի հայրապետի՝ Խորով Անձևացուն ուղղված թղթում հանդիպում ենք այսպիսի արտահայտության. «Այլ դու Արամին աշակերտեալ անցաներ զնովաւ»[7]: Հիմնվելով այս խոսքի վրա՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը ենթադրում է, որ վերոհիշյալ Արամը, որն ապրել է Ժ դարում, եղել է Խորով Անձևացու կա՛մ ուսուցիչը, կա՛մ՝ Անձևացին եղել է Արամի վարդապետության հետևորդ[8]: Խորով եպիսկոպոս Անձևացու նկատմամբ եղած ծանրակշիռ մեղադրանքներից մեկն այն է, որ Անձևացին դեմ է եղել կաթողիկոսին հարկ վճարելուն, իսկ Արամը, ինչպես երևում է Անանիա հայրապետի խոսքից, «զպտուղ երախայրեացըն միայն արգելուլ բաջաղէր»[9]: Չնայած այն բանին, որ վերոհիշյալ Արամը սերտ հարաբերության մեջ է եղել Անձևացյաց Տան հետ**, մենք կարծում ենք, որ Մոկացի կաթողիկոսը պարզապես համադրում է Խորով եպիսկոպոսի և Արամի գաղափարները և Անձևացուն համարում աշակերտ Արամի և նույնիսկ նրանից առաջ անցած:

Բանասիրության մեջ հաստատված է այն կարծիքը, ըստ որի Խորով Անձևացին, նախքան միայնակեցական կյանքին անցնելը, եղել է աշխարհական և ամուսնացած նշանավոր վարդապետ Անանիա Նարեկացու եղբոր

---

* ՄՏԹ. ԻԴ 50—51:

[3] Տե՛ս «Արարատ», 1897 թ., էջ 277:

[4] **Գառնիկ Ստեփանյան,** «Կենսագրական բառարան», Երևան, 1981, հատոր Բ, էջ 68, սակայն այս մասին որևէ աղբյուր լռում է, և որոշեցինք այս փաստը նույնությամբ արձանագրել:

[5] **Մելքիսեդեկ վրդ. Մուրադեանց,** «Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ», Երուսաղէմ, 1872 թ., էջ 401—406:

[6] **Միքայել Չամչյան,** Բ, էջ 839:

[7] «Արարատ», 1897 թ., էջ 285:

[8] Արամի մասին ավելի հանգամանալից տե՛ս Գ. Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ», Երևան, 1979 թ., Հայկականք, Թ, էջ 135—138:

[9] «Արարատ», էջ 285:

** Տե՛ս Հայկականք, Թ, էջ 137:

դատեր հետո[10] և միայն կնոջ մահանալուց հետո է լծվել հոգևոր ծառայության: Սակայն Անձևացու աշխարհական կամ ամուսնացյալ լինելու հարցին, ինչպես դատում է Օրմանյան պատրիարքը, միանշանակ պատասխանել չի կարելի[11]: Մեկ կողմից բոլոր բանասերները պնդում են, որ նա եղել է աշխարհական, մյուս կողմից մեր առջև գտնվող Անձևացյաց եպիսկոպոսի գործերը ենթադրել են տալիս, որ նա քաջ ծանոթ է հովվի պարտականություններին և մեզ ներկայանում է որպես հովվական պաշտոնի հարուստ կենսափորձ ունեցող անձնավորություն. «Քանզի քահանայն, որ է գլուխ ժողովրդեանն և հովիւ բանաւոր հօտին Քրիստոսի փոխանակ այնմ, որ առաւել քան զայլ աւուրսն պարտ էր յեկեղեցի դիմել, Պատարագ մատուցանել, զհագուրդն փոխել, զոր չէ պարտ ըստ կանոնաց արբոց հարցն քան զութ օրն յառաջ յանցանել առանց փոխելոյ փրկական հաղորդութեան, այլ ամենայն կիրակէի նորոգել, զժողովուրդն խոստովանեցուցանել, և հաղորդել, և պատուէր տալ յաւուր կիրակէի: Առաւել զաղքատս կերակրել, և զբանտեալս տեսանել, զօտարս ժողովել, զհիւրս սիրով ընդունել, և զամենայն բարեգործութիւնս փութանակի կատարել, որով հաճի Աստուած և զինդրուածսն կատարէ»[12]: Արդյո՞ք այս տողերը Խորով Անձևացին գրել է որպես քահանայական կենցաղավարության տեսություն՝ աչքի առջև ունենալով Եկեղեցու հայրերի խրատները և իր վիճակի քահանաների գործունեությունը, թե նա իսկապես, ժամանակին լինելով ամուսնացյալ քահանա, իր սեփական կենսափորձից ելնելով է սույն մտքերն արտահայտել, դժվար է ասել, բայց, ինչպես վերն էլ շեշտեցինք, միանշանակ պնդել, որ նա եղել է աշխարհական և միանգամից է մուտք գործել վանական կյանք, սխալ է: Մանավանդ որ, ըստ միջնադարյան մտածողության, ամուսնացյալ քահանաներին համարել են աշխարհական քահանաներ[13]: Հետևաբար, մենք ավելի հակված ենք մտածելու, որ Խորով Անձևացին նախկինում եղել է ամուսնացյալ քահանա և ոչ աշխարհական, և միայն կնոջ մահանալուց հետո[14] անցել է ճգնա-

---

[10] **Մ. Չամչյան,** Բ, էջ 839, **Մ. վրդ. Մուրադեանց.** էջ 401, **Գ. Զարբհանալեան,** «Հայ հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դդ.)», Վենետիկ, 1886 թ., էջ 517—519, **Գ. Տեր-Մկրտչյան,** «Արարատ», 1897, էջ 93—94, «Պատարագի մեկնութեան» առաջաբանի հեղինակն ասում է «Առեալ կին զդուստր հորեղբօր Անանիայի Նարեկայ վանից վանահօր», որ մեր կարծիքով ընդունելի չէ: Հր. Թամրազյանը, հիմնվելով «և սա էր որդի դստեր եղբայր հայր Անանիայ ճգնաւոր վարժապետի» տողի վրա, գտնում է, որ Անձևացու կինը եղել է Անանիա Նարեկացու հորեղբոր դուստրը (**Հ. Թամրազյան,** «Անանիա Նարեկացի», Երևան, 1986 թ., էջ 30):

[11] «Ազգապատում», Ա, էջ 1098:

[12] **Խորով Անձևացի,** «Բանք երանելոյն Խորովայ ի տեղի աղօթից, առ վասն եկեղեցականաց»:

[13] Մտթ. Ուռհայեցին, խոսելով Պետրոս Գետադարձ կաթողիկոսի օրոք Վեհարանում եղած հոգևորականության թվի մասին, ասում է. «Երկոտասան եպիսկոպոս և չորս վարդապետ ի տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց՝ և յաշխարհականաց՝ հինգ հարիւր», այսինքն՝ Ուռհայեցին ամուսնացյալ քահանաներին համարում է աշխարհական երեցներ: Եվ մենք, նկատի ունենալով ա՛յս վկայությունը, կարծում ենք, որ նրա աշխարհական կարգից կրոնավորականին անցնելը նշանակում է ամուսնացյալ վիճակից անցում կուսակրոն կյանքի: Աշխարհական երեց հասկացության մասին ավելի հանգամանալից տե՛ս **Կարեն Մաթևոսյան,** «Անի քաղաքի հոգևորականությունը», «Էջմիածին», 1993 թ., ԺԱ—ԺԲ, էջ 45:

[14] **Գրիգոր Նարեկացի** «Մատեան ողբերգութեան», Երևան, 1985 թ., Բան. ԾԱ. էջ 446, «Ա՛ռ մա՛յր իմ, որ երկնեաց,
Եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեան»;

վորական կյանքի՝ հետագայում դառնալով եպիսկոպոս Անձևացյաց վիճակի[15]:

Խոսրով Անձևացին հայ իրականության հայտնի է ոչ միայն որպես աբբա կենցաղ հոգևորական և «մեկնիչ վարդապետ»[16], այլև որպես հայր Ս. Գրիգոր Նարեկացու: Այս մասին տեղեկություն ենք քաղում հենց Նարեկի մեծահռչակ Սուրբից, իր իսկ ձեռքով արտագրված Խոսրով Անձևացու «Մեկնություն աղօթից պատարագի» հիշատակարանից. «Ծնորհիւ Աստուծոյ եղև մեկնութիւն այսմ գրոց ի ձեռն Խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի, ժոյժ հետևողի պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ և գովել աւհաճ է, զի մի՛ գայթակղեսջիք ի նոյն, վասն գոլոյ նորում հայր իմ ըստ մարմնոյ, որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան ըստ գրեցելումն»[17]: Այլ աղբյուրներ ևս հաստատում են այս իրողությունը: Այսպես, ԺԲ դարի նշանավոր պատմագիր Սամվել քահանա Անեցին ասում է. «ՋՁԴ (984). Յաւուրս յայսոսիկ փայլէր իբրև զարեգական իմաստութեամբ և առաքինութեամբ սուրբ այրն Աստուծո Գրիգոր Նարեկացի՝ որ ի Հայք ի գաւառն Վասպուրական որդի տեառն Խոսրովու՝ Անձաւացեաց եպիսկոպոսին»[18]: Խոսրով Անձևացին, բացի Սուրբ Գրիգոր Նարեկացուց, ունեցել է ևս երկու որդի՝ Սահակ և Հովհաննես անուններով[19]: Երկուսի վերաբերյալ էլ մեզ վկայում է Ս. Գրիգոր Նարեկացին: Հովհաննես Նարեկացու մասին տեղեկանում ենք «Մատեան Ողբերգութեան» աղոթագրքի հիշատակարանից, որտեղ եռամեծ վարդապետը մեծ գովասանքով է խոսում իր եղբոր հասցեին, որ գործակցել և օգնել է նրան «Մատեանը» կազմելու և կարգավորելու աշխատանքներում. «Ես՝ Գրիգոր կրաւնաւոր քահանայ, յեւոին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբաւր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ, Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրև զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրաւնք, համապատիւք, զուգահաւանք, ի քառից աչց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք»[20]: Իսկ Սահակ Նարեկացու մասին հիշատակություն ենք հանդիպում Ս. Գրիգոր Նարեկացու կողմից արտագրված Խոսրով Անձևացու «Մեկնութիւն աղօթից պատարագի» երկի հիշատակարանում, ըստ որի սույն աշխատությունը Գրիգոր Նարեկացին արտագրել է իր եղբոր՝ Սահակի կողմից 950 թ. գըրված օրինակից. «Արդ առաջին սուրբ գրոցս այսորիկ գծագրութիւն՝ եղև ձեռամբ Սահակայ որդւոյ տեառն Խոսրովու՝ սոյն սուրբ գրոցս մեկնողի, յերեք հարիւր իննսուն և ինն թուականութեանս Հայոց»[21]: Ամենայն հավանականությամբ այս հաղորդման վրա է հիմնվում նաև Միխթար Այրիվանե-

---

[15] Սույն տեսակետն է արտահայտում նաև Եղիշե պատրիարք Դուրյանը (**Եղիշէ արք. Դուրեան,** «Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղէմ, 1933 թ., էջ 165):

[16] **Աբ. Ջամիճեան,** «Հայ գրականութեան պատմութիւն», Նոր Նախիջևան, 1914 թ., էջ 144:

[17] «Մեկնութիւն Պատարագի», Յիշատակարան, էջ 67:

[18] Սամուէլի քահանայի Անեցւոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս», Վաղարշապատ, 1893 թ., էջ 103:

[19] Ըստ Մ. Ջամչյանի, Անձևացին ունեցել է երկու որդի՝ Հովհաննես և Գրիգոր Նարեկացիներին. «և ծնաւ զերկուս որդիս զՅովհաննէս և զԳրիգոր», որը սխալ է, քանզի Սահակ Նարեկացու մասին խոսում է Ս. Գրիգոր Նարեկացին: Տե՛ս **Ջամչյան,** Բ, էջ 839:

[20] **Գրիգոր Նարեկացի,** «Մատեան ողբերգութեան», «Յիշատակարան», էջ 642:

[21] «Մեկնութիւն աղօթից պատարագի», յիշատակարան, էջ 67:

ցին (ԺԳ դար)՝ ասելով, որ «Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսն արար զմեկնութիւն Աղօթամատուցին, զոր գրէր Սահակ որդի իւր»[22]: Ըստ երևույթին Խոսրով Անձևացու երեք որդիներն էլ եղել են Նարեկա վանքի առաջնորդ Անանիա վրդ. Նարեկացու աշակերտները: Ենթադրելի է, որ ինքը, լինելով Անձևացյաց վիճակի առաջնորդ և բազմազրաղ անձնավորություն, չի կարողացել զբաղվել իր որդիների լիակատար դաստիարակությամբ ու կրթությամբ, այդ պատճառով էլ առավել հարմար է նկատել նրանց հանձնել իր հարազատի՝ Անանիա Նարեկացու հոգածությանը: Բացի այս պարագայից, Նարեկա վանքը հռչակված էր որպես հվատքի և գիտության խոշորագույն կենտրոն, հետևաբար որդիների հոգևոր և իմացական դաստիարակությամբ մտահոգ հայրը, չցանկանալով նաև իր հսկողությունից դուրս թողնել նրանց, ուղարկել է Նարեկա մեծահամբավ դպրոց: Հայտնի է, որ Սուրբ Գրիգոր և Հովհաննես Նարեկացիները հետագայում դարձել են Նարեկա վանքի վանականներ[23], իսկ թե ի՞նչ ճակատագիր է ունեցել Սահակը, դժվարանում ենք ասել, քանզի նրա վանական կամ ընդհանրապես հոգևորական լինել-չլինելու վերաբերյալ ոչ մի տեղեկություն չկա[24]: Այսուհանդերձ, Անձևացու որդիները հնարավորին չափ օգնել են իրենց հորը՝ իր երկերը գրելու, ծաղկելու և արտագրելու առումով:

Խոսրով Անձևացին եպիսկոպոս է ձեռնադրվել 941 թվականից հետո[25], այսինքն Անձևացին եպիսկոպոսական աստիճան ստացել է Անանիա Մոկացու հայրապետության օրոք: Սույնը հաղորդում է հենց Մոկացի հայրապետը. «Ի ՆԳ (954) թուականիս և ի չորեքտասան ամի մերոյ դիտաւորութենաւն յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն»[26]: Անձևացյաց առաջնորդ լինելու ժամանակ էլ նա ձեռնամուխ է եղել կոթողային «Բացայայտութիւն աղօթից և քարոզութեանց կարգաց եկեղեցւոյ» և «Մեկնութիւն աղօթից պատարագի» գործերը գրելուն՝ ցանկանալով իր վիճակի հավատացյալներին բացատրել և հաղորդակից դարձնել եկեղեցական սրբազան արարողությունների էությանն ու խորհրդին. «Համարձակեցա առ այս յանդգնաբար ի հարկէ, ո՛չ զի անձին փառս ստացայց, այլ զի գեպիսկոպոսութիւն վիճակեցաւ և ի վիճակեալսն տգիտութի՛ւն ի յոլովս վարկա, և բանիւ ամենայն ումէք զբովանդակ զայս ծանուցել անհնա՛ր գիտացի՝ պատշաճ համարեցի ի գրի՛ արկանել, զի թերևս այսպէս դիւրի՛ն առ ուսանել արարից կամողաց: Յաղագս որոյ և որք հանդիպին այսոցիկ լսելութեան, աղա՛թս վասն մեր փըրկութեան արասցեն, սուղ աշխատութեանցս փոխհատուցյ լինելով առ ի Քրիստոսէ զնորա ողորմութեանցն պարգևս: Որում լիցի ամենեցուն մեզ հանդիպել յերկրին և յերկինս և փառս վեր առաքեալ Հաւր, Որդոյ և Հո-

---

[22] Մխիթար Այրիվանեցւոյ «Պատմութիւն Հայոց», Մոսկուա, 1860 թ., էջ 56:

[23] Տե՛ս «Մատեան ողբերգութեան», հիշատակարանը, էջ 642:

[24] Ըստ ՀՍՀ-ի, Սահակը «հավանաբար եղել է աշխարհական», հտ. Ե, էջ 77:

[25] Բանաստեղծության գերակշիռ մասը հայտնում է այն տեսակետը, որ Անանիա Մոկացին կաթողիկոս է եղել 946—968 թթ., սակայն 1897 թ. «Արարատ» ամսագրում Գ. Տեր-Մկրտչյանի աշխատասիրությամբ հրատարակված Անանիա Մոկացու թղթերում հայրապետը խոսում է իր գահակալության տարեթվի մասին, որ է ՅՂ (941) և եթե նկատենք, որ նա գահակալել է մոտավորապես 23 տարի, ուրեմն ավարտը կլինի գրեթե 965 թ.: «Արարատ», 1897 թ., էջ 129:

[26] «Արարատ», էջ 276:

գոյն Սրբոյ, որում եղիցին փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւետեան յաւիտենից: Ամէն»[27]:

Ինչպես վերը նշեցինք, Խորով Անձևացու մահվան թվականը ևս հայտնի չէ, սակայն Անանիա Մոկացի հայրապետը Անձևացուն ուղղված Բ թղթում ասում է. «Քանզի [ի] ՆԳ (953) թուականիս և ի չորեքտասան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոյ Խորով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն, այր համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ զարգացեա»[28]: Այս տողերից եզրակացնում ենք, որ արդեն 954 թ. Խորով Անձևացին բավականին հասուցացած տարիքում է եղել: Իսկ թղթի վերջում տեսնում ենք, որ Անձևացին մահացած է, այսինքն՝ նա մահացել է 965-ից առաջ[29], Անանիա Մոկացի կաթողիկոսի օրոք՝ բանադրված վիճակով, որը հատակորեն ապտահայտված է Մոկացի հայրապետի վերոհիշյալ թղթում: Խորով եպիսկոպոս Անձևացին կյանքի վերջին շրջանը, ըստ Ս. Գրիգոր Նարեկացու մի սնուղղակի վկայության, անց է կացրել բոլորից լքված վիճակում.

Եւ առ երկրածի՞ն ոք պաղատեցայց այդ մահացու ամենապատուիր...
Առ հա՞յր իմ երկրաւոր
Եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուազութեանն***:

Հատակ չէ, թե Խորով Անձևացին մահկանացուն կնքել է եպիսկոպոսական գահի վրա՞, թե բանադրվել է մահվանից առաջ, որովհետև Անանիա հայրապետի խոսքերից սույն խնդիրը պարզորոշ չի հասկացվում: Սակայն ենթադրելի է, որ շահախնդիր հայրապետը Անձևացուց մինչև նրա կյանքի վերջին վայրկյանն էլ ինչ-որ զղջումագրի կամ դարձի թղթի ակնկալիք է ունեցել և միայն Խորով եպիսկոպոսի մահվանից հետո է հրապարակ հանել իր բանադրանքի թուղթը կամ կոնդակը. «... զոր աղաչեալ մեր բազում անգամ դառնալ նմա [յ]այնմ անուղղայ և մոռնալոյ խորհրդոց, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղիլ: Զոր հարկեալ ի հրամանէ Աստուծոյ կտրել հրեղէն սրովն և զբաժինն ընդ կեղծաւորսն դնել, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն»[30]:

Որպես հավելում ասենք, որ մեր պրպտումների արդյունքում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրացուցակում հանդիպեցինք հետևյալ հիշատակությանը. «Գրեցաւ գիրս ի խնդրոյ երջանիկ և ընտրեալ՝ Հայր Սիմէոն Վարդապետի, ի լեառնս Վարագայ, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս եւ երկոտասան սիւն լուսոյ, ի յանապատս որ կոչի Խորովու, ձեռամբ յոգնամեղ եղկելոյս՝ մեղաւոր Յովհաննէսի, ի թվի հայոց ՊԺ (1361)»[31]: Կարծում ենք,

---

[27] ՄՄ Ձեռագիր թիվ 1329, 1272թ., «Յիշատակարան»:

[28] «Արարատ», էջ 276:

[29] Այս տեսակետն են հայտնում Գ. Տեր-Մկրտչյանը, Ն. եպս. Պողարյանը, տե՛ս ՀՍ Հանրագիտարան, հտ. Ե, էջ 77, Աբ. Ջամինյան և այլն: Բանասերների մի մասն էլ, ըստ երևույթին հենվելով Միքայել Չամչյանի հաղորդած տեղեկության վրա («յետ բարուք հովերևույթին զժողովուրդ իւր վախճանեցաւ յամի տեառն 972 հայոց ՆԻԱ»), գտնում է, որ Անձևացին մահացել է 972 թ.: Այս տեսակետին են Հ. Աճառյանը, Գ. Ստեփանյանը, Մ. արքեպս. Օրմանյանը, տե՛ս նաև «Յուցակ ձեռագրաց», հտ. Ա, էջ 1510, «մեկնութիւն աղօթից պատարագի», էջ 4, սակայն Գ. Տեր-Մկրտչյանը իրավացիորեն այս թիվը ենթադրական է համարում, իսկ աղբյուրը՝ անհայտ:

*** «Մատեան ողբ.», Բան ԾԱ. էջ 446:

[30] «Արարատ», էջ 277:

[31] **Նորայր եպիս. Պողարեան,** «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Երուսաղէմ, 1969 թ., հտ. Դ, էջ 542:

Խորովու անապատ տնվաճումը գալիս է Խորով եպիսկոպոս Անձևացու հիմնադրած Վարագա Ս. Նշան վանքից, որը հետագայում կոչվել է Խորովա Ս. Նշան, Խորովային Ս. Նշան կամ Հորովա վանք[32]. Այստեղ էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ արդյո՞ք հնարավոր էր հերձվածող անձնավորության անունով եկեղեցի կամ վանք վերանվանել: Եկեղեցական պատմության ողջ ընթացքին նման երևույթ չի արձանագրվել, և այս ծանրկշիռ փաստը ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ Խորով եպիսկոպոս Անձևացին եղել է ուղղափառ և արքատուն հոգևորական, հարազատ Մայր Եկեղեցուն ու նրա դավանանքին:

Մեր կարծիքով Անձևացյաց եպիսկոպոսը խոտորված չէ Հայ Եկեղեցու դավանաբանությունից և կարգավորությունից, այլ նա ցանկացել է բարեկարգել եկեղեցական խաթարված կարգերը և հոգենորոգել ու քահանայական ճշմարիտ գիտակցության կոչել «աշխարհիկ» հոգևորականության: Անձևացին զրպարտվել է ժամանակի հոգևորականների կողմից (ամենայն հավանականությամբ իր վիճակի) և կեղծիքի պատճառով թյուրիմացաբար բանադրվել Անանիա Ա Մոկացի հայրապետից: Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադյանցի խոսքով ասած՝ «Ինչպես արևգական ջերմութիւնը երբեմն գարշահոտ գոլորշիներ կը յարուցանէ գետնէն, նոյնպէս և սրբատուն մարդկանց կեանքը և բարեպաշտական ջերմութիւնը՝ կրքեր կը յուզէ աշխարհիս մէջ»[33]: Սակայն ըստ երևույթին Անանիա հայրապետի կամ նրա հաջորդ կաթողիկոսների օրոք իսկ վերացվել է այս նզովքը, որի վկայություններ են նրա գործերի բազմաթիվ ընդօրինակությունները, որոնց միջոցով գրիչները բարեխոսություն են հայցում Աստծուն, իսկ երանելի եպիսկոպոսին հիշատակում որպես «Սուրբ Խորով Անձևացի»[34]:

* * *

Խորով Անձևացու կյանքը և գործերը ուսումնասիրելիս հանդիպեցինք Մ. Չամչյանի հետևյալ հաղորդմանը. «Եւ եղև երևելի ևանարատութեամբ վարուց և աստուածաշունչ իմաստութեամբ և շարագրեաց բազում գիրս և ճառս»[35]: Ենթադրելի է, որ Անձևացին բեղուն գրիչ է ունեցել, սակայն ցավոք, բացի ժամերգության և պատարագի մեկնություններից, նրա ժառանգությունից գրեթե ոչինչ չի հասել մեզ: Մաշտոցյան Մատենադարանի թիվ 5411 և 6302 ձեռագրերում հանդիպեցինք «Խորովայ բանք առ վասն եկեղեցականաց» վերնագրությամբ մի գրվածքի: Սույն գործի Անձևացու հեղինակ-

---

[32] «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», Երևան, 1988 թ., հտ. Բ, էջ 785, տե՛ս նաև **Լևոն Խաչիկյան,** «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1955 թ., էջ 397, նաև «Յուցակ ձեռագրաց», Երևան, 1965 թ., Ա, էջ 1296: Սակայն վերջին երկու հեղինակները սույն վանքը նույնացնում են Սալմաստի համանուն վանքի հետ, որը սխալ է: Խորովա Ս. Նշան վանքի մասին, որպես Խորով Անձևացու հիմնադրած վանք, Հ. Համազասպ Ոսկյանը լռում է. տե՛ս **Հ. Համազասպ Ոսկյան,** «Վասպուրական—Վանի վանքերը», Վիեննա, 1940 թ., էջ 268—269:

[33] **Մելքիսեդեկ վրդ. Մուրադեանց,** էջ 406:

[34] **Վազգեն Հակոբյան,** «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար», Երևան, 1984 թ., հտ. Գ, էջ 592, **Արտաշես Մաթևոսյան,** «Հայերեն ձեռագրերի հաշատակարաններ. ԺԳ դար», Երևան, 1984 թ., էջ 762, 812, 870:

[35] **Մ. Չամչյան,** «Հայոց Պատմություն», Երևան, 1985 թ., Բ, էջ 835:

կությանը պատկանելու մասին է վկայում Գարեգին Զարբհանալյանը: «Բանք երանելւոյն Խոսրովայ խորագրով երկասիրութեան մը յիշատակութեան հանդիպեցիք, որ հաւանականաբար Անձևացւոյն է»[36]: Գրության լեզուն, ոճը և նպատակային ուղղվածությունը նույնպես խոսում են գործի մեծանուն եպիսկոպոսի գրչի արդյունքը լինելու օգտին: Կարծում ենք, որ Անձևացու գործերից հատվածներ կամ ամբողջական գործեր պահպանված են նաև նրա ժամերգության և պատարագի մեկնությունների մեջ, որոնք մաս չեն կազմում կամ առնչություն չունեն այդ մեկնությունների հետ, բայց հավաքված և տեղադրված են այստեղ, ինչպես օրինակ՝ «Մեկնութիւն ժամակարգութեան» տպագրված օրինակում, գիշերային և առավոտյան ժամերգությունների միջև զետեղված «Բանք պիտանիք խրատականք. յոյժ օգտակարք և հոգեշահք նորին աւուրք հոգեկիր վարդապետին Խոսրովու. Զկամքն և զերկիւղն Աստուծոյ ճշմարտութեամբ ծանուցողի»[37] գործը:

Խնդրո առարկա գրվածքը խրատական բնույթի է, որը ուղղված է ժամանակի հոգևորականությանը: Մեր կարծիքով այն հույժ օգտակար է նաև այսօր քահանայական պաշտոնի ողջ սրբությունը, էությունը և առաքելությունը ճիշտ հասկանալու և գնահատելու առումով: Այդ փոքրիկ խրատը քահանայական կենցաղավարության հսկայական գանձարան է: Այս կարևորությունը զգալով, ներկայացնում ենք այդ գործի բնագիրը աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ, որը լույս է սփռում նաև Անձևացու հայացքների վրա:

Բնագիրը կազմել ենք Մաշտոցյան Մատենադարանի հետևյալ ձեռագրերից.

Ա. Ձեռագիր—Ժողովածու թիվ 6302:
ԺԸ դ.: Թերթ՝ 128: Թուղթ:

Բ. Ձեռագիր—Ժողովածու թիվ 5411
1817 թ.: Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանք (Արղնի): Գրիչ՝ Յակոբ աբեղ.: Թերթ՝ 114:

ՎԱՉԳԵՆ ՍՐԿ. ԳԱԼՍՏՅԱՆ

---

[36] **Գ. Զարբհանալեան,** «Հայ հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար)», Վենետիկ, 1886 թ., էջ 518:

[37] «Մեկնութիւն ժամակարգութեան», Կ. Պոլիս, 1734 թ., էջ 108—129:
Այդ գործի աշխարհաբար թարգմանությունը իրականացրել է Տիգրան Խաչատրյանը. տե՛ս «Գանձասար», Բ, էջ 152:

ԲԱՆՔ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ[1] ԽՈՍՐՈՎՆՑ ԱՌ ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՍՆ՝ «ԶԱՐՀՈՒՐԵՑԱՐՈՒՔ ԲԱՐԵԿԵՑԻԿՔ, ՏՐՏՄԵՑԱՐՈՒՔ ՅԱՆԶՆԱՊԱՍՏԱՆՔԴ. ՄԵՐԿԵՑԱՐՈՒՔ, ԿՈՂՈՊԵՑԱՐՈՒՔ, ՔՐՋԱՋԳԵՍՏՔ ԵՂԵՐՈՒՔ»[2] (ԵՍ. ԼԲ 11)

Իսկ վասն զատկի[3] ճրագալուցին[4] յերեկոյին շաբաթուն ասէ աւետարանագիրն*, որով յայտ է, թէ խոր երեկոյ էր և չէ պարտ յարևի արձակել զպատարագն, այլ աստեղովք[5] և ճրագով, որպէս անուն ճրագալոյց է[6]: Եւ յայսմիկ[7] որպէս[8] սուտ են յոյնք, զի պահք քարոզեն, թէպէտ[9] մինչև[10] յերեկոյ պահեն, սուտ են և հայք, զի յարևի լուծանեն: Զի նոցա լուծանել պարտ էր և նոցա պահել մինչև յերեկոյ[11] ըստ պատշաճի, որպէս օրէն է[12] և Գիրք Սուրբք[13] վկայեն, որ են քանոն հաւատոյ և ոչ ըստ մարմաջելոյ[14] կուտել վարդապետս և իւրաքանչիւր ախորժակօք վարիլ[15] անհնազանդութեամբ և անձնահաճութեամբ[16]: Այլև եկեղեցի Քրիստոսի արեան է գին, որպէս երանելին Պետրոս գրէ. «Ո՛չ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք, այլ պատուական արեամբն[17] Քրիստոսի»**: Եւ գիտել պարտ է, զի հոմանուն է կոչումն եկեղեցւոյ, քանզի ասի հաւատացեալ ժո-

---

[1] Բ ձեռ. երանելոյն:
[2] Ա ձեռ. չունի այս հատվածը:
[3] Ա զատկին:
[4] Բ ճրագալուծին:
* ՄԹՏ. ԻԸ 1:
[5] Բ աստեղով:
[6] Ա ճրագալուց, Բ ճրագալույց:
[7] Ա, Բ այսմիկ:
[8] Բ չունի որպէս:
[9] Բ թէ:
[10] Բ մինչ:
[11] Բ երեկոյ, Ա մինչև ցերեկոյ պահէն:
[12] Ա աւրէն:
[13] Բ սուրբ:
[14] Բ մարմաչելոց:
[15] Բ վարել:
[16] Ա առաձնահաճութեամբ:
[17] Բ արեամբ:
** հմմտ.Ա ՊԵՏ. Ա 18:

ղովուրդ[18]: Եկեղեցի յորջորջի հոմանուանաբար և ի քարանց և ի փայտից շինեալն եկեղեցի: Եւ է սա ընդհանուր և բացարձակ անուն և չէ պարտ փակել ընդ ումէք[19] իշխանութեամբ, և՛ ոչ վաճառել, և ո՛չ բաժին տալ դատեր, և ո՛չ վարձուք դրան քահանայ պահել անարժան[20] քահանայի և ուտել զեկեղեցի: Այլ յորժամ[21] ընկեցի քահանայն[22] ի քահանայութենէն, արտաքս ելցէ և յեկեղեցւոյն[23], թէև ինքն անձամբ է շինեալ զեկեղեցին և կամ նախնիք իւր, զի արբութիւն արբոց վայել է: Նոյնպէս և թէ ի[24] հերձուածութիւն ոք անկանի, չէ արժան ունել զեկեղեցի[25], զի թէ գործով ապականի անարժան է արբութեանցն, ո՞րչափ ևս առաւել, որ ի հաւատոն թերի գտանի: Եւ, զի գրեալ իսկ է. «զմեղս ժողովրդեանն կերիցէ քահանայն»[26*] և յանցաւոր քահանայն[27] զմեղաւորի մեղս զիա՞րդ կարէ ուտել[28], զի երբ ինքն բարեխօսի կարօտ է, այլոց զիա՞րդ կարասցէ[29] միջնոյդ լինել: Զորօրինակ[30] ջուր զխոտ[31] ոչ այրէ, այլ աճեցուցանէ և սնուցանէ, այսպէս և յանցաւոր քահանայն ոչ միայն թէ ո՛չ քաւէ զմեղս ժողովրդեանն, այլև առիթ լինի մեղաց և յորդորէ ի մեղս ժողովուրդն՝ կոյր կուրին առաջնորդել երկոքին անկանին ի խորխորատ**, առաւգապէս ըստ Գրոց բանի: Վասն որոյ պարտ է քահանային հրով Հոգւոյն նախ զինքն մաքրել և ապա զայլոցն ուտել զմեղս և ծախել հրով աստուածայնով: Զի քահանայն մաքրօղ թարգմանի[32], զի մաքրեացէ զմեղս ժողովրդեանն արբասէր վարուք և[33] մաքրափայլ աղօթիք: Եւ ըստ այլ տեսութեան[34] հայր ասի քահանայն, զի հայրաբար խնամարկեացէ որդիացելոցն, զնոցին պակասութիւն ինքեան համարելով և իբրև անձին հոգ տանելով, որպէսզի համարս տալոց է ընդ ամենեցուն առաջի Աստուծոյ: Յաղագս այսորիկ եկեղեցի Աստուծոյ ոչ է ումէք սեփհական[35] ժառանգութիւն, այլ ճշմարիտ քահանայից, որք բարւոք պաշտիցեն[36]:

Եւ գիտել պարտ է, զի զժողովուրդն քահանային պարտ է անուանել՝ ո՞վ ճշմարիտ իցէ և ոչ եկեղեցւոյն: Քրիստոնէի[37] ոչ է օրէն[38] զքրիստոնեայ

---

18 Բ քանզի ասէ հաւատացեալ ժողովուրդ եկեղեցի:
19 Բ քակել ըստ ումէք:
20 Բ անրին:
21 Բ որ ժամ:
22 Ա չունի քահանայն:
23 Բ եկեղեցւոյն:
24 Բ չունի ի:
25 Ա զեկեղեցին:
26 Բ քահանան:
* Համմտ. ՈՎՍԷ Դ 8:
27 Ա քահանայ, Բ քահանան:
28 Ա ոչ կար է ուտել:
29 Ա կար է:
30 Ա զորաւրինակ:
31 Բ ըզխոտ:
** Համմտ. ՄՏԹ. ԺԴ 14, ՂՈՒԿ. Զ 39:
32 Բ թարքմանի:
33 Բ չունի և:
34 Բ ըստ Աստուծոյ տեսութեան:
35 Բ սեպհական:
36 Բ պաշտեցին:
37 Ա Քրիստոնէի:
38 Ա աւրէն:

ծառայ պահել կամ վաճառել[39], այլ իբրև եղբայր[40] սիրելի ունել[41]: Զի՞նչ տայցեն պատասխանի, որք զանդամսն[42] Քրիստոսի դատեր բաժին տան, կամ արծաթոյ[43] վաճառեն: Զի որպէս ասէ երանելի առաքեալն Պօղոս, Քրիստոս հարսնացոյց իւր զեկեղեցի և որպէս այրն և կինն մի մարմին է, այսպէս Քրիստոս և եկեղեցի մի է: Եւ յորժամ եկեղեցի վաճառի, Քրիստոս ընդ եկեղեցւոյն[44] վաճառի և զո՞ր ներել թողութիւն[45] ունիցի, որ զՔրիստոս վաճառէ[46], կամ դատերաց պոռոգ տայ, կամ կարէ՞ ասել այնպիսին, թէ քրիստոնեայ իցէ կամ քահանայ եկեղեցավաճառ և Աստուածավաճառ: Ո՞ւր դիցուք և զայնոսիկ, որք զսիմոնեան ախտն ախտանան՝ կուրութեամբ մտաց և ապշութեամբ սրտի, և որք գին առնուն զմեղս թողլով, և կամ որք զիաւսոս վաճառեն[47], որպիսի՞ գեհենական զնոսա ոչ այրէ: Քրիստոս ձրի եթող զմեղս աշխարհի և դու գին առնուս և վաճառե՞ս զպարգևսն Աստուծոյ: Զհոգին բաշխեաց Տէրն առաքելոցն առանց կաշառոց ի վերնատունն[48] և դու արծաթո՞յ վաճառես զշնորհսն[49] Հոգւոյն Սրբոյ: «Որք ի Քրիստոս մկրտեցայք[50], զՔրիստոս զգեցայք»*,—ասէ անօթն ընտրութեան[51] Պօղոս և Հոգին Սուրբ աներևութաբար ստուգապէս իջանէ[52] ի ջուրս[53] աւազանին և դու անզգամիս[54] արծաթոյ վաճառել զՈրդի և զՀոգին Սուրբ Աստուծոյ: «Առէք կերայք,—ասաց Տէրն,—այս է մարմին իմ»**, և առաքեալ մաքրութեամբ, ասէ, մերձենալ*** և դու գին մարմնոյ և արեան Տեառն պահանջես և կարծես, թէ չե՞ս Յուդայ[55] մատնիչ Քրիստոսի կամ ի[56] խաչահանութեանց Տեառն: «Խոտեսցին ընտրեալքն[57] արծաթովք»,—ասէ մարգարէն**** և Գիրք Սուրբք[58] նզովեն[59] զառուողն[60] և զառողն[61] արծաթոյն և դուք կոկեա՞լ և փերևետեալ[62] պարեգօտիք[63] կամիք արդարանալ: Մի՞թէ դու ունիս իշխանութիւն զՀոգին տալոյ,

---

[39] Բ ձեռագրում այս հատվածն անընթեռնելի է:
[40] Բ զեղբայր:
[41] Ա ունելով:
[42] Բ զանդամս:
[43] Ա արծաթու:
[44] Բ ընդ նմա:
[45] Ա թողութեան:
[46] Բ վաճառի:
[47] Ա վաճառին:
[48] Բ վերնատունն:
[49] Բ զշնորհս:
[50] Բ մկրտեցաք:
* Համմտ. ԳԱՂ. Գ 27:
[51] Բ ընդրութեան:
[52] Բ իջնէ:
[53] Ա ի ջուր:
[54] Բ անզգամես:
** ՄՏԹ. ԻՋ 26—29, ՄՐԿ. ԺԴ 22—25, ՂՈՒԿ. ԻԲ 14—20, ՀՈՎՀ. ԺԳ 21—30:
*** Համմտ. Ա ԿՈՐՆԹ. ԺԱ 23—25:
[55] Բ յուդա:
[56] Բ չունի ի:
[57] Բ ընդրեալքն:
**** ՍՂՄ. 4Է 31:
[58] Բ գիրք սուրբ:
[59] Բ նզովին:
[60] Ա զսրբւօղն Բ զտուօղն:
[61] Ա, Բ զառօղն:
[62] Ա փերեւետեալ, Բ թիւր և եպեալ:
[63] Ա պարէ գօտիք:

զի վաճառես զՀոգին, կամ դու, որ առնուս զպարգևսն[64] Աստուծոյ և չես արժանի. յարծաթն ապաւինիս[65] իբրև զՍիմոն մոգ և կախարդ[66]: Թէպէտ և արծաթասէրն ո՛չ ասէ «արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ»* վասն իւրոյ ախտին, այլ երկոքին[67] ի միասին պղծիք[68] նա, զի վաճառեաց զշնորհն և դու, զի[69] զպարգևսն Աստուծոյ համարիս[70] ընչիւք ստանալ՝ երկոքինդ պըղծապարտ Քրիստոսի անուանիցիք[71]: Ո՛չ լուայք ի Գրոց Սրբոց[72], զի ասէ. «ո՛չ որ զանձն ընծայեցուսցէ[73], այլ զոր Տէր ընծայեցուսցէ[74]**: Մովսէս, զԱհարոն եղբայր իւր ո՛չ իշխեաց համարձակեցուցանել ի քահանայութիւն առանց Աստուծոյ հրամանին և ո՛չ ինքն Ահարոն[75] համարձակեցաւ մատչել մինչև ի Տեառնէ կոչեցաւ***, «Վաղվաղակի յուրուք վերայ[76] ձեռն մի դնէր[77], —Տիմոթեայ[78] Պօղոս պատուիրէ,—և մի լինէր[79]. ասէ, կցորդ մեղաց օտարաց[80]****: Եւ դու առանց քննելոյ, արծաթսիրութեանն[81] կալեալ ախտիւ, մատանեա զշնորհն Աստուծոյ տալով անարժանս[82], վասն որոյ գայ, ասէ, բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն[83] անհնազանդից պատուիրանին Տեառն*****, որ է ահագին յոյժ[84]: Այսոքիկ հայոց թիւրութիւնք և որ սոցին գոն նմանք և երանի, թէ գոյր ինձար բժշկել զհիւանդութիւնս զայս, զի շղուականք[85] տիրեցին շնորհաց և որք թէ [այս որ ունիցին?][86] գոնէ արժան ո՛չ են աթոռոց, օրհնադիրք[87] և կանոնողք[88] կարգեցան կրօնիցս, զմժդուկս քամել և զուղտս[89] կլանել****** և զգերան ո՛չ առ շիղ փոխանակել, գործովք ապակա-

---

64 Ա զպարգևն:
65 Ա ապաւինիս:
66 Բ կախարդ:
* ԳՈՐԾՔ Ը 20:
67 Ա երկուքն:
68 Ա պատժիք:
69 Բ չունի զի:
70 Բ համարեցիս:
71 Ա պատժապարտ գտանիցիք:
72 Ա իւրոց սրբոց:
73 Բ ընծայացուցանէ:
74 Բ ընծաեցուսցէ:
** Բ ԿՈՐՆԹ. Ժ 18:
75 Բ ահարօն:
*** Համմտ. ԵԲՐ. Ե 4:
76 Բ վերա:
77 Բ դնիցիս:
78 Ա տիմոդեայ:
79 Ա լինիր Բ լիներ:
80 Ա աւտարաց:
**** Ա ՏԻՄ. Ե 22:
81 Բ արծաթսիրութիւն:
82 Բ անօրենս:
83 Ա որդոցն:
***** Համմտ. ԵՓԵՍ. Ե 6, ԿՈՂՈՍ. Գ 6:
84 Ա որ է ահագին յոյժ հայոց թիւրութիւնք:
85 Բ զի ի շղուականք:
86 Ա, Բ ասորոնից. ապրոնից, ընթեռնելի չէ:
87 Ա աւրհնադիրք:
88 Բ կանոնօղք:
89 Ա զուխտս:
****** հմմտ. ՄՏԹ. ԻԳ 24:

ձեալք և հաւատով ո՛չ յաւէտ[90] փոյթ առ ճշմարտութիւն ունել: Վասն որոյ Յուդայ և Սամարիայ մեծապէս[91] մոլորեալ ուղղանի ախտի ծառայել միայն առ միմեանս մեծաբանելով[92] եւ պօղոսեան[93] և[94] եւ ապօղոսեան[95*], և ոչ միով իւիք ի ճշմարտութիւն[96] ծառայեալք, ո՛չ ոք սիրով զօրացեալ[97], ո՛չ հեզութեամբ պայծառացեալք, ո՛չ զմիմեանս լաւ քան զանձինս համարեալ՝ այլ անձնահաճ, ինքնահաճ, ինքնօրէնս[98], ամենայնիքն[99] ինքնասահմանի, ինքնակալունք, սիրեցաք զիարս մարդկան առաւել քան զիարս Աստուծոյ և փոխեցաք զյաւիտենականն ընդ[100] առօրէիս[101] և զհանդերձեալ կեանցն վայելսն ընդ աստեացս երազականի: Վասն որոյ Գիրք Սուրբք[102] զմեզ յանդիմանեն և ի մարդկանէ եպերանս կրեմք և վայի եմք արժանի, զի վասն մեր հայհոյի անունն Աստուծոյ: Երանելի առաքեալն ըստ[103] քաղաքաց քաղաքաց կարգէ եպիսկոպոս և մի ասէ լինել և ոչ երկու, և այժմ տեսանեմք վաղվաղակի զյողովս, զի վասն սիմոնեան ախտին և յուդայեան արծաթոյն զազգայինս իրաքանչիւրոց կենդանութեամբ միոյն զմիսն առ ընթեր[104] կացուցանել և զգինն արեանն Քրիստոսի ինքեանց ժառանգութիւն սեփհականել[105]: Զայս յորո՞ց[106] ազգէ ուսան քրիստոնէից[107], կամ յորո՞ց[108] կանոնաց օրինադրեցան[109], կամ զո՞ր պատասխանատրութիւն ունին տալ Աստուծոյ: Հովիւք կարգեցան ի վերայ հօտին Քրիստոսի զանուն քաջ հովուին ժառանգեցին, որ զանձն իւր եդ ի վերայ[110] հօտին, զորոյ պարտին զնմանութիւն յինքեանս բերել որք հովիւք կարգեցան բանաւոր[111] հօտին Քրիստոսի: Իսկ նոքա[112] զայսպիսի թողեալ պողոտայ[113] և զշաւիղ ճշմարիտ հետևման հետոց քաջ հովուին, զարտուղի[114] գնան ճանապարհ ըստ ձախողակի ընթացից փառամոլք և արծաթասէրք եղեալք, կաշառատուրք[115]

---

[90] Ա յաւետ:
[91] Ա միապէս:
[92] Ա միաբանելով:
[93] Բ պողոսեան:
[94] Ա չունի և:
[95] Բ ապողոսեան:
* հմմտ. Ա ԿՈՐՆԹ. Ա 12, Գ 4:
[96] Բ ճշմարտութեան:
[97] Ա չունի ոչ ոք սիրով զօրացեալ:
[98] Ա ինքնաւրէն, Բ ինքնօրէն:
[99] Ա ինքնօրէնս ամենեքեան:
[100] Բ չունի ընդ:
[101] Ա առաւրէիս:
[102] Ա, Բ սուրբ:
[103] Բ ընդ:
[104] Բ առընթէր:
[105] Բ սեպհական:
[106] Ա որոց:
[107] Բ քրիստոնեայք:
[108] Բ որոց:
[109] Ա աւրինադրեցան:
[110] Բ վերա:
[111] Բ բանաւոր:
[112] Բ նոցա:
[113] Ա պողոտա:
[114] Բ զզարտուղի:
[115] Ա կաշառակուրք:

և թիւրադատք[116], ձիաբոյծք և անասնապահք[117], գիւեսէրք և արբեցօղք, հարեալ սիրտ զագահութեամբ[118] կրկնամեռք ըստ ներքին[119] և արտաքին մարդոյն՝ առաջնորդելով ժողովրդեանն ո՛չ արդարութիւն, այլ ի կորուստ և յապականութիւն, ի գայթակղութիւն և ի դատապարտութիւն[120] ընդ որս առաւել հեշտացեալ ոամիկ ժողովուրդ, իբրև զվէմ զառ ի վայր[121] հոլովեալ զանցուցանեն ի չարութիւն և ի ճշմարիտն կոչեցեալ դժուարին և հրաժարեն[122]: Թէ զայլոց քրիստոնէից զուղղութիւն ոք ի մէջ բերէ և նախանձաւոր այնմ յորդորէ լինել, զինքեանս Սուրբ Գրիգորոյ հաւատովն ասեն և ջատագով նմին քարոզեն: Ապա, թէ զմերն ոք ստիպէ[123] պինդ ունել զբարին և մի այլոցն[124] խոտորել հեշտութիւն և անկարգութիւն, այնմ ընդդէմ բերել հակառակին ասելով. նոքա մի՞թէ չեն քրիստոնեայք և Աստուածապաշտք, որ նոցայն, ասեն, եթէ իցէ[125] հոգի, եղիցի և մերս ընդ նոսին: Եւ զայն ոչ կարեն իմանալ, թէ ո՛չ եղիցի այնպէս, այլ ի մէնջ հեռանան և ընդ նոսին ոչ դասին, զի հաւ, որ յԵրուսաղեմէ ելանէ մոլորական շրջի, և քար, որ ի կարգէն ոտնու յայլում վայրի զտեղի ոչ առնու: Այնպիսի[126] պարտ է իմանալ, որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոխումն յօժարին, թէ ի մէնջ հեռանան և ընդ այլ քրիստոնեայս ոչ դասին, զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատս, զոր յաւազանէն[127] էառ[128], թէպէտ մի Քրիստոս, և մի Տէր, և մի մկրտութիւն, այլ ըստ սահմանի լեզուին և գրոյն, զպահպանութիւն[129] կարգին պահանջէ, զի թէ յառաքինութենէ յառաքինութիւն և զօրութենէ ի զօրութիւն փոփոխէր ոք, գոյր պատճառս[130] ինչ խօսից և տեղի բանի յառաջ բերելոյ հայթայթանս և կարծիս տալ մարդկան երկիւղածութեան[131]: Իսկ եթէ վասն մարմնապաշտութեան և զմարմինս պարարելոյ[132] և զորովայն խճողելոյ[133] և աստուածացուցանելոյ, զո՞ր պատասխանի ունին տալ առաջի մարդկան և կամ Աստուծոյ. «Զի որ[134] սերմանէ ի մարմին,—ասէ առաքեալ,—ի մարմնոյ անտի հնձեսցէ[135] զապականութիւն»*: Եւ վասն այսորիկ պարտ է զարհուրել և դողալ, զի թէ խորհրդոց և բանից քննութիւն է որպէս և է ճշմարիտ, ապա որչափ ևս առաւել գործով մեղուցելոց, որոյ սաստիկ է պատիժ պատուհասին: Եւ մարդիկ, թէ միմեանց մեղանչեն վրեժխնդրութիւն է[136]

---

116 Բ թեւրադատք:
117 Ա անասնապարարք:
118 Ա զագահութեան:
119 Ա ներքինի:
120 Բ տարապարտութիւն:
121 Ա զարհիվայր:
122 Բ հրաւիրեն:
123 Բ ստիպի:
124 Բ ցայլոցն:
125 Բ երկիցէ:
126 Ա այնպէս:
127 Բ աւազանէն:
128 Ա առեալ:
129 Բ պահպանութիւն:
130 Ա պատճառ:
131 Բ երկիւղածութիւն:
132 Բ մեծարելոյ:
133 Բ խճելոյ:
134 Ա չունի որ:
135 Ա հնձէ:
* ԳԱՂ. Ջ 8:
136 Բ վրեժխնդրութենէ:

յԱստուծոյ, ապա որ ներել թողութեան[137] կայցէ յորժամ զօրէնս Աստուծոյ ոք արհամարհէ և ընդդէմ Տեառն ընդվզեալ[138] հակառակիցի: Ազգս հայոց առին ի յունաց զվէտութիւն[139] և զյաւնոգնութիւն, ի փոանգաց[140՝ զձկնկերութիւն յաւուրս պահոց[141] և զգինըմպութիւն[142], յասորոց՝ զանփոյթ[143] առնել[144] զխոստովանութիւն[145] և զմկնանկ և զշան յազածի օրինութիւն[146], զոմանց թողլով զպահոց պնդութիւն և զջերմ ի հաւատս լինել, զկիսոց[147] անփոյթ[148] արարեալ զհնազանդութիւն եկեղեցւոյ: Եւ եկեղեցականացս[149] զոմանց ոչ գնտաւ[150] ածել զտօնաւիրութիւն[151] և զյորդորումն աղօթից, զոր յամենայնէ ի բարւոյ հետացաք առեալով զօգուտն և զչարն սիրեցաք: Նաև զի՞նչ պարտ է ասել և զատելութիւն, և զնախանձն, և զկայենի[152] եղբայրասպանութիւն ոչ միայն զմարմնի, այլև զհոգի չարապէս նենգութեամբ: Եւ թէ Նոյեան դարուն ջրհեղեղն ոչ ողողէ[153] մարմինս մեր և կամ սոդոմական հուր ոչ կիզէ, բնաւ ոչ ածեմք գնտաւ, թէ հեղեղ մեղաց զհոգիս մեր խորասուզէ[154] և հուր ցասման տոչորէ: «Որ հայի ի կին մարդ,—ասաց Տէրն,—ցանկութեամբ, նոյն ժամայն սրտի շնացաւ»* և «որ բարկանայցէ տարապարտուց ի վերայ եղբօր, պարտաւոր լիցի ի գեհենական հրոյ»** և տեսցուք, թէ ո՞վ ազատ[155] գտանի յայսցանէ և կամ ո՞վ պարծեսցի ունել սիրտ սուրբ առաջի Աստուծոյ ըստ հրամանի Գրոց Սրբոց: Նաև զայսցանէ[156] ո՛չ է պարտ զանց առնել, քանզի[157] յեօթն[158] աւուրց, զոր արար Աստուած, զաւուրց օր[159] մի յաւուրկ և սեպհական[160] ինքեան, զի պարապեսցեն մարդիկ յամենայն[161] հոգւոց մարմնականաց և խոստովանութեամբ և ապաշխարութեամբ արժանի լինին թողութեան մեղաց և հաղորդութեան մարմնոյ և արեան Տեառն: Իսկ յայնմանէ բազմապատիկ ևս զրկէ բանսարկուն և մեծամեծ չարեաց արար զնոյն

---

137 Բ թողութիւն:
138 Բ ընդվզել:
139 Ա զվիսութիւն:
140 Ա փլոանգաց:
141 Ա չունի յաւուրս պահոց:
142 Բ զգինըմբութիւն:
143 Բ զանբոյթ:
144 Ա առնել:
145 Ա խոստովանութենէ:
146 Ա աւրինութիւն:
147 Ա զկիսոս:
148 Ա անբոյթ:
149 Բ եկեղեցւոյ և եկեղեցականաց:
150 Բ մտաւ:
151 Բ զտօնախմբութիւն:
152 Բ զկայենի:
153 Բ ողողի:
154 Բ ջրհեղեղն ոչ ողողի մարմինս մեր խորասուզէ:
* ՄՏԹ. Ե 28:
** ՄՏԹ. Ե 22:
155 Ա չունի ազատ:
156 Ա զայս ցուցանէ:
157 Բ քարոզի:
158 Ա յեւթն:
159 Ա աւր:
160 Ա, Բ սեպհական:
161 Ա ամենայն:

պատճառս[162], քանզի յայնմ աւուր հնարեցաւ կարգել զվաճառաշահութիւն, յորում առաւել գայթակղին մարդիկ ի մեղս բազմապատիկս, ի սուտ ասել, ի զրկել, ի նենգել, ի յիշոցել[163], ի սուտ և յիրաւի երդնուլ, յարբեցութիւն[164], ի պոռնկութիւն[165], ի սպանութիւն, ի թատերս, ի խաղս, յաղանդաւորութիւն, ի ծաղրածութիւն, ի լրբութիւն և յայլ ամենայն չարիս: Քանզի քահանայն, որ է գլուխ ժողովրդեանն և հովիւ բանաւոր հօտին Քրիստոսի, փոխանակ այնմ, որ առաւել քան[166] զայլ աւուրսն պարտ էր յեկեղեցի դիմել, պատարագ մատուցանել, զհաղորդն փոխել, զոր չէ պարտ ըստ կանոնաց սրբոց հարցն, քան զութ օրն[167] յառաջ անցանել[168] առանց փոխելոյ փրկական[169] հաղորդութեան, այլ ամենայն կիրակէի[170] նորոգել, զժողովուրդն խոստովանեցուցանել[171] և հաղորդել և պատուէր տալ յաւուր կիրակէի[172]: Առաւել զաղքատս կերակրել և զբանտեալս[173] տեսանել, զօտարս ժողովել, զհիւրս սիրով ընդունել և զամենայն բարեգործութիւնս փութանակի կատարել, որով հաճի Աստուած և զինդրուածսն[174] կատարէ: Իսկ փոխանակ այսորիկ զի՞նչ գործէ քահանայն յաւուր կիրակէի՝ առաջի[175] ժողովրդեանն անցեալ առաջնորդէ ի կրպակաւորսն[176] և ի վաճառափողոցսն, ի ստախօսութիւն, ի զրկանս, յարբեցութիւն և յամենայն մեղաց տեսակս, որովք առաւելապէս բարկացուցանեն զԱստուած և ցասումն շարժեն ի վերայ[177] արարածոց: Եւ այս ամենայն ի ծուլութենէ առաջնորդաց և անփոյթ առնելոյ զկորուստ բազմացն[178], զի յորժամ հովիւն գահավիժի հօտքն անտերունչք[179] շրջեսցին[180] և երբ զօրավարն ի կապանս ըմբռնի ի թշնամեաց, զօրքն որպիսի՞ ոչ տանջեսցին և յանդունդս խորոց ընկղմիցին[181]: Վասն այսորիկ եղև քահանայն իբրև զմի ի ժողովրդենէն և ուսուցիչն իբրև զուսանողն[182] և կամ ևս վատթարագոյն: Նաև այլ քրիստոնեայք ոչ թէ ամենայնիւ ազատ են յայսմ պարսաւանաց, այլ ոմն այսպէս և ոմն այնպէս և նոքա գթեսցեն ի ճմարտէն: Եւ յոյնք առաւել ևս յայս[183] սխալեն, զի գիտութեամբ մեղանչեն և ամբարտաւանու-

---

162 Ա զնոյնն պատճառ:
163 Բ ի յիշոց:
164 Ա յարբեցուցիւն, Բ յարբիցութիւն:
165 Ա, Բ պոռնկութիւն:
166 Բ չունի քան:
167 Ա Ը աւրն:
168 Ա յանցանել:
169 Բ փրկչական:
170 Բ կիրակէի:
171 Բ խոստովանեցնել:
172 Բ կիրակէի:
173 Բ զբանտարկելոյ:
174 Ա զինդրուածսն:
175 Բ առաջ:
176 Բ կրպակուրսն:
177 Բ ի վերա:
178 Բ զկորուստ է բազմաց:
179 Բ անտերունչք:
180 Ա շրջին:
181 Բ անտերունչք շրջեսցի և յանդունդս խորոց և երբ զօրութեամբ ի կապանս ըմբռնեսցի ի թշնամեաց զօրքն սրտի վշտով ո՛չ տանջեսցին:
182 Ա զուսանօղսն, Բ զուսուցանօղն:
183 Ա յայն:

թեամբ ընդդէմ հակառակին ճշմարտութեան և զառաքելականն ջրել ջանան զբանսն և զոր գիտեն սուտ են հնարին իրաւանսլ: Այլ դու զգոյշ լեր, Գրիգորի է, որ յայս աշխատանս զմեզ հարկեցեր, գուցէ գթեսցես, զի ամենայն բան կրկին է, ըստ մեծին Աստուածաբանի, և երկու շաւղօք ընթանայ և այլ է վերին երես բանին և այլ է խորին միտք խորհրդոցն, յոր թէ[184] ոչ ոք ատուգիւ հասցէ ի վերայ[185] գայթակղի[186]: Դարձեալ ասեմ զգոյշ[187] լեր, բազում ինչ կամէի գրել, այլ վասն անպարապութեան ոչ զօրեցի, սակայն եռակի գրեմ զգոյշ[188] լեր, զի մի գայթակղեսցիս[189]:

ԵՐԱՆԵԼԻ ԽՈՍՐՈՎԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. «ԶԱՐՀՈՒՐԵՑԵՔ, ԱՆՋՆԱՊԱՍՏԱՆՆԵՐ, ՄԵՐԿԱՑԵՔ, ԲԱՐԵԿԵՑԻԿՆԵՐ, ՏՐՏՄԵՑԵՔ, ԿՈՂՈՊՏՎԵՑԵՔ, ՔՐՋԱՋԳԵՍՏՆԵՐ ԴԱՐՁԵՔ»

Իսկ Զատկի ճրագալուցի մասին շաբաթ երեկոյան է վկայում ավետարանագիրը, որով հայտնի է, թե խոր գիշեր էր և չի կարելի պատարագը ցերեկով վերջացնել, այլ աստղերի [ներքո] և ճրագով, ինչպես որ անունը ճրագալուց է: Եվ այս բանում ինչպես սուտ են հույները, որովհետև պահք են քարոզում, թեպետ մինչև երեկո են պահում, [այնպես]

և սուտ են հայերը, քանզի ցերեկով են լուծում [պահքը]: Քանզի ըստ պատշաճի ճրագից պետք էր լուծել և սրանից պահել մինչև երեկո, ինչպես օրենքն է և Սուրբ Գիրքն է վկայում, որ է քանոնն հավատքի և ոչ [թե] ըստ մարմնոջի վարդապետներ հավաքել և յուրաքանչյուրի ախորժակով վարվել՝ աննիզանդությամբ և անձնահաճությամբ: Այլև եկեղեցին Քրիստոսի արյան գինն է, ինչպես երանելի Պետրոսն է գրում.

«Ապականացու արծաթեղենով և ոսկեղենով չէ, որ փրկվեցինք, այլ թանկագին արյամբ Քրիստոսի»: Եվ հարկավոր է իմանալ, որ եկեղեցի անվանումը կրկնիմաստ է, քանզի ասվում է հավատացյալ ժողովուրդ[ն] համանվանաբար եկեղեցի է հորջորջվում նաև քարերից և փայտից շինված եկեղեցին: Իսկ սա ընդհանուր և բացարձակ կոչում է և չպետք է սահմանափակել որևէ մեկի իշխանությամբ, վաճառել, դատեր բաժին տալ և անարժան քահանայինն վարձով [որպես] դոնն քահանա պահել և վատնել եկեղեցին: Այլ, երբ քահանան զրկվի քահանայությունից, պետք է արտաքսվի նաև եկեղեցուց, թեև ինքն անձամբ կամ իր նախնիներն [իսկ] կառուցած լինեն այն, քանզի սրբությունը սրբերին է վայել: Նույնպես և, եթե որևէ մեկը հերձվածության մեջ է ընկնում, արժանի չէ եկեղեցու մեջ մնալու, որովհետև, եթե գործով ապականվում է և արժանի չէ սրբություններին, ո՞րքան ևս առավել [արժանի չէ նա], ով հավատքի մեջ է թերանում: Եվ քանզի գրված էլ է. «Քահանան պետք է ժողովրդի մեղքն ուտի», բայց հանցավոր քահանան ինչպե՞ս կարող է մեղավորի մեղքն ուտել, քանզի երբ ինքն իսկ բարեխոսի կարիք ունի, ինչպե՞ս կկարողանա ուրիշներին միջ-

---

184 Ա յորմէ:
185 Բ ի վերա:
186 Ա գայթակղին:
187 Բ զգուշ:
188 Բ զգուշ:
189 Բ զգուշ լեր և տես զգայթակղութիւն աննիզնդ և պատկառեայ այնք էր;

ևորդ լինել: Զորօրինակ՝ ջուրը խոտ չի այրում, այլ սևուցում է և աճեցնում, այսպես և հաևցավոր քահանան ոչ միայն ժողովրդի մեղքը չի քավում, այլև մեղքի պատճառ է դառնում և ժողովրդին. հորդորում դեպի մեղքը՝ կույրը կույրին առաջնորդելով երկուսն էլ խորխորատ են ընկնում, ըստ Գրքի խոսքի ստուգության: Որի համար քահանան պարտավոր է Հոգու հրով նախ իրեն մաքրել և ապա ուրիշների մեղքը քավել և սպառել աստվածային հրով: Քանզի քահանա մաքրող է թարգմանվում, որպեսզի սրբասեր վարքով և մաքրափայլ աղոթքով մաքրի ժողովրդի մեղքը: Նաև ըստ այլ տեսության [քահանան] հայր է ասվում, որպեսզի հայրաբար խնամարկի որդեգրվողներին, ինչպես որ [սեփական] անձի մասին է հոգում նրանց թերություն իրեն համարելով, որովհետև ամենքի փոխարեն հաշիվ է տալու Աստծո առաջ: Այս պատճառով Աստծո եկեղեցին ոչ ոքի սեփական ժառանգությունը չէ, այլ ճշմարիտ քահանաների, ովքեր բարվոք են պաշտում [Աստծուն]: Նաև անհրաժեշտ է իմանալ, որ քահանային պետք է ժողովուրդն ընտրի, [քանզի] եկեղեցուց բացի ո՞վ կարող է ճշմարիտ լինել: Քրիստոնյային չի կարելի քրիստոնյա ծառա պահել կամ վաճառել, այլ պահել ինչպես սիրելի եղբորը: Ի՞նչ պատասխան պիտի տան [նրանք], ովքեր Քրիստոսի անդամները [իրենց] դատերն են բաժին տալիս կամ արծաթով վաճառում:

Քանզի ինչպես երանելի Պողոս առաքյալն է ասում, Քրիստոս հարսնացրեց իր եկեղեցին, և ինչպես այրն ու կինն են մի մարմին, այնպես և մի են Քրիստոս և եկեղեցին, իսկ երբ վաճառվում է եկեղեցին, եկեղեցու հետ վաճառվում է նաև Քրիստոս և ո՞ր [քահանայի] ներելը թողության կարժանանա, որը Քրիստոսին վաճառում կամ դատերին է հարսնաբաժին տալիս, և կամ այդպիսի եկեղեցավաճառն ու Աստվածավաճառը կարո՞ղ է ասել, թե քրիստոնյա է կամ քահանա:

Ո՛ւր դևերք և նրանց, ովքեր մտքի կուրությամբ և սրտի ապշությամբ սիմոնական ախտով են ախտավորվում,

ովքեր մեղքը թողնելիս վարձ են վերցնում, և կամ ովքեր հավատքն են վաճառում, ո՞ր գեհենը նրանց չպետք է այրի: Քրիստոս ձրի թողեց աշխարհի մեղքը, բայց դու վարձ ես վերցնում և վաճառում Աստծու պարգևները: Տերը վերնատան մեջ հոգին առանց կաշառքի բաշխեց առաքյալներին, իսկ դու արծաթո՞վ ես վաճառում Սուրբ Հոգու շնորհները: Ընտիր անոթ Պողոսն ասում է. «Դո՛ւք, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» և Սուրբ Հոգին ստուգապես, աներևութաբար իջնում է ավազանի ջրի մեջ, իսկ դու հանդգնում ես արծաթո՞վ վաճառել Որդուն և Աստծու Սուրբ Հոգուն: Տերն ասաց. «Առեք, կերեք, այս է իմ մարմինը», իսկ առաքյալն ասում է, մաքրությամբ մոտենալ [խորհրդին], բայց դու Տիրոջ մարմնի և արյան [համար] վարձ ես պահանջում և կարծում ես, թե Քրիստոսի մատնիչ Հուդան կամ Տիրոջը խաչ բարձրացնողներից [մեկը] չե՞ս: Մարգարեն ասում է. «Պիտի մերժվեն
արծաթով ընտրվածները» և Սուրբ Գիրքը նզովում է արծաթ և՛ տվողին, և՛ վերցնողին, իսկ դուք պարեգոտներով պճնվելով և զարդարվելո՞վ եք կամենում արդարանալ: Մի՞թե դու իշխանություն ունես Հոգին բաշխելու, որ վաճառում ես Հոգին, կամ դու, որ առանում ես Աստծո շնորհները և արժեքի չես, արծաթին ես ապավինում, ինչպես կախարդ և մոգ Սիմոնը: Թեպետ և արծաթասերը իր [իսկ] ախտի պատճառով չի ասում «քո արծաթը քեզ հետ, թող կորստյան մատնվի», սակայն երկուսդ էլ միասին պղծվում եք՝ նա, քանզի շնորհը վաճառեց, և դու, որ Աստծու շնորհները ենթադրում

ես արծաթով ստանալ՝ երկուսդ էլ Քրիստոսին պղծապարտներ պիտի կոչվեք: Չե՞ք լսում Սուրբ Գրքից, որ ասում է. «[Ընտրյալը ևա չէ], որ ինքն իրեն է ընծայում, այլ [ևա], ում Տերն է ընծայում»: Մովսեսն առանց Աստծու հրամանի, չհամարձակվեց իր Ահարոն եղբորը քահանայության կոչել և ոչ էլ ինքը՝ Ահարոնը, հանդգնեց [քահանայության] մոտենալ, մինչև Տիրոջից չկոչվեց: Պողոսը Տիմոթեոսին պատվիրում է. «Շտապով, որևէ մեկի վրա ձեռք մի՛ դիր և ուրիշների մեղքերին կցորդ մի՛ եղիր», իսկ դու արծաթասիրության ախտով բռնված առանց քննելու Աստծո շնորհը տալիս ես անարժանին: «Այդ պատճառով կգա Աստծու բարկությունը, Տիրոջ պատվիրանին անհնազանդ որդիների վրա»,—ասում է [Սուրբ Գիրքը], որը սարսափելի մեծ է: Սրանք և սրանց նմաններն են հայոց մոլորությունները և երանի, թե հնարավոր լիներ բժշկել այս հիվանդությունը, որովհետև շեղվածները տիրեցին շնորհներին և ովքեր այս ունեն, անգամ [քահանայական] աթոռներին արժանի չեն, օրենսդիրներ և կրոնի կանոնավորողներ կարգվեցին՝ մժղուկները քամել և ուղտերը կլանել, բայց ոչ գերանը շյուղի փոխարկել, գործերով ապականված և հավատքով [էլ] երբեք չեն շտապում ճշմարտության հասնել: Որի համար Հուդան և Սամարիան մեծապես մոլորված ախտի ոտկանին են ծառայում միայն, միմյանց հանդեպ մեծաբանելով, [թե] ես պողոսյան [եմ] և ես ապողոսյան, ճշմարտությանը ոչնչով չծառայելով՝ ո՛չ սիրով զորանալով, ո՛չ խոնարհությամբ բարձրանալով, ո՛չ հեզությամբ պայծառանալով, ո՛չ միմյանց ավելի լավ, քան սեփական անձերը համարելով, այլ անձնահաճ, ինքնահաճ, ինքնօրեն, ամեն ինչում ինքնահասահմնան, ինքնականոն, մարդկանց փառքը ավելի սիրեցինք, քան Աստծունը, և հավիտենականը՝ առօրեական, իսկ հանդերձյալ կյանքի վայելքները այստեղի երազականով փոխանակեցինք: Որի համար և Սուրբ Գիրքն է հանդիմանում մեզ, և մարդկանցից ենք այսպանվում և վայի ենք արժանի, քանզի մեր պատճառով հայհոյվում է անունն Աստուծո: Երանելի առաքյալը եպիսկոպոս է կարգում ըստ քաղաքների և հրամայում [ամեն քաղաքում] մեկ և ոչ երկու եպիսկոպոս լինել, իսկ այժմ շտապով բազումների ենք տեսնում, քանզի սիմոնական ախտի և հուդայական արծաթի պատճառով յուրաքանչյուրն իր ազգականներին մեկի կենդանությամբ մյուսին աղընթեր է կարգում և Քրիստոսի սրյան վարձը իր ժառանգությամբ սեփականացնում: Սա ո՞ր քրիստոնյա ազգից սովորեցին, կամ ո՞ւմ կանոններից օրինադրեցին, կամ ինչ պատասխան պիտի տան Աստծուն: Քրիստոսի հոտին հովիվներ կարգվեցին և քաջ հովվի անունը ժառանգեցին, որն իր կյանքը տվեց իր հոտի համար, [և] որին պարտավոր են նմանվել [նրանք], ովքեր հովիվներ կարգվեցին Քրիստոսի բանական հոտին: Բայց սրանք քաջ հովվի հետքերի ճշմարիտ հետևման այսպիսի պողոտան և շավիղը թողած, ըստ ձախողակի ընթացքի զարտուղի ճանապարհով են գնում փառամոլներ և արծաթասերներ, կաշառասուներ և թյուրադատներ, ձիաբույծներ և անասնապահներ, գինեսերներ և հարբեցողներ լինելով, սրտի ագահությամբ բռնված կրկնամեռներ [են դառնում] ըստ ներքին և արտաքին մարդու՝ ժողովրդին առաջնորդելով ոչ թե արդարության, այլ ի կորուստ և ապականություն, ի գայթակղություն և ի դատապարտություն, որոնց մեջ ոամիկ ժողովուրդը հեշտացած, ինչպես զառիվայր գլորվող վեմը մտնում է չարիքի մեջ, իսկ դեպի ճշմարտություն կոչվելով դժվարանում է և հրաժարվում: Եթե այլ քրիստոնյաներից մեկը մեր մեջ ուղղություն է մտցնում և հորդորում նախանձախնդիր լինել դրա նկատմամբ, իրենք իրենց Սուրբ Գրիգորի հա-

վատքից են ներկայացնում և նրա ջատագովությունը քարոզում: Բայց, եթե մեզնից մեկը ստիպում է մեր ունեցած բարին ամուր պահել և այլոց հեշտությամբ և անկարգությամբ չխոտորվել, նրան հակառակվելով ընդդիմանում են ասելով, [թե] միթե՞ նրանք քրիստոնյաներ և Աստվածապաշտներ չեն, որտեղ որ նրանց հոգին է, թող և մերը լինի նրանց հետ: Եվ չեն կարողանում այն գիտակցել, թե այդպես չի կարող լինել, այլ մեզնից հեռանալով նրանց մեջ չեն դասվում, քանզի հավը որ Երուսաղեմից դուրս է գալիս, մոլորվածի պես է շրջում, նաև քարը, որ ոստնում է իր տեղից, այլ վայրում տեղ չի գտնում: Անհրաժեշտ է իմանալ, որ ոչքեր մարմնական փափկության պատճառով են հոժարում այդպիսի փոփոխման, եթե մեզնից հեռանում են, այլ քրիստոնյաների հետ չեն դասվում, քանզի Աստված մարդուց այն հավատքն է պահանջում, որը [նա] ավազանից է ստացել: Թեպետ մեկ է Քրիստոս, մեկ է Տերը և մեկ է մկրտությունը, բայց [Աստված] ըստ լեզվի և գրի սահմանի է կարգի պահպանությունը պահանջում, քանզի եթե առաքինությունից առաքինություն և զորությունից ի զորություն որևէ մեկը փոփոխվեր, որևէ խոսք հնարելու և մարդկանց աչքին երկյուղածության կարծիք ստեղծելու պատճառ կունենար: Իսկ եթե մարմնապաշտության, մարմինը պարարտացնելու, որովայնը խճողելու և աստվածացնելու պատճառով է, ի՞նչ պատասխան պիտի տան մարդկանց և կամ Աստծու առաջ. «քանզի ով սերմանում է իր մարմնի համար,—ասում է առաքյալը,—այդ մարմնից էլ ապականություն կհնձի»: Եվ այս պատճառով հարկ է զարհուրել և դողալ, քանզի եթե խորհուրդների և խոսքերի քննություն կա, ինչը որ ճշմարիտ է, ապա որքան առավել ևս՝ գործով մեղանչածների [համար], որի պատուհասի պատիժը սաստիկ է: Իսկ եթե մարդիկ միմյանց հանդեպ մեղանչում են [և դրա համար] վրեժխնդրություն կա Աստծուց, ապա ինչպիսի՞ ներելը թողության կարժանանա, երբ որևէ մեկը արհամարհում է Աստծու օրենքը և Տիրոջ դեմ ընդվզելով հակառակվում:

Հայոց ազգը հույներից վերցրեց հպարտությունը և հանդգնությունը, ֆռանկներից՝ պահքի օրերին ձկնկերությունը և գինըմպությունը, ասորիներից՝ խոստովանության անփութությունը և սաստկած մկան ու շան օրհնությունը, նրանց՝ պահքի ամրությունը և հավատքի մեջ ջերմեռանդ լինելը անհոգության մատնելով, և մի մասին էլ եկեղեցու հնազանդության մեջ անփույթ դարձնելով, իսկ եկեղեցականներից նրանց՝ տոնասիրության և աղոթքի հորդորի մասին չմտածելը, ինչպես ամեն ինչով ատելով օգուտը բարուց հեռացանք և չարը սիրեցինք: Նաև ի՞նչ կարիք կա խոսելու ատելության, նախանձի և կայենական եղբայրասպանության [մասին], ոչ միայն մարմնի, այլև հոգու՝ չարապես հենգությամբ: Իսկ եթե Նոյյան ժամանակվա ջրհեղեղը չի ողողում և կամ սոդոմական հուրը չի կիզում մեր մարմինը, երբեք չենք մտածում, թե մեղքի հեղեղը խորասուզվում և ցասման հուրը հոգին: Տերն ասաց. «Ով ցանկությամբ է նայում կնոջը, միևնույն ժամին արտով է շնանում» և «ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի գեհենական հրին» և տեսնենք, թե ո՞վ ազատված կլինի սրանցից և կամ ո՞վ պիտի պարծենա, Աստծու աջն սուրբ սիրտ ունենալու մեջ, ըստ Սուրբ Գրքի հրամանի:

Նաև այս մասին չպետք է մոռանալ, որ Աստված ստեղծած յոթ օրերից Իր համար սեփական և հատուկ մի օր զատեց, որպեսզի մարդիկ հանգստանան մարմնական բոլոր հոգսություններից և խոստովանությամբ ու պաշխարությամբ արժանի լինեն մեղքերի թողության ու Տիրոջ մարմնի

և արյան հաղորդությանը: Բայց դրանից բազմապատիկ զրկում է նաև բանասարկուն, որը նույն օրը մեծամեծ չարիքների պատճառ դարձրեց, քանզի այդ օրն հնարեց կարգել վաճառաշահությունը, որի բազում մեղքերի՝ սուտ խոսելու, զրկելու, նենգելու, հայհոյելու, սուտ և ճշմարիտ երդվելու, արբեցության, պոռնկության, թատրոնի, զվարճանքների, աղանդավորության, ծաղրածության, լրբության և այլ չարիքների մեջ, մարդիկ ավելի են գայթակղվում: Որովհետև, քահանան, որ գլուխն է ժողովրդի և հովիվը Քրիստոսի բանական հոտի, փոխանակ այն բանի, որ մնացած օրերից ավելի պարտ էր եկեղեցի դիմել, պատարագ մատուցել, հաղորդությունը փոխել, որը ըստ սուրբ հայրերի կանոնների, չի կարելի առանց փոխելու ութ օրից ավել պահել, այլ կիրակի [օրը] նորոգել, ժողովրդին խոստովանեցնել և հաղորդել, և պատվեր տալ կիրակի օրվա մասին: Առավել աղքատներին կերակրել և բանտարկվածներին այցելել, օտարականներին հավաքել, հյուրերին սիրով ընդունել և բոլոր բարեգործությունները փութանակի կատարել, որով Աստված առավել է հաշտվում և խնդրվածքները կատարում: Բայց սրա փոխարեն ի՞նչ է անում քահանան կիրակի օրը. ժողովրդի առաջն ացած առաջնորդում է դեպի կրպակավորներն ու վաճառափողոցները՝ առախոսության, զրկանքի, արբեցության և մեղքի բոլոր տեսակները, որոնցով առավելապես են բարկացնում Աստծուն և ցասումը շարժում արարածների վրա: Եվ այս առաջնորդների ծուլությունից և բազմաց կորստյան նկատմամբ անհոգությունից է լինում, քանզի երբ հովիվը գահավիժում է, գառները անտերուն չեն շրջում, կամ երբ զորավարը կալանվում է, զորքը ինչպե՞ս պիտի չտանջվի և խոր անդունդների մեջ ընկղմվի: Այս պատճառով քահանան դարձավ մեկը հասարակ ժողովրդից, ինչպես ուսուցիչը՝ ուսանող կամ առավել վատթար:

Նաև մյուս քրիստոնյաները, ոչ թե սմեն ինչով ազատ են այս պարապմունքներից, այլ մեկն այսպես և մեկն այնպես, և նրանք են խուտորվում ճշմարտությունից: Բայց հույները սրանում ավելի են սխալվում, քանզի իմանալով մեղանչում և ամբարտավանությամբ հակառակվում են ընդդեմ ճշմարտության և ջանում են հերքել առաքելական խոսքերը, սակայն գիտեն, որ սուտ են, ձգտում են իրավանալ: Բայց դու զգույշ եղիր, Գրիգորիոն է այս աշխատանքը, որ մեզ պարտադրեցիր, գուցե խոտորվես, քանզի ըստ Մեծ Աստվածաբանի ամեն ինչ կրկնիմաստ է և երկու շավիղներով է ընթանում. այլ է խոսքի արտաքին երեսը և այլ՝ խորին միտքը խորհուրդների, որին եթե որևէ մեկը ստուգապես չկարողանա հասնել, կգայթակղվի: Դարձյալ ասում եմ. զգույշ եղիր, բազում բաներ էի կամենում գրել, բայց զբաղվածության պատճառով չկարողացա, սակայն երրորդ անգամ եմ գրում. Զգույշ եղիր, որպեսզի չգայթակղվես:

Բնագիրը կազմեց և
աշխարհաբարի թարգմանեց՝
ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿ. ԳԱԼՍՏՅԱՆԸ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻՑ

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻԼՔ

ԹԱԳԱՒՈՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ Է
ԵՐԿՐՊԱԳԵԼ ՈՍԿԵԱՅ ԱՐՁԱՆԻՆ

Իր թագաւորութեան տասնութերորդ տարում Նաբուգոդոնոսոր արքան պատրաստեց մի ոսկեայ արձան, որի բարձրութիւնը վաթսուն կանգուն էր, լայնութիւնը՝ վեց, եւ այն կանգնեցրեց բաբելացիների երկրում, Դէեթա դաշտում: 2 Եւ հրամայեց հաւաքել զօրավարներին, զօրագլուխներին եւ կուսակալներին, պետերին, իշխաններին, գործակալներին եւ գաւառների բոլոր իշխաններին՝ գալու այն արձանի նաւակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան: 3 Հաւաքուեցին կուսակալները, զօրավարներն ու զօրագլուխները, պետերը, իշխանաւորները, մեծամեծներն ու գաւառների բոլոր իշխանները, եկան այն արձանի նաւակատիքին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան: Նրանք կանգնած էին այն արձանի առաջ, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան: 4 Եւ մունետիկը կանչում էր բարձրաձայն եւ ասում. «Ձեզ է ասւում, ազգե՛ր, ժողովուրդնե՛ր եւ լեզուներ: 5 Երբ լսէք փողի, արնգի, թմբուկի, քնարի, տաւղի եւ բոլոր տեսակի նուագարանների ձայնը, գետի՛ն ընկէք եւ երկրպագեցէ՛ք արձանին, որ կանգնեցրել է Նաբուգոդոնոսոր արքան: 6 Եւ նա, ով գետին չընկնի եւ չերկրպագի, նոյն ժամին կը նետուի բորբոքուած կրակի ճնոցը»: 7 Եւ այնպէս եղաւ, որ երբ ազգերը լսեցին փողի, արնգի, տաւղի, նուագարանների եւ այլ տեսակի գործիքների ձայնը, բոլոր ազգերը, ժողովուրդները եւ լեզուները գետին էին ընկնում եւ երկրպագում ոսկեայ արձանին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր արքան:

ԴԱՆԻԷԼԻ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱԻԱՏԱՐԻՄ ԵՆ ՄՆՈՒՄ ՏԻՐՈՋԸ

8 Այն ժամանակ մօտեցան քաղդէացի մարդիկ, Նաբուգոդոնոսորին չարախօսեցին հրեաների մասին եւ ասացին. 9 «Արքա՛յ, թող քո կեանքը յաւիտեան լինի, 10 դու հրամայեցիր, որ ամէն մարդ, երբ լսի փողի, արնգի, քնարի, տաւղի, նուագարանների ու բոլոր տեսակի գործիքների ձայնը, 11 գետին ընկնի ու երկրպագի ոսկեայ արձանին, իսկ նա, ով այդպէս չի անի, պիտի նետուի բորբոքուած կրակի հնոցը: 12 Արդ, այստեղ կան հրեայ մարդիկ, որոնց դու նշանակեցիր Բաբելոնի գործերի վրայ՝ Սեդրակը, Միսաքը եւ Աբեդնագովը, որոնք չհնազանդուեցին քո հրամանին, արքա՛յ, չեն պաշտում քո աստուածները, չեն երկրպագում քո կանգնեցրած ոսկէ արձանին: 13 Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը բարկութեամբ եւ ցասումով հրամայեց բերել Սեդրակին, Միսաքին եւ Աբեդնագովին: Եւ նրանց բերեցին թագաւորի առաջ: 14 Նաբուգոդոնոսորը նրանց ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ եւ Աբեդնագո՛վ, իսկապէ՞ս դուք իմ աստուածները չէք պաշտում եւ ոսկեայ արձանին, որ կանգնեցրի, չէք երկրպագում. 15 իսկ այժմ պատրա՛ստ եղէք, որ երբ լսէք փողի, արնգի, թմբուկի, քնարի եւ ամէն տեսակ երաժիշտների ձայնակցութիւնը, գետին ընկնէք եւ երկրպագէք արձանին, որ ես կանգնեցրի. իսկ եթէ չերկրպագէք, նոյն ժամին կը նետուէք բորբոքուած կրակի հնոցը, ո՞վ է այն աստուածը, որ կը փրկի ձեզ իմ ձեռքից»: 16 Սեդրակը, Միսաքը եւ Աբեդնագովը պատասխանեցին Նաբուգոդոնոսոր արքային եւ ասացին. «Հարկ չկայ քեզ պատասխանել ու այդ բանի համար, արքա՛յ, 17 որովհետեւ մեր Աստուածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքուած կրակի հնոցից եւ ազատել մեզ քո ձեռքից: 18 Իսկ եթէ ոչ, թող քեզ յայտնի լինի, արքա՛յ, որ քո աստուածները մենք չենք պաշտում եւ չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկէ արձանին:

ԴԱՆԻԷԼԻ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՆԵՏԻՈՒՄ ԵՆ ՀՆՈՑԸ

19 Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը զայրոյթով լցուեց, բարկացաւ Սեդրակի, Միսաքի եւ Աբեդնագովի վրայ եւ ասաց. «Եօթնապատիկ վառեցէ՛ք հնոցը, որպէսզի միևչեւ վերջ այրուեն սրանք: 20 Հինգ ուժեղ մարդիկ թող կապեն Սեդրակին, Միսաքին եւ Աբեդնագովին եւ նետեն բորբոքուած կրակի հնոցը»: 21 Այն ժամանակ այդ մարդկանց կապեցին իրենց պատմուճաններով, անդրավարտիքներով, գլխի ապարօշներով, զանկապաններով եւ նետեցին բորբոքուած կրակի հնոցը, 22 որովհետեւ թագաւորի հրամանը աւելի ու աւելի էր սաստկանում, եւ հնոցը բորբոքում էր եօթնապատիկ աւելի: 23 Իսկ նրանք երեքը՝ Սեդրակը, Միսաքը եւ Աբեդնագովը կապուած ընկան հնոցի մէջ:

ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ԱՋԱՏՈՒՄ ԵՆ ՈՒ ՄԵԾԱՐՈՒՄ

24 Նրանք քայլում էին կրակի մէջ, օրհնում եւ գովում էին Տէր Աստծուն: 25 Ազարիան ելաւ, աղօթքի կանգնեց, կրակի մէջ բացեց բերանը եւ այսպէս ասաց. 26 «Օրհնեալ ես, Տէ՛ր, մեր հայրերի՛ Աստուած, յաւիտեանս գովեալ եւ փառաւորեալ է քո անունը, 27 որովհետեւ դու արդար ես այն ամենի մէջ, որ բերեցիր մեզ վրայ, քո բոլոր գործերը ճշմարիտ են, քո ճանապարհները՝ ուղիղ, եւ քո բոլոր դատաստանները՝ արդար. 28 եւ ըստ ամենայնի դու արդար արեցիր

այն, ինչ արեցիր մեր եւ մեր հայրերի սուրբ քաղաք Երուսաղէմի ձկատմամբ, որովհետեւ ճշմարտութեամբ եւ արդար կերպով արեցիր այս բոլորը մեր մեղքերի պատճառով, 29 քանի որ քո դէմ ապստամբելով՝ մեղանչեցինք եւ անօրէնութիւն գործեցինք. մենք առաւել մեղանչեցինք հրամով, որ 30 քո պատուիրանները չլսեցինք: Չպահեցինք քո պատուիրանները եւ այնպէս չարեցինք, ինչպէս պատուիրեցիր մեզ, որպէսզի լաւ լինէր մեզ համար. 31 այն ամէնը ինչ բերեցիր մեզ վրայ եւ այն ամէնը, ինչ արեցիր մեր ձկատմամբ, արդա՛ր դատաստանով արեցիր: 32 Մեզ մատնեցիր մեր անօրէն, խիստ եւ ապստամբ թշնամիների, բոլոր երկրների ամենից անլի անիրաւ եւ չար թագաւորի ձեռքը: 33 Իսկ այժմ չենք կարող բանալ մեր բերանները, որովհետեւ մենք՝ քո պաշտօնեայ ծառաները, ամօթահար եղանք եւ ճախատինք կրեցինք: 34 Բայց դու, յանուն քո անուան, մեզ իսպառ մի՛ լքիր, մի՛ ցրիր քո ուխտը 35 եւ մի՛ հեռացրու քո ողորմութիւնը մեզանից, յանուն քո սիրելի Աբրահամի, յանուն քո Իսահակ ծառայի եւ յանուն քո սուրբ Իսրայէլի, 36 որոնց ասացիր, թէ պիտի բազմացնես նրանց որդիները երկնքի աստղերի չափ եւ այնքան, որքան աւազը ծովի ափին: 37 Արդ, Տէ՛ր, բոլոր ազգերից աւելի տկարացանք մենք եւ այսօր տառապում ենք ամբողջ աշխարհում մեր մեղքերի պատճառով: 38 Այժմ, այս ժամանակներում չկայ իշխան, մարգարէ եւ առաջնորդ, ո՛չ ողջակէզ, ո՛չ զոհ, ո՛չ զոհաբերութիւն, ո՛չ խունկ 39 եւ ո՛չ էլ քեզ երախայրիք մատուցելու տեղ՝ ողորմութիւն գտնելու համար: Այլ կոտրուած սրտով եւ տառապած հոգով թող ընդունելի լինենք 40 խոյերի եւ արջառների, ինչպէս նաեւ բիւրաւոր պարարտ գառների ողջակէզների նման. այդպէս թող լինի մեր զոհաբերումը այսօր քո առաջ եւ կատարեալ լինենք քեզանից յետոյ, որովհետեւ քեզ վըրայ յոյս դնողները ամօթով չեն մնայ: 41 Արդ գալիս ենք դէպի քեզ մեր ամբողջ սրտով, վախենում ենք մենք քեզանից, քո բարեհաճութիւնն ենք խնդրում. 42 ամօթով մի՛ թող մեզ, այլ մեզ հետ վարուիր ըստ քո հեզութեան, ըստ քո մեծ ողորմութեան, Տէ՛ր, 43 փրկի՛ր մեզ ըստ քո հրաշալի գործերի եւ փա՛ռք բեր քո անուանը: 44 Թող ամօթով մնան բոլոր նրանք, ովքեր չարիք են պատճառում քո ծառաներին. թող ամաչեն իրենց բոլոր բռնութիւններից, նրանց զօրութիւնը թող խորտակուի, 45 եւ թող ճանաչեն, որ դու ես միակ Տէր Աստուածը եւ փառաւորեալը ողջ տիեզերքում:

46 Եւ նրանք՝ թագաւորի սպասաւորները, որ հնոց էին նետել նրանց, չէին դադարում բորբոքել այն նաւթով, ձէթով, վուշով եւ որթատունկի ճիւղերով: 47 Բոցը ելնում դիզւում էր հնոցից քառասուն եւ ինը կանգնի վեր, 48 պտտում պատում էր հնոցի շուրջը եւ այրում էր, ում որ գտնում էր քաղդէացիներից: 49 Բայց Աստծու Հրեշտակը իջաւ կանգնեց հնոցի մէջ, Ազարիայի կողքին, կրակի բոցը թօթափեց հնոցից եւ հնոցի մէջ դարձրեց այնպիսի հողմ, որ ցօղ է բերում, եւ կրակը ամենեւին չէր մօտենում նրանց, չէր տանջում եւ չէր նեղում նրանց: 51 Այն ժամանակ հնոցի մէջ երեքը, կարծես մէկ բերանով, օրհնում, գովում եւ փառաւորում էին Աստծուն եւ ասում.

52 «Օրհնեալ ես դու Տէ՛ր, Աստուա՛ծ մեր հայրերի,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:

Օրհնեալ է քո փառաւոր սուրբ անունը,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:

53 Օրհնեալ ես քո փառքի սուրբ տաճարում,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:

54 Օրհնեալ ես քո թագաւորութեան աթոռի վրայ,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:

55 Օրհնեալ ես, որ նայում ես անդունդներին եւ նստում ես քերովբէների վրայ,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւիտեան:

56 Օրհնեալ ես, որ նստում ես երկնքում,

գովեալ ես եւ առաւել պանծալի յաւետան:

57 Օրհնեցէ՛ք Տիրոջ բոլոր գործերը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

58 Երկինքնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

59 Տիրոջ հրեշտակնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

60 Ջրե՛ր, որ վեր էք երկնքից, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

61 Տիրոջ բոլոր զօրութիւննե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

62 Երե՛ւ եւ լուսի՛ն, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

63 Երկնքի բոլո՛ր աստղեր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

64 Անձրեւնե՛ր եւ ցօղե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

65 Հողմե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

66 Հո՛ւր եւ տա՛պ, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

67 Ցո՛ւրտ եւ սառնամանի՛ք, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

68 Եղեա՛մ եւ ձի՛ւն, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

69 Ցերեկնե՛ր եւ գիշերնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

70 Լո՛յս եւ խաւա՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

71 Ամպե՛ր եւ կայծակնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

72 Թող երկիրն օրհնի՛ Տիրոջը, օրհնի եւ պանծացնի նրան յաւիտեան:

73 Լեռնե՛ր, բարձունքնե՛ր, օրհնեց՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

74 Երկրի բոլոր բոյսեր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

75 Աղբիւրնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

76 Ծովե՛ր ու գետե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

77 Կէտե՛ր եւ ջրային բոլո՛ր կենդանիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը,

օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:

78 Երկնի թռչուննե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
79 Բոլո՛ր գազաններ եւ անասուններ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
80 Մարդո՛ւ որդիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
81 Իսրայէլը թող օրհնի՛ Տիրոջը,
թող օրհնի՛ եւ պանծացնի՛ նրան յաւիտեան:
82 Քահանանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
83 Տիրոջ ծառանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
84 Արդարների շունչ ու հոգինե՛ր, օրհնեցէ՛ք Աստծուն,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
85 Սրբե՛ր եւ սրտով խոնարհնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
86 Անանիա՛, Ազարիա՛ եւ Միսայէ՛լ, օրհնեցէ՛ք Տիրոջը,
օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան,
87 քանզի նա մեզ փրկեց դժոխքից, ազատեց մահուան ձեռքից,
88 փրկեց մեզ այս հնոցից, այն բորբոքուած բոցի միջից,
փրկեց մեզ այս կրակի միջից:
89 Գոհութիւն մատուցէք Տիրոջը,
քանզի քաղցր է նա,
քանզի յաւիտեան է ողորմութիւնը նրա:
90 Տիրոջ բոլո՛ր պաշտօնեաներ, գոհութի՛ւն մատուցեցէք եւ օրհնեցէ՛ք աստուածների Աստծուն,
քանզի յաւիտեան է ողորմութիւնը նրա»:

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ԴԱՆԻԷԼԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

91 Նաբուգոդոնոսորը երբ լսեց նրանց օրհնութիւնը, զարմացաւ. նա տագնապահար վեր կացաւ եւ ասաց իր մեծամեծներին. «Մի՞թէ մենք կապուած երեք մարդ չնետեցի՞նք կրակի մէջ»: Նրանք ասացին թագաւորին. «Այո՛, ճիշտ ես ասում, արքա՛յ»: 92 Թագաւորն ասաց. «Բայց ես տեսնում եմ կապերից արձակուած չորս մարդ, որոնք քայլում են կրակի մէջ, որեւէ վնաս չեն կրել, իսկ չորրորդի տեսքը Աստծու որդու նման է»: 93 Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը մօտեցաւ հրաբորբոք հնոցի դռանը եւ ասաց. «Սեդրա՛կ, Միսա՛կ եւ Աբեդնագո՛վ, բարձրեալ Աստծու ծառանե՛ր, ելէ՛ք եւ եկէ՛ք»: Սեդրակը, Միսակն ու Աբեդնագովը դուրս ելան կրակի միջից: 94 Հաւաքուեցին նախարարները, կուսակալները, թագաւորի զօրավարներն ու զօրագլուխները, եւ տեսնում էին այն մարդկանց, որոնց մարմնին կրակը չէր վնասել, նրանց գլխի մազը չէին խանձուել, նրանց անդրավարտիքները չէին գունաթափուել, եւ կրակի հոտ չկար նրանց վրայ: 95 Նաբուգոդոնոսոր թագաւորը նրանց առաջ երկրպագեց Տիրոջը, պատասխանեց եւ ասաց. «Օրհնեալ է Սեդրակի, Միսակի եւ Աբեդնագովի Աստուածը, որ ուղարկեց իր Հրեշտակին եւ փրկեց իր ծառաներին, որովհետեւ նրանք յոյս էին դրել նրա վրայ, անարգել էին թագաւորի խօսքը եւ մատնել իրենց մարմինը կրակին, որպէսզի չպաշտեն եւ չերկրպագեն բոլոր աստուածներին, այլ՝ միայն իրենց Աստծուն: 96 Արդ, ես հրամայեմ տալիս. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները, որոնք կը հայ-

հոյեն Սեդրակի, Միսակի եւ Աբեղնագովի Աստծուն, կորստի պիտի մատնըուեն, իսկ նրանց տուները յափշտակութեան, որովհետեւ չկայ այլ Աստուած, որ կարողանայ այսպէս փրկել»:

97 Այն ժամանակ թագաւորը Բաբելոնում առաւել եւս մեծարեց Սեդրակին, Միսակին եւ Աբեղնագովին, բարձր պատուի արժանացրեց նրանց եւ խնդրեց նրանց, որ իշխան լինեն այն բոլոր հրեաների վրայ, որ իր թագաւորութեան մէջ էին:

Թարգմ.՝ Ե. ՄԵԼՔՈՆԵԱՆԻ



ՊԱՏՄԱ – ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՇՏՈՑԸ

Ցավ ի սրտի պետք է ասել, որ Ե—ԺԵ դդ. կեսերը Վաղարշապատում ընդօրինակված ոչ մի ձեռագիր չի պահպանվել: Բացառված չէ, սակայն, որ մի քանի բեկորներ պատառիկների կամ պատառիկ-պահպանակների տեսքով, պահպանված լինեն, բայց նրանք դեռ երկար կլուծեն: Հայտնի է նաև, որ մինչև Թ դարը թվակիր ոչ մի հայերեն ձեռագիր չի հասել մեր օրերը, իսկ հատկապես Ե դարում գրիչները հիշատակարան գրելու սովորություն չեն ունեցել:

1441 թվականին Կաթողիկոսական Աթոռի Էջմիածնում վերահաստատվելու մասին Ստեփանոս Մալխասյանցը գրում է. «Այս փոխադրությունը, սակայն, նման չէր նախկին փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում քաղաքական հանգամանքների դրդմամբ՝ գտնվելու այնպիսի տեղերում, որտեղ կենտրոնացած էին հայկական իշխանությունները կամ ապահով էին ելուզակների ասպատակություններից. այնինչ այս վերջին փոխադրությունը Էջմիածին՝ բխում էր ուղղակի կրոնական-եկեղեցական պահանջից՝ ապահովելու համայն Հայոց կաթողիկոսների անկախությունը պապերից, Հայոց Հայրապետության ինքնագլխություն ու ինքնուրույնությունը, Հայոց դավանության և ծեսերի անխախտությունը օտար Եկեղեցիների ոտնձգություններից: Հայրապետական Աթոռի այս վերջին փոխադրությունը միակ միջոցը հանդիսացավ նրան և՛ փրկելու, և՛ նրա հարատև գոյությունը պահպանելու»[1]:

Հինգ ու կես հարյուրամյա վաղեմություն ունեցող այս իրադարձությունը հիրավի բախտորոշ էր մեր ժողովրդի հետագա ճակատագրի համար, որովհետև, զրկված լինելով պետականությունից և գտնվելով օտար, այ-

[1] **Մալխասյանց Ստեփան,** Հավերժացման արժանի հոբելյան (Հայոց Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին վերահաստատվելու 500-ամյակը նշելու մասին), «Էջմիածին», 1945, Մայիս, էջ 43—45:

լակրոն բռնապետությունների տիրապետության ներքո, աշխարհասփյուռ հայությունը մեկընդմիշտ կապվեց հայրենի բնաշխարհին, համախմբվեց հոգևոր-եկեղեցական առանցքի շուրջ՝ միասնական կենտրոն ունենալով Ս. Էջմիածինը, պահպանեց նախնյաց ավանդներն ու մշակութային ինքնուրույնությունը:

Կիրակոս Վիրապեցու ձեռնադրությունից հետո, նրա ջերմ պաշտպան Թովմա Մեծոփեցի րաբունապետն իր աշակերտների հետ միասին հաստատվում է Էջմիածնում: Մեծոփեցին այստեղ շարունակում է ուսումնակրթական գործունեությունը, ուստի և հանդիսանում է Վաղարշապատի նոր դպրոցի հիմնադիրը: Այս գործում նրա աջակիցներից հայտնի են այդ ժամանակ Էջմիածնում գտնվող Կիրակոս Ռշտունեցին և Սարգիս րաբունապետը[2]:

Ալպոյաճյանն իր հերթին նկատում է. «Էջմիածին, երբ 1441-ին վերըստին դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռ, Կիրակոս Վիրապեցիի կաթողիկոս ընտրությամբ, Թովմա Մեծոփեցի հոն հաստատվեցավ և ուսուցանել սկսավ հավաքված աշակերտության»[3]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսական Սուրբ Աթոռի վերահաստատումով, Էջմիածինը դառնում է նաև ուխտատեղի գրչության արվեստով զբաղվող անձանց համար: Այսպես, օրինակ, գրիչ Հակոբ վարդապետը մի ձեռագիր է սկսում գրել Արգելանի Տեր Հուսկան Որդի վանքում, այնուհետև շարունակում Կողբի վանքում, «...որ այժմ ասի Լուսաւորչի վանք եւ Սուքիասեանք», որից հետո «սակաւ մի ի յԷջմիածին՝ ի ժամանակս Կիրակոս կաթողիկոսին», նշում է գրիչը և ուխտագնացությունը ավարտում «ի յԱրտազ գաւառիս, ի գիւղս, որ կոչի Մակու, ի վանքս, որ կոչի Սուրբ Աստուածածնին»[4]:

Այստեղ նույն՝ 1441 թվականին Թովմա Մեծոփեցի րաբունապետը սկիզբ է դնում իր «Յիշատակարան»-ին, որն իր բնույթով միակ խոշոր ծավալի սկզբնաղբյուրն է Կաթողիկոսական Աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու մասին[5]:

Ակնհայտ է նաև, որ Կիրակոս Ռշտունեցին իր ժամանակագրությունը կազմել է Էջմիածնում, որտեղից ստիպված է եղել հեռանալ 1443 թվականին[6]:

Գրիգոր գրիչը 1450 թվականին այստեղ սկսում է ընդօրինակել մի «Ճաշոց», սակայն սկսված համաճարակը ստիպում է ծերունի Գրիգորին տեղից-տեղ անցնելով ձեռագիրն ավարտել Բյուրականում: Ձեռագրի հիշատակարանում Գրիգորը նշում է իր ուսուցիչներին՝ «...բազմերախտ վար-

---

[2] **Կարեն Ս. Մաթևոսյան,** Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, «Էջմիածին», 1991 թ., Հուլիս-Օգոստոս, էջ 13:

[3] **Արշատ Ալպոյաճյան,** Պատմություն հայ դպրոցին, հ. Ա, Կահիրե, 1958, էջ 347: Տես նաև **Վահան եպս. Տերյան** (փոխանորդ Արարատյան թեմի), Ս. Էջմիածնի դպրոցը 15—17-րդ դարերում, «Էջմիածին», 1968 թ., Բ, էջ 33:

[4] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 429 (այսուհետև Ցուցակ Երուսաղեմի): Տես նաև ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451—1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 54: Նաև նույնի՝ մասն երրորդ (1481—1500 թթ.), Երևան, 1967, էջ 415—416 (Այսուհետև՝ ԺԵ դարի հիշատակարաններ):

[5] Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, հրատ.՝ Կ. Կոստանյանց, Թիֆլիզ, 1892:

[6] **Վ. Հակոբյան,** Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ 113—124:

պետին՝ Երեմիայի» և Զորիկ մականունով Հովհաննեես աբեղային[7], որոնց պետք է, որ աշակերտած լիներ Էջմիածնում[8]: Այս ձեռագրի ստացողն ու ընդհրատուն Սևանի վարդապետարանի հիմնադիր Դանիել վարդապետն է, որն իր ուսումը շարունակել է Էջմիածնի դպրատունը, Երեմիա վարդապետի մոտ, երբ դեռ աբեղա էր[9]: Ուսանելու ընթացքում է, որ իր ծնողների միջոցով պատվիրում է Գրիգոր աբեղային վերոհիշյալ «Ճաշոցը»: Ա. Ղազարոսյանի նկատումներով Գրիգորը և Դանիելը ազգակցական կապեր ունեն[10]:

Սակայն մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը, որը սկսվել և ավարտվել է Էջմիածնում, «Մաշտոց ձեռնադրութեան» ծիսարանն է, որը գրվել է 1461 թվականին Ստեփանոս կրոնավորի կողմից: Ստացողն է՝ Զաքարիա Աղթամարցի Կաթողիկոսը:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 4997 համարանիշը կրող այս ձեռագրի ամբողջական խորագիրն է՝ «Մաշտոց օրհնութեան արքայոյս միւռոնի, եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման թագաւորի»:

Դարերի հոլովույթով անցած և մեր օրերը հասած ամեն մի ձեռագիր ոչ միայն անցյալի և իր ժամանակի մտածողություն ու պատմություն ամբարող հուշարձան է, այլ նաև իր ապրած տարիների, անցած յուրատեսակ ճանապարհի կենդանի վկան:

Տվյալ ձեռագիր հուշարձանի ուսումնասիրության հիմնական աղբյուրն ինքը ձեռագիրն է՝ ձևով, գրանյութով, գրով, բովանդակությամբ, մանրանկարչությամբ, կազմով ու հիշատակարաններով:

Մատենադարանի № 4997 համարանիշը կրող ձեռագիրը բաղկացած է 18×24 սմ մեծության մագաթաղյա լավ մշակված թերթերից:

Նկարագրդ այս ձեռագիրը կազմված է չորս մասից.

ա. 3ա—50ա (Եպիսկոպոսաւրինէք)

բ. 51ա—74բ Կանոն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն ամենայն Հայոց

գ. 75ա—111բ (Մեռոնաւրինէք)

դ. 112ա—32բ Կանոն եւ կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի

լուսո մեծի եկեղեցւոյն[11]:

Հետաքրքրական է մի հանգամանք:

ԺԵ դարի կեսերին լայն շրջանառության մեջ էր դրված թուղթը, որպես ձեռագիր կազմելու հիմնական նյութ, այնուամենայնիվ ինչ նպատակ է հետապնդում ստացողը, երբ սույն Մաշտոցը պատվիրում է գաղափարել յուրատեսակ ձերմակությամբ, լավ մշակված մագաղաթի վրա: Այստեղ առատորեն օգտագործված է ոսկին, ոչ միայն մանրանկարներում (թվով 5-ը),

---

[7] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1967, էջ 412—413:

[8] **Կարեն Մաթևոսյան,** նշված աշխ., էջ 13:

[9] Ցուցակ Երուսաղեմի, հ. 9, Երուսաղեմ, 1979, էջ 544:

[10] **Ա. Հ. Ղազարոսյան,** Դանիել րաբունապետը և Սևանի դպրոցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 99—107:

[11] 1311 թվականին գրված «Սաղմոս Մայր Մաշտոց»-ում այս կանոնը խորագրված է հետևյալ կերպ. «Կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի ըստ մեծի եկեղեցւոյն Հռոմայ»: Կաթողիկոսական Աթոռի փոխադրությունից հետո այլևս ավելորդ էր նշել «Հռոմայ» տեղանունը: Տես, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին, կազմեց Անուշաւան վարդապետ Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 97:

այլև լուսանցազարդերում, խորաններում ու տեքստերում անգամ առավել ուժգին դարձնելու այս կամ այն միտքը:

Մանրանկարների և գրության միօրինակության պահպանումը, կատարված փայլուն վարպետությամբ, վկայում է այն մասին, որ գրիչն ու ծաղկողը նույն անձնավորությունն է՝ Ստեփանոս կրոնավորը:

Գրիչը, բացառությամբ 2բ էջի «Աստուածածին Մայր Աստուծոյ» մանրանկարից, մնացյալ չորսում պատկերում է ԺԵ դարում գործող պատմական անձանց: Իր ժամանակակիցներին մանրանկարիչը ներկայացնում է իրենց ծիսական զգեստներով, դիմագծերով, տվյալ ծեսին համապատասխան դիրքերով և շարժուձևով:

Լ. Խաչիկյանը, վերատպելով այս ձեռագրի 11բ էջի «Եպիսկոպոսարհնէք» պատկերող մանրանկարը, տողատակում նշում է. «Կաթողիկոսական համազգեստ հագած արարողապետը՝ հավանաբար Զաքարիա Կաթողիկոսն է»[12]: Անվանի գիտնականի եզրակացությունը ճշտվեց կատարված ուսումնասիրությունների միջոցով, որոնց մասին կխոսվի ստորև:

Մի ձեռքում բռնած ծիսագիրքը, իսկ մյուսը՝ օրհնության դիրքով եպիսկոպոսի գլխին հպած եպիսկոպոսապետը, լայնադեմ է, ճերմակահեր, զուսպ փակված շուրթերը վկայում են նրա մեծ կամքի մասին: Նա կրում է եռագագաթ մի թագ, պատված թանկարժեք քարերով: Գրիչն առավել կարևորելու համար կաթողիկոսի անձը, ծեսին մասնակցող մնացյալ անձանց համեմատությամբ նրան պատկերում է առավել խոշորամարմին ու բարձրահասակ:

Գլխավոր հիշատակարանում այսպես է ներկայացնում Զաքարիա կաթողիկոսին Ստեփանոս գրիչը. «Այլեւ այսուամենայնիւ լցեալ զսո ի յԱստուծոյ պատուեալ երջանիկս արիացեալ Հաւր զաւրհնութեամբ, հովանաւորեալ բնութեամբ Որդոյն, յարդեալ Հոգւոյն Սրբոյ, շնորհօք զարդարեալ ի հոգի, ի մարմին եւ ի միտս, նաեւ ի բարի յարմատոց շառաւիղ ընդրեալ շնաւրհաւքն Քրիստոսի, յազգէ թագաւորին Գագկայ Հայոց մեծաց՝ Տէր Զաքարիայ կաթողիկոս եւ պատրիարք Վաղարշապատու մեծի քաղաքի...»[13]:

Գրիչը «Տէր Զաքարիայ» արտահայտությունը նշանագրում է ոսկեգրով, իսկ «կաթողիկոս եւ պատրիարք Վաղարշապատու մեծ քաղաքի» հատվածը՝ կարմրագրով, որն ինքնին ընդգծում է յուրահատուկ վերաբերմունք:

Շարունակելով, Ստեփանոսը տեղեկացնում է, որ Զաքարիան, Աղթամարից գալով Էջմիածին, «կարողութեամբ Սուրբ Հոգւոյն եւ ողորմութեամբն Քրիստոսի եւ միջնորդութեամբ Սուրբ Աստուածածնին եւ աղաւթիւք սուրբ Լուսաւորչին Գրիգորի՝ տիրեաց Սուրբ Էջմիածնին եւ աստուածադիր Սուրբ Աթոռոյս Վաղարշապատու եւ ամենայն հայկազեան սեռի»[14]:

Հայտնի է, որ, իրոք, Զաքարիա Կաթողիկոսը ոչ թե ընտրվեց և օծվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, քանզի Էջմիածնում այդ ժամանակահատվածում կաթողիկոս էր Գրիգոր Ջալալբեկյանցը, այլ Ջհանշահ «փատշահի» միջնորդությամբ «տիրեաց» Հայրապետական Աթոռին:

Այս իրողություն են փաստում նաև այլ ձեռագրական տվյալներ: 1460 թվականին Ստեփանոս գրիչը, որը ստացող է մի Ավետարանի, գրում է. «Եւ ես՝ Ստեփանոս եւոու զսուրբ Աւետարանս Հաւատաւորի վանաց, որոյ

---

[12] ԺԵ դարի յիշատակարաններ, մասն Բ, էջ 155: Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4997, էջ 11բ (այսուհետև Մ. Մ.):

[13] ՄՄ. ձեռ. № 4997, էջ 135ա:

[14] Նույն տեղում, էջ 135բ:

Սուրբ Գէորգեա Ջաւրավարին, ի հայրապետութեան տեառն Ջաքարիայի, որ յայս ամի տիրեաց Էջմիածնին եւ Լուսաւորչի Սուրբ Աջոյն»[15]:

Նույն թվականին Աղթամարում Հակոբ գրիչը գաղափարում է մեկ այլ Ավետարան. «...ի հայրապետութեան տեառն Ջաքարիայի, որ տիրեաց Էջմիածնի Սուրբ Աթոռոյն եւ Սուրբ Աջոյն Լուսաւորչին, եւ ամենայն ազգիս Հայոց, զոր Տէր Աստուած պահեսցէ զսա անսասանելի մինչեւ ի խորին ծերութիւնն. ամէն»[16]

Այսպիսով, արդեն մեկ տարուց ի վեր Էջմիածինը տիրած Կաթողիկոսը Ստեփանոս կրոնավորի հաստատմամբ ձեռնարկում է շինարարական գործունեության. «Եւ վերստին հաստատեաց, շինեաց եւ զարդարեաց զքրիստոսահիմն եւ երկնաւանման շնորհաբաշխ եւ արովբէագումար զՍուրբ Կաթուղիկէ եկեղեցիս»[17]: Այսուհետ. «Տարածեցաւ համբաւ սորա ընդ ամենայն ծագս տիեզերաց»[18]:

Այն, որ Ջաքարիան «զժամատեղս պայծառացոյց», նաև իր ներկայությունն իսկ ապահովություն էր ենթադրում այլազգիներից. «...եւ աներկիւղ պահեաց ի մէջ այլազգեաց սեռից»[19]:

Ինչպես գիտենք, Ջաքարիա Կաթողիկոսը, հայ ժողովրդին գերությունից ու կոտորածից փրկելու համար, փորձում է հաշտարարի դեր ստանձնել Ջհանշահի և ամիր Շարաֆի միջև: Ստանձնելով և հաջողությամբ իրագործելով հաշտարար-դիվանագետի պարտականությունները, Ջաքարիան մեծ պատիվների է արժանանում Ջհանշահի և քուրդ ամիր Շարաֆի կողմից: Ածում է նրա հեղինակությունը նաև որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց[20]:

Ջաքարիան անվանվում է որպես «Ողորմած տնանկաց եւ կարաւտելոց եւ աւգնական ամենայն տարակուսելոց»[21]: Նա հոգ է տանում նաև կրթության բնագավառի բարելավման ու կրոնավորների հովանավորմանը. «Եւ խնամածու ուսումնասիրաց եւ կրօնաւորաց, զոր եւ Տէր Աստուած պահեսցէ զսա ընդ ամրաձաձուկ աջովն իւրով»[22]:

Ըստ մանրանկարի, նա առաջացած տարիք ունի և վաստակած տարիքի հետ կուտակել է իմաստություն. «Այլեւ դասեսցէ Քրիստոս Աստուած զհոգի սորա ընդ սրբոց հայրապետացն Բարսղի, Գրիգորի Աստուածաբանի եւ ամենայն սրբոց հայրապետացն, վարդապետաց եւ կրաւնաւորացն դասակից եւ պսակակից արասցէ եւ ընդ հարիւրաւորսն կացուսցէ, ի գոգն Աբրահամու հանգուսցէ եւ ինքնացեալ պաշտեսցէ. ամէն», գրում է Ստեփանոս գրիչը՝ ավելացնելով. «Վասնզի, սա եռափափագ սիրով եւ բազմադիմս գրիչը՝ ավելացնելով. «Վասնզի, սա եռափափագ սիրով եւ բազմադիմս յաւժար կամաւք ցանկացող եղեալ այս հոգիաբուխ բուրաստանիս, որ մի յաւժար կամաւք ցանկացող եղեալ այս հոգիաբուխ բուրաստանիս, որ կոչի Ջեռնադրութիւն կաթողիկոս աւրհնել, մեռոն աւրհնել, եպիսկոպոս աւրհնել եւ թագաւոր աւրհնել»[23]:

---

15 ՄՄ. ձեռ. № 4850, էջ 290բ: ԺԵ դարի յիշատակարաններ, մաս Բ, էջ 140:
16 ՄՄ. ձեռ. № 7627, էջ 334ա: ԺԵ դարի յիշատակարաններ, մաս Բ, էջ 143:
17 ՄՄ. ձեռ. № 4997, 135բ:
18 Նույն տեղում:
19 Նույն տեղում, էջ 135բ—6ա:
20 ԺԵ դարի յիշատակարաններ, մաս Բ, էջ ԺԵ:
21 ՄՄ. ձեռ. № 4997, 136ա:
22 Նույն տեղում:
23 Նույն տեղում, 136ա—բ:

Եվ, իրոք, ևս արդեն հասուն հոգևորական էր, երբ 1419 թվականին ընտրվեց աթոռակից Դավիթ Գ Աղթամարի Կաթողիկոսին[24]:

Գրիչն ամենայն մանրամասնությամբ մեր առջև կանգնեցրեց մի հզոր, իմաստուն, արքայազարմ կաթողիկոսի կերպար, որն օժտված է ևսև բազում առաքինություններով՝ ողորմած է, հովանավորում է կրթություն ու եկեղեցական մշակույթը, պատվիրում է ձեռագրեր և այլն:

Իսկ ինքն իրեն № 4997 ձեռագրի գրիչը ներկայացնում է որպես տկար, տառապյալ «եւ թափուր ի բարի գործոց Ստեփանոս աւտանուն կրաւնաւոր ըսկսա եւ կատարեցի մեծաւ յուսով եռափափագ սիրով ի Սուրբ Էջմիածինն, առ ոտս տէր Զաքարիայի եւ կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի խաւնութեան Զհանշահ փաթշահի եւ ի թուականիս ՋԺ (1461)»[25]:

Հիշատակարանի վերջում Ստեփանոսը դիմում է ընթերցողին. «Արդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ եւ յերկնաթոիչ յաղաւթս ձեր», թվում է, թե գրիչը, ըստ ընդունված սովանդույթի, պետք է խնդրի հիշատակությունը իր և իր ծնողաց, եղբայրների, հարազատների և այլն, սակայն եւոին պլան մղելով իր անձը՝ շեշտում է. «Զվերոյիշատակեալ պատրիարգն տէր Զաքարիա Կաթողիկոս՝ զատացող սուրբ Աստուածաշունչ տառիս, հանդերձ Ծնաւղաւքն եւ ամենայն թաքազարմ նախնեաւքն եւ պայազատ իշխանաւքն: Եւ ինքն, որ առատն է ի տուրս պարգեւաց, ձեզ՝ յիշողացդ եւ մեզ՝ յիշեցելոյս առհասարակ ողորմեացի եւ տացէ երկնից արքայութիւնն. ամէն»[26]:

Ստեփանոսի կողմից ձեռագրի տարբեր էջերում թողած հիշատակագրություններից երկուսն են միայն իրեն վերաբերվում, որոնք այդպես էլ չեն բացահայտում գրչի անձը[27]:

Մնացյալ հիշատակագրությունները դարձյալ վերաբերվում են ստացողին, որոնցից կարելի է առանձնացնել գլխավոր հիշատակարանին նախորդողը. «Աւրինեալ է Աստուած եւ շնահաւոր բարով վայելել տացէ պարոն հոգեւոր Տիրին մինչեւ խաղաղական կէտն վերջին»[28]:

«Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում պարոն-տեր կոչվող հոգևոր ավատատերերի դասը», գրում է Լ. Խաչիկյանը[29]:

Հայոց պետականության անկումից հետո, Եկեղեցին, հոգևոր գործունեությունից բացի, աստիճանաբար իր վրա էր վերցրել նաև հայ ժողովրդի ներքին գործերի տնօրինման պարտականությունը, մի հանգամանք, որ հաշվի էին առնում նաև օտար տիրակալները: Հայ Եկեղեցու պաշտոնյա-

---

[24] **Ն. Ակինեան,** Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920, էջ 82: Այս տեղեկությունը Ակինյանը վերցրել է Փիրղալեմյանի «Նօտարք»-ից, էջ 59—60, Վարագ: Լ. Խաչիկյանը, Մաշտոցի մատենադարանի № 3790 ձեռագրում հանդիպելով այս հիշատակարանին, եզրակացնում է. «№ 3790 ձեռագրի մեջ եղող հիշատակարանը ամենայն հավանականությամբ ընդօրինակված է Ղ. Փիրղալեմյանի կողմից օգտագործված ճառընտրից» (ԺԵ դարի հիշատակարաններ, մաս առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան. 1955:

[25] ՄՄ. ձեռ. № 4997, էջ 136բ:

[26] Նույն տեղում, էջ 136բ—7ա:

[27] Նույն տեղում, 75ա և 111բ էջերում կարդում ենք. «Զմեղապարտ գրիչս արժանի արասցես ողորմութեան քո Քրիստոս», «Եւ ես, մեռեալ անձն եւ սակաւ աշխատող Ստեփանոս գրիչ, աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս»:

[28] Նույն տեղում, էջ 132բ—3ա:

[29] Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. Դ, էջ 64;

ներն ու նրանց կալվածքները ազատված են եղել մի շարք հարկերից ու տուրքերից. «Հին ժամանակներից ի վեր մինչև օրս,—գրված է Ուզուն-Հասանի մի հրովարտակում,—երբեք այնպիսի օրենք չի եղել, որ Ուչքիլիսայի (Էջմիածնի) կրոնավորներից ու սևագլուխներից խարաջ և ջիզյա պահանջեն»[30]: Այս պայմաններն ի նկատի ունեին հայ իշխանական տների սակավազոր ներկայացուցիչները, երբ ԺԴ—ԺԵ դարերում ենթակա վանական հաստատությունների իրավասության տակ էին դնում իրենց ընտանիքին պատկանող կալվածքները՝ վանական այդ հաստատությունների գլուխ կարգելով մերձավոր ազգականներին: Եվ այսպես, կյանքի էր կոչվում սոցիալական մի նոր տերմին՝ «պարոն-տէր», որը տրվում էր այն հայ կալվածատերերին, որոնք միաժամանակ և «պարոն» էին (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ):

Պարոն-տեր էին Աղթամարի ու Գանձասարի Կաթողիկոսները, Սյունյաց մետրոպոլիտները, Վայոց ձորի առաջնորդները, Հաղբատ, Սանահին, Կեչառիս և տասնյակ ու տասնյակ այլ վանքերի վանահայրեր ու թեմերի առաջնորդներ: Նրանք ունեին զինված ջոկատներ, որոնցով, անհրաժեշտության դեպքում, պաշտպանում էին իրենց գույքն ու պատիվը օտարելկրյա ընչաքաղց զավթիչներից:

Աղթամարի Կաթողիկոսները զինական իրենց ուժերով զսպում էին Ոստանի քրդերի ախորժակը, որոնք փափագում էին գրավել ու թալանել Աղթամարը:

Սա նշանակում է, որ, բացի հոգևոր աստիճանից, Զաքարիա Աղթամարցին ուներ նաև աշխարհիկ կոչում, ինչպես նկատեցինք նաև Ստեփանոս գրչի հետևյալ բնորոշումներից. «յազգէ թագաւորին Գագկայ Հայոց մեծաց», կամ «ամենայն թաքազարմ նախնեաւքն եւ պայազատ իշխանաւքն»[31]:

Սակայն, պետք է նկատել, որ սույն ձեռագիրը արժեքավորվում է ոչ միայն այնքանով, որ այստեղ վեր են հանվում պատմության անհայտ ու ծածուկ տեղեկություններ այս կամ այն անձի վերաբերյալ կամ էլ իր գեղարվեստական բարձր արժանիքներով: Այն, ինչպես կտեսնենք ստորև, հանդես է գալիս որպես կարևոր գործող անձ պատմության հոլովույթում:

Ձեռագիրն ավարտվելու շրջանում էր, երբ սկսվեցին շշուկներ տարածվել, թե Զաքարիա Աղթամարցին «խորհեցի թագաւորել ի վերայ ազգին»[32], այսինքն՝ վերականգնել Հայոց պետականությունը: Գրիգոր Զալալբեկյանցն իր համախոհների հետ միասին ներկայանում է Հասան-Ալիին, որը «շրջէր թափառական զվերին կողմամբ գաւառին Արարատեան»[33]: Այնուհետև Հասան-Ալին մտադրվում է «ըմբռնել զմեծ պատրիարքն զտէր Զաքարիայն եւ պահանջել ի նմանէ զգանձս եւ ինչս»[34]:

Լինելով մեծ քաղաքագետ և կռահելով գործընթացի տրամաբանական ավարտը, Զաքարիա Աղթամարցին, իր հետ վերցնելով Գրիգոր Լուսավորչի Աջը, որն, ինչպես հայտնի է, խորհրդանիշն է Հայրապետական Աթոռի հաստատման և գոյատևման, նաև մի ինագույն խաչալամ (խաչվառ) և

---

[30] «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ—ԺԶ դդ.), Կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1958, էջ 49:

[31] ՄՄ. ձեռ. № 4997, էջ 135ա, 137ա:

[32] **Միքայէլ Չամչեանց,** Պատմութիւն Հայոց, հ. Գ, Երեւան, 1984, էջ 505:

[33] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ ԺԵ:

[34] **Մաղաքիա Օրմանեան,** Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2165:

այլ ավիրական իրեր ու արբություններ, ծպտված հեռանում է Մայր Աթոռից[35]:

Ուսումնասիրությունները հաստատեցին, որ Աղթամար հասած այս ավիրական առարկաների մեջ էր նաև հիշյալ «Ձեռնադրութեան Մաշտաց»-ը:

Եթե նախորդ ուսումնասիրողներն այս իրողությունը, որն է՝ Զաքարիայի փախուստը Աղթամար, դիտել են սոսկ չարախոսությանց արդյունք[36], ապա Միքայել Չամչյանցն իր «Պատմութեան» մեջ նշում է. «Ճոխացեալ նորա (Զաքարիան—Հ. Հ.) իշխանութեամբ խորհիցի թագաւորել ի վերա ազգին»[37]:

Ինչպես վերը նշեցինք, ձեռագրի վերջին բաժինը հատկացված էր Թագավորի օրինության կանոնին[38]: Նշանակում է Գրիգոր Զալալբեկյանցը և իր համախոհները փաստացի տվյալ ուներն Զաքարիային համապատասխան մեղադրանքներ ուղղելու: Մյուս կողմից էլ համարձակ քայլ պետք էր դիտել, թուրքմենական և քրդական գերիշխանության այս պայմաններում «թագաւորազն» կաթողիկոսի կողմից նման գործ ձեռնարկելը:

Այս ձեռագրում «Թագաւորաւրինէք»-ը պատկերող մանրանկարում Կաթողիկոսը օրինում է Սուրբ Սեղանի առջև ծնկի իջած ապագա արքային[39]:

Ծեսին զուգահեռ, ձեռագրի համապատասխան էջերում պատկերված են ծիսական առարկաներ: Այսպես, օրինակ, ձեռագրի լուսանցքում պատկերված է մյուռոնի սափորը, որի պարունակությամբ օծում են թագավորի գլուխը, թիկունքը «եւ զերկուս բազուկսն խաչանման»[40]:

Մեկ այլ էջի վերին լուսանցքում տեսնում ենք «զսուրն վակասաւոր», որը հանձնելով արքային, ասվում է. «Ընկալ զսուրս զայս ի ձեռանէ առաքելական աստիճանի» և ապա պատվիրում. «առաջնորդեսցէ քեզ աջ քո բարձրանալ սովաւ ի վերայ անաւրինաց եւ անհաւատից»[41]:

Հաջորդ էջի լուսանցքում նկարված են արքայական մատանին ու գավազանը, որոնք նույնպես համապատասխան մաղթանքներով հանձնվում են արքային[42]:

129ա էջում՝ ոսկե թագն է՝ զարդարված բազմագույնի թանկարժեք քարերով. «Առ զթագ եւ զպսակ թագաւորութեան ի գլուխ քո»[43] հայտարարում է ձեռնադրող եպիսկոպոսը:

---

[35] Տես **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 333: «Եւ անդ (Արգիլան—Հ. Հ.) հասեալ յայտնեաց զգանձն Աստուածայինն, զԱջն սուրբ Լուսաւորչին մերոյ զսրբոյն Գրիգորի, հանդերձ խաչալամովն, որ նկարեալ կայր ի մի կողմն պատկերն Տէրունական, եւ ի միւս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, եւ թագաւորին Տրդատայ, եւ չքնաղագեղ կուսին սրբոյն Հռիփսիմեայ, այլ եւ ոսկեթել յօրինուածով. եւ ազգի ազգի գունով, երանգ երանգ զարդարեալ սուրբ ուրարովն, որ զարմանալի է տեսողացն»: Տես նաև **Միքայէլ Չամչեանց**, նշված հրատ., էջ 505: **Մաղաքիա Օրմանեան**, նշված աշխ., մասն Բ, էջ 2161—2166:

[36] **Առաքել Դաւրիժեցի**, նշված հրատ., էջ 333: **Մ. Օրմանեան**, էջ 2165: Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. Դ, Երևան, 1972, էջ 44:

[37] **Միքայէլ Չամչեանց**, Հայոց Պատմութիւն, նշված հրատ., էջ 505:

[38] ՄՄ. № 4997, 112ա—32բ:

[39] Նույն տեղում, 112բ:

[40] Նույն տեղում, էջ 120բ:

[41] Նույն տեղում, էջ 127ա:

[42] Նույն տեղում, էջ 128ա:

[43] Նույն տեղում, էջ 129ա;

Այնուհետև մատուցում են արքայական գահը, որը համարվում է «բարձրագոյն աթոռ թագաւորութեանն»[44]:

Նվիրական արարողությունն ավարտվում է հաղորդությամբ, լուսանցքում պատկերված է սկիհը, յուրատեսակ ձևավորմամբ, ծածկված կարմիր մետաքսով, իսկ սկիհի մեջ պատկերված է խաչադրոշմ ճշխարը, որը խորհրդանշում է Աստվածորդու մարմինը[45]:

Ձեռագրում ամփոփված մնացյալ կանոնները նույնպես ունեն համապատասխան ծիսական առարկաներ պատկերող լուսանցազարդեր, սակայն բավարարվենք միայն «Թագաւորաւրհնէք»-ով, քանզի այս կանոնն էր դարձել պատմական դեպքերի ծավալման գլխավոր շարժառիթը:

Աղթամար հասած այս մատյանն իր 1բ էջում ամփոփում է 1890 թվականին Աղթամարում հավելված հետևյալ հիշատակարանը, համաձայն որի Աղթամարի Կաթողիկոս Խաչատուր Ռշտունեցին այս ձեռագիրը, ի թիվս այլ ձեռագիր մատյանների, հանձնում է Սուրբ Խաչին կից նորակառույց թանգարանին[46]:

ԺԵ դարում ձեռագրի Աղթամարում գտնվելը վկայում է նաև մեկ այլ պատմական իրողություն: Վերոհիշյալ ձեռագրի գրչությունից տասը տարի անց, 1471 թվականին, Աղթամարում գաղափարվում է ևս մեկ այլ «Ձեռնադրութեան Մաշտոց»: Այն կրում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 5702 ձեռագրահամարը:

Երբ համեմատեցինք № 4997 և № 5702 ձեռագրերը, համոզվեցինք, որ, սկսած կազմից, ավարտված լուսանցազարդերով ու մանրանկարներով, լիովին համընկնում են մեկմեկու: Խախտված են միայն չափերը, № 5702-ը ավելի փոքրադիր է, որի պատճառով լուսանցազարդերում ու մանրանկարներում որոշ հորինվածքներ վերադասավորվել են կամ դուրս ընկել: Ակնառու է ևս մեկ տարբերություն: 1471 թվականին գրված ձեռագրի նյութ է ծառայել թուղթը, չնայած այն հանգամանքին, որ օգտագործված պահպանակները, ինչպես № 4997 ձեռագրում, հնագույն մագաղաթյա պատառիկներ են:

Ձեռագրերի ընդօրինակման ներդաշնակությունը չխախտելու համար՝ 1890 թվականի հետագա հիշատակագիրը նույն թանաքով, ձեռագրով, բովանդակությամբ պատճենում է իր իսկ գրած հիշատակարանը՝ չփոխելով ամսաթիվը, աշխատելով պահպանել նույնիսկ կնիքների դիրքը՝ վերևում ութանկյուն, ի ստորին՝ շրջանաձև[47]:

Վերջապես, նույն № 5702 ձեռագրի Ա կազմաստառին փակցված պատռված մի թղթիկի վերին մասում Օնիկ Եգանյանի ձեռքով կարդացինք հետևյալ նշումը. «Ընդօրինակված է № 4997 ձեռագրից, տես, մանրանկարների միօրինակությունը»[48]:

Սույն (№ 5702) ձեռագրի վերաբերյալ Լևոն Խաչիկյանն ունի հետևյալ նկատումները. «Ստեփանոս կաթողիկոսի նկարը պահպանված է ձեռագրի սկզբում եւ:

---

[44] Նույն տեղում, էջ 130ա:

[45] Նույն տեղում, էջ 132բ:

[46] Նույն տեղում, էջ 1բ: Հիշատակարանը վավերացված է կաթողիկոսական կնիքներով: «Խաչատուր եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս Հայոց Տանն Աղթամարայ (թվականը՝ աղճատված)» բովանդակությամբ:

[47] № 5702, էջ 1ա:

[48] Նույն տեղում, Ա կազմաստառ:

70բ, 103բ, 212բ էջերում: Հատկապես ուշագրավ է 70բ էջի նկարը, որը վերաբերում է կաթողիկոսի ձեռնադրության կանոնին:

Նկարի ստորին մասի կապտավուն երիզի վրա երկաթագիր տառերով գրված է՝ «Ջտէր Ստեփաննոս կաթողիկոս»[49]:

Իսկ «Թագաւորաւրինէք»-ին վերաբերվող հատվածում ավելացնում է. «Ըստ երևույթին Սմբատ թագավորի օծման արարողություն է պատկերված 212բ էջի նկարում: Սմբատը չոքել է Ստեփանոս կաթողիկոսի առաջ թագը գլխին: Կաթողիկոսը մի խումբ հոգևորականների ընկերակցությամբ կանգնած է ձախ կողմում»[50]:

Այսպիսով փոխվել են նաև պատմական անձինք: Զաքարիայի մահվան մասին է հայտնում № 5702-ի գրիչ Ներսես եպիսկոպոսը. «Զաքարիայն՝ քաջ նահատակն, որ ըզսպանաւ յՈստան ի յանօրինաց»[51]:

Ներսես եպիսկոպոսի կողմից գրված գլխավոր հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ստեփանոս Կաթողիկոսը Զաքարիայի քրոջ որդին է: Ակինյանի համոզմամբ «Ընկերացած է Զաքարիայի դէպի Էջմիածին, որ եւ ընդունեցաւ արքեպիսկոպոսական ձեռնադրութիւն: Զաքարիայի եղերական մահուընէն ետքը վերադարձաւ Աղթամար, ուր ընտրուեցաւ եւ օծուեցաւ կաթողիկոս Աղթամարայ (1465)»[52]:

Ներսեսը, որ Ստեփանոս Կաթողիկոսի հարազատ եղբայրն է, վկայում է, որ Ստեփանոսը մեծարվեստ գրիչ է. «Շինեաց զՏաւնական ու Սարգիս գիրքն ու զՇառն եւ այլ բազում արդիւնս արար»[53]:

Նրա՝ որպես ձեռագրագետի ու գրչության ուսուցչի մասին են վկայում նաև Թովմա և Դավիթ գրիչները, որոնք աշակերտել են Ստեփանոսին ու Ներսեսին:

Ահա թե ինչ է գրում Թուման 1495 թվականին գաղափարված մի Ավետարանում. «Եւ երախտաւոր վարպետն իմ եւ զհոգեւոր հայրն զտէր Ներսէս արհիեպիսկոպոսն, եւ զհարազատ եղբայրն իւր զտէր Ստեփանոս կաթողիկոսն, որ բազում աշխատանաւք ուսուցին ինձ զարուեստ գրչութեանս եւ բազում երախտիք ունին ի վերայ իմ»[54]:

Իսկ Դավիթ գրիչը չորս տարի հետո, 1498 թվականին, հիշատակագրում է. «Եւ արդ, աղաչեմ զձեզ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԴաւիթ անարժան գրիչս, եւ զվարպետն իմ զտէր Ներսէս հեզահոգի ընտրեալ եւ պատուական եպիսկոպոսն, եւ զեղբայրն իւր տէր Ստեփաննոս կաթողիկոսն, աղաչեմ զձեզ լի բերանով Աստուած ողորմի ասացէք սոցա. ամէն»[55]:

Գրչության արվեստի վարպետ Ստեփանոսը, որն իր փորձը հաջորդ սերունդներին է փոխանցում 1461 թվականին՝ Զաքարիա Կաթողիկոսի հետ լինելով Էջմիածնում, գրիչն է հիշյալ № 4997 ձեռագիր Մաշտոցի:

Եվ պատահական չէ, որ արդեն Կաթողիկոս Ստեփանոսը հատկապես իր իսկ գաղափարած ձեռագրից է ընդօրինակել տալիս Ներսես եպիսկոպոսին:

---

[49] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 309:
[50] Նույն տեղում:
[51] ՄՄ. № 5702, 239ա:
[52] **Ներսէս Ակինեան,** նշված աշխատություն, էջ 109:
[53] ՄՄ. № 5702, էջ 239ա:
[54] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 211, 287:
[55] Նույն տեղում, էջ 270:

Ներսեան էլ իր հերթին ամենայն երկյուղածությամբ է ընդօրինակում հիշատակարանն ամբողջ, միայն թե «Զաքարիայ»-ի փոխարեն գործածում է «Ստեփանոս» անունը՝ պահպանելով № 4997-ի համապատասխան տեղիի կարմրագրությունը. «Յազգէ թագաւորին Գագկայ, Հայոց Մեծաց Տէր Ստեփանոս կաթողիկոս եւ պատրիարգ»[56]: Այստեղ բացակայում է «վաղարշապատու մեծի քաղաքի»[57] բառակապակցությունը:

Սակայն «եռափափագ սիրով ի Սուրբ Էջմիածինն»[58] բառերը գրող Ստեփանոսը տարիներ հետո դեռ կվերադառնա Էջմիածինը «տիրելու»[59], ինչպես իր նախորդը՝ Զաքարիան:

Այնուամենայնիվ, Ստեփանոսը սոսկ կուրորեն չի հետևում Զաքարիային, այլ հանդիսանում է իր քեռու գաղափարների իրագործողը:

Այսպիսով, 1465 թվականին, Զաքարիա Աղթամարցու մահից երկու տարի հետո, Ստեփանոս Կաթողիկոսը գահ բարձրացրեց Սմբատ արքային, որը նույնպես սերում էր Գագիկ արքայի շառավղից:

Ինչպես նշեցինք, № 5702 ձեռագիրը գրվել է 1471 թվականին, իսկ Սմբատ արքան գահ բարձրացավ դեռևս վեց տարի առաջ՝ 1465-ին, չնայած Ներսես եպիսկոպոսը օգտագործում է «եւ ի նոր թագաւորիս պարոն Սմբատ»[60] ձևը: 1463-ին էր մահացել Զաքարիան, որն իր հետ Աղթամար էր բերել նաև № 4997 ձեռագիր Մաշտոցը: Կարծում ենք, որ սույն, արդեն կաթողիկոսագիր համարվող Մաշտոց-ով էլ կատարվել է Հայոց վերջին արքա Սմբատի օծումը:

Կարող ենք եզրակացնել, որ մեզ հայտնի առաջին ձեռագիրը, գրված և ավարտված Էջմիածնում, ԺԵ դարի ձեռագրական արվեստի անգնահատելի մի մասունք է, որը մասնակից է եղել իր ժամանակի կարևորագույն իրադարձություններին, լինելով կենտրոնական գործող անձ և որպես առաջնեկ այն իր սերունդներն է ունեցել Աղթամարում: Նրանով ձեռնադրել են ոչ միայն եպիսկոպոս, կաթողիկոս և օրհնել մյուռոն, այլև օծել Հայոց վերջին արքա Սմբատին:

ՀՈՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

---

[56] ՄՄ. № 5702, էջ 237բ:

[57] ՄՄ. № 4997, էջ 135ա:

[58] Նույն տեղում, էջ 136բ:

[59] Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցւոյ Վարագայ վանուց վանականի, Կոստանդնուպօլիս, 1883, էջ 229. «Ի թուականիս ՋԺԶ (1467) ի հայրապետութիւն Տեառն Ստեփանոսի, որ յայս ամի գնաց յԷջմիածին՝ եւ տիրեաց յամենայն Հայկազեան ազգի...»:

[60] ՄՄ. № 5702, էջ 239բ:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՆԱՐԱՐԸ

Աստվածաշնչային Հովհաննես անունը տարածված է նաև Տավուշ աշխարհում և գալիս է դարերի խորքից: Հավանաբար, ի հիշատակ նախորդ արժանավորների բարի գործերի, նրանց անուններով են կոչել նոր ծնվածներին, որպեսզի սրանք ևս շարունակեն նրանց աշխարհաշեն ավանդությունները: Այս անվանակոչությունը շարունակվում է մինչև մեր օրերը: Տավուշի պատմությանը հայտնի են Հովհաննես Իմաստասերի, Հովհաննես Վանական Տավուշեցու, սրա աշակերտ Հովհաննես Տավուշեցու և այլոց անունները: Այս անունն է կրել նաև մի այլ Հովհաննես, որն ապրել է նրանցից մի քանի դար հետո:

Երկար որոնումներս ու մտորումներս համոզեցին, որ այս տավուշցի Հովհաննեսը թեև բարձրաստիճան հոգևորական է եղել, բայց կարելի է Ծինարար կոչել, որովհետև, ինչպես հետո կտեսնենք, նա շինարարական խոշոր աշխատանքներ է կատարել: Կառուցել է եկեղեցիներ, որոնց շուրջն են հավաքվել արհավիրքներից ապաստան որոնող տնավեր դարձած մարդիկ: Այս Հովհաննեսը հիմնադրել է բնակավայրեր, որոնք հետո դարձել են Չորաթան, Վերին Կարմիրաղբյուր և Բերդ գյուղերի ներկա սերընդի նախնիներին տուն կանչող, իր շուրջը համախմբող զանգերի ղողանջներ:

Սակայն այս Հովհաննեսի մասին կենսագրական ստույգ տեղեկությունները շատ քիչ են: Եվ այն էլ միայն վկայում են իր կառուցած եկեղեցիների վրայի վիմագիր արձանագրությունները:

Վիեննայի Մխիթարյան միաբանության անխոնջ մշակներից մեկը՝ դոկտոր Համազասպ Ոսկյանը, իր «Արցախի վանքերը» (Վիեննա, 1953, 256 էջ) աշխատության մեջ, խոսելով Խորանաշատ վանքի մասին, նշում է, թե ո՛ր թվականներին ի՛նչ գրքեր են գրվել այդտեղ և Տավուշ երկրում, ովքե՛ր են եղել գրիչները, ո՛ր արքեպիսկոպոսի տնօրինության ժամանակ են աշխատել նրանք:

Հ. Ոսկյանը գրում է, որ սկսած 13-րդ դարի վերջից հիշատակությունը լռում է Խորանաշատի մասին. «Սակայն անիկա ժամանակին հորձանքին դեմ ոգևորելով իր գոյությունը պահած է և զարգանալով նույնիսկ եպիսկո-

պոսաևիստ եղած: ԺԷ (17-րդ) դարեև ունինք հետևյալ հիշատակությունները» (էջ 157):

Հ. Ոսկյանը իր խոսքը հաստատում է մեջբերումներ կատարելով գըրքերից, պարբերականներից և պատմական հուշարձանների արձանագրություններից, բերելով նաև հետևյալ վկայությունը. «Փառք... Այդ գրեցավ զսա (Ավետարանը) ի երկիրս Տավուշա ի գյուղս Քամալ կոչեցյալ ի դուռն սուրբ Աստվածածնիս ընդ հովանյավ սուրբ Մանդուհիս ի թուին Հայկազնու ՌՃԺԷ (1117+551=1668) ի հայրապետության Տեր Պետրոսին ի յաթոռն Խորանաշատու ի յաթոռակալն Հովհաննես արքեպիսկոպոսին»:

Այժմ այս ձեռագիր Ավետարանը հանգրվանել է Երևանի մատենադարանում 365 համարի տակ: Իսկ ո՞րն է Քամալ գյուղը, ուր և կատարվել է այդ գրքի գրությունը: Ժամանակին այդպես են կոչել Տավուշի շըրջանի Նորաշեն գյուղը: Նախկինում գյուղը եղել է ներկա Այգեպար գյուղից ներքև Ադրբեջանի Ալիբայլու գյուղի տեղում: Ընդգրկել է նաև Գյունաշ կոչվող հանդամասը և մի որոշ ժամանակ կրել է նաև այդ անունը՝ Գյունաշ: Հիմա էլ կա այդ Գյունաշ (Քամալ) կոչված գյուղի նախկին բընակիչների գերեզմանոցը: Թուրքերի վայրագություններից խուսափելու պատճառով տեղի բնակչությունը ներկա Նորաշեն գյուղն են տեղափոխվել 1853—1855 թթ.: Այս բանը տարիներ առաջ հաստատեցին գյուղի տարեց բնակիչները և հատկապես Սանթուր Գրիգորյանը: Մինչև 1927 թ. այդ գյուղի որոշ ընտանիքներ ապրել են այդտեղ: Այգիներն ու վարելահողերը օգտագործել ու մշակել են և բերքն ու բարիքը սայլերով տեղափոխել վերի՝ Նորաշեն գյուղը: Հետևապես վերը նշված ժամանակից շուտ ծնվածները հիշում են իրենց տները:

Քամալ անունը պահպանվել է նաև նրանց նոր՝ Նորաշեն գյուղի վրա: Վերին Կարմիրաղբյուր գյուղի 1930-ական թվականների տարեց մարդիկ երբեմն Նորաշենին Քամալ անունով էին կոչում (Տողերիս հեղինակը հիշում է, թե ինչպես տատս՝ հորս մայրը, Նորաշենին Քամալ էր կոչում):

Բայց մենք անդրադառնանք Հովհաննես Շիևարարին: Հ. Ոսկյանը և մյուս պատմագիրները մեծ գովեստով են խոսում Խորանաշատու Հովհաննեսի մասին, որը «1683-ին կը յիշուի Ովանէս Եպիսկոպոս Խորանաշատու, որ Զորաթաւ գիւղի եկեղեցին կը շինէ...»:

Երբ Կարմիրաղբյուր գյուղի բնակիչները հարևան թուրքերի հալածանքներից ստիպված և այլ պատճառներից դրդված բաժանվեցին և հիմնադրեցին Ներքին Կարմիրաղբյուրը, մի մասը բնակվեց այլ տեղերում և հատկապես Մափլար կոչված տեղում: Նոր վայրում նրանց հուզում էր եկեղեցի ունենալու հարցը: Նախկին՝ Կարմիրաղբյուրում կար եկեղեցի, բայց բավական հեռու էր: Ուրեմն նրանից օգտվել չէին կարող: Կարճ ժամանակում Ներքին կարմիրաղբյուրցիները վերաշինեցին եկեղեցին, իսկ սրբանոց հիմնվել էին Մափլար կոչվող վայրում, բայց թայֆայական վեճեր ունեին նրանց հետ և ելք էին որոնում այստեղ եկեղեցի ունենալու համար: Ստիպված շենի կենտրոնում այուն տնկեցին և դրանից կախեցին հին շենի եկեղեցու զանգը: Ահա այս տեղն էլ դարձավ նրանց համար հավաքատեղի: Ուր կատարվում էր նաև որոշ եկեղեցական ծիսակատարություններ: Քահանա գալիս էր Ներքին Կարմիրաղբյուրից կամ Թովուզ գյուղից: Այսպես ապրեցին մոտ երկու տասնյակ տարի, մինչև բարձրացան սարի գլուխը, ուր կար գյուղատեղ և ավերակ եկեղեցի: Այն վերաշինեցին և կարճ ժամա-

ևակում Հին Շենից այլ վայրերում ապրողները հավաքվեցին այս եկեղեցու շուրջ:

Այսպես զանգ են կախել նաև ներկա Չինչին գյուղի նախկին բնակիչները, երբ 1877 թ. Թովուզ գյուղից մի քանի ընտանիք ամռանը իրենց անասունները ամառանոց համարվող վայրից չեն իջեցրել և մնացել են այդտեղ՝ Չինչինում: Դա գտնվում է Կապտավանքից արևելք մի ապառաժապթում: Թովուզցիները որքան ջանում են նրանց էլ տերել, չի հաջողվում: Նրանց սահմանային-հողային վեճը հասնում է մինչև 1930-ական թվականները, որը վերջնականապես հարթեցվում է իրենց հայրենակից, գրող Մաթևոս Դարբինյանի ջանքերով: Այս մասին նյութեր են պահպանվում նրա անձնական արխիվում՝ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում:

Չինչինցիները որպեսզի համոզեն իրենց հարազատներին, համագյուղացիներին, որ իրենք առանձին շեն են, գյուղի կենտրոնում տնկում են մի սյուն և զանգ կախում: Քահանան գալիս էր Թովուզ գյուղից: Դա եղել է 1877 թ., որը և համարվում է այդ գյուղի հիմնադրման տարին[1]: Հետագայում արանք էլ վերականգնել են ավերակ եկեղեցին և համարվել ու ճանաչվել որպես առանձին գյուղ:

Ահա թե որքան կարևոր է եղել գյուղում եկեղեցի ունենալը: Հետևապես, առավել քան հարգանքի ու մեծարանքի է արժանի Հովհաննեսը՝ Խորանաշատի եպիսկոպոսը, որին մենք Շինարար կոչեցինք, իր նախորդներից զանազանելու նպատակով:

Ինչպես «Արձագանք» հանդեսում[2], այնպես էլ Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում (Բաքու, 1895, էջ 328) հիշատակվում է, որ Չորաթանի եկեղեցին կառուցվել է Հայոց ՌՃԼԱ (1682) թվականին, որը արձանագրված է շենքի պատի վրա՝ հիշատակելով նաև կառուցողի անունը: Եվ իրոք, տողերիս հեղինակը տեսել և դրանք արտագրել է. «Թվ. ՌՃԼԱ յանուն Աստծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովաննէս եպիսկոպոս Խորանաշատու»: Մի այլ արձանագրություն. «Սուրբ խաչս բարեխաւս Ովաննէս Եպիսկոպոսի աշակերտ Տէր-Դաւթին»: Ինչպես տեսնում ենք, առաջին արձանագրությունը վկայում է, որ եկեղեցին Խորանաշատու Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով է շինվել, իսկ երկրորդը ցույց է տալիս, որ Շինարար Հովհաննեսը ունեցել է իր երախտապարտ աշակերտները:

Շատ մեծ բարեբախտություն է Չորաթան գյուղի համար, որ այն ժամանակի անարդար պահանջներին զոհ չի գնացել եկեղեցին և օգտագործվել է որպես կոլտնտեսության պահեստ: Առիթն օգտագործելով պետք է շնորհակալություն հայտնել 1930-ական թվականների այդ գյուղի ղեկավարներին, որոնք խորհրդային իշխանության տարիներին վանդալիզմից փրկել են իրենց նախնիների թողած հոգևոր այդ արժեքը՝ եկեղեցին:

Ափսոսելով, որ Խորանաշատու այս Հովհաննեսի մասին կենսագրական մանրամասներ չեն պահպանվել, կամ եթե պահպանվել են, առայժմ անհայտ են մեզ: Մենք միտթարվենք այն պարզ ճշմարտությամբ, որ մարդ-

---

[1] Այսպես էր վկայում տիկնոջս հորական տատը՝ Վարվառա Գրիգորի Գաբրիելյան-Դարբինյանը, ծնված 1867 թվին: Պատմել է 1957 թվականին Թովուզ գյուղում: Ինքը Չինչինի Գաբրիելյանների աղջիկ էր, Դարբինյանների հարս:

[2] **Քաջինյան,** Ճանապարհորդական հիշատակարան: —Արձագանք (Թիֆլիս), 1888, № 7, էջ 86—90:

կանց մասին խոսում են նրանց գործերը, թողած հոգևոր և նյութական արժեքները:

«Արձագանքի» հոդվածագիր Քաջիկյանը, խոսելով Վերին Կարմիրաղբյուրի առիթով Հովհաննես Շիրազարի մասին, գրում է. «Կարմիր Աղբյուր, Վերին՝ առաջինից (Նորաշեն գյուղից) 2 վ., Տասը տարի հազիվ կա, որ սորա բնակիչները Ներքին Կարմիրաղբյուրից. բաժանվել եկել են այստեղ և մինչև այսօր էլ վերջին ժողովրդոց հետ կազմում են մի հասարակություն, բայց որ այստեղ և հառաջագույն հայեր են բնակվել, ցույց է տալիս եկեղեցին, որ շատ հնուց շինված է, և որքան դուռն ճակատի կիսաեղծ արձանագրությունից կարելի է լինում հասկանալ, դարձյալ Խորանաշատի Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով, որը շինել է Չորաթանի եկեղեցին: Բնակիչներն են թվով 24 տուն, ունին մի դպրոցական շենք բավականին հարմար, ուր սովորում էին երեխաները մինչև փակվիլը»: Հոդվածը գրել է 1885 թ. ամռանը: Ինչպես նկատում ենք, այն տպագրվել է երեք տարի հետո[3]:

Գյուղը հիմնադրվել է 1860 թվին: 100-ամյակի տոնակատարությունը եղել է 1960 թ. և այս առիթով գյուղի կենտրոնում կառուցվել է աղբյուր-հուշարձան: Սակայն այն որպես գյուղատեղի հիշատակվում է ավելի հին ժամանակներից: Մենք կարծում ենք, որ մեր օրերի նման ծանր ժամանակներում գյուղացիները հեռանալով դարձյալ տարիներ հետո վերադարձել ու շենացրել են իրենց գյուղը և վերականգնել եկեղեցին:

Դժբախտաբար վերը հիշատակված արձանագրությունները լրիվ չեն պահպանվել: Քանի որ եկեղեցին 1931 թվին մի քանի վայ կոմունիստների ջանքերով քանդվել է և նրա քարերով պատվել գյուղի համար մի ակումբի շենք, իսկ մնացածով պատել են այն ժամանակվա գյուղի ղեկավարներ համարված Արշակ Մեսրոպյանի և Մաթևոս Առաքելյանի բնակարանները: Համանուն գյուղացի Աշոտ Օհանյանը (ծնվ. 1920 թ.) պատմում էր, որ, երբ եկեղեցին քանդում էին, գյուղի քահանա Տեր Համբարձում Ալավերդու Պողոսյանը (քահանա է ձեռնադրվել 1888 թվին) լաց լինելով աղաչում էր, որ եկեղեցին չքանդեն, այլ շինությունը օգտագործեն որպես պահեստ կամ մի այլ բան: Բայց քահանային լսող չկար:

1971 թ. ամռանը հայրենի գյուղում՝ Վերին Կարմիրաղբյուրում, Աքսորիկ Մելյանը հին ակումբի շենքի արևմտյան պատի 2-րդ հարկի պատուհանի մոտ դրված մի քարի վրա ցույց տվեց մի քանի տառ: Քարի վրայի ավազը մաքրելուց հետո, պարզ ու հստակ կարդացվեց.

ԿԱՐՄԻՐ ԱՂԲԻՒՐ ՂԶԼԲՈՒՂԱՂ
ԲՆԱԿԻՉՔ ԲՆԻԿ ՀՕՂՆ ԱՐՔՈՒՆՆԻ
ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆՆ ՇԻՆԵՑԻ ԵԿԵ-
ՂԵՑԻՍ ՋԵՌԱՄԲ ՄՈՒՐԱՏԽԱՆՆԻ
ՍԲ ԽՉՍ. ԲԱՐԽՍԻ ԽԱՆՆԱՂԻՆ:

Դա շեկավուն քար է, ինչպես ասում է ժողովուրդը, Տերունական ամրոցի մոտի քարհանքից բերված 52×26 սմ մեծությամբ: 1986 թ. ամռանը գյուղի գրասենյակն ու ակումբի շենքը քանդել են և այդ արձանագրությամբ քարը պահվում է գյուղի թանգարանում: Ի դեպ ասեմ, որ թանգարանը

---

[3] **Քաջիկյան,** Ճանապարհորդական հիշատակարան: —Արձագանք, 1888, № 7, էջ 88:

հիմնադրվել է 1960 թ. դպրոցի պատմության ուսուցիչ Սերոժ Մխիթարյանի ջանքերով և կարող է պատիվ բերել մի մեծ քաղաքի, այնքան շատ են ցուցանմուշները: Հետաքրքրական են նաև նյութերի բազմազանությամբ: Գրանցվել է նաև արձանագրության մի բեկոր, որի վրայի տառերը վերծանել հնարավոր եղավ, թեև երկար ժամանակ եղել էր շենքի հիմքում և խիստ մաշվել:

Այս վիմագիր քարերը պահպանելու համար շնորհակալության արժանի են այն ժամանակի որմնադիրներ Հակոբ Մարգարյանը, Նիկալ Մելյանը, Սողոմոն Ավագյանը, Եգոր Ծատուրյանը, Շեկո Գիժլարյանը և ուրիշներ: Նրանք այս քարերը կորստից փրկելու համար թաքցրել են ժամանակի ղեկավարներից, որոնք կարող էին ջարդել տալ:

Այսուհանդերձ Քաջիկյանի հոդվածում և Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում գրված է. «Ես տեր Վարդանս շինեցի զեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ. ՌՃԾ.»: Մի այլ քարի վրա. «Սուրբ խաչս Խանաղին»: «Ովանես եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս ձեռամբ տեր Գրիգորին»[4]: Գյուղի քահանան եղել է Տեր-Կարապետ Մխիթարյանը:

Վերը հիշատակված արձանագրությունը վկայում է, որ Վերին Կարմիրաղբյուր գյուղի եկեղեցին կառուցվել է 1701 թվականին, նույն Խորանաշատու Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով: Վերը հիշատակված վիմագիր քարի բեկորի վրայի թվերն էլ ցույց են տալիս, որ այդ ևսիկինում կառուցվել է դրանից ուղիղ մեկ դար առաջ: Այս բոլորը զարմանալի չեն, քանի որ հայը կառուցել է, իսկ թշնամիները՝ կործանել: Եկեղեցու գավթում թաղված Հակոբ Մելյանի շիրմաքարի արձանագրությունից իմացվում է, որ այն վերանորոգվել է երրորդ անգամ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԾԵՐՈՒՆՈՅՆ ՅԱԿՈՎԲԱ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ ՄԵԼԵՆՑ
ՋԻ ԷՐ ԲԱՐԵԱՑ ՊԱՏՃԱՌ ԵՎ ՉԱՐԵԱՑ ՀԵՌԻ, ՀԻՄՆԱԴԻՐ ԳՅՈՒՂԻՍ
ԵՎ ՆՈՐՈԳՈՂ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ԵՐՋԱՆԻԿ Ի ՄԵՋ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿԱՐՈՏՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ՈՐԴՈՔ 81 ԱՄԱՑ ԲԱՐՈՔ ԾԵՐՈՒԹՅԱՄԲ ՎԱԽՃԱՆՎԵՑ 1884 Թ.
ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ:

Եկեղեցին քանդելուց հետո Արշակ Մեսրոպյանը այդ շինության քարով գերեզմանի հարևանությամբ կառուցել էր իր բնակարանը: Այս պատճառով շիրիմները ընկել էին ոտնատակ, և 1968 թ. Մելյանները և Տեր Կարապետի ազգակիցները գերեզմանները տեղափոխեցին Յալի և Քարհանքի գերեզմանոցները: Ազատված տեղը եկեղեցու տարածքի հետ միասին սկսեցին օգտագործել տանտերերը:

Բերդ գյուղի եկեղեցին նույնպես կառուցվել է Խորանաշատու Հովհաննեսի նախաձեռնությամբ: Քաջիկյանը գրում է. «Բերդ տանձկերեն Թովուզ դալայ՝ առաջինից 5 վ. (Թովուզ գյուղից): Այս անունն առել է յուր հարավկողմը շինված ամրոցից, որի այժմ ավերակները կան: Բնակիչներն են 77 տուն, որոնք հավաքվել են այստեղ զանազան տեղերից և մինչև անգամ Երևանի նահանգից: Եկեղեցին քարաշեն է և շինված Թիֆլիզեցի Չիթախենց մահտեսի Սոլիսի ծախքով և Խորանաշատու Հովհաննես եպիսկո-

---

[4] **Բարխուդարյան Մ.**, Արցախ, Բաքու, 1895, էջ 329:

պոսի ձեռքով, ինչպես ցույց է տալիս արձանագրությունը, ուրեմն ավելի քան 266 տարի հառաջ, ըստ որում Զորաթաղի եկեղեցվո արձանագրի թվականից հայտնի է, թե որ ժամանակներում է ապրել հիշատակյալ Հովհաննես եպիսկոպոսը»: Մ. Բարխուդարյանը ներկայացրել է այդ եկեղեցու արձանագրություններից մեկը. «Յաննս Աստուծոյ ես թիփլիզեցի Զիթախենց մահտեսի խոճա Սողիս շինեցի եկեղեցիս, խորանս Շաղոռոյին (?) արքազան եպիսկոպոսին Թաւուզա երեցիս Մէլիք-Ղորխմազին[5] կամակցութեամբ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոյ Թադի և Բէկխաւլթանի և կողակցի իմոյ Դարիճանին և որդոյ իմոյ Ստեփանին և կողակցին Ասլիզատին, Յարութիւնին և կողակցին Բէկխաթունին և Պողոս Սարկաւագին և դստերացն իմոյ Ապաշխարող Աննային և Հռիփսիմէին, Շահրուպանին և իւր դուստր Քևոժվանին, փեսայ Մելքոնին և իւր դուստր Բէկխաւլթանին»[6]:

Բերդ գյուղի հիշյալ եկեղեցին եղել է զբոսայգու և ներկայիս ներքին գործերի բաժնի գրասենյակի տեղում: Եկեղեցին քանդելուց հետո, շինաքարի մի մասն օգտագործել են դատարանի շենքի շինարարության վրա, մյուս մասը՝ այլ տեղերում: Եկեղեցու վիմագիր արձանագրություններից պահպանվում է, ուշադիր լինել և դրանք ինչ-որ առիթներով հայտնաբերելու դեպքում տալ ի պահ, որպեսզի հետագայում եկեղեցի կառուցելիս դրանք դրվեն համապատասխան պատի մեջ: Այդ գործին պետք է ուշադիր լինեն բոլորը, անկախ նրանից, թե երբ ու որտեղ կհայտնաբերվեն այդ քարերը: Վերին Կարմիրաղբյուր գյուղացի որմնադիր վարպետ Սարուխան Ղուկասյանը վկայում է, որ Արշակ Մեսրոպյանի տունը վերակառուցելու ժամանակ հին տան քարերը օգտագործելիս եղել են նաև խաչով ու արձանագրությամբ քարեր, որոնք նույնությամբ պատի մեջ է դրել: Սա այն ժամանակների համար սովորական երևույթ էր:

Բերդ գյուղի այս եկեղեցու գավթում է թաղված գյուղի քահանա Մուրսես Տեր-Անանյանը, որը 1871 թ. այս գյուղում բացել է դպրոց, ուր կրթություն են ստացել նաև հարևան Վերին Կարմիրաղբյուր, Թովուզ և Նորաշեն գյուղից երեխաներ: Այս ավերածություններից հետո քարեբախտաբար պահպանվել է նրա և այդ գյուղից այլ շնորհալի տարրդկանց գերեզմանները:

Հետաքրքրական են մեծ հայրենասեր, հայապահպանության ջատագով Հովհաննես Շինարարի կառուցած եկեղեցիների զանգերի ճակատագրերը: Բերդ գյուղից երկարամյա լրագրող Հայկ Մելքումյանը (ծնվ. 1913 թ.) Տավուշի շրջանային «Այգաբաց» թերթում տպագրած մի հոդվածում մեծ ցավով նշում է, որ իրենց եկեղեցու զանգերը, եկեղեցին քանդելուց հետո, տրվեց հարևան ադրբեջանական Ալիբեյլի և Օքյուզլու գյուղերին. «Թե խեղճ վեցին հարևան ադրբեջանական Ալիբեյլի և Օքյուզլու գյուղերին. «Թե խեղճ են, թող նրանք էլ դպրոցում զանգ ունենան, կրթություն ստանան»: Ահա թե ինչպիսի արտացավություն են դրսևորել այն ժամանակի ղեկավարները հայ մշակույթի ու հնությունների նկատմամբ: Տողերիս հեղինակը հիշում է, որ Վերին Կարմիրաղբյուր գյուղի եկեղեցու զանգերը, որոնք եկեղեցին քանդելուց հետո կախել էին դպրոցի տանիքի ամենավերին տասում, իջեցվե-

---

[5] Մ. Բարխուդարյանը գրում է. «Անկարելի եղավ իմանալ, թե սա ինքն միայն իշխա՞ծ է Տավուշի ձորիս, թե եղած են և այլ իշխողներ. Մելիքությունը յուր նախնիքներից ժառանգած է, թե իրանից սկսված է, հետագա իշխող մելիք ժառանգ ունեցած է, թե ոչ: Միայն հայտնի է, որ հայ եղած է և մականունը Լորխեազն և ոչ մկրտության»: Նույն գրքում, էջ 330:

[6] **Մ. Բարխուդարյան,** նույն գրքում, էջ 330:

ցին այդտեղից: Երկար ժամանակ ընկած էին գրասեղյակի առաջ: Ազատ պահերին գյուղի երիտասարդները օգտագործում էին որպես ծաղրաքարեր: Դրանցից մեծը եկեղեցում էր ձվիրել Վարդևան Ղավալյան-Մարգարյանը, իսկ փոքրը՝ եկեղեցին վերակառուցել տվող Հակոբ Տեր-Մովսեսի Մելյանը: Երկու զանգերի վրա կային ձուլարանային արձանագրություններ այս մասին: Պետք է միայն այսօր ափսոսալ, որ դրանք ոչ մի մարդ չի արձանագրել ու պահպանել: Այս զանգերը տարան ադրբեջանական Թովուզ երկաթուղային կայարան, որ այնտեղից ուղարկեն ռազմական գործարան զենք արտադրելու նպատակով: Տավուշի մյուս գյուղերի եկեղեցիներն էլ նման ճակատագրեր են ունեցել:

Այսուհանդերձ, այդ աշխարհի հայտնի վանքերից և գյուղերում գոյատևող ոչ մի եկեղեցի գործող չէ: Ժամանակն է մտածել այս տասին: Թեև առանձին անհատներ հանգանակություն են կատարում քանդված եկեղեցիների փոխարեն կառուցելու նորերը, բայց նրանց հավաքած չնչին գումարները չեն կարող հոգալ այդ բոլորի մասին: Հետևապես պետք է պետական մոտեցում հանդես բերել, կամ գտնվի մի նոր Հովհաննես եպիսկոպոս Ծիլնարար, կամ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյան (Թովուզ գյուղ 1836—1903), որոնց ջանքերով եկեղեցիներ են վերակառուցվել ու շինվել: Նշենք, որ Թովուզ գյուղի եկեղեցին պահպանվել է և օգնագործվել որպես կոլտնտեսության հացահատիկի պահեստ: Միայն գմբեթն է քանդվել, որի վերականգնումը դժվարության հետ կապված չէ: Կարծում ենք, այս եկեղեցին կարելի է գործող դարձնել...

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Խորանաշատու Հովհաննես Ծիլնարար եպիսկոպոսը Խորանաշատ վանքի աթոռակալ է եղել 1680—1710-ական թվականներին, ծավալել բուռն գրչագրական ու շինարարական գործունեություն, որը պետք է միայն բարի նախանձով հիշել: Եվ ցավ չէ, որ չգիտենք, թե նա ո՛ր գյուղում և ե՛րբ է ծնվել ու մահացել: Հետևապես նա արժանի է, որ տեղ գրավի Տավուշ աշխարհի երևելիների շարքում, մարդիկ, որոնք պետականություն չունենալով հանդերձ, շենացրել են մեր լեռնաշխարհի այդ տարածքը՝ վեր հանելով ավերակների մոխիրներից, նրանով իսկ միշտ բնակեցված պահելով Տավուշը, փառք բերելով ոչ միայն իրենց, այլև մեզ, մեր ժամանակակիցներին, որոնք այսօր երեք կողմից շրջափակված, շուրջ երկու հարյուր կմ տարածքը անձնազոհաբար պաշտպանում են հակառակորդի ոտնձգություններից՝ տալով նաև ծանր զոհեր: Դա մի փոքր Արցախ է՝ շրջափակված լեռների, կիրճերի ու անտառների տեջ:

Այսօր էլ Հովհաննես Ծիլնարարը, իր շինություններով հանդերձ, իր ապագա սերունդների հետ միասին դեմառդեմ կանգնած է թուրքին: Հետևապես նա արժանի է մեծարանքի... Եվ պետք է խոնարհվել նրա անհայտ ու սուրբ շիրմի առջև...[7]:

ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ

---

[7] «Հովհաննես Ծիլնարար» վերնագրով հոդված ենք գրել. «Այգաբաց» (Բերդ), 1976, 7 հոկտեմբեր, № 119:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԵՏԻՍՆԵՐԻ ՄԵՂԵԴԻՆԵՐԸ

Քրիստոսի ծննդյան տոնը բազմաթիվ ազգերի, այդ թվում նաև հայերիս համար ունի յուրահատուկ և բազմիմաստ խորհուրդ: Յուրաքանչյուր տարի այդ գեղեցիկ տոնի առթիվ մարդկանց զգացմունքների ու գիտակցության մեջ ծորոգվում են լավատեսական տրամադրություններ: Բնության գարնանային զարթոնքի առաջացրած հրճվանքը, որն այժմ էլ համակում է բոլորիս, հավանաբար նախնադարյան մարդու հողագործության անցկացնելու պահից, նաև գործնական իմաստ ստանալով, սկիզբը դարձավ տարվա շրջափուլերը նշանավորող ծեսերի ու տոնակատարությունների: Բայց, երբ յուրաքանչյուր գարուն հողի մշակի համար լոկ մի տարվա առատ բերքի հույս է տալիս, ապա Քրիստոսի ծնունդը գիտակցվելով, որպես ամբողջ մարդկության հոգևոր փրկության նախապայման, ստանում է անհամեմատ ավելի մեծ ու խորիմաստ նշանակություն: Աստված իր միակ որդուն ուղարկում է մարդկանց մեջ ճիշտ ուղին քարոզելու, տառապանքներ կրելու՝ խաչվելու, մեր բոլորիս մեղքերը իր սուրբ արյամբ քավելու և չարի ժամանակավոր իշխանությունից ազատելու: Սա է մարդկանց նկատմամբ Աստծո հայրական սիրո այն գերագույն արտահայտությունը, որ շարքային մահկանացուներիս աշխարհական մտածողությունը ի վիճակի է ըմբռնել: Թերևս այսպես պիտի հասկանալ, թե ինչո՞ւ մարդիկ Քրիստոսի Ծննդյան տոնն ընկալում են որպես նոր հույսերի սկզբնավորում, թերևս այսպես պիտի բացատրել այն, որ դարերի ընթացքում տրամաբանորեն նույնացվել, զուգորդվել են նյութական կյանքի՝ բնության վերակենդանացման և Քրիստոսի Ծննդյան՝ այսինքն հոգևոր կյանքի վերանորոգման տոները և ստեղծվել կրոնական ու աշխարհիկ, պայծառ ու լուսավոր, բազմապիսի ծեսեր ու տոնակատարություններ հագեցված երգերով, պատկերավոր բանաստեղծականությամբ, թատերականացված խաղերով, բարի մաղթանքների ու նվիրատվությունների փոխանակումներով:

Քրիստոնյա ազգերից շատերի Ծննդյան տոների հետ կապված ժողովրդական բանահյուսության ավանդույթները գրի են առնվել, ուսումնասիրվել, հրատարակվել ժողովածուներով, վերամշակվել ու գեղարվեստական վերամարմնավորում ստանալով դարձել են խմբերգային, օպերային, բալետային, սիմֆոնիկ երաժշտության փայլուն օրինակների նյութ:

Հայ ազգի կյանքում էլ Քրիստոսի Ծննդյան տոնը միշտ եղել է լուսավոր հույսերի մի վսեմ առիթ, մանավանդ, որ չարի ժամանակավոր իշխա-

նությունը մեզ համար եղել է ոչ միայն բիբլիական մի ավանդույթ, այլ դաժան ու կոնկրետ պատմական իրողություն: Այդ պատճառով էլ մեր բանահյուսության մեջ ստեղծված Ծննդյան տոնի ավետման երգերում՝ ավետիսներում, ջերմ անմիջականությամբ և գեղեցիկի արտասովոր զգացմունքով ներհյուսված են ազգի հավաքական գիտակցության մեջ բյուրեղացած մարդասիրական ամենալուսավոր երազանքները:

Թե ավետիսները ինչքան տարածված ու մեծ սիրով էին երգվում հայ աշխարհականների միջավայրում, քրիստոնեական կրոնի տարածման հենց սկզբից, հուշում է այն փաստը, որ Մովսես Խորենացու նման բարձրաստիճան հոգևորականը, մեծ պատմաբան գիտնականը, որը քաջատեղյակ էր ազգի անցյալին, ներկային ու երազանքներին, անհրաժեշտություն է համարել Քրիստոսի Ծննդյան տոնն ավետող մի երգ ստեղծել: «Խորհուրդ մեծ և սքանչելի» տողով սկսվող նրա շարականը դարձել է ազգի սիրած ավետիսներից մեկը և հարատևելով հազարամյակների միջով մինչև օրս երգվում է Հայ Եկեղեցում:

Սպա դարեր շարունակ ի հեճուկս ազգի պատմական ալեկոծ՝ հաճախ ողբերգական վիճակին, հայկական ժողովրդական բանահյուսությունը նախաքրիստոնեական և բիբլիական ավանդույթները մի ամբողջության մեջ կապելով ստեղծել է նորանոր՝ մեկը մյուսից ջերմ ու գեղեցիկ ավետիսներ:

Արդեն 19-րդ դարից, հայ բանասերները սկսել են որոնել, ուսումնասիրել և հրատարակել միջնադարյան ձեռագրերում խնամքով գրի առնված և կամ ժողովրդական կենդանի բանահյուսության մեջ հարատևող ժողովրդական ավետիսների բանաստեղծական տեքստերը[1]:

Սակայն այդ ավետիսների մեղեդիները, թեպետև ոչ նվազ արժեքավոր ու հետաքրքրական են, քանի որ 19-րդ դարում թվով շատ քիչ երաժշտագետներ ունեինք, դեռ երկար ժամանակ շարունակում էին անհայտ մնալ, բացահայտված, գրի առնված, գնահատված չէին, գիտական և գեղարվեստական շրջանառության մեջ ներդրված չէին:

Ժողովրդական ավետիսի գրի առնված և հրատարակված առաջին մեղեդիներից մեկն է Ռշտունյաց գավառի Պողոնիս գյուղի օրինակը, որ Կոմիտասը նոտագրել է Լիմոնջյանի ձայնանիշերով և զետեղել իր անդրանիկ հոդվածում 1894 թ.: Այդ հոդվածն ու ավետիսը հետագայում հրատարակվեցին Կոմիտասի «Հոդվածքներ և ուսումնասիրություններ» ժողովածուում[2]:

Հաջորդ օրինակը, որը նույնպես Լիմոնջյանի ձայնանիշերով է տպվել, Մ. Խումաշյանի նոտագրած «Տաղ ծննդյան» վերնագրված ավետիսն է[3]:

---

[1] Այս կապակցությամբ տես՝ երկու աղբյուր, որոնք հարուստ են և՛ նյութով, և՛ գրականության ցանկերով: **ա. Աս. Մնացականյան,** Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1956 թ.: **բ. Ա. Օղաբաշյան,** Ամանորի ծիսական երգերից, Հայկական ՍՍՀ «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, 1974 թ., էջ 43—53:

[2] Տես՝ **Կոմիտաս,** Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավաքեց Ռ. Թերլեմեզյան, Պետական հրատարակչություն, Երևան, 1941 թ., էջ 108:

[3] Տես՝ Տաղարան ի պետս սպասաւորաց Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ, երգեաց Յակոբ քահանայ Նախշունեանց, ձայնագրեաց Միհաս քահանա Խումաշեանց, Վաղարշապատ, 1900 թ., էջ 27:

Մեղեդիական օրինակներ

Ջափաւոր-միջակ դԿ

Բիվ 1



Բիվ 2



Բիվ 3



Բիվ 4



Հետագայում, երբ մեզանում էլ բանահավաքչական աշխատանքը սկսեց ակտիվանալ, հայ երաժշտագետները, հատկապես Կոմիտասի աշակերտները՝ Սպիրիդոն Մելիքյանը և Միհրան Թումաջյանը, ի թիվս ժողովրդական երաժշտության այլ ժանրերի պատկանող օրինակների գտնում ու ձայնագրում էին նաև ավետիսների մեղեդիներ: Սակայն պիտի նկատել, որ բանավոր միջոցներով պահպանված ավետիսների քանակը շատ փոքր էր, անհամեմատ ավելի փոքր, քան այդ երգերի անցյալում ունեցած լայն տարածումն ու գեղարվեստական արժանիքները թույլ կտային ակնկալել: Այս կապակցությամբ պիտի նկատի ունենալ, որ ամենօրյա գործունեություն ունեցող երգերի համեմատությամբ ավետիսները, ինչքան էլ, որ օժտված էին ժողովրդական բանահյուսությանը հատուկ գեղարվեստական և ստեղծագործական շռայլ կենսունակությամբ, տարին մեկ անգամ ծաղկող ծաղկի նման կիրառական էին միայն տարին մեկ անգամ, ուստի բանահավաքչական աշխատանքի ընթացքում նրանց հազվագյուտ պատահելը օրինաչափական է:

Հիշենք Կոմիտասի այն միտքը, որ— «ժողովուրդը ժամանակից և տեղից բաժան երգ չի հասկանում, չի ստեղծում և չի էլ գործածում»[4]:

Հավանաբար պիտի հիշել նաև այն, որ հայ ազգի պատմության վերջին տասնամյակները այնքան էլ բարենպաստ չէին Քրիստոսի ծնունդն ավետող երգերի ավանդույթների հարատևման համար: Բայց այդուհանդերձ, ավետիսներ թեկուզ և փշրանքներ պահպանվել էին տարեց մարդկանց հիշողության մեջ:

Այդպիսի փշրանքների հավաքման գործին սիրով ձեռնարկեցինք, մանավանդ, որ Բուխարեստում անցկացրած մեր մանկության և պատանեկության տարիների հայկական կամ ռումինական միջավայրերում, մեր լսած ու երգած ավետման երգերի անջնջելի տպավորությունները հանգիստ չէին տալիս ու ստիպում մեր կատարած բանահավաքչական աշխատանքում հատուկ ուշադրություն հատկացնել ավետիսներին: Արդյունքում՝ մեզ հաջողվեց մոտ մեկ տասնյակ ավետիսների մեղեդիներ ձայնագրել: Բայց դրանք փշրանքներ են բառիս ոչ միայն փոխաբերական իմաստով՝ հիմնականում ամբողջի մի որևէ հատվածը: Եվ հաճախ ինչպես հնագետները մի փոքր բեկոր գտնելով փորձում են պատկերացնել ամբողջը, այնպես էլ մենք գտնելով ավետիսի մը հատվածը, ջանում էինք պատկերացնել ամբողջը: Աստիճանաբար հավաքվող նյութը և մանավանդ Հայաստանի Մարտունու շրջանում մեր գրի առած քիչ թե շատ լրիվ ավետիսը օգնեցին կողմնորոշվել ու ավելի հստակ պատկերացնել ավետիսների երբեմնի ամբողջական վիճակը[5]:

Ապա մեր ձայնագրած մեղեդիները, ինչպես նաև այլ երաժշտագետների ժողովրդական երգերի ժողովածուներում պատահող օրինակները ի

---

[4] Տես՝ Կոմիտասի հիշատակված ժողովածուն, էջ 31:

[5] Մեր ձայնագրած ավետիսների մեղեդիների առանձնահատկությունները ներկայացրել ենք մի շարք գիտական զեկուցումներով: Այդ զեկուցումներից մեկի թեզիսները, վերնագրված «Մարտունու շրջանի մի ավետիսը», տպվել են, տես՝ Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979 թ., 1ջ §9, հայերեն, էջ 228, ռուսերեն:

մի բերելով, համապատասխան ուսումնասիրությամբ մի ժողովածու կազմեցինք, որը մինչև օրս անտիպ է:

Այժմ օգտվելով ընձեռված հնարավորությունից, այս հոդվածով փորձում ենք լայն ընթերցողին ներկայացնել այդ ժողովածուից մի քանի օրինակ և ուրվագծել Քրիստոսի Ծննդյան տոնի հետ կապված ժողովրդական ավետիսների մեղեդիների մի քանի թե՛ ընդհանուր և թե՛ յուրաքանչյուր օրինակի յուրահատուկ՝ մասնավոր առանձնահատկությունները:

Նախապես նշենք այն առանձնահատկությունը, որը մասամբ այս երգերի ընդհանուր անվանման առիթն է դարձել:

Համարյա բոլոր ավետիսները տողերի վերջում ունեն «ավետիս» և կամ «ալելույա» կրկնակային դարձվածքը: Մեղեդիական առումով այս դարձվածքների մեծ մասը նույնությամբ են կրկնվում և ամբողջ երգի ընթացքում կատարում երաժշտական տողը եզրափակող կադանսային ֆունկցիա: Այդ ֆունկցիոնալ դերը բավականաչափ կայուն է, այն պահպանվում է նաև այն օրինակներում, որտեղ կրկնակային այդ դարձվածքը ստանում է մեղեդիական՝ ելևէջային, հազվադեպ նաև ռիթմական տարբերակային զարգացում:

Մի այլ՝ կարևոր առանձնահատկություն է ավետիսների բարդ՝ բազմապիսի կառույցը:

Ավետիսները հիմնականում բաղկացած են լինում մի քանի հատվածներից, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն ֆունկցիա և համապատասխանաբար երբեմն նաև այլ տաղաչափություն, այլ մեղեդի, կատարողական այլ մարմնավորում:

Առաջին հատվածը, որը բուն ավետման ֆունկցիա է կատարում, սովորաբար ամենափոքրն է, այն կազմված է լինում— «ցնծացեք», «ուրախացեք», և նման դարձվածքներից, որոնք երգվում են կոչական բնույթ ունեցող երաժշտական ելևէջներով:

Երկրորդ հատվածը, որը համեմատաբար ամենածավալունն է, և իր ներթին կարող է մի քանի մասի տրոհվել, հայ գյուղացու պարզ ու շիտակ, ջերմ ու անմիջական պատկերացումներով պատմում է Քրիստոսի ծննդի մասին: Մի շարք օրինակներում— «Մարիամ գնաց դուռն ի այրին», «քամակ էտուր խաչափետին», «շնչավ է բեր յուր խաչ որդին» և նման բանաստողերով, կարծես պատմվում է հայ գեղջուկ կնոջ ծննդաբերության մասին: Այդ նույն անմիջականությամբ նորածին Քրիստոսին բրդյա խանձարուրներով են փաթաթում, Հովհաննես Մկրտիչը քավոր է դառնում և այլն:

Ինքնին հասկանալի է, որ ավետիսների այս հատվածների մեղեդիական մարմնավորումները լինում են հարուստ ու ճկուն, երգային, մի խոսքով ժողովրդական երաժշտության ստեղծագործական միտքը այստեղ է, որ դառնում է ավելի ոգևորված և ստանում ազատ զարգացման հնարավորություններ: Այս հատվածներում, հատկապես, երբ պատմվում է Քրիստոսի մանկության մասին, որոշ օրինակներում ավելի նկատելի են դառնում պենտատոն ձայնակարգը և կամ մանկական երաժշտությանը հատուկ այլ միջոցներ: Ընդհանուր առմամբ այս հատվածների մեղեդիներում չկան հուզական լարվածության կամ ողբերգականության տարրեր: Նույնիսկ եթե պատմվածքին պատեհ էպիկական ելևէջներ պատահեն, ապա դրանք մեղմ են, ոչ խստաշունչ, այլ պարզապես պատմողական բնույթի:

Երրորդ հատվածում, որը համեմատաբար փոքր՝ ավելի ճիշտ սղված է լինում, տեղի է ունենում մի երկխոսություն, որի մեջ հնարավոր է նկատել պատմի թատերականացման հետքեր:— «Բարի, բարի, Ձեր որդու անունն ի՞նչ է», կամ նման բանատողերով ավետողները հայտնում են իրենց այցելած տան տիրոջ որդու անունը, որպեսզի նրա անունով էլ սկսեն հղել բարի մաղթանքներ: Սովորաբար այդ հարցը տրվում է ոչ երգային, ոչ էլ խոսակցական, այլ ընդգծված ռիթմավորում ունեցող ասերգային եղանակներով: Տան տերը, կամ նրան փոխարինողը, մի բարյացակամ դարձվածքով, օրինակ՝—«Հակոբ քեզ ծառա» (տես Աս. Մնացականյան, Հշված աշխատության էջ 592), նույն ռիթմավորված եղանակներով պատասխանելով, տալիս է որդու անունը և ընդունում ավետողներին:

Այսպիսով, անմիջականորեն սկսվում է ավետիսի չորրորդ հատվածը: Այստեղ է, որ հղվում են ճոխ ու շռայլ բարի մաղթանքներ ոչ միայն տան տիրոջ որդուն, այլև ամբողջ ընտանիքին, տանն ու տնտեսությանը: Ավետիսների այս հատվածներում է, որ նկատելի են ազգային հավաքական գիտակցության մեջ բյուրեղացած և նախնական նախաքրիստոնեական և հետագայում՝ միջնադարում ձևավորված ինչպես հիպերբոլիկ, այնպես էլ ռեալիստական պատկերացումներ մարդկային բարեկեցիկ կյանքի մասին: Տան ավագ որդին պատկերված է որպես մի դյուցազուն հսկա, որի վարսերը ծառի ճյուղերին են խառնվում, երբ նա նստած է լինում ծառի տակ, նա նաև ստեղծագործ-շինարար է, հաճախ մեջքին ուրագ ունի և այլ հեքիաթային կամ դյուցազնական ատրիբուտներ: Նույն որամաբանությամբ տան հարսների ձեռքներին ավելի փոխարեն մանուշակների փնջեր կան, տան թոնիրը եկեղեցու է նմանեցված: Նման և այլ հաճելի չափազանցություններով գովերգվում՝ մաղթանքների է արժանանում ավետողներին ընդունող ընտանիքը: Քիչ չեն նաև հասարակական կյանքի հետ կապված՝ օտարության մեջ գտնվող պանդուխտների, ղարիբների շուտափույթ վերադարձի և այլ նման մաղթանքները:

Ավետիսների այս հատվածներում մեղեդին կարող է ամենատարբեր ձևերով մարմնավորվել, բայց կարծես ավելի հաճախ են ժողովրդական շուրջպարերին բնորոշ եղանակներ ու ռիթմերը, մի բան, որն ըստ ընդհանուր որամադրության և բանաստեղծական տեքստի բովանդակության, ավելի օրինաչափ պիտի համարել:

Իրենց բանաստեղծական պատկերներով ու մեղեդիներով, ավետիսների այս հատվածները կարծես անմիջական ազգակցություն ունեն թե՛ վիպական, թե՛ հարսանյաց և թե՛ քնարական (սիրո) գովքերի հետ: Թերևս ավետիսներում է, որ ձևավորվել ու բյուրեղացել են հայկական գովքի երգերի ընդհանուր գեղագիտական և արտահայտչական սկզբունքներն ու միջոցները:

Այս վերջին հատվածները, ուրեմն նաև ավետիսներն ամբողջությամբ, մի որոշակի ավարտ կամ ավարտական դարձվածք չունեն և չեն կարող ունենալ, քանի որ կտրուկ ընդհատվում էին, երբ տան տերը նվերներ էր տալիս, և ավետողները շտապում էին հաջորդ տունը ավետելու և նվերներ ստանալու համար: Նվերները՝ հիմնականում տոնական սեղանի բարիքներից, հավաքվում էին ավետման շրջագայությունը մի ուրախ սեղանով ավարտելու համար:

Թերևս պատահել է, որ նվերներ չեն տվել, և ավետողները կես լուրջ, կես կատակ սկսել են հանդիմանել: Ինչևիցե, այդպիսի հանդիմանություն-

ների փուլը կարելի է հինգերորդ՝ արտաավետիսային հատվածը համարել: Նման մի օրինակ է Ահ. Մնացականյանի ժողովածուի թիվ 102 (էջ 327) երգը, որի բանաստեղծական տեքստում չկան ավետիսներին բնորոշ մեր նկարագրած հիմնական հատվածները: Երևում է, որ այստեղ բերված են հազվադեպ պատահող ու կարծես դրանով ուշադրության արժանացած տողեր: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ելևէջներով են երգվել նման հատվածները, մեզ երբեք չի պատահել թեկուզ և հեռավոր նմանություն ունեցող բան լսել: Բայց կարելի է ենթադրել, որ մեղեդին պիտի որևէ ձևվով փոխվեր, բարյացակամ, կենսահաստատուն տրամադրություններն ու համապատասխանող ելևէջները հավանաբար պիտի որ փոխվեին, թերևս և խոսակցական-ծաղրական ելևէջների նմանվեին:

Ավետիսների կարևորագույն ընդհանուր առանձնահատկություններից մեկն էլ նրանց մեջ միշտ առկա ստեղծագործական ներքին ուժն է: Սերունդից սերունդ բանավոր միջոցներով փոխանցվող և երգից երգ անցնող ընդհանուր բովանդակության հետ կապված բանաստեղծական և մեղեդիական դարձվածքները միշտ նորանոր մարմնավորումներ են ստանում, ծավալվում, ընդլայնվում և կամ սղվում պահի թելադրածի համաձայն:

Իսկ այժմ մի քանի մեղեդիների մասնավոր առանձնահատկությունների օրինակով փորձենք ցույց տալ, թե ինչքան տարբեր ու բազմազան կարող են լինել ավետիսները:

Պարզագույն օրինակներում մեղեդին ընդամենը մի երաժշտական տող է, որը համարյա նույնությամբ կրկնվում է բանաստեղծական տեքստի բոլոր տողերի հետ: Այդպիսի մի օրինակ է Կոմիտասի վերոհիշյալ ավետիսը, (տես՝ մեղեդիական օրինակ թիվ 1): Վերնի տողը բերված է Լիմոնջյանի նոտագրությամբ: Դժվար է հատակ պատկերացնել այդ օրինակի հակիրճության պատճառը: Գուցե այդպես, առանց մեղեդին զարգացնելու են երգել Ռշտունիքում, մի բան, որ քիչ հավանական է, գուցե երգողը միայն այդքանն է մտաբերել Էջմիածնում, և կամ իր առաջին հոդվածը տպելիս Կոմիտասը այդքանով բավարարվել է: Բայց անտարակույս մի բան պարզ է, որ թե՛ խոսքերը և թե՛ մեղեդին տիպական են հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործության համար:

Համարյա նման մի օրինակ է Էջմիածին քաղաքում 1979 թ. մեր ձայնագրված մի ավետիսը (տես՝ մեղեդիական օրինակ թիվ 2): Միակ էական տարբերությունն այն է, որ այս օրինակում կա մեկ տակտանոց, ֆա հնչյունի վրա, այսինքն այս արվեստի սոլ-դո հնչյունաշարից դուրս երգվող երեք վանկանոց մի նախաբան:

Թերևս կարելի է ենթադրել, որ այդ «խորթ» հնչյունը հետևանք է այն բանի, որ երգողը դեռ չէր գտել երգի հիմնական հուն-հնչյունաշարը: Բայց ամենայն հավանականությամբ դա այդպես չէ՝ նկատի ունենալով այդ նախաբանի դեռ չտրոհված՝ ստատիկ ռիթմական պատկերը, ուրիշ՝ դեռ շարժունություն չստացած մեղեդիական գիծը, վերջին՝ երկար տևողություն ունեցող վանկի վրա երգվող դայլայլ զարդրանքը, որը կարծես մի փուլի ավարտն է նշանավորում, և մանավանդ այն, որ նկարագրվող տակտը իր ֆա հնչյունով հակադրվում է տվյալ ավետիսի հնչյունաշարին: Մենք հակված ենք ենթադրելու, որ այստեղ գործ ունենք մի ինքնուրույն ֆունկցիոնալ հատվածի հետ, որ այս տակտ-նախաբանը ավետիսներին բնորոշ ավետման ֆունկցիա կատարող հատվածի խիստ կրճատված՝ սղված մի օրինակ է:

Երգի հաջորդող շարադրանքում մեղեդին և ռիթմական պատկերը դառնում են ճկուն: Իսկ տողերի վերջավորություններում հանդես եկող «ավետիս» դարձվածքը ստանում է այլ մարմնավորում և կատարում տողերի եզրափակման և կրկնակային ֆունկցիաները:

Իր առավել սղվածությամբ ուշագրավ է հաջորդ օրինակը, որ մենք ձայնագրել ենք 1979 թ. Բուխարեստում (տես՝ մեղեդիական օրինակ թիվ 3): Երգողն այն ժամանակ ծերունազարդ մարդ, հավաստում էր, որ այդ ավետիսը երգում էր իր մանկության տարիներին Կոստանդնուպոլսում: Մեղեդու հիմնական կորիզը ընդամենը մեկ տակտ է, բայց այն տարբերակային զարգացում է ստանում կրկնվելիս: Երգի վերջում խոսակցական, ռիթմավորված ելևէջներով, որոնք բնորոշ են հարց ու պատասխանի հատվածներին, ընդամենը 7 վանկում զուգորդված են հարց ու պատասխանի ձևն ու բարի մաղթանքների բովանդակությունը, այսինքն երկու հատվածների ֆունկցիաները միաձուլվել են:

Իր այսպիսի շատ սեղմ վիճակով հանդերձ այս ավետիսը գեղարվեստական առումով բավականաչափ ավարտուն է և կենսունակ:

Խոսելով երգերի հակիրճության և գեղարվեստական արժանիքների համատեղության մասին, կարող ենք վկայակոչել այժմ արդեն երաժշտասեր հասարակայնությանը հանրահայտ «Ծմոն խեծե կապուտ քուռակ» ավետիսը, որը 1920-ական թվականներին Ապարանի շրջանում ձայնագրել է Սպիրիդոն Մելիքյանը: Իր աշխույժ ելևէջներով այս չորս տակտանոց երգը «Շարական» համույթի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր և դիրիժոր Գրիգոր Դանիելյանի մշակմամբ դարձել է համույթի մշտապես կատարվող գործը:

Հոդվածի վերջում բերում ենք Մարտունու շրջանում մեր ձայնագրած վերոհիշյալ համեմատաբար ամբողջական ավետիսի բանաստեղծական տեքստը:

Ցնծացեք, ուրախացեք, ալելույա,
Էսոր ծնունդ Մայրամին ա. ալելույա.
Մարյամ գնաց դուռը վերին. ալելույա.
Չդտավ. բերավ յուր խաչ որդին. ալելույա:
Խաչ որդին Քրիստոս որդին, ալելույա:
Անբազմություն մկրտեցին, ալելույա.
Շիշ երերաց օրորոցին. ալելույա.
Բուրդ խանձարուր փաթաթեցին. ալելույա:
Բերի. բարի, ձեր տղու անուն ի՞նչ ա. տանտերը՝ Հովհաննես:
Հովհաննես հեծավ փոլադ քուռակ, ալելույա.
Մեջքին զարնա պողպատ ուրագ. ալելույա.
Հովհաննեսին ունի գութան, գոմեշ, տրակտոր, ալելույա:
Սուրուն օղջրի պճեղ ոսկի, գութան, գոմեշ, ոսկի արծաթ:
Ալելույա. ալելույա. ալելույա. ալելույա:

Բերված օրինակի որոշ դարվձածքների նմանությունը դարեր առաջ գրի առնված ավետիսների համապատասխան տողերի հետ թույլ է տալիս ակնածանքով նկատել, թե ինչքան մեծ է ազգի հավաքական գիտակցության ու հիշողության հարատևման ուժը:

Դրա հետ մեկտեղ, բերված օրինակում կա նաև մի փոքր «սայթաքում»: Բարի մաղթանքների ոգևորվածության բարձրակետին ոչխարների ու գոմեշների հետ միասին երգողը նաև մի տրակտոր է «նվիրում»: Սա արդեն խոսում է ավետիսների մեջ բոցկլտող ստեղծագործական ոգու մասին:

Այս ավետիսի մեղեդին բերում ենք հատվածաբար, ընտրելով այն եռաժշտական տողերը, որոնք երգի մի նոր հատվածի-փուլի սկիզբն են (տես՝ մեղեդիական օրինակ թիվ 4): Այդ մեղեդիական սկզբնավորումները իրենց փուլի սահմաններում նույնությամբ չեն կրկնվում, այլ ստանում են որոշակի զարգացում:

ա. Ավետման հատվածի սկիզբը, որտեղ իշխում է կոչական բնույթը:

բ. Աստվածամորը նվիրված հատվածի սկիզբը, որտեղ իշխում է պատմողական շարադրանքը:

գ. Քրիստոսի մասին պատմող հատվածի սկիզբը, որտեղ նկատելի են հանդիսավոր բնույթը, տարբերակային զարգացման միտումը, իսկ վերջում նաև պենտատոն ձայնակարգը:

դ. Հարց ու պատասխանի հատվածը, որտեղ իշխում է խոսակցական-ոիթմավորված շարադրանքը:

ե. Բարի մաղթանքների հատվածի սկիզբը, որտեղ մեղեդին դառնում է ավելի ճկուն և սահուն, իսկ կրկնակային «ալելույա» դարձվածքը ոգեվորված տրամադրությանը համապատասխան «ոնդուլոխվում» է մի եռալար վերև: Դրանով եզևէջները դառնում են ավելի լարված, իսկ միևորային երանգը փոխարինվում մաժորայինով:

Ավարտելով այս հոդվածը, կարող ենք եզրահանգման փոխարեն նախնական տեսքով ուրվագծել այն խնդիրները, որ հառնում են ավետիսների ավանդույթների վերականգնման և հարատևման ճանապարհին:

— Անտարակույս, անհրաժեշտ է տարբեր բնագավառների գիտնականների ուժերը համադրելով ընդլայնել ու խորացնել ավետիսների ոլոմման, ուսումնասիրման և մանավանդ հրատարակման գործը:

— Գեղարվեստական, ստեղծագործական ու կատարողական զանազան ոլորտների ներկայացուցիչների ուշադրությունը պիտի հրավիրել հայ ազգային այս գեղեցիկ ավանդույթի հետագնկարայնության վրա:

— Պետական և հասարակական կազմակերպությունների և հիմնարկությունների բարոյական և նյութական օժանդակությունը պիտի ակտիվացնել, մրցույթներով և այլ միջոցներով ավետիսների լայն տարածման համար:

— Եվ ի վերջո, բոլորս, ազգովի պիտի փարվենք այս գործին: Ինչպես Կոմիտասը ժամանակին գրել է—«Կորցրածը գտնելուն պես սեղմեց սրտին և գուրգուրալ սկսեց իր հարազատ երաժշտությունը»:

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔ՝ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ[1]

Արևելաքրիստոնեական Եկեղեցիների մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը վաղուց ի վեր եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: ԺԷ դարից սկսած, այդ հարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ են հրապարակվել: Սակայն մասնագետների նոր սերնդի համար կարիք էր առաջացել ի մի բերել այդ բոլոր ուսումնասիրությունները, ստեղծել ընտրովի մատենագիտություն-ձեռնարկ, որը հնարավորություն կտար ժամանակակից ֆրանսիացի ուսումնասիրողներին ամբողջական պատկերացում ունենալ և նախնական տեղեկանքներ քաղել արևելաքրիստոնյա ժողովուրդների լեզուների և մատենագրությունների վերաբերյալ: Այդ թեմային նվիրված ընդհանրացնող ձեռնարկներ ժամանակին շրջանառության մեջ են դրել նշանավոր գիտնականներ Կ. Բրոկելմանը, Ժ. Լեյպոլդտը, Ֆ. Ֆինկը, Ե. Լիտմանը[2], Ա. Բաումշտարկը[3], Ջ. Ֆուրլանին[4], Ա. Գույոմոնտը, Ժ. Դոռեսը, Ռ. Շնայդերը, Հ. Բերբերյանը[5], Ժ. Ասֆալգը, Պ. Կրյուգերը[6] և ուրիշներ: Նման դասագրքերի յուրահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտությունը կատարվում է մասնագետների խմբի կողմից, քանի որ անհնար է մեկ անձնավորության կողմից իրարից այդքան հեռու և հարուստ մատենագրությունների կատարյալ իմացությու-

---

[1] Micheline Albert, Robert Beylot, René-G. Coquin, Bernard Outtier, Charles Renoux, Christianismes Oriientaux: Introduction à l'études des langues et des littératures, Introduction par Antoine Guillaumont.-Paris, Les éditions du Cerf, 1993, 456 p.

[2] C. Brockelmann, J. Leipoldt, F. N. Finck, E. Littmann, Geschichte der christlichen Literaturen des Orients, Die Literaturen des Ostens in Einzeldarstellungen, 7, 2, Leipzig, 1907, 2è éd., 1909.

[3] A. Baumstark, Die christlichen Literaturen des Orients, 2 vol., Leipzig, 1911.

[4] G. Furlani, Letterature dell' Oriente cristiano, dans G. Tucci(éd.), Civiltà dell' Oriente, II, Rome, 1957, p. 191—228.

[5] A. Guillaumont, J. Doresse, R. Schneider et H. Berberian, «Chrétiente orientale», dans R. Queneau (dir.), Histoire des litératures, «Bibl. de la Pléiade», I, p. 751—821, Paris, 1955, 2è éd., 1973.

[6] J. Assfalg et P. Krüger, Kleines Wörterbuch des christlichen Orients, Wiesbaden, 1975 Dictionnaire de l'Orient chrétien, Turnhout, 1991).

ը: Նույն ճանապարհն են ընտրել նաև ֆրանսիացի հետազոտողները: Ի-հարկե գրքում ներկայացված յուրաքանչյուր քրիստոնյա մատենագրություն և լեզու հարուստ է ինքնին, դարերի ընթացքում ստեղծած արժեքների բազմազանությամբ, սակայն նրանց մեջ նույնական է մեկ բան, բոլորն էլ իրենց զարգացման հիմքում դրել են քրիստոնեական մատենագրության գոհարը՝ Աստվածաշունչը: Այս առումով նշված մատենագրությունների և լեզուների ուսումնասիրությունը եվրոպական ուսումնասիրողի համար հետապնդում է միանշանակ նպատակ:

Այս նյութի ուսումնասիրության են նվիրել իրենց էջերը բազմաթիվ պարբերականներ[7]: Գրախոսվող գրքի հեղինակները հավաքել են այս նյութի շուրջ ստեղծված գրականությունը ու նշված հանդեսներում կուտակված հոդվածները և ցանկացել ընթերցողին պատկերացում տալ այդ մատենագրությունների զարգացման միտումների մասին, սրա այսպիսի նպատակ է իր առջև դրել ֆրանսիացի հետազոտողների խումբը:

Այս տեսանկյունից շնորհակալ գործ են կատարել արևելաքրիստոնեական մատենագրության հմուտ մասնագետներ Միշելին Ալբերը, Ռոբեր Բեյոն, Ռընե-Ժ. Կոքինը, Բեռնար Ուտիեն և Շառլ Ռընուն, որոնք ուսումնասիրողների դատին են հանձնել «Արևելյան քրիստոնեություն. լեզուների և մատենագրությունների ուսումնասիրության ներածություն» հատորը: Ա-ռաջաբանը գրել է Անտուան Գույոմոն: Գիրքն հրապարակել է Ֆրանսիայի Գիտական Հետազոտությունների Ազգային կենտրոնի (CNRS) 25-րդ խումբը, Փարիզի Cerf հրատարակության միջոցով: Ուսումնասիրություն ունի նաև հապավումների ցանկ, և վեց մաս, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է արևելաքրիստոնեական ժողովուրդների՝ արաբների, հայերի, ղպտիների, եթովպացիների, վրացիների և ասորիների լեզվին և միջնադարյան մատենագրական ժառանգությանը:

Առաջաբանում, որը Անտուան Գույոմոն անվանել է «Քրիստոնյա Արևելքը», հեղինակն անդրադարձել է իր ընտրած եզրի նշանակությանը և ընդգրկման սահմաններին նրա կապերին: Հատուկ շեշտում է, թե որքան են տարբերվում այդ գրականությունները և մշակույթները միմյանցից, նշելով, որ բոլոր քրիստոնյա ժողովուրդները չեն, որ ստեղծել են ազգային լեզվով մատենագրություն: Հեղինակը նաև շեշտում է, որ բոլոր ժողովուրդները, որոնց մշակույթին անդրադառնում են հետազոտության մեջ, քրիստոնյա են դարձել հունական մշակույթի ճանապարհով: Ընդգծում է, որ նրանցից շատերին մատենագրություն է պարգևել քրիստոնեությունը, իսկ հայերն ու վրացիները կարողացել են ստեղծել նաև սեփական այբուբեն:

Ուսումնասիրողի տեսանկյունից ուրույն հետաքրքրություն է ներկայացնում արևելյան այդ եկեղեցիների պատմությունը, որոնք Քաղկեդոնի եկեղեցուց և ընդհեցական ժողովից հետո բաժանվեցին բյուզանդական եկեղեցուց և ընդհեցին պատմական զարգացման ուրույն ճանապարհ: Դրանով նրանց մի մասը կարողացավ պաշտպանել սեփական ազգային դեմքը, իսկ մյուսները՝ ասորիներն ու ղպտիները, ժամանակի ընթացքում պատմական հանգամանքների բերումով, կորցրեցին ազգային լեզուն և ձուլվեցին արաբների հետո: Ասորական բնակչության շրջանում ստեղծվեցին մի քանի եկեղեցի-

---

[7] Բավարարվենք միայն դրանցից մի քանիսի թվարկումով. Revue de l'Orient chretien, Oriens Christianus, Le Muséon, Orientalia Christiana Periodica. Analecta Bollandiana.

ներ և միատարր բնակչությունը բաժանվեց մի քանի համայնքների՝ նեստորականներ, հակոբիկներ, մարիամիաններ, մելկիտներ: Գրեթե նույն ճակատագիրն ունեցավ նաև ղպտական եկեղեցին: Հիշատակված բոլոր եկեղեցիների շարքում ամենահզորը միաբնակ եկեղեցին էր, որի հզորացումը առաջաբանի հեղինակը համարում է պատասխան բյուզանդական ճնշմանը: Այս քաղաքականության կրողը Մերձավոր Արևելքում մելկիտ եկեղեցին էր: Աղեքսանդրիայի պատրիարքներին համեմատելով Եգիպտական փարավոնների հետ, հեղինակը փորձում է բացատրել նրանց ինքնուրույնության ձգտման պատմական հիմքերը: Պողոմեոսյանների և Սելևկյանների դարավոր բարեկամությամբ է բացատրում նաև Անտիոքի և Աղեքսանդրիայի միաբնակ աթոռների համագործակցությունը: Մատնանշում է հաբեշական եկեղեցու պատմականորեն պայմանավորված կախումը Աղեքսանդրիայի աթոռից, մինչև 1952 թ., երբ Եթովպիայում հաստատվեց ինքնագլուխ պատրիարքություն: Ի տարբերություն հակոբիկյանների, ըստ հեղինակի կարծիքի, հայերը միաբնակություն են ընդունել հակադրվելով պարսկական կայսրության մեջ հզորացած նեստորականությանը: Այլ ճանապարհ է որդեգրել Վրաց եկեղեցին, որը սկզբում միացած է եղել հայոց եկեղեցու հետ, իսկ Զ դարում բաժանվել է նրանից, ընդունելով բյուզանդական-օրթոդոքս եկեղեցու գերիշխանությունը:

Հեղինակն ընդգծում է, որ արևելաքրիստոնյա ժողովուրդների լեզուները պատկանում են տարբեր լեզվաընտանիքների կամ նույն ընտանիքի տարբեր խմբերի: Արևելաքրիստոնեական եկեղեցիներից յուրաքանչյուրը օգտագործելով իր սեփական լեզուն եկեղեցական ծեսում, ընդգծում էր իր ազգային պատկանելությունը, հակադրվելով բյուզանդական ներթափանցմանը, Սասանյան Պարսկաստանի տիրապետությանը և իսլամից եկող վտանգին: Թվարկված յուրաքանչյուր եկեղեցու պատրիարք կամ կաթողիկոս ոչ միայն հոգևոր հովիվ էր, այլ նաև պաշտպանը և խորհրդանիշը ազգային ինքնուրույնության:

Չնայած հիշատակված եկեղեցական, ազգային, քաղաքական և ծիսական տարբերություններին, քրիստոնյա արևելքը ներկայացնում է մի իրական միասնություն, որը գալիս էր քրիստոնեության հիմքը կազմող քնագրերից, որի ավանդույթը հաճախ սերում էր հունականից, հիմնականում դառնալով առաջին դրսնորումը ազգային լեզվով մատենագրության: Բացի այդ քրիստոնյա արևելքի բոլոր եկեղեցիների կողմից թարգմանվել են Աթանասի, Բարսեղի, երկու Գրիգորների, Նյուսացու, Նազիանզացու և Հովհաննես Ոսկեբերանի երկերը: Հետաքրքրական է նաև այն պարագան, որ որոշ հայրաբանական երկեր միջնորդավորված են մուտք գործել հիշված եկեղեցական մատենագրություններ: Օրինակ. հունական հայրաբանության մի շարք երկեր հայերեն են թարգմանվել ասորերենից, կամ ղպտերենից են թարգմանվել արաբերենից, կամ վրացերեն են թարգմանվել հայերենից: Եթովպական և ղպտական գրականությունների համար նման միջնորդի դեր է դարից հետո կատարել է արաբերենը: Սակայն քրիստոնյա արևելքի շփումները չեն սահմանափակվել միայն մատենագրական երկերի փոխանակումով: Բազմաթիվ վայրերում իրար կողքի կառուցվել են եթովպական, ղպտական և ասորական, հայկական և վրացական բազմաթիվ եկեղեցիներ: Հատկապես կենդանի և շատ գործնական էին շփումները Աղեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքական աթոռների միջև: Չնայած ծի-

ական որոշակի տարբերություններին, ինչպես նաև բոլորի ծիսական տարվա հիմքում ընկած էր Երուսաղեմյան տոնացույցը:

Առաջաբանից տեղեկանում ենք նաև, որ գրքի ծրագիրը պատկանում է Ի.-Ժ. Կոքինին, սակայն ամեն հեղինակ ազատ է եղել իր նյութի ընտրության մեջ, տիկին Ալբերը միասնական տեսքի է բերել գիրքը, ցանկերը կազմել է ն. Ծաոլ Ոլընուն: Արաբական բաժինը խմբագրել է Ժ. Տրուպոն, հայկականը՝ Ժ.-Պ. Մահեն և տիկին Գ. Ուլուհոջյանը, պատականը՝ Ե. Լուչեզին, եթովպականը՝ Ռ.-Ժ. Կոքինը, ասորականը՝ Ս. Պ. Բրոկը և Պ. Ջ. դը Հալոն: Անտուան Գույոմոն իր շնորհակալություն է հայտնում բոլոր մասնակիցներին և Թիլեմոնի Լենեն կենտրոնի աշխատակից Ստան Պելիսյրաձդիին գրքի տեխնիկական և հրատարակչական կողմը ապահովելու համար:

Գիրքը բաղկացած է վեց մասից, ուր հեղինակները հիմնական տեղեկություններն են հաղորդում յուրաքանչյուր մատենագրության և լեզվի դպրագրքերի, քերականությունների, բառարանների մասին, հիշատակում են տվյալ մատենագրության ուսումնասիրության հիմնական ձեռնարկները, թվարկում են ձեռագրացուցակները, հնագրությանը և բնագրագիտությանը վերաբերող հիմնական աշխատությունները, որոնք կարող են պետք գալ ուսումնասիրողին: Յուրաքանչյուր գրքի երկրորդ մասում հեղինակները ուղղակիորեն անդրադառնում են իրենց հիմնական նպատակին՝ մատենագրությանը, և սկսելով Աստվածաշնչի բնագրից, հեղինակները անդրադառնում են տվյալ մատենագրության պատմությանը, հիշատակում հիմնական մատենագիրներին, տալիս տվյալ գրականության զարգացման հիմնական առանձնահատկությունները և իհարկե հիշատակում այդ հարցերին վերաբերող ամենավերջին և կարևորագույն աշխատությունները:

Գրքի առաջին մասը կոչվում է. «Արաբ քրիստոնյաների լեզուն և մատենագրությունը», որը հեղինակել է Ոլընե-Ժ. Կոքինը: Ի տարբերություն ղպտերենի, եթովպերենի, հայերենի և վրացերենի, որոնք շրջանառության մեջ են եղել սահմանափակ աշխարհագրական տարածքում և հիմնականում սեփական ժողովրդի կողմից, արաբերենը տարածված էր ավելի լայն տարածաշրջանում (հիմնականում ղպտիների և ասորիների մեջ)՝ Լիբանանում, Ասորիքում և Իրաքում: Հեղինակը փորձում է զատորոշել քրիստոնյա և մահմեդական արաբերենը, հղում է համապատասխան գրականություն:

Քրիստոնյա արաբական գրականությունը առանձնահատուկ է նրանով, որ սկսած Է դարից դրանով են սկսում գրել ղպտի և ասորի եկեղեցական գործիչները, իսկ ԺԲ դարից այն գրեթե միակ մատենագրական լեզուն է, որից օգտվում են այդ ժողովուրդները: Հետաքրքիր է նաև այն պարագան, որ այդ լեզվով են իրենց երկերը շարադրում նաև Եգիպտոսում, Ասորիքում և Պաղեստինում բնակվող բազմաթիվ կաթոլիկ հայ եկեղեցականներ, որոնց Ոլընե Կոքինը ևվիրում է մի հատուկ հատված (տես էջ 98): Կան նաև այլ հայ հեղինակներ, օրինակ. Աբուսահլ հայը: Այս առումով, մեր կարծիքով, դեռևս իր ասելիքն ունի նաև հայագիտությունը, որի անելիքներից մեկն էլ այդ գրականության բազմակողմանի ուսումնասիրությունն է: Հասարակական գիտության համար չափազանց կարևոր է խորամուխ լինել այդ երևույթի պատմական օրինաչափությունների մեջ: Պետք է նաև նշել, որ Ռ.-Ժ. Կոքինը

հետևում է Գրաֆի հայտնի աշխատությանը[8] և իր շարադրանքը հասցնում մինչև Ի դար:

Երկրորդ մասը նվիրված է հայոց մատենագրությանը և լեզվին, այս մասի հեղինակն է ճանաչված հայագետ հ. Շաղ Ռլենու, որն ընդհանուր գծերով բանաձևելով հայոց լեզվի պատմությունն ու հիշատակելով այն ուսումնասիրելու հիմնական ձեռնարկներն ու քերականությունները, հիշատակում է նաև հայերենի ուսումնասիրության հիմնական բառարաններն ու քրեստոմատիաները: Մեր կարծիքով աշխատության այս մասը ավելի ամբողջական կլիներ, եթե հեղինակը բառարանների շարքում թվարկեր նաև Ն. Բյուզանդացու հայերեն-ֆրանսերեն բառարանը, և հատկապես Վենետիկում հրատարակված հունարեն-հայերեն բառարանը: Երբեմն, Շ. Ռլենուն միակողմանի մոտեցում է ցուցաբերում կարևորագույն գիտական խնդիրների նկատմամբ, հղելով միայն հակաճառող կողմերից միայն մեկի կարծիքն արտահայտող գրականությունը: Օրինակ, հեղինակը պնդում է, թե հայերը սերում են Թրակիայից (այստեղ անգամ չի հիշատակվում Ի. Դյակոնովի աշխատությունը) կամ թե մայրենի լեզվով են խոսում սկսած մ.թ.ա. Ջ դարից, խնդիրներ, որոնք դեռևս միանշանակ պատասխան չունեն: Իմ կարծիքով լեզվի ուսումնասիրության հատվածը ավելի ամբողջական կլիներ, եթե հիշատակվեին նաև Գր. Ղափանցյանի և Գ. Ջահուկյանի աշխատությունները:

Բավական ենթադրական է նաև հարգելի հեղինակի այն պնդումը, թե հայ միջնադարյան մատենագրությունը սկսվելով Ե դարից, ավարտվում է Կիլիկյան հայկական թագավորության կործանումով, քանի որ մեր կարծիքով այդ գրականությունը բուռն թափով զարգանում է մինչև ԺԸ դար, երբ Մխիթար Սեբաստացին և նրա հետևորդները սկիզբ դրեցին հայոց պատմության և մատենագրության գիտական ուսումնասիրությանը:

Շ. Ռլենուն հիշատակում է Հայոց մատենագրական երկերին վերաբերող հիմնական մատենագիտական գրականությունը, սակայն նրանց մեջ արժեր հիշատակել նաև Հայ պարբերական մամուլի, Արարատի, Էջմիածնի, և Կ. Ալեայանի կազմած «Արարատում» հրապարակված բնագրերի մատենագիտությունը, իսկ վիմագրերի ուսումնասիրության բաժնում պետք էր հղել նաև Ս. Ավագյանի ուսումնասիրությունները, որոնք հայկական վիմագրի ուսումնասիրության բնագավառում ունեն դասագրքի նշանակություն:

Շ. Ռլենուն բերելով հայ ծիսական գրականությանը նվիրված աշխատությունները չի հիշատակում Նորայր արք. Պողարյանի այդ թեմայով գրած աշխատությունը[9]:

Հարգելի հեղինակը չնայած իրեն հատկացված տեղի պակասությանը փորձում է քննական հայացքով նայել հայ մատենագրության մի շարք երկերի: Իմ կարծիքով արդարացված չեն Փավստոսին, Հովհաննես Մանդակունուն, Սեբեոսին, Եղիշեին տրված «կեղծ» պիտակումները: Լուսաբանման կարոտ է մնում Մովսես Խորենացուն մինչև Ը դար տանելը, մանավանդ, որ չեն բերվում այդ հարցերին վերաբերող տարբեր կարծիքները և գրականությունը: Նույն վերապահումը կարելի է կատարել նաև Եղիշեի թվագրման խնդրում, որ չի բերվում հ. Ն. Ակինյանի ուսումնասիրությունը:

---

[8] G. Graf, Geschichte der christlichen arabischen Literatur, 5 vol., coll. Studi e testi, Cité du Vatican, 1944—1953.

[9] Ն. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ-Եորք, 1990:

Հեղինակը չի անդրադարձել նաև հայ մատենագրության այնպիսի գործիչների երկերին, ինչպիսիք են Պողոս Տարոնացին, Հովհաննես Սարկավագը, Գրիգոր Ակներցին, Դավիթ Քոբայրեցին, Կոստանդին Երզնկացին, Մխիթար Սկևռացին, Եսայի Նչեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ, որոնք որոշ ազդեցություն են ունեցել հայ մատենագրության զարգացման վրա: Արժեր նաև անդրադառնալ հայ մատենագրության զարգացման որոշակի միտումներին, վրաց, ասորի, լատին և հույն մատենագրությունների հետ նրա շփումներին:

Գրքի երրորդ մասը նվիրված է պպտիերեն լեզվին և մատենագրությանը, խոսվում է այդ մատենագրության առանձնահատկությունների մասին, ցույց է տրվում, որ Եգիպտոսում սկսած մ. թ. Բ դարից մինչև Քաղկեդոնի ժողովը Աղեքսանդրիայի սուրբ հայրերը գրում էին հունարեն: Այս եկեղեցու ծիսակատարությունները մինչև այդ կատարվում էին հունարեն, իսկ դրանից հետո՝ պպտիերեն, այդ պատճառով էլ մինչև Քաղկեդոնի ժողովը ստեղծված երկերի համար դժվար է պնդել, թե ո՞ր լեզվով են դրանք գրվել: Ուշագրավ է, որ պպտիական գրականության ծաղկումը տեղի է ունենում մինչև ԺԲ դարը, իսկ դրանից հետո նկատելի է, որ այդ լեզվին գալիս է փոխարինելու արաբերենը:

Գրքի չորրորդ մասը նվիրված է Եթովպիայի լեզվին և մատենագրությանը: Ռոբերտ Բեյլոն տեղեկացնում է, որ մինչև Ժ դարը ոչինչ հայտնի չէ եթովպական գրականությունից, դրանց շարքին կարելի է դասել միայն Աստվածաշունչը և մի շարք ծիսական գրքեր, ուր հեղինակը բավական մանրամասնորեն խոսում է Եթովպական ձեռագրական հավաքածուների և միկրոժապավենների պահոցների մասին: Իմ կարծիքով հայագիտության առջև ևս կանգնած է այս խնդիրը, որովհետև արդեն վաղուց հասունացել է բոլոր հայերեն ձեռագրերը լուսանկարելու և մի քանի տեղում պահպանելու հարցը:

Գրքից իմանում ենք նաև, որ Եթովպական բոլոր աստվածաշնչային գրքերը և պարականոնները մինչև Ժ դարը թարգմանվել են հունարենից: Սակայն ԺԴ դարից սկսվում է այս գրականության հիմնական վերածնունդը, այս դարաշրջանում քրիստոնեական մատենագրությունը եթովպերենը էր թարգմանվում հիմնականում արաբերենից:

Վրացերեն լեզուն և գրականությունը հատվածը պատկանում է Բեռնար Ուտիեի գրչին, հեղինակը հիմնվելով եղած գրականության վրա, ստեղծում է վրաց քրիստոնեական մատենագրության պատմության հիմնական պատկերը, հետևելով Կ. Կեկելիձեի հիմնարար ուսումնասիրությանը: Սակայն չում հեղինակի այն պնդումը, ըստ որի եթե Շուշանիկի վկայաբանության մեջ հիշատակված են Աստվածաշնչի գրքերը, ապա դրանք հենց այդ ժամանակ պետք է թարգմանված լինեին վրացերեն: Իհարկե ինքս էլ համոզված եմ, որ վրացերեն Աստվածաշունչը թարգմանված պետք է լինի Ե դարի Բ կեսին, սակայն նման խախուտ հիմքի վրա, հեղինակն իրավունք չուներ կապել այդպիսի կարևոր մի հարց, քանի որ Շուշանիկի մայրենին հայերենն էր և նա իրավունք ուներ այդ գիրքը ընթերցել հայերեն, հատկապես այն դեպքում, երբ հայտնի է, որ մինչև Է դարը Յուրտավում, եկեղեցական ծեսի ժամանակ օգտագործվում էր նաև հայերենը, սովորություն, որի կարգավորումը կապվում է Ս. Շուշանիկի անվան հետ[10]:

[10] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 164:

Գրքի վերջին, վեցերորդ մասը ևվիրված է ասորիների ստեղծած գրականությանն ու լեզվին: Միշելին Ալբերը միմյանցից չբաժանելով ասորական գրականության երկու հիմնական ուղղությունները (հակոբիկ և նեստորական), ներկայացնում է այդ գրականության զարգացման հիմնական տենդենցները, մինչև ԺԴ դարը, խոսում է Ասորական Աստվածաշնչի (պեշիտոյի) առանձնահատկությունների մասին: Ամենաընդհանուր գծերով տրվում է ասորական գրականության պատմությունը, ուր հղվում է այդ հարցը լուսաբանող հիմնական գրականությունը:

Գիրքն ունի նաև անճանոթ բառերի ցանկ, ժամանակագրական տախտակ, քարտեզներ: Միջնադարյան հեղինակների, տեղանունների, տերմինների ցանկերը կազմել է Շառլ Ռընուն: Գիրքը գրված է արևելաքրիստոնեական մատենագրությամբ հետաքրքրվողների, հիմնականում այդ բնագավառում մասնագիտացող ուսանողների համար և աչքի է ընկնում իր ճշգրտությամբ: Ցանկալի էր նման դասագիրք ունենալ նաև հայ ուսանողության համար: Հեղինակներն արել են ամեն ինչ, որպեսզի գիրքը լինի ընդգրկուն, ուսանելի և ավարտուն: Բերված մի քանի դիտողությունների նպատակն էր հարգարժան հեղինակների ուշադրությունը գրավել հիշատակած խնդիրների վրա:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ



ՄԿՐՏԻՉ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԱՂԵԹՅԱՆՆԵՐԸ ՂԱՋԱԽԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

Դարերի ընթացքում տեղ գտած բազմաթիվ արհավիրքներն ու պատերազմները մեկ անգամ չէ, որ հայ ժողովրդին հարկադրել են լքել հայրենի բնօրրանը, պապերի օջախը, հարազատ հողն ու վայրերը, արցունքներն աչքերին, կորցրած հարազատների վիշտն ու կսկիծը սրտում, հեռանալ օտար երկրներ, անծանոթ վայրեր:

Թեև որքան էլ ծանր են եղել նրանց համար այդ աղետներն ու արհավիրքները, դրանք իրենց հերթին արմատավորել են հայի մեջ մարդկային լավագույն հատկանիշներ՝ տոկալ, դիմանալ, պայքարել և լինել միշտ աջակից խեղճին, տառապյալին, գթալ նրան և օգնել ապրելու, գոյատևելու և հարատևելու:

Անկախ այն բանից՝ Մայր Հայրենիքում են, թե նրա սահմաններից դուրս՝ օտար երկրներում, ամենուր ձգտել են պահպանել ազգային դեմքը, լեզուն, դավանանքը, սովորույթը, այդ նպատակով առաջին հերթին կառուցել են հավատքի տունը՝ եկեղեցին, և նրա շուրջը համախմբել բախտակիցներին, ստեղծել սեփական համայնքը, գրքեր հրատարակել, զավակներին ուսուցանել մայրենին, նրանց հաղորդակից դարձնել սեփական ժողովրդի դարավոր պատմությանը, սուրբ նախնիների հերոսական անցյալին: Թեև գաղթած տառապյալի համար այդքան էլ դյուրին չի եղել իրականացնել այդ ամենը, որի համար պահանջվել են խոշոր ֆինանսական միջոցներ, առավել ևս բազմաթիվ հայկական գյուղական բնակավայրերում, ուր աղքատության մեջ տառապել է տեղի ժողովուրդը, սակայն հարազատ ժողովրդի վիճակն ու ճակատագիրը մտահոգել է առանձին ազգասեր երախտավորների, բարերարների միայն, որոնք իր ժամանակին մի կերպ դուրս են պրծել աղքատության ծանր ճիրաններից: Այդպիսին էր 19-րդ դարի վերջին մի ազգասեր բարերար, որը, հավատարիմ մնալով մկրտության սուրբ դավանանքին, մինչև իր կյանքի վերջը ազնվորեն սատարում է իր ժողովրդին: Ո՞վ էր այդ ազգասերը, որի բարի գործերը տարիներ շարունակ չէր վրիպում հայ մամուլի էջերից (ՆՈՐ ԴԱՐ, ՄՇԱԿ, ԱՐՁԱԳԱՆՔ), ոգևորում շատերին:

Դա է Գանձակի գավառի Բանանց գյուղացի Մկրտիչ (Մակի) Ջաղեթյանը: Գյուղը, որում ծնվել է նա, հայտնի է եղել իր բազում արհեստավորներով (մետաղագործներ, դարբիններ, պայտագործներ, որմնադիրներ և այլն): Մկրտիչ Ջաղեթյանին հասարակության շրջանում ՄԱԿԻ էին կանչել, որը հարգանքով և մտերմաբար էր ընդունում: Մինչ այդ Ջաղեթյանը իր գյուղում մի աղքատ նալբանդ է լինում (պայտագործ) ու չի կարողանում ծանր աշխատանքով ձեռք բերած չնչին վաստակով ապահովել ընտանիքի կարիքները, ստիպված 1855 թ. հավաքում է ունեցած-չունեցածը, լցնում խուրջինը և ճանապարհվում Ղազախի գավառի Սալաղլի գյուղը, ուր և սկսում է յուր թշվառ ընտանիքի օրվա պարենը հայթայթել: Գիշերները որպես նալբանդ, ցերեկները որպես որմնադիր, անդադար, առանց հանգստության, աշխատում է մի անհաղ գումար, որով և սկսում է մինչ Ռուս-թուրքական պատերազմը առևտրով պարապել: Այստեղից սկսվում է Ջաղեթյանի համար բացվել հարստության լայն ասպարեզ: Ինչպես ասում են, բախտը ժպտում է նրան, և նա դառնում է ամբողջ Ղազախի նշանավոր հարուստներից մեկը: Իր միջոցներով նա բազմաթիվ բարեգործություններ է կատարում, կառուցում է մի շարք հոյակապ շինություններ թե՛ Ղազախում և թե՛ Գանձակում ու Դիլիջանում, շինությունները ավարտելուց հետո 2000 ռուբլի է ծախսում Ղազախի ապագա եկեղեցու շինության համար[1]:

Ղազախի մասին խոսելով ասենք, որ դա ոչ թե բնակավայրի անվանումն է եղել, այլ գավառի: Նա իր մեջ ունեցել է 125 գյուղեր, որոնցից 41-ը հայկական, 4-ը՝ ռուսական (մոլականներ), իսկ մնացածը՝ մուսուլմաններ, որոնց անվանել են թաթարներ: Հայկական գյուղերից 17-ը գտնվել են Աղստևի հովտի տարածքներում: Մինչև 1878—1879 թվերը ներկա Ղազախ քաղաքի տեղը եղել է կատարյալ ամայի մի վայր՝ ծածկված փշերով ու կաղերով (Ակոսներով):

Ամբողջ տափաստանին կենդանություն տվողը միայն փոստային իջեվանն է եղել և նրա դեմ ու դեմի Միկիչի դուքանը: Միկիչի քեֆին քեֆ չէր հասնիլ: Երևանից, Գանձակից և Թիֆլիսից եկող ֆուրգոններն առանց նրա դուքանին դիպչելու չէին անցնում,—գրում է «Նոր-Դար»-ը իր համարներից մեկում[2]:

Ղազախը հիմնվել է 1881 թվականի փետրվարի 13-ին: Բնակիչներն են հայեր, պարսիկներ և ռուսներ: Հայերը կազմել են բնակչության երկու երրորդ մասը: Ղազախը համարվել է գավառի կենտրոնը, որտեղ գտնվել են բոլոր՝ առևտրական, գինվորական, կենցաղային սպասարկման, բուժական, իրավապահ և վարչական օրգանները: Քաղաքի բնակչության մեծամասնությունը եղել են հայեր, արհեստավորներ, փախստականներ[3]: Գավառի բոլոր հայերը իրենց ղազախեցի են համարել և սերտ կապերի մեջ են եղել քաղաքի հետ:

Մակի Ջաղեթյանը հիմնավորվելով այստեղ, մոտիկից է ծանոթանում տարաբախտ բազմաթիվ հայրենակից հայ գաղթականների կյանքին ու զբաղմունքներին, որը և նրան մղում է մի շարք առաքինությունների: Այդ կապակցությամբ 1886 թվականին, մինչև եկեղեցու շինարարությունը, որոշում և կառուցում է Ղազախում մի ընդարձակ սենյակ, որպես աղոթատուն, որպեսզի գաղթական հայերը հնարավորություն ունենան գեթ ժամանակա-

[1] ՆՈՐ-ԴԱՐ, թիվ 109, 31/7—1895 թ.:
[2] ՆՈՐ-ԴԱՐ. թիվ 132, 6/9—1890 թ. և 141, 1887 թ.:
[3] **Մակար Բարխուդարյան**, Արծյալ, 1895 թ., էջ 60:

վորապես Աստծու կենդանի խոսքը լսելու: Սակայն երկու տարի անց վերջնականապես վճռում է իր սեփական միջոցներով, ծախսով այստեղ մի հոյակապ եկեղեցի շինել: Այս առիթով սրբազան Սեդրակյանի միջոցով բանակցություն է սկսում հոգևոր կառավարության հետ, որից հետո կաթողիկոս Մակար Ա Թեղուտցին կոնդակով շնորհավորում է Զաղեթյանցին և օրհնում նրա քրիստոնեական ջերմեռանդությունը, իսկ 1889 թվականի մայիսին սրբազան Սեդրակյանի կողմից օծվում եկեղեցու հիմքը և սկսվում շինությունը: Դա մի գեղեցիկ փառավոր շինություն է, որը ամբողջովին կերտված է կոփածո քարերից, որոնցից ամեն մեկը նստել է չորս ռուբլի և ամբողջ ծախսը կազմում է 25000 ռուբլի, սակայն ճակատագիրը անողոք է լինում նրա նկատմամբ: Դեռ եկեղեցին անավարտ, հեռանում է կյանքից, ափսոսանք պատճառում ամենքին: — Բավական է միայն Մակի ասել և ամենքը նրան կճանաչեն: Մակինի անունն ակնածությամբ հիշվում է Ղազախում ամեն մի թուրք ու հայ ընտանիքում,—գրում է ՆՈՐ ԴԱՐԸ իր 1890 թվականի սեպտեմբերի 6-ի համարում: Նրա բարերարությունները վայելել են ամենքը: Մերձակա սարից սառը ջուր են բերում, Ղազախում կառուցվելու է հոյակապ բաղնիք, օր-օրի աճում և զարգանում է քաղաքը,—շարունակում է թերթը:

Հանգուցյալը մեռնելուց առաջ կտակել էր իր երեք որդիներին՝ Ալեքսանդրին, Հովհաննեսին և Միքայելին, հինգ տարվա ընթացքում ավարտել եկեղեցու շինությունը, եկեղեցին շրջապատել պարիսպով, սրան կից շինել երկու ընդարձակ սենյակներ, մեկը ժամկոչի համար, մյուսը՝ մոմի պահեստ:

Նրա մահը ծանր կորուստ էր բոլորի համար: Թեմի առաջնորդ սրբազան Մամբրե եպիսկոպոսի կարգադրությամբ, որը տկարության պատճառով չի կարողանում ներկա լինել հանդիսավոր հուղարկավորությանը, ուղարկում է իր երկու քահանաներին՝ արժանապատիվ Գևորգ քահանա Գալըստյանին և Գևորգ քահանա Մոինցյանին: Գյուղերից եկել էին նաև 12 քահանաներ: Պատարագը կատարում է Հաղարծնի վանահայր Պողոս վարդապետը: Ներկա էին Ղազախի բոլոր պաշտոնական անձերը՝ գավառապետ Կանչելու գլխավորությամբ: Թաղման հանդիսավոր ծեսից հետո նրա մարմինը, գերապատիվ առաջնորդի հատուկ հրամանով, ամփոփվում է Ղազախի նորակառույց եկեղեցու ավագ դռան մոտ: Այնուհետև 200-ի չափ մարդիկ հրավիրվում են հանգուցյալի տուն: Սեղանի վրա բոլորի ներկայությամբ հանգուցյալի որդիները իրենց հոր հիշատակի համար դրամական ճվիրատվություններ են անում Ս. Էջմիածնի վերանորոգությանը, Թբիլիսիի բարեգործական ընկերությանը, Հաղարծնի վանքին և այլն:

Նոյեմբերին Ղազախ է ժամանում թեմի առաջնորդ սրբազան Մամբրե եպիսկոպոսը, որ մինչև Զաղեթյանների կողմից սկսած եկեղեցին ավարտելը, օծի դրա բակում շինված ընդարձակ աղոթատունը: Այն մասամբ շինված է նաև Բաքվի հայ հասարակության միջոցով: Պետք է ասենք, որ Ղազախ արդեն ուներ եկեղեցի, որտեղ կատարվում է ժամերգություն՝ հանձին Աբգարիոս քահանայի: Մնում է, որ հանգուցյալ Զաղեթյանի կողմից սկսած Սուրբ Վարդան եկեղեցու շինարարությունը հասցնել ավարտին: Դա այնքան էլ դյուրին գործ չէր Ալեքսանդր Զաղեթյանի համար: Նրա տրամադրության տակ չկար կանխիկ դրամ, այն պետք է ձեռք բերվեր կալվածքներից ստացվող եկամուտի հաշվին, որի համար անհրաժեշտ էին դեռ տարիներ: Այնուամենայնիվ նա հավատարիմ է մնում հոր կտակին և շարունակում շինարարությունը:

Մի քանի խոսք որդի Ա. Ջաղեթյանի մասին: Ալեքսանդր Ջաղեթյանը ևս ծնվել է Գանձակի Բանանց գյուղում, սակայն իր կյանքի երիտասարդության և աշխատանքի վառ օրերն անց է կացրել Ղազախի գավառում, գլխավորապես Ղազախ քաղաքում: Թեև ուներ գիմնազիայի 4-րդ դասարանի կրթություն, սակայն բնածին ընդունակությունների և ինքնակրթության շնորհիվ ձեռք էր բերել բավականին ունակություն և կյանքի փորձ, տիրապետում էր ռուսերենին և լավ ծանոթ էր ռուսաց օրենքներին: Այդ պատճառով բոլորը դիմում էին նրան և ստանում համապատասխան աջակցություն, գտնում դարման իրենց ցավերին և հարգում նրան[4]:

Ջաղեթյանը նաև լավ ծնող էր, հայր, բարեկամ, ունեցել է 12 զավակ՝ 6 տղա և վեց աղջիկ:

Հոր մահից հետո սկսվում է նրա բարեգործությունների շարանը, իսկ Խրիմյան Հայրիկը, որի ուղերթը Երուսաղեմից դեպի Ս. Էջմիածին ընթանում էր Ղազախով, իր հյուրընկալության պատվին արժանացրեց Ջաղեթյանի բնակարանը, որը մեծ հարգանքով մեծարեց Նորին Վեհափառությանը[5]:

Տարիներն անցնում են, և շինարարությունը մոտենում է իր ավարտին: Բոլորը անհամբերությամբ սպասում են այդ օրվանը, և ահա 1901 թվական. Ս. Վարդան եկեղեցին իր գեղեցիկ տեսքով կանգնած է Թիֆլիս—Երևան ձգվող ճանապարհից ոչ հեռու, հրապարակի Միկիչի նախկին դուքանի դեմ-դիմաց և պատրաստ սպասում է սուրբ օծման հանդիսավոր արարողությանը: Այդ նույն հրապարակում է կառուցված նաև ռուսական եկեղեցին, որը պետք է օծվի ապրիլի 19-ին:

Եվ ահա ապրիլի 8-ն է, կիրակի: Օծման սուրբ հանդեսը կատարում է Գանձակի հաջորդ Անանիա եպիսկոպոսը՝ Թիֆլիսից, Գանձակից և Ղազախի գյուղերից հրավիրված 10 քահանաների հետ միասին: Օծման սուրբ հանդեսը սկսվում է ժամը 9-ին և ավարտվում 14-ին: Եկեղեցում ասեղ գցելու տեղ չի լինում: Բացված էին բոլոր դռները, որոնց շեմքերում նույնպես խտացած էր ժողովուրդը: Հայերի ուրախությանը սահման չկար: Բացի քրիստոնյաներից, մասնակցում էին նաև թուրքերը, որոնք ապշությամբ հետևում էին շքեղ հանդեսին: Պատարագից հետո կատարվեց հանդիսավոր հոգեհանգիստ հանգուցյալ Մակի Ջաղեթյանի գերեզմանի վրա՝ նրա բազմաթիվ ժառանգների ներկայությամբ: Հոգեհանգստից հետո, քաղաքային դպրոցում Ալեքսանդր Ջաղեթյանի միջոցով տրվեց ճաշկերույթ 200 հրավիրյալների և բազմաթիվ հանդիսատեսների համար[6]:

Այսպիսով Ջաղեթյանի ձորակաորյց եկեղեցին մի պատմական հուշարձան դարձավ Ղազախի գավառի պատմության համար:

Անցյալի վրա ակնարկ գցող և այդ հուշարձաններին նայողը այն միտքը մայիսի 27-ի համարում, թե հաչը վերջապես հաստատվեց այնտեղ, ուր ավելի վտանգված էր նա:

Փայլելով այնպիսի տեղ, ուր շրջապատված է թուրքական գյուղերով, կրթիչ ազդեցություն կանի հաչը նրանց հոգու միստիկական կողմի վրա:

Սրբազան հպարտությամբ կլցվի անցորդ հայի հոգին աչքովն ընկնելիս սրբազան դրոշակը մեծ ու բանուկ ճանապարհի կողքին, այնտեղ, ուր 30--

[4] ՄԾԱԿ, թիվ 216, 29/9—1916 թ.:
[5] ՆՈՐ-ԴԱՐ, թիվ 158, 11/9—1893 թ.:
[6] ՆՈՐ-ԴԱՐ, թիվ 61, 13/4—1901 թ.:

40 տարի առաջ վտանգավոր անապատ էր: Կգան օրեր, կանցնեն դարեր, կանհետանան շատերը... բայց Մակի և Ալեքսանդր Ջաղեթյանների հիշատակը երկար կմնա:

Սպագա հայը տեղեկանալով, որ այդ եկեղեցու հիմքը մի հասարակ պալտագործ է դրել և որ շինությունն ավարտել է նույն պայտագործի որդին,—կմխիթարվի համոզվելով, որ մարդուս վեհությունը՝ տղամարդկությունը ոչ թե արտաքին շլացնող փայլի, ոչ թե աշխարհի ունայն անցվրակաև, այլ ներքին հոգեկան հարստության մեջ է[7]: Ինչպես տեսնում ենք, հայր և որդի Ջաղեթյանների կառուցած եկեղեցին հոգևոր կյանքի ուղի մտավ հայերի կողմից քրիստոնեության հավատքին անցնելուց ուղիղ 1600 տարի հետո և սկսեց մյուս քույր եկեղեցիների հետ միասին Աստծու սուրբ խոսքը հասցնել իր տառապյալ ժողովրդին, համախմբել ու հույսով, հավատով լցնել նրանց հոգիները, իր կամարների տակ կատարել բոլոր ծեսերն ու խորհուրդները: Այժմ ժողովուրդը Ղազախի միայնակ չէ, ունի իր դարավոր հավատքի սեփական սուրբ օջախը, իսկ եկեղեցին էլ՝ իր ավիրված հավատացյալները:

Ջաղեթյանի բարեգործությունը չի սահմանափակվում միայն շարադրածով: Նա օգնում է հայրենակիցներին, նրանց երեխաների համար Ղազախում դպրոց է հիմնում, աղքատների համար պատսպարան պատրաստում, գյուղացիներին սատարում, նպաստում քաղաքի բարեկարգման աշխատանքներին և իր խնամակալության տակ վերցնում ծնողազուրկների և այլն[8]: Այստեղ ավելորդ չէր լինի հիշատակելու Սոկրատի հետևյալ խոսքերը. «Դեպի երջանկություն տանող ճանապարհը բարեգործություն է»: Իրոք, որ երջանիկ էր ինքը, տառապել ևս, որ Վեհափառ Հայրապետի հատուկ կոնդակով նրա օրհնության ու գոհունակության է արժանանում («Արարատ» ամսագիր, 1901 թ., մայիս-հունիս): Երջանիկ էին հավատացյալ հայ բնակիչները և նրանց հոգևոր հայրերը: Այդ օրը հեռագրերով իրենց երախտիքն են նրան հայտնում Թիֆլիսից՝ Միքայել Աթաբեկյանը, Բաքվից՝ Սամսոն Հարությունյանը, Բաթումից՝ Սարիբեգ Հարությունյանը, Ախալցխայից՝ Ալեքսանդր Սիմոնյանցը, և ուրիշներ, որոնք Ղազախի կաթողիկե են անվել և նրա շնչովը շնչել:

Քանի որ Ջաղեթյանը նաև բազմազավակ հայր էր, մտահոգված էր նաև իր զավակների կրթության հարցով, այդ պատճառով մի քանի տարի հետո տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ Ներսիսյան դպրոցում էին սովորում որդիներից մի քանիսը, այդ թվում՝ Գրիգորը: Մեր տրամադրության տակ ունենալով միայն Գրիգորի կյանքի ու բազում գործունեության փաստեր, կցանկանայինք հակիրճ ներկայացնել նաև նրան, այդ հիանալի հային:

Գրիգորը 1903 թվականին, ավարտելով Ներսիսյան միջնակարգ դպրոցը, մեկնում է Գերմանիա և ընդունվում Լայպցիգի համալսարան, որը հաջող ավարտում է 1909 թվ., վերադառնում Թիֆլիս և ծառայության անցնում ֆինանսա-բանկային հիմնարկներում: Դեռևս Սեյմի գոյության ժամանակ, 1913 թվականի փետրվարից, աշխատում է նրա ֆինանսական կոմիսարիատում՝ գիտական քարտուղար, բանկա-վարկային բաժնի վարիչ[9]: 1918 թվականի դեկտեմբերին տեղափոխվում է Հայաստան, նշանակվում

---

7 ՏԱՐԱԶ, 1901, թիվ 19, էջ 219—220:

8 ՄԾԱԿ, 1916, թիվ 216:

9 **Գ. Ջաղեթյան**, Մոտիկ անցյալից, Երևան. 1969 թ.:

ֆինանսների միջոցների օգնական, այնուհետև՝ որպես միջոց[10]: Խորհրդային կարգերի ժամանակ Հեղկոմի որոշմամբ նշանակվում է Պետական վերահսկիչ, այնուհետև՝ ֆինժողկոմատի փոխնախագահ[11], իսկ 1922 թվականի մայիսից՝ Պետրանկի Հայաստանի գրասենյակի կառավարիչ, այդ պաշտոնում աշխատում է մինչև 1931 թվականը, որից հետո հիվանդության պատճառով թողնում է պաշտոնը և զբաղվում թարգմանչական գործունեությամբ, գրում մի շարք ձեռնարկներ ուսումնական հաստատությունների համար: Դասախոսում է համալսարանում և ինստիտուտներում, օգնում հանրապետությանը ֆինանսական կադրերի պատրաստման գործում: Սակայն 1938 թվականին դառնում է շատերի նման դաժան բռնապետության զոհը[12]: Նա խոշոր ֆինանսագետ էր[13]:

Ալեքսանդր Ջաղեթյանը 1910-ական թվականներին կատարված ազգամիջյան բախումների ժամանակ մի կերպ խույս է տալիս և հիմնավորվելով Թիֆլիսում, Մադաթյան կղզում փայտամշակման գործարան է գնում և զբաղվում այդ գործով, սակայն ծանր հիվանդությունը կտրում է նրա կյանքի թելը և 1916 թվականի օգոստոսի 20-ին Քարվանսարայում (Իջևան) կնքում է իր մահկանացուն: Իսկ 25-ին մեծաշուք պատվով տեղափոխվում Ղազախ և թաղվում Մկրտիչ Կաթողիկոսի կոնդակով արտոնված իր կառուցած Սուրբ Վարդան եկեղեցու գավթում, մուտքի մոտ: Նրա հուղարկավորության հանդեսին մասնակցում էին նաև թուրք աղալարներ և հոգևորականներ, որոնք իրենց պատգամավորներով հավաքվելով հայոց եկեղեցու գավթում, հայտնեցին նույնիսկ իրենց երախտիքը հանգուցյալին և ասացին, որ հանգուցյալը քաղաքի հայոց եկեղեցին կառուցելուց հետո եղել է նաև մեջիդի շինության գործին նպաստողներից առաջին անձը:

Ջաղեթյանը մեծ համակրանքով է վերաբերվել Շամշադինեցիներին՝ ասելով. «Շամշադինեցիները քաջ հայերի ցեղի մնացորդներ են» և թուրք-հայկական կռվի ժամանակ համարյա թե պաշտել էր նրանց: Նրա թողած կտակը դեպի հայ գյուղական կյանքը վկայում է Ալեքսանդրի անհուն սիրո մասին: Նա գտնում էր, որ հայ գյուղերը միշտ զուրկ են մնում հարուստի բարեգործությունից, մինչդեռ նրա տնտեսական, կրթական և բարոյական աշխարհում էր տեսնում հայության գոյությունն ու հարատևությունը: Իր ամբողջ շարժական և անշարժ կարողությունը բաժանելով երեք մասի, նրա երրորդ մասը կտակել է չորս գյուղական ուսումնարանների՝ իր հայրենի Բանանց գյուղին, Ղազախի գավառի Քարվանսարա (Իջևան—իմն է), Թովուզ-Ղալա և Ղազախի իր հիմնած դպրոցին: Բացի դա, օգնել է շատ ուսանողների, դպրոցների, սովյալների, գաղթականների ու չքավորների:

— Նրա տունը Ղազախ քաղաքում եղել է հայր-Աբրահամյան տուն, և ամեն տեսակ հայ անցորդներ, բարձր աստիճանի անձինք նրա տանն են իջևանել ու հարգվել անցյալում, ինչպես կաթողիկոսներ ու առաջնորդներ,— գրում է ՄԾԱԿԸ իր 1916 թվականի սեպտեմբերի համարներից մեկում[14]:

Անցել են տարիներ, ժամանակներ և դրանք իրենց բազմաթիվ անցանկալի հետքն են թողել հասարակական հարաբերությունների տարբեր փու-

---

[10] ՀՀՊՊԿ արխիվ, ֆ. 202, գործ 1328, ցուցակ 1:

[11] ԱՆՄՈՌԱՑ ԴԵՄՔԵՐ, 1965 թիվ, Երևան, էջ 161—162:

[12] Ազգային Անվտանգության Պետական Վարչության 24/2—1993 թվականի Խ-2 թվագրությամբ պատասխան գրությունը Հ. Ս. Խառատյանին:

[13] ՀԱՅ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՕՐՐԱՆԸ, Դանիել Դգնունի, Երևան—1971 թիվ, էջ 8;

[14] ՄԾԱԿ, թիվ 216, 1916 թ.:

լերի վրա, որոնց ընթացքում խեղվել են հիմնավորված գործընթացները ազգամիջյան հարաբերությունների: Կրկին արյունահեղություն, տարագնացություն, գաղթ: Եթե երեսնական թվականներին իշխանությունների կողմից վարած հակակրոնական քաղաքականության հետևանքով դադարեցվեց կյանքը բազմաթիվ եկեղեցիներում և վանքերում՝ կտրելով նրան ժողովրդից, վերացնելով հավատքը իր դարավոր արժեքներից, նրանց մի մասը օտարվեց, կործանվեց ու ավերվեց, ապա այժմ հայկական բազմաթիվ սրբօջախների ու պատմական հուշարձանների թվումն են գտնվում նաև Երջանկահիշատակ բարերարներ Զաղեթյանների կառուցած Սուրբ Վարդան եկեղեցին, բարեբախտաբար որը, ասում են, կանգուն է, բայց կարոտով սպասում և հայցում է իր հավատացյալների հոգատարությունը: Հուսանք, որ կանցնեն այս դժգույն ու ցավալի ժամանակները: Կգան սպասվելիք օրերը, և հայ հավատացյալը կրկին կկարողանա այցելել իր սրբօջախը, պատարագ կատարել, Աստծու խոսքը լսել և խոնարհվելով երախտավորների շիրիմներին իր հարգանքի տուրքը մատուցել նրանց հիշատակին: Այս է պատմությունը եկեղեցու և երախտավոր ազգասերներ ԶԱՂԵԹՅԱՆՆԵՐԻ հայանվեր գործերը:

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ Ժ—ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ*

Էլ-Աֆդալը կուտակեց անսահման մեծ հարստություն, շատ հավանաբար Եգիպտոսի գանձի հաշվին: ԺԳ դարի պատմիչ Իբն Մույեսասերն այս մասին տալիս է խիստ հետաքրքրական թվեր և տեղեկություններ: Վեզիրն իր մահվան ժամանակ ժառանգություն է թողել վեց միլիոն հինչուն դինարամ, 30 բեռնաչափ ձույլ ոսկի, 300 մետաքս հագուստ, 500 սնդուկ կտավ, անթիվ և անհամար գոմեշներ, ոչխարներ, ուղտեր և այլն, որոնց կաթից և ագարակներից եկած եկամուտը տարեկան հասնում էր 40 հազար դինարի, մի արժեքավոր թանգարանի, որի վրայի թանկագին քարը միայն արժեր 12 հազար դինար, կես միլիոն հատոր գիրք, և բազմաթիվ այլ հարստություններ: Աֆդալն իր հսկայական պալատում, որ կոչվում էր «Դարբ-Էլ-Զահաբ» (Ոսկի ապարանք), ուներ 800 ծառայողներ, ինչպես նաև 50 հարճեր:

Ըստ Մաքրիզիի Էլ-Աֆդալի տիտղոսները հետևյալներն էին. «Ամենահզոր և վստահելի տեր, հրամանատար բանակների, սուր իսլամի, պաշտպան արարածների, խնամատար մահմեդական կադիների (դատավորների —Ն. Տ. Մ.) և ուղեցույց հավատացյալների քարոզիչներին»[130]:

1097 թ. սկզբներին խաչակիրների մի բանակ, գալով Եվրոպայից, անցավ Բոսֆորն և առաջացավ դեպի Երուսաղեմ: Եգիպտոսի, Սիրիայի և Միջագետքի արաբներն այս լուրն առնելով սկսեցին անհանգստանալ: Սելջուկները մեծ արագությամբ հավաքեցին հսկայական մի բանակ, դեմ դնելու գալիք քրիստոնյա խայտաբղետ բանակներին: Սակայն այս վերջիններին հաջողվեց գրավել Նիկիա քաղաքը 1097 թ. հուլիսի 1-ին և մեծ կոտորած տալ թուրքերին: Սրանք նահանջելով մեծ ավերներ գործեցին իրենց ճանապարհին: Խաչակիրները գրավեցին Անտիոքը, նույն ժամանակ Էլ-Աֆդալն եգիպտական բանակի գլուխն արշավեց և գրավեց Երուսաղեմն օրթոկիդներից: Սակայն կարճ տևեց Աֆդալի հաղթանակը կռվելով և մարելով իրենց ճանապարհը, 1099 թ. հուլիսի 15-ին հարձակումով գրավեցին քրիստոնյաների սուրբ քաղաքն եգիպտացիներից: Աֆդալի արշավանքը վերջացավ անհաջողությամբ: Եգիպտոսն արդեն քառորդ դար առաջ կորցրել էր գրեթե ամբողջ Սիրիան:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1993 թվականի Է—Ը, ԺԱ—ԺԲ և 1994 թվականի Դ—Ե միացյալ համարներից:

130 **Գ. Մքսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 40;

Իբն Խալլիքանը հետևյալն է գրում իր արժեքավոր գրքում այս վեզիրի մասին. «Էլ-Աֆդալ վարչագետ և կորովի էր: Նա է, որ հոր մահից հետո թագավոր հռչակեց Ամիր Իբն Մուսթաալիին և նրա պետական գործերը վարեց: Ամիրը մի հեշտամոլ էր... ուստի Աֆդալը արգելումի ենթարկեց այն և թույլ չտվեց, որ մոլություններ գործե: Այս պարագան վեզիրի կյանքին դեմ դավադրելու մղեց Ամիրը, որ մի խմբակի թելադրեց հարձակվել նրա վրա»[131]:

Աֆդալն ուներ լրտեսական մի ամբողջ ցանց ինքզինքը պաշտպանելու և իր թշնամիները հայտնաբերելու համար: Նա լրտեսներ էր պահում ժողովրդի ծոցում և այս գործում իրեն մեծ աջակից էր լինում իր հարազատ մայրը, այսինքն Բեդր Էլ-Ջամալիի կինը, որ ծպտված վիճակում շրջում էր փողոցից փողոց, իր որդու՝ վեզիր Էլ-Աֆդալի քաղաքական անձնական հակառակորդները գտնելու նպատակով: Այս մասին Մաքրիզին հետաքրքրական մանրամասն տեղեկություններ է տալիս գրքում[132]:

Աֆդալը վերակազմել է եգիպտական բանակն և զինվորական նոր կարգեր ու զորանոցներ հաստատել Կահիրեում[133]: Նրա հարստությունը հասել է անտիկ աշխարհի կրեսոսների հարստության[134]: Նրա գիներարահի նկարագրություն անելով, Մաքրիզին տալիս է այնպիսի անհավատալի մանրամասնություններ, որոնք չափից դուրս զարմացնում են ընթերցողներին[135]: Աֆդալը Կահիրեում սարքել է տվել երկու մեծ գեղեցիկ այգեստաններ, որոնց մեջ բաց են թողնվել անթիվ և անհամար սիրամարգեր և երգող թռչուններ[136]: Վերջապես Աֆդալն եղել է բարերար և օգնել շատ-շատերին, որոնք իր պաշտպանության շնորհիվ պետական ծառայության մեջ մեծ և կարևոր պաշտոններ են ձեռք բերել: Բայց երբեմն իր պաշտպանյալներից ոմանք էլ դավել են իր դեմ: Մաքրիզին բազմաթիվ տեղեկություններ է տալիս այս մասին[137]: Ի վերջո հայազգի այս վեզիրը թողել է բազմաթիվ շենքեր, մզկիթներ, կալվածներ և հանրօգուտ հիմնարկներ[138], որոնցից մի քանիսի հիշատակարանները, որոնք պահպանված են մինչև այսօր, քարի վրա փորագրված, որոնց մեկ ճմուշը տրվում է այստեղ.

«...Այս միհրաբի կառուցումը պատվիրեց իմամ Էլ-Մուսթանզիր բիլլահի՝ մեր տիրոջ և վարպետի ծառայի (այսինքն Բեդրի—Ն. Տ. Մ.) հաջորդը, հավատացյալների իշխանը, որպեսզի Ալլահի օրհնություններն իջնեն իր սուրբ նախնիների և իր գալիք սերնդի վրա, ազնվագույն տերն Էլ-Աֆդալը, իմամի սուրը, իսլամի վեհանձնությունը, և այլն...»:

(Հիջրայի 487) 1094 թ. սույն արձանագրությունը վերցված է Մաքս Վան Բերխեմի գրքից: Տեսնել Max Von Berchem, Matériaux pour un Corpus Inscriptiónum Arabicarum, EGYPTE. Premiere Partie., Fasicule premier, Paris, 1903, pp. 32—34, որտեղ կա վիմագրության արաբերեն բնագիրն և ֆրանսերեն թարգմանությունը):

---

131 **Իպն Խալլիքան, Վեֆայաթ էլ Սայան** ..., էջ 149:
132 **Գ. Մքսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 40—42:
133 Նույն տեղում, էջ 43—44:
134 Նույն տեղում, էջ 44—46:
135 Նույն տեղում, էջ 46—47:
136 Նույն տեղում, էջ 47—49:
137 Նույն տեղում, էջ 49—50:
138 Նույն տեղում, էջ 51—55:

Մաքրիզին խոսելով Բեդրի և Աֆդալի՝ հայր և որդու մասին, գրում է, որ Ֆաթիմյան խալիֆաներն իրենց անկումից հետո ճանաչեցին շքեղությունը, իսկ երկրի ավերումից և ժողովրդի դժբախտությունից հետո Եգիպտոսը ձեռք բերեց բարգավաճումը, և այդ բոլորը կատարվեցին այ սերկու հայազգի վեզիրների շնորհիվ[139]:

Փոքրահասակ խալիֆան մեծանալով և գիտակցության գալով, 1121 թ. սպանել է տալիս իր վեզիր Աֆդալին, ազատվելու համար նրա գերիշխանությունից: Այսպես անփառունակ կտրվեց հայազգի վեզիրների շարքում երկրորդը հանդիսացող Էլ-Աֆդալի կյանքի թելը: Էլ-Ամիր խալիֆան այնուհետև գրավում է Աֆդալի ամբողջ հարստությունը, որ «հազարումեկ գիշերների» հեքիաթներում նկարագրվածի նման մի հսկայական հարստություն էր: Նույնիսկ բանտարկել է տալիս Էլ-Աֆդալի ամբողջ ընտանիքը:

Աֆդալի մահից հետո Էլ-Ամիր խալիֆան վեզիրության պաշտոնը հանձնեց Մամուն Բութայհիին, որ իր նախորդի նման մեծ իրավասություններ պահեց իր ձեռքում: Խալիֆան արդեն 29 տարեկան էր, որոշեց ամեն իրավունք վերցնել իր ձեռքը, Մամունի տեղ իրեն հարիրդական նշանակեց մի ղպտի վանական՝ Աբու Նաջահը: 1129 թ. Էլ-Ամիրն սպանել տվեց նաև Աբու Նաջահին, իսկ հաջորդ տարին Էլ-Նիզարի կողմնակիցները սպանել տվեցին Ամիր խալիֆային: Սրա մահից հետո իր հորեղբոր տղան՝ Էլ-Հաֆիզը նշանակվեց թագավորության հանամակալ: Նոր վեզիր Յազուրին բռնվականին խստություններ արեց քրիստոնյաների նկատմամբ, նույնիսկ փակել տվեց որոշ ղպտի եկեղեցիներ: Մահացած խալիֆայի կանանցից մեկը մի աղջիկ ունեցավ, պատճառ դառնալով, որ Հաֆիզը լինի երկրի խալիֆան (1131—49):

Երկրում անկարգությունները շատացած լինելուն, զորքերը ստիպեցին, որ Բեդր Էլ-Ջեմալիի թոռը՝ Քութայֆատ հայազգին դառնա երկրի վեզիրը, ինչ որ հաջողվեց 1131 թ.: Սա Էլ-Աֆդալի Ահմեդ որդին էր, Աբու Ալի Քութայֆատ մականունով: Նոր վեզիրն անմիջապես բռնեց և բանտարկել տվեց Հաֆիզ խալիֆային, Քութայֆատը դարձավ երկրի տերը: Մի պահ մտածեց սպանել խալիֆային և նրա տեղը դառնալ երկրի խալիֆան, սակայն վախենալով չիրագործեց այն: Այլ բավականացավ միայն «սպասված գալիք իմամի» անունով դրամ կտրել տալու և մզկիթներում աղոթքի ձևը փոխելու[140]: Նա վայելեց ինքնիշխան մի արքայի բոլոր իրավասություններ, այնպես որ մի քանի արաբ պատմագիրներ նույնիսկ փոխանակ վեզիրի, ավելի թագավորի տիտղոս են տալիս Աբու Ալի Քութայֆատին:

Մեկ տարի երկիրը խաղաղ կառավարելուց հետո բանտարկված Հաֆիզ խալիֆայի կուսակիցները դավադրությամբ սպանել տվեցին Աբու Ալիին: Նրանց պարագլուխն էր Յանիս անունով մի հայազգի, որ հետագայում դարձավ վեզիր: Բոլոր այս տեղեկությունները հաղորդում է Մաքրիզին: Քութայֆատի մահով վերջ գտավ մեծանուն վեզիր և պետական անձնավորություն Բեդր Էլ-Ջեմալիի գերդաստանը, որով այլևս պատմիչները չեն խոսում նրա զարմի և ժառանգորդների մասին:

---

[139] **Makrizi**, Livre des admonitions et de l'observation sur l'histoire des quartiers et des monuments ou Description historique et topographique de l'Égypte, traduit par Paul Casanova, 4-e paitre, Le Caire, 1920, p. 95.

[140] **Stanley Lane-Pool**, A History of Egypt in the Middle Ages, Volume VI, London, 1936, p. 167.

Քութայֆատի սպանությունից հետո մեծացան Էլ-Հաֆիզ խալիֆայի իրավունքները և 1132 թվականին վեզիր նշանակվեց Յանիս հայազգին, որ քիչ ժամանակ առաջ ղեկավարել էր իր նախորդի սպանությունը:

Յանիսը ծագումով հայ էր և նախապես եղած Էլ-Աֆդալի գերին: Սպանելով Քութայֆատին, երևի կամ հին հաշիվ էր մաքրում և կամ վրեժխնդրության համար սպանում էր իր նախկին տիրոջ որդուն: Յանիսը սակայն խիստ կարգապահ մարդ էր, շիտակ, խելացի և խստակյաց մի անձնավորություն: Իր խելացության շնորհիվ գերու աստիճանից նա բարձրացավ քաղաքական և ռազմական սանդուխներով, հասնելով մինչև Եգիպտոսի վեզիրության բարձրագույն աստիճանին: Խստիվ պատժել տվեց խալիֆայի հակառակորդներին, օրինազանցներին և ըմբոստներին: Սպանել տվեց մի քանի հարյուր մարդ, որոնց մեջ էին արքայի բարձրաստիճան պալատականներից մին և երկրի գլխավոր դատավորը: Մաքրիզին մեծ գովեստով է խոսում այս հայազգի վեզիրի մասին: Սակայն Էլ-Հաֆիզ խալիֆան սկսելով վախենալ Յանիսի ձեռք բերած և օրից օր աճող ժողովրդականությունից, պալատական իր բժշկի միջոցավ թունավորել տվեց նրան: Յանիսն ընդամենը հինգ ամիս պահեց կառավարության պետի իր պատասխանատու պաշտոնը[141]: Այս բոլոր տեղեկությունները տվել է Մաքրիզին իր «Խիթաթ»-ում:

Ալպոյաճյանը գտնում է, որ Յանիսը սերում էր Բեդր Էլ-Ջեմալիի վեզիրության օրով Եգիպտոս գաղթած մի հայ ընտանիքից, և շնորհիվ բնատուր իր տաղանդին Աֆդալի խեղճուկ մամլուքը բարձրացել է մինչև էմիրության (իշխանության) աստիճանին և հանդիսացել խալիֆայի պալատի պետը (վեզիր)[142]:

Երեք տարի անհաջող կառավարությունից հետո խալիֆան դարձյալ իր ընտրությունը կենտրոնացրեց մի հայի վրա, որ այս անգամ ոչ թե մահմեդական կրոնին էր հասած, ինչպես իր նախորդ հայազգի վեզիրները, այլ պահած էր իր պապերի քրիստոնյա դավանանքը: Հաֆիզն իր երկրի վեզիր և զորապետ նշանակեց Բեհրամ Էլ-Արմանին, որ իսկական անունով կոչված էր Վահրամ Պահլավունի: Վահրամը և իր կրտսեր եղբայրը՝ Վասակը, Եգիպտոս էին եկել Կիլիկիայից: Իրենց ավագ եղբայրը Գրիգորիս արքեպիսկոպոսն էր, որ այդ ժամանակները հանդիսանում էր եգիպտահայ գաղութի հոգևոր առաջնորդը:

Վահրամն ու Վասակը Պահլավունիներ էին: Գաղթելով Եգիպտոս, ձեռք էին բերել զինվորական և քաղաքական բարձր պաշտոններ: Վասակը նշանակված էր Հին Եգիպտոսի մայրաքաղաք Թեբեի (այժմ Լուքսոր) կառավարիչը, իսկ Վահրամն էլ լինելով քաջ զորավար, աչքի ընկնելով, խալիֆայի կողմից նշանակվեց երկրի վեզիրն ու բանակի պետը, և ստացավ «Թաջ-Էլ-Դուալա», այսինքն «Պետության թագ» տիտղոսը:

Վահրամ Պահլավունին քրոջ որդին էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի, և հորեղբայրը Ներսես Շնորհալու:

Ենթադրվում է, որ Վահրամը Կիլիկիայից Եգիպտոս էր եկել շատ վաղուց, նույնիսկ Բեդր Էլ-Ջեմալիի վեզիրության օրերին, անցել է պետական ծառայության և հասել մինչև Ղարբիեյի նահանգապետության կարևոր պաշտոնին: Մահմեդական չլինելուն, խալիֆայի շրջապատի մոտիկ մարդիկ

---

141 **Գ. Մքսրլեան,** Անանուոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 61—63:

142 **Ա. Ալպոյաճեան,** Արաբական Միացեալ հանրապետութիւն .... էջ 27:

գտնում են, որ անհարմար է մի քրիստոնյա մարդու նշանակել վեզիր, սակայն օրվա խալիֆան ընդդիմանալով նրանց, վեզիրության ամենապատասխանատու պաշտոնը հանձնում է ազգով և կրոնով այս հային:

Վահրամը, խալիֆայի արտոնությամբ Թել-Բեշիրից և Կիլիկիայից Եգիպտոս բերել է տալիս իր ազգականներին, բարեկամներին և բազմահազար քրիստոնյա հայերի, որոնց թիվը հասնում է մոտ երեսուն հազարի, ըստ Իբն Մույեսեր արաբ պատմիչի: Նույն թիվն է տալիս նաև հայազգի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին[143]: Յակուտը ցույց է տալիս, որ Թել-Բաշիր (Մ. Ուռհայեցու մոտ Թլպաշար—Ն. Տ. Մ.) բերդաքաղաքը գտնվում էր Հալեպի հյուսիսային կողմն և որի բնակչությունն ամբողջությամբ բաղկացած էր քրիստոնյա հայերից[144]:

ԺԵ դարի արաբ պատմագիր Շիհապեդդին Քալքաշանդին խոսելով Վահրամ Պահլավունու մասին գրում է. «... իր կողմից ուղարկված գաղտնի թղթակցություններով և հետո երևան հանված հայերեն նամակներով Վահրամը կանչել տվեց իր ընտանիքին ու ազգականները, իր ազգակիցներն ու ցեղակիցները: Սրանք եկան հետզհետե, մինչև որ չիավոր և հետևակ 20 հազար հոգի հավաքվեց, մեջն լինելով իր երկու եղբոր որդիները (Վասիլ և Շահան Պահլավունիներ, որոնք հետագայում Եգիպտոսում անցան պետական պաշտոնների—Ն. Տ. Մ.) և իր գերդաստանից դեռ ուրիշներ»[145]:

Վեզիր Վահրամի օժանդակությամբ Եգիպտոս եկած հայերից մեծ թվով մարդիկ, շուրջ երկու հազար հոգի, անցնում են պետական ծառայության մեջ: Կահիրեում, երկրի այլ քաղաքներում և նահանգներում, որտեղ հայերը բնակություն են հաստատում, կառուցում և հիմնում են երեսունից ավելի հայկական եկեղեցիներ և վանքեր, մի թիվ, որին այլևս երբեք չի հասել Եգիպտոսում գոյություն ունեցող հետագա ժամանակաշրջանում հայկական գաղթօջախների եկեղեցիները: Ինչպես տեսանք նախորդ էջերում, այս մասին մանրամասն տեղեկություններ է տվել արաբերեն լեզվով, հայազգի ականավոր պատմիչ Էլ-Շեյխ Աբու Սալիհ Էլ-Արմանին, այլ անվամբ Աբու Սահլ հայազգին:

Սակայն թվով հայերի բազմանալը, եկեղեցիների աճելն և հատկապես Վահրամի տված օգնությունը քրիստոնյա բնիկ տեղացի ժողովրդին (ղըպտիներին) և հայազգի եկվորներին, խորթ աչքով նայվեց տեղացի մահմեդական ժողովրդի և արքունիքի ղեկավար մարդկանց կողմից, այն աստիճան, որ Իբն Մույեսեր պատմիչը գրում է «իսլամի վրա քրիստոնեության խուժումից սարսափ զգացին»[146]: Ոմանք սակայն սա գտնում են որպես մահմեդական մոլեռանդ ծայրահեղություններ չափազանցություն ընդդեմ վեզիր Վահրամին, որ բացառիկ մի դեպք էր միջնադարյան աշխարհում քրիստոնյա լինելով հանդերձ գրավումը վեզիրության բարձր պաշտոնին արաբական այդ երկրի, այն խալիֆների արշավանքների այդ ժամանակաշրջանում, երբ իսլամի և քրիստոնյայի հակասությունները սուր բնույթ էին կրում և ծրերն իրար էին խաչաձևում:

Համեմատաբար խալիֆայի շրջապատի մարդիկ բողոք ներկայացրին Էլ-Հաֆիզին, Վահրամի և իր ազգակիցների մասին: Վահրամի եղբոր՝ Վա-

---

[143] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

[144] **Գ. Մքրլեան**, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 69:

[145] **Գ. Մքրլեան**, «Հայ զօրավարներ Եգիպտոսի մէջ», տեսնել «Էջմիածին» ամսագիր, Երևան, Դ տարի, 1947, Յունուար—Փետրուար, էջ 45:

[146] Նույն տեղում, էջ 69:

սակի գործած հարստահարություններն էլ մեծ զայրույթ առաջացրին տեղացի տարրերի մեջ, Ղարբիեյի կառավարիչ Ռադվան Իբն Է-Վալախշին, ստանալով երկրի արաբ էմիրների օգնության կոչը, հարձակվեց Վահրամի վրա, փրկելու համար արաբների իրավունքները: Վահրամը վերահասու լինելով գալիք վտանգին, և կիրքերը չբորբոքելու համար թողեց Կահիրեն և հեռացավ Վերին Եգիպտոս իր եղբոր մոտ:

Վահրամի հեռանալուց հետո Ռադվանի զորքերը և ստրաբ ժողովուրդը վրեժխնդրության համար թալանեցին Կահիրեի հայկական թաղամասերի հայերի տներն և մի քանի եկեղեցիները, նույնիսկ սրբապղծեցին Վահրամի եղբոր՝ Գրիգորիս արքեպիսկոպոսի գերեզմանն և սպանեցին պաշտոնանկ եղած հայ վեզիրի եղբորը՝ Վասակ Պահլավունուն:

Վահրամին հաջորդեց որպես վեզիր իր հակառակորդը՝ Ռադվանը: Վահրամը հասնելով Վերին Եգիպտոս գտնում է իր եղբայրն արդեն սպանված: Խիստ վշտացած քաշվում է Սոհակ քաղաքի մոտ հայկական Սպիտակ վանքը, որի հայերեն չորս արձանագրությունները դեռ երևում են մինչև այսօր:

Երկրում սրվեցին մահմեդականների և հայերի միջև ծնունդ առած թշնամությունները: Իբն Մույեսասերը գրում է, որ Ռադվանը բռնություն գործելով Վահրամի գործակիցների և ազգակիցների վրա, գրավեց նրանց կալվածներն և սպանեց շատերին: Նա աշխատեց Եգիպտոսից բնաջնջել հայերին: Ռադվանի գործած այս ծայրահեղ արարքներից դժգոհ մնալով խալիֆան, Վահրամին կրկին հրավիրել տվեց Կահիրե և բնակեցրեց իր պալատում, մի բան, որից խիստ դժգոհ մնաց Ռադվանն և սկսեց պայքարել խալիֆայի դեմ: Այս վերջինս նույնիսկ բանտարկել տվեց վեզիրին, սակայն հետագայում սրան հաջողվեց փախչել: Երկարատև այս վեճը վերջ գտավ միայն Վահրամի մահով 1140 թ., որ տեղի ունեցավ Հաֆիզ խալիֆայի պալատում:

Իբն Մույեսասեր պատմիչը գրում է, որ Վահրամն ապրեց խալիֆայի մոտ, հանդիսանալով նրա խորհրդատուն, մի բան, որ անշուշտ խիստ դժգոհ թողեց Ռադվանին: Երբ 1140 թ. Վահրամը մահացավ, խալիֆան սաստիկ վշտացավ, սուգի համար երեք օրով փակել տվեց պետական պաշտոնավճտացավ, սուգի համար երեք օրով փակել տվեց պետական պաշտոնատները, կանչել տվեց հայերի առաջնորդին և պատրաստություն տեսավ հուղարկավորության, որ կատարվեց մեծ շուքով: Մետաքսով զարդարված դագաղին հետևեցին հայազգի հոգևորականներ, բուրվառակիրներ և ժողովուրդ, ինչպես նաև արաբ ազնվականներ և պալատական մարդիկ: Հաֆիզ խալիֆան ջորի նստած հետևեց թափորին: Հայ քահանաներն երգեցին Ավետարանի երգերը մինչև Խաղդաքի վանքը, որտեղ ջորուց իջավ խալիֆան, նստեղ գերեզմանի եզերքն և սաստիկ լաց եղավ[147]:

Ահա այսպես վերջացան միջնադարյան Եգիպտոսի արաբական ֆանթիմյան խալիֆաթի հայ քրիստոնյա նախարարապետ Վահրամ Պահլավունու կյանքն ու գործունեությունը:

Որոշ պատմաբաններ (Քալքաշանդի և Գաստոն Վիետ) գտնում են, որ Վահրամը Կահիրեից փախչելով գնացել է Սիրիա, իր ծննդավայրը՝ Թլպաշար, Այթապի մոտ, իսկ ուրիշ հեղինակներ (դոկտ. Հասան Իբրահիմ Հասան և այլն) էլ գտնում են, որ նա գնաց Վերին Եգիպտոս, իր Վասակ եղբոր մոտ, որ սակայն մեռած գտավ[148]:

147 Նույն տեղում, էջ 73—74:

148 **Ա. Ալպոյաճեան,** Արաբական Միացեալ հանրապետութիւն ..., էջ 3:

Գալով Ռադվանի հայահալած կոտորածին, սա մասսայական բնույթ ստացավ: Նա հալածեց հայկական գաղութի անդամներին, անմիջապես աշխատանքից հեռացրեց պետական պաշտոնատներում աշխատող շուրջ 2000 հայերին, որոնք վայելում էին նախորդ վեզիրի լիակատար վստահություն ու պաշտպանություն: Գրավել տվեց նրանց ինչքերն և արագ վճռով դատապարտեց նրանց: Հալածեց Վահրամի բոլոր կողմնակիցներին, գրավեց նրանց ունեցվածքն ու կալվածները և շատերին էլ սպանել տվեց: Կարճ ասած, հալածելով հայերին նա աշխատեց բնաջինջ անել նրանց[149]: Հակահայ այս հալածանքներին նահատակվելով զոհ գնաց եգիպտահայոց առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը 1137 թ.: Պարզ է, որ այս բոլոր հալածանքները Վահրամի և հայերի դեմ կատարվեցին միջնադարյան կրոնական մոլեռանդության գետնի վրա, քանի որ Վահրամ Պահլավունին դավանափոխ չէր եղել և մնացել էր հավատարիմ իր պապերի քրիստոնյա կրոնին: Եվ իրոք եթե նա կրոնափոխ եղած լիներ և ընդունած իսլամի կրոնը, ապա նա անտարակույս կկարողանար առաջքն առնել այս հալածանքներին և դեռ երկար տարիներ կառավարել երկիրը, քանի որ իր վարչագիտությամբ և բնատուր կարողություններով շահած էր երկրի խալիֆայի ու հարգանքը: Քրիստոնյա լինելով հանդերձ Վահրամին շնորհված էր «Թաջ Էլ-Դաուլա» (Պետության թագ) բարձրագույն տիտղոսը, ինչպես նաև կառավարման լայն իրավասություններ:

Ռադվանի և խալիֆայի միջև արված լինելով հակասությունները, վեզիրը 1139 թ. հունիսին գաղտնի կերպով փախչում է Կահիրեից: 1141—2 թվականներին երկրում ծայր է առնում ժանտախտի մի համաճարակ, որ հասնում է լայն ծավալի, հատկապես Աղեքսանդրիայում: Ռադվանի փախուստից հետո Էլ-Հաֆիզ խալիֆան չուներ վեզիր և նախարարներ, իշխում էր երկրին առանց սրանց օգնության: Երկիրն ընկել էր անիշխանության ձեռքը: Իբր թե Մուսթանզիրի որդին, մի անճանոթ տղա, աշխատում էր հեղաշրջում կատարել և գրավել խալիֆայությունը: Նույն ժամանակ Բեհերայի նահանգում արաբներն անկարգություն են կատարում, որոնք զսպվում են նահանգապետ հայազգի Թալայ Իբն Ռուզզիքի կողմից:

Ծերունի Էլ-Հաֆիզ խալիֆայի մահից հետո 1149 թ. նրան է հաջորդում իր 17 տարեկան որդին, որ առնում է Էլ-Զաֆիր անունը: Սա վարում է զեղխ կյանք և իր ժամանակն անցկացնում երգչուհիների և երաժիշտների շրջանակում: Պետական փորձված սպա Իբն Մասալին է վստահվում վեզիրության պաշտոնը: Սա լինում է խալիֆայի հոժար կամքով և իր կողմից նշանակված վերջին վեզիրը, որովհետև նրանից հետո եկողները բոլորն էլ բռնի ուժով են գրավել երկրի կառավարման ամենապատասխանատու պաշտոնը՝ կառավարման պետի: Իբն Մասալի հակառակորդ Ալի Իբն Սալարն Աղեքսանդրիայից գալով, իր զորքի գլուխն անցած, արշավում է Կահիրեի վրա, գրավում իշխանությունը և բանակցելուց հետո պատանի խալիֆայի հետ, և կամ ավելի ճիշտ, պալատական այն կանանց հետ, որոնք մեծ ազդեցություն ունեին Էլ-Զաֆիր խալիֆայի վրա: Ապա սրանցից վեզիրությունը գրավում է նախորդի փեսան՝ ոմն Աբբաս Իբն Աբիլ-Ֆութուհ անունով: Այս կռիվների ժամանակ աչքի ընկավ Թալայ Իբն Ռուզզիքը, որ ղեկավարում էր Իբն Սալարի զորքերի մի մասը: 22-ամյա խալիֆան՝ Էլ-Զաֆիրը, դավաճա-

---

[149] Նույն տեղում, էջ 32:

ևությամբ սպանվում է վեզիր Աբբասի Նասր որդու կողմից, այս վերջնույս պալատում և գաղտնի թաղվում այստեղ: Հաջորդ առավոտյան վեզիրն իր որդուն արդարացնելու մտադրությամբ մեղավոր է հռչակում սպանված խալիֆայի եղբայրներին, բռնում է նրանց և սպանել տալիս սպանված խալիֆայի փոքրահասակ երեխային՝ Էլ-Ֆայիզին, որպեսզի երկրի ամբողջ իշխանությունն իր ձեռքում վերցնի: Սակայն զայրույթ առաջացավ երկրում և հատկապես արքունիքում: Պալատի ազդեցիկ կանայք և իշխանուհիները գաղտնի հատուկ նամակ գրեցին Թալայ Իբն Ռուզզիքին, մեջն էլ դնելով իրենց գլխի մազերից[150]: Իսլամական օրենքով կինն իր սեփական մազն է ուղարկում մի տղամարդու, երբ խիստ կարիք ունի ստիպողական օգնության: Որով Թալայն իր հավատարիմ զորքով մտնում է Կահիրե, գրավում է այն, իսկ հակառակորդներն, ինչպես նաև Աբբասն իր ընտանիքն առած փախչում են Սիրիա:

Թալայ Իբն Ռուզզիքը հանդիսացավ Եգիպտոսի Ֆաթիմյան շրջանի հայազգի վեզիրներից վերջիններից մեկը, որ նշանակալի դեր կատարեց երկրի պատմության մեջ ԺԲ դարի երկրորդ կեսի սկզբներին: Այսօր պատմագիրներից ոմանք գտնում են, որ Թալայի պապը Հայաստանից էկած և Եգիպտոս է հաստատված ժամանակին, իսկ ուրիշները (Մաքրիզին և այլն) գրում են, որ Թալայը Եգիպտոս է եկած Իրաքից, որտեղ ծառայած էր նախապես: Համենայնդեպս պատմագիրները (ֆրանսիացի և այլն) ընդունում են նրա հայազգի լինելը: Մաքրիզին պատմում է, թե ինչպես Իրաքի իմամը երազ է տեսնում, որի հետևանքով Թալային նախատեսնում է մեծ պաշտոն Եգիպտոսում[151]: Այդ պատճառով Թալայը գալիս է Կահիրե, ապրում այստեղ և Ֆաթիմյան խալիֆայի պալատում ուսում առնելուց և զինվորական ասպարեզին նվիրվելուց հետո, դառնում է Մինիեի նահանգապետ, ապա վարում է այլ պաշտոններ, մինչև 1154 թ. երբ ստանձնում է երկրի նախարարապետի պատասխանատու պաշտոնը: Այս ժամանակ նա ընդունում է Մալիք Սալիհ պատվո մականունը: Նա ծնված էր 1102 թվականին և սպանվեց 1161-ին, յոթ տարի երկրի վեզիրը լինելուց հետո:

Թալայ Իբն Ռուզզիքն Եգիպտոսը կառավարեց ձեռնհասությամբ: Նախորդ անիշխանության տարիներին երկիրը խիստ տուժեց վեզիրների և խալիֆաների ներքին պայքարներից և հակամարտություններից, չհաշված դրսի եկած թշնամությունները: Թալայն երկիրը կառավարեց միահեծան և ինքնիշխան կերպով, որովհետև երկրի իսկական տերը՝ խալիֆան, նախապես Էլ-Ֆայիզն և ապա Էլ-Ադիդը, անչափահաս էին և չունեին իրենց պաշտոնի և գրաված գահի պարտականության բարձր գիտակցությունը: Վերջինս այս երկու խալիֆաները պարզապես խաղալիք հանդիսացան Իբն Ռուզզիքի ձեռքում: Այս վերջինս, թեպետև երկիրը կառավարեց խաղաղությամբ, սակայն վեզիրության ժամանակաշրջանում միշտ կռվեց խաչակիրների դեմ, առանց կարենալու վճռական հաղթանակ ձեռք բերել: 1155 թ. նա հարձակվում և ավերում է խաչակիրների Տիր քաղաքը: Այս նույն ժամանակ Սիցիլիայի թագավորի նավատորմերն ավերում են եգիպտական ծովեզերյա Դամիետի, Թինիս և Աղեքսանդրիա քաղաքները, սակայն հետո Եգիպտոսի հետ սիցիլիացիք կնքում են առևտրական փոխշահավետ մի պայմանագիր: 1157 և 1158 թվականներին Թալայը դարձյալ հարձակվում է ֆրանկների վրա,

---

150 Նույն տեղում. էջ 92:

151 Նույն տեղում, էջ 89:

վերցնում գերիներ և ռազմական ավար, սակայն առանց որևէ շոշափելի դրական արդյունքի:

Գաստոն Վիետը այսպես է բնորոշում Թալայ Իբն Ռուզզիքի իշխանությունը, մի կողմից անչափահաս հիվանդ երեխա, ակնարկելով անշուշտ երկրի խալիֆային (Էլ-Ֆայիզ և Էլ-Ադիդ), որ ղեկավարում է երկիրը անվանապես միայն, իսկ մյուս կողմից մի ճախարար, որ երկիրը կառավարում է սի ու սարսափով, սպանել է տալիս խալիֆայության այն պաշտոնյաներին և սպաներին, որոնք կյանքի վտանգ են սպառնում իրեն, սպանում է նրանց, որպեսզի չսպանվի նրանցից, գրավում է նրանց ինչք, հարստություն և բերքը[152]:

Սակայն նույն պատմաբանը մի այլ գրքում ավելի մեղմ է վերաբերվում հայազգի այս վեզիրի նկատմամբ, գրելով, որ նա իշխանության գլուխն անցնելով, շուտով մոռացել է տալիս իրեն նախորդող շրջանի դաժանությունները: Հանդիսանում է պատվախնդիր մի մարդ, և որ Ասքալոնի կորուստն արյունոտել է իր սիրտը, որովհետև այսպես Եգիպտոսի սահմանագլխում խաչակիրները հաստատում են իրենց իշխանությունը: Եգիպտոսում խաղաղությունը վերականգնելուց հետո, Թալայը հարձակվում է խաչակիրների վրա, սակայն չի կարողանում հասնել որևէ դրական արդյունքի[153]:

1160 թ. Էլ-Ֆայիզ խալիֆայի մահից հետո, Թալայը խալիֆա հայտարարեց Էլ-Ադիդին, Ֆաթիմյան հարստության վերջին գահակալը, իր աղջիկն էլ ամուսնացնելով նորընտիր այս խալիֆայի հետ, որպեսզի իր իշխանությունն ավելի ամրացած տեսնի: Սակայն իր խիստ նկարագրի պատճառով իր դեմ հանեց և արքունիքի ազդեցիկ մարդկանց և նույնիսկ իր փեսային՝ երկրի խալիֆային: Թալայ Իբն Ռուզզիքի ճնշող լծից ազատվելու նպատակով, Էլ-Ադիդ խալիֆան գաղտնաբար մի դավադրություն կազմակերպել տալով իր համախոհների շրջանակում, 1161 թ. սպանել է տալիս իր անդրոջը՝ Թալային:

ԺԳ դարի արաբ պատմիչ Իբն Խալիքանը բարձր է գնահատել Թալային և բառացի գրել է հետևյալը նրա մասին. **«Արժանիքի տեր, առատաձեռն, դյուրահաղորդ, գիտնականներին համակրող մի մարդ էր և հորինած է ընտիր բանաստեղծություններ: Կարդացած եմ նրա բանաստեղծությունների երկհատոր Դիվանը»**[154]: Թալայ վեզիրի բանաստեղծությունների մասին մենք ավելի հանգամանորեն ենք կանգ առնելու ուրիշ առթիվ: Իսկ նրա կատարած զանազան շինարարությունների մասին այլ հոդվածում:

1161 թ. սեպտեմբերի 11-ին Թալայ Իբն Ռուզզիքի վաղաժամ մահից հետո նախարարապետի պատասխանատու պաշտոնը հանձնվեց իր որդուն՝ Ռուզզիքին, որ Էլ-Ադիլ պատվո մականունն առավ իր վրա: Երևի այդ անունը, որ նշանակում է «արդար», իր վրա վերցրեց արդար մարդ լինելու համար: Արաբ պատմագիր Քալկաշանդին գրում է, որ նա արդեն իր հոր վեզիրության շրջանին իսկ երկրում վարել է շատ կարևոր պաշտոններ: Նա հանդիսացել է դատավոր և ընդհանուր հրամանատար եգիպտական բանա-

---

[152] Précis de l'Histoire d'Égypte, Tome 2-e, Le Caire, 1932, p. 105. Par Gaston Wiet.

[153] **Gabriel Hanotaux**, Histoire de la Nation Egyptienne, Tome IV, Paris, 1937, pp. 286—7, par Gaston Wiet.

[154] **Իբն Խալլիքան, Վեֆայաթ էլ Սայան** (Անհետացած երևելիներ), թարգմ. Թ. Մըսրլաան, Գահիրե, 1935, էջ 184:

կի, մի պաշտոն, որ վեզիրից հետո ամենակարևորն էր ղեկավարման գործում:

Թալայի կենդանության ժամանակ ֆրանկների Ամորի Ա Երուսաղեմի թագավորը, 1161 թ. գարնանը, հարձակվում է եգիպտական սահմանի վրա և հասնում մինչև Էլ-Արեշ: Թալայն անմիջապես բանակցություններ վարելով քրիստոնյաների հետ, խոստանում է տարեկան վճարել 100,000 դինար, պայմանով, որ խաչակիրների զորքերը հեռանան Էլ-Արեշից: Այս գումարը չի վճարվում երբեք, սակայն սեպտեմբերին, Ռուզզիքի օրոք, խաչակիրները հեռանում են եգիպտական սահմանից, որի համար ժամանակակից արաբ բանաստեղծ եմենցի Օմարան շնորհավորում է Ռուզզիքին, իր ձեռք բերած հաջողության համար: Սակայն ֆրանկները հետագայում հարձակվում են այլ վայրից:

Ռուզզիքը, սակայն, չուներ իր հոր ոչ վարչագիտությունը, և ոչ էլ քաջասրտությունը: Անխոհեմ կերպով պաշտոնանկ հայտարարեց Վերին Եգիպտոսի կառավարիչ Էմիր Շավարին, որ մեծ թվով զորք ուներ իր իշխանության ներքև: Սա փոխանակ հնազանդվելու վեզիրին, անցնելով իր զորքի գլուխը, արշավեց մայրաքաղաքի վրա և փախուստի մատնեց Ռուզզիքին, որ դադարեց վեզիրության պաշտոնից 1162 թ. դեկտեմբերի 28-ին: Ռուզզիքը փախավ, սակայն հետագայում ձերբակալվեց, բանտարկվեց և 1163 թ. գլխատվեց Շավարի հրամանով: Սույն դեպքերի մասին որոշ մանրամասնություններ է հայտնում պատմաբան Մաքրիզին[155]:

Ռուզզիքը հանդիսացավ Եգիպտոսում իշխող Ֆաթիմյան հարստության ծառայող հայազգի վեզիրների շարքի վերջինը: Ինչպես տեսանք վերևում, 1074 թ. մինչև 1162 թ.՝ շուրջ 88 տարիների ընթացքում ութ հայազգի նախարարապետներ կառավարեցին երկիրը, երբեմն էլ ենթարկվելով ծանր փորձությունների, միշտ ժամանակակից և հետագայում եկած արաբ պատմագիրներից ճանաչված լինելով **«հայազգի»** մականունով: Բեդր Էլ-Ջեմալիից սկսած իրար հաջորդեցին Աֆդալ Շահնշահը, Մուզաֆֆարը (վեզիրի պաշտոնակատար), Քութայֆատը, Յանիսը, Վահրամ Պահլավունին, Թալայ Իբն Ռուզզիքն և Ռուզզիք Իբն Թալայը, որոնցից ոմանք նույնիսկ իրենց ձեռքում ավելի իշխանություն ունեին վերցրած, քան էրվա խալիֆան:

Ռուզզիքի սպանությունից հետո վեզիր եղավ Շավարը: Առաջացավ խռովություն Եգիպտոսում: Երկրի ղեկավարությունն անցավ բախտախնդիր մարդկանց ձեռքը, որոնք իրար դեմ էին պայքարում երկրի իշխանությունը ձեռք բերելու համար: 1168—9 թ. Շիրքուհ և Սալահեդդին զորականներն իրենց քրդական և թուրքական զորքերից բաղկացած բանակով արշավեցին Եգիպտոսի վրա և վերջ տվին Ֆաթիմյան իշխանության[156]: Երկու տարի հետո, 1171-ին, երբ մահացավ Ֆաթիմյան վերջին խալիֆան՝ Էլ-Ադիդը, Եգիպտոսում վերջ գտավ արդեն Ֆաթիմյան հարստությունը, որ երկու հարյուր տարի գրավել էր եգիպտական գահը: Էլ-Ադիդի մահից հետո վեզիր Սալահեդդինն ինքն իրեն հռչակեց Եգիպտոսի սուլթան և նրանով սկսվեց Էյուբյան հարստությունը:

Ֆաթիմյան շրջանի երկրորդ հարյուրամյակում Եգիպտոսի հայկական գաղթօջախի, հայազգի բնակչության և հայ գինվորների թիվը գլխավոր-

---

155 **Գ. Մքսրևեան,** Անանաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 96—8:

156 **Stanley Lane-Pool**, A History of Egypt in the Middle Ages, Volume VI, London, 1936, p. 191.

պես աճեց Բեդր Էլ-Ջեմալի, Էլ-Աֆդալ Շահինշահ և Վահրամ Պահլավունի վեզիրների նախարարապետության ժամանակաշրջանում: Այս հարյուրամյակում ծագումով հայազգի վեզիրների երկրին մատուցած մեծագույն ծառայությունները, քաղաքական, ռազմական և տնտեսական գետնի վրա, ինչպես նաև եգիպտահայ գաղթավայրի որոշ դասակարգերի (առևտրականներ, արհեստավորներ, արվեստագետներ և այլն) երկրին մատուցած մեծ նպաստը ներքին և արտաքին առևտրի աճման, արհեստների և արվեստների զարգացման, և վերջապես մի քանի հայազգի մահմեդական և քրիստոնյա հայազգի պետական պաշտոնյաների ծառայությունն երկրի կառավարման զանազան և բազմաթիվ օղակներում, այս բոլորն իրար վրա գումարելով, իրավունք է տվել ֆրանսիացի հմուտ պատմաբան Գաստոն Վիետին, որ մեծագույն մասնագետներից մեկն է Եգիպտոսի միջնադարյան շրջանին, ֆաթիմյան այդ ժամանակահատվածը կոչելու «Հայկական շրջան» (la période arménienne des Fatimides) [157]: Եվ իրոք Եգիպտոսի պատմության 1074—1162 թթ. մահմեդական և քրիստոնյա հայերը, որպես վեզիր, թե պետական այլ երկրորդական պաշտոնյա, որպես առևտրական թե այլ մասնագիտության ծառայող անձնավորություն, հսկայական գործ կատարեցին երկրի կառավարման, պաշտպանության, շինարարության և այլ բազմաթիվ ասպարեզներում: Եգիպտոսի հայերն իրենց մեծագույն նպաստը բերեցին երկրի բարգավաճման և ծաղկման համար, ինչպես գրում է Ալպոյաճյանը[158]:

Այս բոլորից հետո թող չստեղծվի այն կարծիքը, որ ծագումով հայազգի վերոհիշյալ վեզիրներն երկրի երախտավորներ և առաջադեմ գործիչներ հանդիսացան: Անշուշտ որ նրանց ժամանակաշրջանում ևս, միջնադարյան ֆեոդալիզմի այդ հեռավոր շրջանում, արված կերպով գոյություն ունեին դասակարգային պայքարներն ու հակադիր թշնամական դասակարգերը, և այդ վեզիրները, բոլոր մյուսների նման հավասարապես, հանդիսանում էին իշխող դասակարգի ներկայացուցիչներն և գործիչները, ընդդեմ շահագործվող դասակարգի:

Ֆաթիմյան Եգիպտոսի ծագումով հայազգի այս վեզիրներից բացի երկրում եղել են նաև ոչ այնքան անվանի հայազգի անձնավորություններ, որոնք երկրորդական դեմքեր լինելով հանդերձ, հանդիսացել են իշխող դասակարգի ներկայացուցիչներն և որոնց մասին Մաքրիզին և այլ պատմիչներ հիշել են իրենց գրքերում: Հնարավոր չլինելով խոսել բոլորի մասին, համառոտ կերպով կանգ ենք առնում դրանցից մի քանիսի վրա միայն, ցույց տալու համար, որ Ֆաթիմյան շրջանի եգիպտահայ գաղթօջախում եղել են նաև մարդիկ, որոնք պետական զանազան պաշտոններ են ունեցել երկրորդական գծի վրա:

Այդպիսի անձնավորություններից մեկն է հանդիսացել Նասրեդդուլա Էֆթիքինը, որ Բեդր Էլ-Ջեմալիի ճորտը լինելուց հետո, Աֆդալի վեզիրության օրով, հասավ մինչև Աղեքսանդրիայի կառավարիչի պատասխանատու պաշտոնին, սակայն իր բարերարի որդու նկատմամբ ապերախտ լինելու հետևանքով, ձերբակալվեց Աֆդալի կողմից և մահապատժի ենթարկվեց[159]:

Աբու Մանսուր Գուստան եղել է Բեդր Էլ-Ջեմալիի երրորդ որդու՝ Մուզաֆֆարի ծառայողներից մեկը: Սա ևս հետագայում դարձել է Աղեքսան-

---

[157] Precis de l'Histoire d'Egypte, 1932, Le Caire, Volume II, p. 216, par Gaston Wiet.

[158] **Ա. Ալպոյաճեան,** Արաբական Միացեալ հանրապետութիւն ..., էջ 34:

[159] **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 90:

դրիայի կառավարիչ և Կահիրեի մոտերը գտնվող Մոքաթթամ լեռան վրա իր անունով կառուցել է տվել մի մզկիթ: Հարիսայից նա թունավորվել, մահացել և թաղվել է իր կառուցել տված մզկիթի դռան առջև[160]:

Շիհաբեդդաուլա Դուքրին նույն Մուզաֆֆարի հայազգի ծառայողներից էր: Սկզբում քրիստոնյա էր, հետագայում իսլամանալով դարձավ մոլեռանդ մի իսմաիլական և աշանակվեց համազգեստների պահեստների վերակացու: Շինել տված է մի բաղնիք և մահացել Հիջրայի 533 (1138—9) թվականին[161]:

Ինչպես նշվեց վերևում, վեզիր Վահրամ Պահլավունու եղբայրն էր Վասակը: Այս վերջինս արաբների կողմից կոչվում է Նասիք և երբեմն էլ Բասաք: Նա չէր իսլամացել, մնացել էր քրիստոնյա: Սուֆյանը գրում է, որ նա եղել է Վերին Եգիպտոսի Լուքսոր քաղաքի կառավարիչը[162], իսկ Մըսրլյանը Մաքրիզիից առնելով գրում է, որ Վասակն եղել է Եգիպտոսի մեծագույն նահանգներից մեկի՝ Գուսի կառավարիչը: Ըստ Մաքրիզիի, Վասակն անարդարություն արած լինելուն մահմեդականներին, սպանվեց 1137 թ. և նետվեց աղբանոցը[163]:

Վեզիր Վահրամի փեսան էր Գայմազը, որին տրված էր Թաջեդդաուլա տիտղոսը: Սա արաբերենում նշանակում է «Պետության թագ», որից Մըսրլյանը շատ իրավամբ եզրակացնում է, որ նա ժամանակին ունեցել է պետական կարևոր մի պաշտոն: Մաքրիզին գրում է, որ երբ հայազգի Սալիհ Թալայ Իբն Ռուզզիքը մտել է Կահիրե 1154 թ., Գայմազն սպանվել է այդ նույն թվականին[164]:

Ծանոթություն

Ա. Հայկական 6 խաչքարերի նկարները վերցված են Արտաշես Հ. Գալստյանի գրքից, ՆԻՒԹԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, հատոր Բ, Վենետիկ—Ս. Ղազար, 1986, էջ 6—8:

Բ. Վերին Եգիպտոսում գտնվող Սպիտակ վանքի նկարն առնված է Bat ye or-ի գրքից, les chretiens d'orient entre jihad et dhimmitude. VIIe-XXe siècle. Préface de Jacques Ellul, Paris, 1991, page 117.

Գ. Նույն Սպիտակ վանքի ճակատամասի և դռան լուսանկարը վերցրած է COPTIC EGYPT, Cairo, Egypt, 1986, գրքից, էջ 103:

Դ. Նույն վանքում ցարդ գտնվող երեք որմնանկարներն ու արձանագրությունները վերցված են Անժել Գափոյան-Գույումճյանի գրքից, L'EGYPTE VUE PAR DES ARMENIENS, Paris, 1988, planches I—III. Այս գեղեցիկ և հատակ լուսանկարները քաշված են Basile Psiroukis-ի ձեռամբ:

ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

---

160 Նույն տեղում, էջ 90—100: Տեսնել նաև «La Bourse Égyptienne» օրաթերթ, Կահիրե, Շաբաթ 18 Հունվար 1947: Այստեղ նշված է, որ մզկիթը կառուցվել է 1141 թ. հայազգի Աբու Մանսուրի կողմից: 1538 թ. դա վերանորոգվել է Կահիրեի կառավարիչ Սոլիման փաշա Էլ-Խադեմի կողմից: Մզկիթն այսօր կանգուն է գտնվում լավ վիճակում, որտեղ պաշտամունք է կատարվում: Այն կոչվում է Սարիա Էլ-Գաբալի մզկիթ, իսկ երբեմն էլ Սոլիման փաշայի մզկիթ. ի պատիվ այն վերանորոգողին:

161 Նույն տեղում, էջ 100—101: Տեսնել նաև **Յ. Սուֆեան,** «Եգիպտոսի հայ մեմլուքներն ...», էջ 53—54:

162 **Յ. Սուֆեան,** «Եգիպտոսի հայ մամլուքներն ...», էջ 49—50:

163 **Գ. Մըսրլեան,** Անկանաւոր հայեր Եգիպտոսի մէջ .... էջ 101—2:

164 Նույն տեղում, էջ 102:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գաղթականների անհամար տառապանքները ափոփելու և բազմաբնույթ օգնություն կազմակերպելու նպատակով, պատերազմի տարիներին ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, իսկ որոշ բարեգործական հիմնարկներ էլ վերակազմեցին իրենց գործունեությունը: «Այժմ էնտեղ, Տաճկահայաստան կոչված դժոխքում գոյություն ունի երեք բանակ,— գրում էր Հ. Թումանյանը: Առաջին բանակը պատերազմող բանակն է: Երկրորդ բանակը անտեր կանանց ու երեխաների, զանազան տեսակի հիվանդների, քաղցածների, մերկերի ու փախստականների բանակն է, որ և ամենամեծ բանակն է: Երրորդ՝ գործիչների և օգնողների բանակն է, որ ամենափոքրն է ու ամենաթույլը»[1]: Գաղթականներին օգնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես պատերազմից վնասվածներին օգնող Հայկական Կենտրոնական Կոմիտեն, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Մոսկվայի Հայկական կոմիտեն, Հայ նպաստամատույց («վերաշինություն» կոմիտեի հետ միասին) և «Մեղու» ընկերությունները, Հայ տիկնանց և Հայ ուսուցչական կոմիտեները, Հայրենակցական միությունների միությունը, Թիֆլիսի պարսկահայերի հանձնաժողովը, Երևանի, Էջմիածնի, Ջուղայի, Ալեքսանդրապոլի, Կարսի և այլ վայրերի Եղբայրական Օգնության կոմիտեները, Պետրոգրադի ազատ տնտեսական և Բաքվի Մարդասիրական ու Կուլտուրական ընկերություններին առընթեր կազմակերպված փախստականներին օգնող մարմինները, Մոսկվայի, Պետրոգրադի, Նոր Նախիջևանի համանման մարմինները Հայ գյուղատնտեսական ընկերությունը և ուրիշներ: Անդրադառնանք դրանցից մի քանիսի գործունեությանը:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունն (ԿՀԲԸ) իբրև հասարակական հիմնարկություն, 1914 թ. օգոստոսի 8-ին դիմեց Կովկասի փոխարքային և թույլտվություն խնդրեց հավաքելու համար կամավոր ներքներ՝ ճօգուտ պահեստի զինվորների ընտանիքների և վիրավորների: Ստանալով համապատասխան թույլտվություն Բարեգործական ընկերության խորհուրդն

---

[1] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1959, էջ 213;

օգոստոսի 11-ի շրջաբերականով դիմեց իր 72 մասնաճյուղերին՝ գործելու համար այդ ուղղությամբ[2]:

Պատերազմից վնասվածների օգնության գործն ավելի կայուն հիմքերի վրա դնելու, ինչպես նաև, այդ բնագավառում հայ ժողովրդի մասնակցությունն ազգովին ապահովելու նպատակով ԿՀԲԸ նախաձեռնությամբ 1914 թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ընկերության բոլոր մասնաճյուղերի և հայ կրթական-կուլտուրական հիմնարկների (Բաքվի Հայկական կուլտուրական միության և Հայկական մարդասիրական ընկերության, Հայկական գյուղատնտեսական ընկերության, միջնակարգ դպրոցների, հայկական հոգևոր սեմինարիայի, Անանյան և Գայանյան դպրոցների, «Մշակ»-ի, «Հորիզոն»-ի, Լույս ընկերության, Հայուհիների բարեգործական ընկերության, Դրամատիկական ընկերության) ներկայացուցիչների հավաքում[3], որի ժամանակ ընտրվեց Հայկական կենտրոնական կոմիտե (ՀԿԿ)՝ բաղկացած 24 անդամներից (12՝ Թիֆլիսից և 12-ը՝ Բաքվից)[4]: Կենտրոնական կոմիտեի պատվավոր նախագահ ընտրվեց Մեսրոպ եպիսկոպոսը, իսկ նախագահ՝ Սամսոն Հարությունյանը[5]: Ի դեպ, Հայկական կենտրոնական կոմիտեն, ի թիվս մյուս ազգությունների հատուկ հիմնարկությունների, ճանաչված էր 1915 թ. օգոստոսի 30-ի գաղթականական օրենքով և իր ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի մինիստրության առանձին խորհրդակցությունում՝ հանձինս Պետական Դումայի անդամ Մ. Ածեմյանի: Քանի որ ՀԿԿ՝ որպես համապատասխան մարմին, ստեղծվել էր ԿՀԲԸ բաժանմունքների գործունեությունը շրջաններում կարգավորելու համար, ապա որոշվեց օգտվել շրջաններում գործող բաժանմունքների ծառայություններից: Այդ նպատակով տեղի ունեցավ ԿՀԲԸ և ՀԿԿ միացում՝ մեկ միասնական կազմակերպության կազմի մեջ: 1917 թ. հունվարին ԿՀԲԸ և ՀԿԿ-ի բոլոր հիմնարկությունների պաշտոնյաների ընդհանուր թիվը հասնում էր 767-ի, որից 487-ը արևմտահայեր էին[6]:

Չնայած ՀԿԿ և ԿՀԲԸ իրենց համատեղ գործունեության նախնական շրջանում ծրագրել էին կազմակերպել վիրավոր և պահեստի զինվորների ընտանիքների օգնության գործը, սակայն, երբ Կովկասյան ռազմաճակատում սկսվեցին ռազմական գործողությունները և առաջ եկավ գաղթականության, ԿՀԲԸ իր ամբողջ ուժն ու եռանդը նվիրեց փախստականների օգնության գործին:

1914 թ. նոյեմբերի 9-ին ՀԿԿ հերթական նիստում առաջին անգամ հարց դրվեց փախստականներին օգնելու վերաբերյալ[7]: Միաժամանակ հաշվի առնելով գաղթականության մեծ հոսանքը, ՀԿԿ և Բարեգործական ընկերության կոմիտեն և Խորհուրդը հեռագրերով դիմեց իրենց բոլոր բաժանմունքներին և Ռուսաստանի խոշոր կենտրոնների՝ Պետրոգրադի, Մոսկվայի, Նոր Նախիջևանի, Օդեսայի, Եկատերինոդարի, Արմավիրի և այլ վայրերի հայկական գաղութներին, ճշտելով, որ «Հայ փախստականների հարցը ազգային

---

[2] «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 17, № 4:

[3] Հայաստանի Հանրապետության Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ (ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 28 (անգլերեն լեզվով), նաև «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 17, № 4, նաև «Кавказское Слово, 16 сентября, 1914 г.

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 22, նաև Центральный Государственный Истори ческий Архив Республики Грузии (ЦГИА РГр), ф. 520, оп. 1, д. 204, л. 6.

[5] Նույն տեղում, թ. 58:

[6] «Համբավաբեր», 1917 թ. ապրիլի 23, № 15:

[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 22:

մեծ հարց է դառնում...» և «... ի նկատի ունենալով գործի լրջությունը... կազմակերպել լայն օգնություն և Կենտրոնական Կոմիտեին ուղարկել թեկուզ մեկ ներկայացուցիչ»[8]: «... Հարկավոր է շուտափույթ օգնություն: Ներշնչեք ամենքին փրկել ժողովրդին կործանումից: Հավաքեցեք ողջ հնամայնքին և անմիջապես ձեռնարկեցեք հանգանակություն՝ դրամով, շորով...»[9]: ՀԿԿ և ԿՀԲԸ ժողովրդին ուղղված մեկ այլ դիմումում նշվում էր. «... լարեցեք ձեր բոլոր ուժերը այս պատմական րոպեում, օգնության հասեք մեր տառնկահայ և պարսկահայ եղբայրներին, որոնք աղերսող հայացքով մեզ են նայում ու մեզանից են սպասում թեթևացումն իրենց թշվառ վիճակի»[10]:

ԿՀԲԸ և ՀԿԿ հեռագրերով դիմեցին նաև Մոսկվայի, Պետրոգրադի, Նոր Նախիջևանի և այլ քաղաքների մեծահարուստ հայերին, հայկական բանկային և հասարակական կազմակերպություններին՝ խնդրելով օժանդակել գաղթականների օգնության գործին[11]:

Կենտրոնական կոմիտեն և Բարեգործական ընկերությունը հանդես եկան օգնություն կազմակերպելու հետևյալ ձևերով. Բարեգործական ընկերության բաժանմունքների և արտասահման լիազորների միջոցով կատարվեց գաղթականների կարիքների չափի ուսումնասիրում և տեղում օգնության կազմակերպում: Սարիղամիշի, Բասենի, Ջուլֆայի, Մակուի, Կարսի, Իգդիրի, Արդվինի, Օլթիի, Արդահանուշի, Վանի, Մանազկերտի և Բոյնալուի գավառներ գործուղվեցին լիազորներ՝ Ջ. Զամբազյանը, Ա. Շարաֆյանը, Գ. Զաքոնը և ուրիշներ[12]: Գաղթականների բժշկական կարիքները բավարարելու համար կազմակերպվեցին բժշկական խմբեր՝ Ա. Օհանջանյանի, Հ. Սաֆարյանի, Ս. Խոջաևայի, Ավթանդիլովայի, Վ. Օվանեսյանի, Ա. Քոչարյանցի, Գ. Մանդինյանի և Ա. Մելիք-Վարդանյանցի գլխավորությամբ: Կոմիտեի նախաձեռնությամբ հիվանդանոցներ բացվեցին՝ Ալեքսանդրապոլում, Կարսում, Կաղզվանում, Ախալքալակում, Նախիջևանում, Ալաշկերտի Ղարաքիլիսայում, Վանում, Մանազկերտում, Մազրայում և Պատնոսում[13]: 1916 թ. մայիսից Կովկասյան ճակատի գաղթականների պարենային մատակարարման գործը հանձնարարվեց ԿՀԲԸ, որը որպես ֆինանսական օգնություն պետական գանձարանից ստացավ 1400000 ռ.[14]: Գաղթականության պարենային խնդիրները կարգավորելու նպատակով կոմիտեն սննդատու կետեր հիմնեց՝ Արդահանի և Արդանուշի շրջաններում, Մանազկերտում, Մազրայում, Պատնոսում, Իգդիրում և Մարգարայում, որտեղ տասնյակ հազարավոր փախստականների տրվում էր հաց, թեյ, և շատ անգամ տաք կերակուր[15]: Մինչև 1917 թ. հունվարը այդ սննդատու կայաններում պարենային օգնություն ստացան շուրջ 54322 գաղթականներ[16]:

---

[8] «Հորիզոն», 1915 թ. հունվարի 4, № 3:

[9] «Մշակ», 1915 թ. հունվարի 4, № 2:

[10] «Հորիզոն», 1915 թ. հունիսի 26, № 141:

[11] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 23, նաև գ. 125, թ. 17, նաև «Մշակ», 1915 թ. հունվարի 1. № 1, նաև ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 204, л. 23.

[12] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 23. նաև ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 204, л. 7.

[13] «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 17, № 4:

[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ 28, ց. 1. գ. 234. թ 1. д. 680, л. 15.

[15] Центральный Государственный Военно-Исторический Архив Российской Федерации (ЦГВИА РФ), ф. 13273, оп. 1, д. 156, л. 16.

[16] «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 17, № 4, նաև 1917 թ. հունվարի 1, № 1;

ԿՀԲԸ խորհրդի 1916 թ. հոկտեմբերի նիստում պետական միջոցներով պահվող փախստականների պարենավորման բաժանմունքի կառավարիչ Ա. Մինասյանի զեկուցումից իրազեկ էր դարձվում, որ պետությունից՝ 900000 ռ. օգնություն ստանալուց հետո, բաժանմունքն անմիջապես ձեռնամուխ է լինում մթերանոցներ բացելու գործին[17]: Մինչև հոկտեմբերի 15-ը բաժանմունքի կողմից բացվում են մոտ 30 մթերանոցներ, այդ թվում՝ Երևանի նահանգում՝ 10, Գանձակի նահանգում՝ 6, Կարսի շրջանում՝ 3 և Թուրքիայից գրավված վայրերում՝ 6 մթերանոցներ և այլն: Բացի դրանցից, հետագայում նոր մթերանոցներ են բացվում (ընդամենը՝ 40) նաև՝ Տիկոռում, Աշտարակում, Արդահանում և Կուրդուկուլիսում, որոնք ընդհանուր առմամբ սպասարկում էին՝ 220206 գաղթականների[18]: Իր գործունեության սկզբից մինչև հոկտեմբերի 15-ը բաժանմուքին հաջողվում է ձեռք բերել 129 վագոն ալյուր, որից՝ 79-ը ստացվում է փախստականների գործի գլխավոր լիազորի, իսկ 8-ը՝ նահանգապետի միջոցով: Մնացածը բաժանմունքը ձեռք է բերում Հյուսիսային Կովկասի տեղական ֆիրմաներից: Բացի դրանից բաժանմունքը գնում է և իր տնօրինության տակ գտնվող պահեստներին է բաժանում նաև՝ 14 վագոն շաքար, 36000 ֆ. թեյ, 11382 փ. 38 ֆ. սապոն, 200 արկղ լուցկի, 8 վագոն աղ, 42 վագոն ալյուր, 12 վագոն գարի, Բաքվից՝ 10 վագոն շաքարավազ և 3 վագոն նավթ: Մթերանոցների կառավարիչների տեղեկություններից երևում է, որ այդ ժամանակամիջոցում պահեստների ծառայություններից օգտվել են շուրջ 212000 փախստականներ[19]:

Կազմակերպվում է նաև օգնություն հագուստեղենով և սպիտակեղենով: Գաղթականներին ցրտից պաշտպանելու համար, կոմիտեի պատվերով և Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեի գումարներով (1915 թ. ուղարկվել է 200000 ռ.), պատրաստվում են 40 վագոն անկողին, (12752 զույգ) հագուստեղեն, (45715 զույգ) տրեխներ և վառարաններ, որոնք ուղարկվում են Կարս, Սարիղամիշ, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Իգդիր, Մանազկերտ, Վան, Երևան, Նախիջևան, Նոր-Բայազետ, Ելենովկա, Ներքին Ախտա, Դիլիջան, Ղարաքիլիսա, Մակու, Քարվանսարա, Բորչալուի և Գանձակի շրջաններ[20]: 1915 թ. օգոստոսին փախստականների կենցաղային կարիքների բավարարման համար Նոր Բայազետ է ուղարկվում 2000 ռ., Կաղզվան՝ 500 ռ. և 50 վերմակներ, Ալեքսանդրապոլ՝ 50, Կարս՝ 30 և Բորչալու 120 վերմակներ[21]: 1915 թ. հոկտեմբերի 25-ին ՀԿԿ և ԿՀԲԸ-ը՝ հօգուտ հայ գաղթականների, կազմակերպեցին միօրյա հանգանակություն, որի ժամանակ հավաքվեց մեծ քանակությամբ հագուստեղեն, անկողիններ, տաք շորեր և անհրաժեշտ այլ պարագաներ[22]:

Գաղթականներին ցույց էր տրվում նաև աշխատանքային օգնություն՝ աշխատանքային բյուրոներ և արհեստանոցներ բացելով Կարսում, Թիֆլիսում և այլ քաղաքներում[23]:

---

17 ЦГВИА РФ, ф. 13273, оп 1, д. 156, л. 16—17.

18 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 581, թ. 2—3, նաև գ. 680, թ. 15:

19 Նույն տեղում, գ. 234, թ. 1, նաև «Հորիզոն», 1916 թ. մայիսի 22, № 112, նաև մայիսի 28, № 117,, նաև հուլիսի 20, № 159, նաև նոյեմբերի 15, № 256, նաև «Արև», 1916 թ. նոյեմբերի 18, 258, նաև «Кавказское слово», 1916 г., 16 ноября, № 254.

20 ЦГИА РГр., ф. 520, оп. 1, д. 160, л. 70, նաև «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 17, № 4:

21 «Փայլակ». 1915 թ. ապրիլի 9, № 9:

22 «Հայրենիք», 1915 թ. հոկտեմբերի 28, № 12:

23 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 23, նաև գ. 125, թ. 17:

Քայքայված տնտեսության վերականգնման համան հրահանգիչների գլխավորությամբ Ալաշկերտի հովիտ և Բասենի շրջան ուղարկվեցին գյուղատնտեսական գործիքներ, 14000 ռ. փող և սերմացու[24]: Կարսի մարզային կոմիտեի որոշման համաձայն, ՀԿԿ և ԿՀԲԸ լիազորները օգնեցին վերականգնելու համար Առղանլուխի, Բարդուսի և Խորասանի շրջանների քայքայված տնտեսությունները[25]:

ՀԿԿ և ԿՀԲԸ գործունեության ամենաարդյունավետ ոլորտներից մեկը պետք է համարել որբանոցների բացումը, որոնց կարիքը անչափ մեծ էր այդ ժամանակաշրջանում: 1915 թ. հունվարի 9-ին Ս. Հարությունյանի նախագահությամբ կայացավ ԿՀԲԸ և ՀԿԿ խորհրդի խառը նիստը, որի ժամանակ պարզվեց, որ Երևանի նահանգում, Կարսի շրջանում և Ջուլֆայում գտնվել էին մեծ քանակությամբ որբեր, որոնց թիվը անցնում էր հարյուրից: Որոշվեց որբերի մի մասին տեղավորել Թուրքիայի սահմանամերձ շրջաններում, իսկ բոլորովին որբ մնացածներին կոմիտեն վերցրեց իր հոգածության ներքո[26]:

ՀԿԿ և ԿՀԲԸ նախաձեռնությամբ 1915 թ. սեպտեմբերի 1-ից որբանոցներ և դպրոցներ բացվեցին՝ Թիֆլիսում. Ղարաքիլիսայում, Դիլիջանում և այլ վայրերում, որոնք պահվում էին Ներքին գործերի մինիստրությանը կից գործող Հատուկ խորհրդակցության գումարներով[27]:

Միևնույն ժամանակ, գաղթականական որբանոցների պահպանման համար, 1916 թ. հոկտեմբերի 10-ին Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեի կողմից բաց թողնվեց 8000 ռ.[28]: Գաղթականական չկտրվող հոսանքի հետ միասին աճում էր նաև որբերի թվաքանակը: Եթե 1916 թ. հունվարին Հայկական կենտրոնական կոմիտեն Անդրկովկասի տարբեր քաղաքներում պահում էր շուրջ 21 որբանոցներ, որտեղ ապաստանել էին՝ 2247 որբեր[29], 1916 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կային 43 որբանոցներ՝ 3440 որբերով[30], ապա 1917 թ. հունիսի 15-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից նույն Հայկական կենտրոնական կոմիտեի որբանոցներում կենտրոնացել էին 4415 որբեր, այդ թվում՝ Դիլիջանի 15 որբանոցներում՝ 1026, Ալեքսանդրապոլի գավառի 26 որբանոցներում՝ 1973, Թիֆլիսի 10 որբանոցներում՝ 735 և Անդրկովկասի 50 այլ վայրերում՝ 681 որբեր[31]:

ԿՀԲԸ-ը և ՀԿԿ զբաղվում էին նաև փախստական երեխաների կրթության հարցերով՝ բացելով մեծ քանակությամբ դպրոցներ և արհեստանոցներ: Գաղթականական դպրոցները հետապնդում էին երկու նպատակ՝ նախ՝ փախստական երեխաները ստանում էին կրթություն և բ) արևմտահայ ուսուցիչները տեղավորվում էին աշխատանքի: 1916 թ. հունվարին ԿՀԲԸ և ՀԿԿ տնօրինության տակ դպրոցներ կային բացված Կովկասի 32 վայրերում, ուր դասավանդում էին 66 ուսուցիչներ[32]: Հետագայում դպրոցների և ուսուցիչ-

---

[24] Նույն տեղում, նաև «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 24, № 5:
[25] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 23, նաև գ. 125, թ. 17:
[26] «Հորիզոն», 1915 թ. հունվարի 13. № 8:
[27] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128. թ. 23—24:
[28] Նույն տեղում, գ. 125, թ. 17:
[29] Նույն տեղում, գ. 423, թ. 29, (անգլերեն լեզվով), նաև «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 24, № 5:
[30] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 87, л. 253.
[31] ՀՀ. ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 175. թ. 37:
[32] «Համբավաբեր», 1916 թ. հունվարի 24, № 5:

ների քանակն աճեց: Այսպես, եթե 1916 թ. հունիսի 10-ի դրությամբ դպրոցներ կային բացված Կովկասի 84 վայրերում՝ 3740 աշակերտներով[33], իսկ 1917 թ. հունվարին գործում էին 135 դպրոցներ, ուր սովորում էին՝ 10478 երկսեռ աշակերտներ և դասավանդում էին 308 ուսուցիչներ[34], ապա 1917 թ. ապրիլի 1-ին իրենց գրանցումն էին ստացել արդեն 147 դպրոցներ իրենց 230 բաժանմունքներով, ուր ուսուցանում էին 11130 աշակերտներ և դասավանդում էին 255 ուսուցիչներ[35]: Փախստական երեխաների կրթական գործը հանձնված էր Հայ ուսուցչական կոմիտեին, որի ներկայացուցիչները մտնում էին Հայկական կենտրոնական կոմիտեի կազմի մեջ:

Բացի դպրոցներից գործում էին նաև ՀԿԿ անմիջական ղեկավարության տակ գտնվող 15 արհեստանոցներ, որտեղ գաղթական երեխաները մասնագիտանում էին տարբեր արհեստների մեջ: Այսպես, Դիլիջանում բացվել էին հյուսնության, կոշկակարության, կար ու ձևի, ատաղձագործության և գորգագործության, Ախալքալակում՝ հողաթափեր կարելու, Ալեքսանդրապոլում՝ հողաթափեր կարելու և ատաղձագործության, Թիֆլիսում՝ կազմարարական, ծրարներ պատրաստելու, հագուստեղենի և գուլպա գործելու արհեստանոցներ[36]:

Հաշվի առնելով փախստականների օգնության կազմակերպման գործում մտավորականության արժանվույն դերը, ՀԿԿ կազմակերպեց մտավորականների երեք խմբեր, որոնք կազմակերպչական գործունեություն ծավալեցին Իգդիրում, Էջմիածնում և Դիլիջանում[37]:

Եղբայրական Օգնության Կոմիտեի կենտրոնական մարմինը՝ Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովն էր, որը գտնվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորության ներքո և բաղկացած էր 14 անդամներից (որոնցից 4-ը ընտրված էին Էջմիածնից, 4-ը՝ Երևանից, 2-ը՝ Թիֆլիսից, 1-ը՝ Պետրոգրադից, 1-ը՝ Ալեքսանդրապոլից և 2-ը՝ արևմտահայերից)[38]: Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովն ուներ 3 գլխավոր մասնաճյուղեր՝ Էջմիածնում, Երևանում և Ալեքսանդրապոլում: Բացի դրանցից Եղբայրական Օգնության հանձնաժողովներ կային նաև Կարսում, Նոր Բայազետում, Ն. Ախտայում, Ելենովկայում, Իգդիրում, Քանաքեռում, Նախիջևանում, Ղամարլուում և Մեծ Ղարաքիլիսայում, որոնք ենթարկվում էին Երևանի մասնաճյուղին[39]:

Հաշվի առնելով գաղթականական աղետը Եղբայրական Օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը 1915 թ. հունվարի 9-ին հրապարակեց մի կոչ՝ ուղղված քրիստոնյա հայ ազգաբնակչությանը, որի մեջ ասված էր. «... Դու, հայ ժողովուրդ, որ ցավի, տանջանքի, վշտի մեծագույն բաժինն ես ճաշակել միշտ անցյալում, քո կարեկցությունը դեպի այս թշվառները պետք է ավելի շատ լինի. ուստի Վեհափառ Հայրապետի բարձր հովանավորու-

---

[33] ЦГВИА РФ, ф. 13273, оп. 1, д. 156, л. 16.

[34] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 130, թ. 28, նաև «Համբավաբեր», 1917 թ. հունվարի 1, № 1:

[35] «Համբավաբեր», 1917 թ. ապրիլի 23, № 15:

[36] Նույն տեղում, 1917 թ. հունվարի 1, № 1:

[37] «Հորիզոն», 1915 թ. օգոստոսի 9. № 178:

[38] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 239, ց. 1, գ. 21, թ. 75, նաև ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 4, նաև ֆ. 55, ց. 1, գ. 115, թ. 2:

[39] Նույն տեղում, նաև Public Record Office of England, FO 371/70371/2768, file (161096), p. 358.

թյան ներքո գործող Ս. Էջմիածնի հանձնախումբը դիմում է քեզ և հրավիրում ամեն կերպ աջակցել եղբայրական օգնության սուրբ գործին. թեթևացրեք մեր թշվառ եղբայրների և քույրերի ծանր վիճակը»[40]:

Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը 1914 թ. դեկտեմբերի 27-ից մինչև 1915թ . հունվարի 25-ը Էջմիածնի վանքի բակում և Վաղարշապատի հասարակական շինություններում ապաստան տվեց և կերակրեց մոտ 15 հազար փախստականների, որից հետո, հետզհետե, նրանց տեղավորեց շրջակայքի հայկական գյուղերում՝ ամեն օր բաժանելով 100—300 փութ հաց, տաք կերակուր, թեյ, հիվանդներին սուրճ, ինչպես նաև հագուստեղեն և վերմակներ: Միևնույն ժամանակ, Էջմիածնի շրջանում ապաստանած շուրջ 7000 փախստականներին կոմիտեն բաժանեց ալյուր, թեյ և շաքար: Բժշկական ծով կարիքները բավարարելու համար գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը Վաղարշապատում բացեց 20 մահճակալով հիվանդանոց և ամբուլատորիա[41], իսկ միհիտարյան կարգադրության համաձայն գերության մեջ գտնվող հայ բժիշկներն անցան գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի տրամադրության ներքո:

Փախստական գաղթականներին գյուղերում խնամելու, պարենավորման գործի կազմակերպումը կանոնավորելու, առողջապահական պայմանները բարելավելու և վիճակագրություն անցկացնելու նպատակով կաթողիկոսի հրամանով հունվարի 24-ին Վեհարանում կայացավ Էջմիածնի Եղբայրական Օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի նիստը՝ մասնակցությամբ Երևանի թեմական հանձնաժողովի ներկայացուցիչների[42]: Փախստականներին գյուղում խնամելու և կերակրելու, վիճակագրության, գաղթականներին հագուստ և անկողին բաժանելու, բժշկական օգնության, որբանոցների և այլ հարցերի շուրջ ընդունվեցին համապատասխան որոշումները[43]:

Հայ ժողովրդին ուղղված կաթողիկոսի մեկ այլ կոնդակում՝ արձակված մարտի 21-ին, նշվում էր, որ անհրաժեշտ էր նվիրաբերություններ կատարել և դրանք ուղարկել Էջմիածնի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովին՝ փախստականներին օգնելու և նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու համար[44]: Կոնդակում միաժամանակ նշվում էր, որ Կենտրոնական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար հայկական բոլոր հասարակական և բարեգործական ընկերությունները պետք է ուղարկեն իրենց համապատասխան ներկայացուցիչները:

Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի դրամական միջոցները կուտակվում էին տարբեր տեսակի նվիրատվություններից և հանգանակություններից: 1915 թ. հունվարի 1-ից մինչև օգոստոսի 31-ը կաթողիկոսի անունով ստացվել և գաղթականների համար ծախսվել էր 2658869 ռ. դրամ[45]:

Կոմիտեն գաղթականների համար Վանից—Իգդիր ճանապարհին, Սուրմալուի շրջակայքում, Մարգարայում, Էջմիածնի, Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Ալեքսանդրապոլի և Գանձակի շրջաններում բաժանում է դրամ, ալյուր, հաց

---

[40] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1260. թ. 13, նաև, ց. 3, գ. 75, թ. 1:
[41] «Հովիտ», 1915 թ. փետրվարի 22, № 7:
[42] «Արարատ», 1915 թ. փետրվար—մարտ, № Բ—Գ:
[43] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթ. № 238, գ. 259:
[44] «Հորիզոն», 1915 ապրիլի 4, № 93:
[45] «Աշխատանք», 1916 թ. հոկտեմբերի 8, № 46:

և տաք շորեր: Բացի դրանից, որբերի, հիվանդների և դպրոցական երկսեռ աշակերտության համար տարբեր շրջաններում բացվում են որբանոցներ, հիվանդանոցներ և դպրոցներ:

1914 թ. հոկտեմբերի 26-ին **Մոսկվայում** գումարած համայնքային իրենց ընդհանուր ժողովի ժամանակ մոսկվաբնակ հայերը ընտրեցին մի **կոմիտե,** որին հանձնարարվեց զբաղվելու ռուսական բանակի զինվորներին և պատերազմից տուժածներին օգնություն կազմակերպելու հարցերով[46]: Կոմիտեն մշակեց համապատասխան կանոնադրություն, որը հասարակական հարցերով զբաղվող մոսկովյան հատուկ քաղաքային ներկայացուցչության կողմից հաստատվեց 1914 թ. դեկտեմբերի 20-ին: Համաձայն այդ կանոնադրության կոմիտեն ձգտում էր. 1) Բոլոր օրինական և հասանելի հասարակական կազմակերպչական միջոցներով ձգտել Թուրքիայի դեմ պատերազմում ռուսական զենքի հաջողությանը և 2) օգնություն կազմակերպել Թուրքիայի դեմ պատերազմից տուժածներին:

Կոմիտեի գործունեությունն ընդգրկում էր ռուսական կայսրության տարածքը: Վերջինիս անդամներն էին վերոհիշյալ ժողովի կողմից ընտրված անձինք[47]: Կոմիտեի դրամական միջոցները համալրվում էին՝ անդամավճարներից, Մոսկվայի հայերի շրջանում կազմակերպված կամավոր ցուցակագրությամբ հավաքված և համերգներից, դասախոսություններից ու տարբեր այլ միջոցառումներից հանգանակված գումարներից, կոմիտեի հրատարակություններից ստացված եկամուտներից, ինչպես և Մոսկվայի հայկական համայնքի կազմի մեջ չմտնող անձանց կողմից կատարվող ճվիրատվություններից[48]:

Հայ գաղթականության օգնության գործին աշխատավորական լայն մասսաներին մասնակից դարձնելու համար Մոսկվայի հայկական կոմիտեն հանդես եկավ բազմաթիվ կոչերով (1914 թ. նոյեմբերի 22-ին, դեկտեմբերի 6-ին, 1915 թ. հունվարի 5-ին, մարտի 25-ին, ապրիլի 17-ին) և հայտարարություններով[49]: Հայոց Կաթողիկոսին ուղղված Մոսկվայի հայոց հանձնաժողովի 1915 թ. փետրվարի 5-ի դիմումում նշվում էր. «... մեր եղբայրների կյանքը պահպանելու համար կարող է գործադրվել նաև մեր փորձը, գիտությունը և աշխատանքը, ամենահարգոյաբար առաջարկում ենք Ձերդ սրբություն մեր ծառայությունը. թե՛ նրանց համար հարմարավոր կացարաններ շինելու և թե՛ ուրիշ տեխնիկական կարիքներ կատարելու համար»[50]:

Կայսրության ներքին շրջանների ռուսական Կարմիր խաչի ընկերության գլխավոր լիազորի 1915 թ. հուլիսի 10-ի № 7898 որոշման համաձայն Մոսկվայի Հայկական կոմիտեն մտավ ռուսական Կարմիր խաչի կազմի մեջ: Հանդես գալով բարեգործական մեծ առաքելությամբ կոմիտեի առաջին գործը եղավ գաղթականության համար հանգանակության կազմակերպումը և հավաքումը: Վերջինիս կողմից ընտրվեց ֆինանսական հատուկ մի հանձնա-

---

[46] «Армянский вестник», 1916 г., № 1.

[47] Հայաստանի Հանրապետության Գրականության և Արվեստի Պետական Արխիվ (ՀՀ ԳԱՊԱ), ֆ. Կ. Կուսիկյան, գ. 61:

[48] Центральный Государственный Исторический Архив г. Москвы (ЦГИА г. Москвы), ф. 46, оп. 4, д. 613, лл. 3—7.

[49] ՀՀ ԳԱՊԱ, ֆ. Կ. Կուսիկյան, գ. 61 և 527:

[50] Հայաստանի Հանրապետության Հեղափոխության թանգարանի արխիվ, արկղ 1906—16, փաստաթղթեր, ինվ. 19795:

ժողով, որը կազմելով Մոսկվայում բնակվող բոլոր հայերի ցուցակը, նրանց վրա դրեց համապատասխան գումար տրամադրելու պարտականություն՝ համաձայն վերջիններիս նյութական կարողության:

Ընդհանրապես օգնության գործը հաջողությամբ առաջ տանելու համար, կոմիտեն նպատակահարմար գտավ ստեղծելու օժանդակ մի շարք կազմակերպություններ (դատապաշտպանների, ինժեներների, առևտրաարդյունաբերողների, պետական և հասարակական հիմնարկներում աշխատողների)՝ ինքնուրույն գործելու իրենց իրավունքներով[51]:

Իր գործունեության սկզբնական շրջանում, կոմիտեն գաղթականներին առաքում էր դրամ, իրեր, դեղորայք և այլուր: Օգնություն իրականացվում էր հետևյալ կարգով: Հաշվի առնելով աշխատանքի լրիվ անկազմակերպ վիճակը տեղերում, կոմիտեն կանգնեց եռանդուն գործունեության ուղու վրա: Դեռևս 1915 թ. մարտին, երբ դեռ չէր ստեղծվել կովկասյան ուազմաճակատի փախստականների գլխավոր լիազորի պաշտոնը և քաղաքների միությունը դեռևս վարկ բաց չէր թողել գաղթականների բազմաբնույթ կարիքների բավարարման համար, Մոսկվայի Հայկական կոմիտեն՝ համաձայն բժիշկների Պիրագովյան ընկերության ցուցումների, գաղթականներին օգնելու նպատակով կազմակերպեց բժշկա-պարենային 2 ջոկատ[52]: Ջոկատների կազմակերպման ղեկավար սկզբունքների հիմքում ընկած էր այն պատկերացումը, որ սովից և հիվանդություններից տառապող գաղթականների օգնությունը կարող էր իր նպատակին ծառայել միայն այն ժամանակ, երբ բժշկական օգնության գործը անխախտելիորեն կապված լիներ պարենային օգնության գործի հետ: Այդ նպատակով ստեղծված բժշկա-պարենային առաջին ջոկատն իր գործունեությունը սկսեց 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին և հանգրվանելով Էջմիածնի գավառի Աշտարակ ու Օշական գյուղերում նպաստեց մոտ 7000 գաղթականների տարատեսակ պահանջմունքների բավարարմանը: Իսկ երկրորդ ջոկատը, որն իր գործունեության վայրեր էր ընտրել Ալեքսանդրապոլի գավառի Արթիկ և Ջաջուռ գյուղերը, բավարարեց մոտ 5000 գաղթականների տարբեր կարիքները: Երկու ջոկատներն էլ համապատասխան վայրերում ունեին հիվանդանոց և ամբուլատորիա: Նրանք գաղթականներին բաժանում էին կոշկեղեն, սպիտակեղեն, հագուստեղեն, տաք կերակուր, թեյ, շաքար, լուցկի, օճառ և անհրաժեշտ այլ իրեր[53]:

1915 թ. հուլիսի 29-ին, երկու ջոկատներն էլ տեղափոխվեցին Էջմիածին և Մարգարա՝ օգնելու համար Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթից մազապուրծ փախուածներին: Մինչ այդ կոմիտեն 20 հազար ռուբլի էր բաց թողել գաղթականների համար այլուր և 10 հազար ռուբլի՝ թեյ ու շաքար գնելու համար[54]: Գաղթի հետ կապված Էջմիածնի ջոկատը (125 հոգի) բացեց պարենային 8 կետեր (որտեղ օրական 20000 գաղթականների մատակարարվում էր անուն) և 2 ամբուլատորիա (որտեղ այցելուների թիվն օրական հասնում էր 500-ի): Բացի դրանից բացվեցին նաև 2 որբանոցներ՝ 200 որբերի համար և կազմակերպվեց հիվանդների ու երեխաների տեղափոխումը Օրգովից: Իսկ Մարգարայի ջոկատը օրական ըն-

---

[51] «Армянский вестник», 1916 г., № 1.
[52] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 250. ց. 1, գ. 1, թ. 49:
[53] «Русское слово», 1915 г., 29 июля, № 174.
[54] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 26, л. 138

դուռում էր 10—15 հազար գաղթականների[55]: Ջոկատների անձնուրաց գործունեությունը գերազանց տպավորություն թողեց: Այդ էր վկայում նաև Մոսկվայի հայկական կոմիտեին ուղղված Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի ողջույնի հեռագիրը[56]: Անհրաժեշտ է նշել, որ ջոկատների հաջողության իսկական գրավականը կախված էր ամբողջ աշխատանքի կոլեգիալության և միասնության սկզբունքից:

Այն բանից հետո, երբ գաղթականները տեղաբաշխվեցին Երևանի և Թիֆլիսի նահանգների տարբեր շրջաններում, իսկ վիճակը Էջմիածնում և Սուրմալուի գավառում փոքր ինչ թեթևացավ, ջոկատներից առաջինը տեղափոխվեցին Աշտարակ, իսկ երկրորդը՝ Կուրդուկուլի: Աշտարակի ջոկատի տրամադրության տակ, որի գլուխ կանգնած էր բժիշկ Ե. Պ. Հունանովը, գործում էր 30 մահճակալով հիվանդանոց, ամբուլատորիա, որն օրական ապասարկում էր 100 հոգու, ֆելդշերական կետեր՝ Եղվարդում և Ալիքուշակում, պարենավորման պահեստ, 3 սննդատու կետ, 5 որբանոց՝ 443 որբերով, և ճաշարան: Իսկ Կուրդուկուլիի ջոկատը բացել էր 50 մահճակալով հիվանդանոց, ամբուլատորիա, ալյուրի պահեստ, 4 որբանոց, գաղթական երեխաների համար ճաշարան և ֆելդշերական-բժշկական կետ՝ Սարդարապատում[57]:

Առանձնահատուկ գովասանքով պետք է նշել այն կարևոր իրողությունը, որ Մոսկվայի Հայկական կոմիտեն իր հոգածության տակ էր առել 3152 գաղթական որբերի դպրոցական գործի կազմակերպումը[58]: Կոմիտեի առաջին ջոկատի գործունեության շրջանում էին գտնվում 1482 գաղթական աշակերտուհիներ, որոնք տեղաբաշխված էին հետևյալ վայրերի գաղթականական դպրոցներում. Աշտարակի 2 դպրոցներում—762, Օշականում—245, Եղվարդում—160, Փարպիում—30, Բյուրականում—48, Կիզիլ Թեմուրում—40, Կարպիում—56, Օհանավանքում—15, Ջամրլուում—41, Կուզևաֆսրում—40 և Բաշաբաղում—45 աշակերտուհիներ: Իսկ երկրորդ ջոկատի գործունեության շրջանում էին գտնվում 625 աշակերտուհիներ, որոնցից Կուրդուկուլիի դպրոցում—90, Մեծ Շարիարում—76, Փոքր Շարիարում—16, Գեչերլուում—100, Մոլլա Բայազետում—67, Սարդարապատում—147, Կալագարիում—27, Ջաֆարաբադում—24 և Էվջելարում—78 աշակերտուհիներ: Բացի դրանից երկրորդ ջոկատի Մուսունի (250), Կորունի (75) և Դուտախի (300) դպրոցներում սովորում էին նաև 625 աշակերտուհիներ: Եվ վերջապես Էրզրումի շրջանի Ջիֆթլիկ, Օձնի, Ումուդ և Ջիթող վայրերի դպրոցներում սովորում էին համապատասխանաբար՝ 130, 120, 120 և 50 աշակերտուհիներ[59]:

1915 թ. օգոստոսի վերջերին Էջմիածնից լուրեր ստացվեցին գաղթականների թշվառ վիճակի մասին՝ կապված նրանց մեջ վարակիչ հիվանդությունների տարածման հետ: Համաճարակի դեմ պայքարելու համար սեպտեմբերի 1-ին Մոսկվայում բժիշկ Ա. Մ. Աթաբեկովի ղեկավարությամբ կազմակերպվեց 9 հոգուց բաղկացած հատուկ բժշկա-սանիտարական ջոկատ, որը ժամանելով Էջմիածին շուտով Մոսկվայի Հայկական կոմիտեի ներկա-

---

[55] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 26, л. 138, նաև «Беженец», 1915 г., 4 октября, № 1, նաև «Армяне и война», 1916 г., март, № 1.

[56] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 240, ց. 1, գ. 1, թ. 49:

[57] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 26, лл. 138—139, также, д. 87, лл. 165—166.

[58] Public Record Office of England, FO 371/70371/2768, p. 359.

[59] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 139, лл. 45—46.

յացուցիչ՝ Ս. Տարաևի և բժիշկ Օհանջանյանի խորհրդով տեղափոխվեց Արծափ, ուր հանգրվանած մոտ 5000 գաղթականներ կարիք էին զգում բժշկական շտապ օգնության[60]: Միաժամանակ հաշվի առնելով Մոսուլի շրջանի կարևորությունը՝ դեպի Վան և Ղարաքիլիսա գաղթականների հետադարձ ճանապարհին, կոմիտեն սեպտեմբերին Մոսուլում կազմակերպեց իր 3-րդ բժշկա-պարենային ջոկատը՝ բացելով այնտեղ 30 մահճակալով հիվանդանոց, ամբուլատորիա, որբանոց, պարենային խանութ և 3 թեյարան[61]:

1915 թ. հոկտեմբերի 20-ին Երևանի նահանգապետի նախագահությամբ և գեներալ Թամամշևի ներկայությամբ կայացած Երևանի Նահանգային կոմիտեի նիստում որոշվեց ամսական 25000 ռ. տրամադրել Մոսկվայի Հայկական կոմիտեին՝ վերջինս իր օգտակար գործունեությունը շարունակելու համար[62]: Իսկ 1916 թ. փետրվարին ներքին գործերի մինիստրությանը կից գործող Հատուկ խորհրդակցությունում Մոսկվայի Հայկական կոմիտեի գործունեությունն արժանացավ ջերմ համակրանքի:

1916 թ. գարնանը Էրզրումի, Մուշի, Խնուսի ազատագրումից հետո Մոսկվայի Հայկական կոմիտեն շարունակեց իր արդյունավետ գործունեությունը:

1914 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1915 թ. նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կոմիտեն ունեցել էր մուտք՝ 349425 ռ.[63], իսկ ծախսել էր մոտ 500000 ռ.[64]: Սա վկայում է այն մասին, թե ինչպիսի մեծ օգնություն էր ցույց տալիս գաղթականներին Մոսկվայի Հայկական կոմիտեն:

Գաղթականության օգնության գործին ջերմ աջակցություն էին ցույց տալիս նաև Մոսկվայի հայուհիները: Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները սկսվելուց հետո, 1914 թ. նոյեմբերի 1-ին Մոսկվայի Հայկական կոմիտեի կողմից հրավիրվեց Մոսկվայի հայուհիների ընդհանուր ժողով, որտեղ նրանց առաջարկվեց մասնակցել պատերազմից տուժածներին օգնություն հասցնելու գործին և դրանով թեթևացնել Մոսկվայի հայկական կոմիտեի գործունեությունը[65]: Մոսկվայի հայուհիները, քաջ գիտակցելով իրենց առջև կանգնած խնդրի լրջությունը և ոգևորված ջերմ ցանկությամբ, չէին կարող չարձագանքել իրենց բազմատանջ ժողովրդի փրկության գործին: Ընդհանուր ժողովի կողմից ընտրվեց 26 հոգուց բաղկացած **Կանանց կոմիտե,** որն ամենից առաջ ձեռնամուխ եղավ դրամական միջոցների հայթհայթմանը: Այդ նպատակով Կանանց կոմիտեն տեղական թերթերի և կոչերի միջոցով դիմեց բոլոր հայերին՝ հանգանակելու համար դրամ, ապրուստեղեն, հագուստեղեն և այլ անհրաժեշտ պարագաներ: Միևնույն ժամանակ որոշվեց կիրակի և տոնական օրերին հայկական եկեղեցիներում կազմակերպել հանգանակություն, մի կարևոր ձեռնարկում, որը շուտով տվեց իր ցանկալի արդյունքը[66]: Զանազան դրամական նվիրատվություններից ընդհանուր առմամբ հանգանակվեց 28673 ռ.[67], որով կոմիտեն շուտով գաղթականների համար ձեռք բերեց վեր-

---

[60] «Армянский вестник», 1916 г., № 1.

[61] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 26, л. 139.

[62] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 240. ց. 1, գ. 1, թ. 49:

[63] ЦГВИА РФ, ф. 13273, оп. 1, д. 156, л. 16, նաև «Армянский вестник», 1916 г., № 1.

[64] «Беженец», 1915 г., 4 октября, № 1.

[65] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 13, թ. 37:

[66] Նույն տեղում:

[67] Նույն տեղում:

մակներ, գուլպաներ, կոշկեղեն և տաք հագուստեղեն, որն էլ ժամանակին առաքվեց Կովկաս[68]:

Հաշվի առնելով նյութական օգնության անբավարարությունը, Կանանց կոմիտեն դեկտեմբերի 8-ի իր նիստում որոշեց Հայկական բարեգործական ընկերության Կարսի բաժանմունքի միջոցով գաղթականների համար փոխադրել՝ 3000 ռ., իսկ դեկտեմբերի 9-ի նիստում որոշվեց նույն գաղթականների համար՝ Բարեգործական ընկերության Երևանի բաժանմունքի միջոցով, ուղարկել 4000 ռ.[69]: Կանանց կոմիտեն մեծ օժանդակություն էր ցույց տալիս նաև Մոսկվա հասած հայ գաղթականներին՝ բավարարելով նրանց բազմաբնույթ կարիքները:

1915 թ. մարտի 24-ին կայացավ **Նպաստամատույց Ընկերության** վարչության նիստը, որը զբաղվեց այն հարցով. թե հայ փախստական-գաղթականների օգնության գործի որ ճյուղը պետք է իր վրա վերցնի ընկերությունը: Վարչությունը միաձայն որոշելով, որ իր անելիքը պետք է համակերպության մեջ գտնվի Էջմիածնի գաղթականական համագումարում ընդունված սկզբունքների հետ, իր խնամքի տակ վերցրեց Ալաշկերտի հովտից գաղթած հայ փախստականների գթությունը[70]:

1915 թ. գարնանը, երբ գաղթականները հայրենիք էին վերադառնում, Նպաստամատույց ընկերությունը փախստականներին մատակարարեց մեծ քանակությամբ երկրագործական գործիքներ և սույք՝ գարնանացանի աշխատանքները հաջողությամբ կատարելու համար: 2000—2500 ընտանիքների՝ արորով, փոցխով, գերանդիով, մանգաղով, թոկով, կացնով, քլունգով, բահով ապահովելու համար, ընկերության վարչությունը կազմեց մի նախահաշիվ, որի գումարը կազմում էր 25—30 հազար ռ.[71]:

Միևնույն ժամանակ, ընկերությունը գեներալ Թամամշևի պատվերով, 36000 զույգ հագուստեղեն և 200 հակ անկողին պատրաստեց գաղթականների համար[72]:

Նպաստամատույց ընկերության վարչությունը 1915 թ. ապրիլին 3000 ռ. հատկացրեց հայրենիք վերադարձող պարսկահայ փախստականներին՝ վերջիններիս քայքայված տնտեսությունները վերականգնելու նպատակով[73]:

Մեծ հոգատարություն էր ցուցաբերվում որբ գաղթականների նկատմամբ: 1915 թ. սեպտեմբերից մինչև 1917 թ. հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իր տրամադրության տակ գտնվող որբանոցների շուրջ 300 որբերի պահպանման համար կոմիտեն ծախսել էր 144410 ռ.[74]:

Մարդասիրական Ընկերությանը կից գործող **Հայ Կանանց Կոմիտեի** գլխավոր նպատակն էր օգնություն հասցնել վիրավոր ու հիվանդ զինվորներին և պատերազմից վնասվածներին: Սակայն, երբ սկսվեց 1915 թ. հուլիսյան մեծ գաղթը, կանանց կոմիտեն իր գործունեությունը կենտրոնացրեց գլխավորապես հայ գաղթականության բազմաթիվ կարիքների բավարարման վրա: Ամենագլխավոր ու հիմնական աշխատանքը եղավ գաղթական-

---

[68] Նույն տեղում, թ. 28:
[69] Նույն տեղում:
[70] «Փայլակ», 1915 թ. ապրիլի 2, № 7:
[71] «Փայլակ», 1915 թ. ապրիլի 12, № 10:
[72] «Մշակ», 1916 թ. փետրվարի 27, № 44:
[73] «Փայլակ». 1915 թ. ապրիլի 8, № 7:
[74] ЦГИА РГр, ф. 520, оп. 1, д. 138, лл. 18—19.

ների համար տաք շորերի պատրաստումը: Կանանց կոմիտեն Պետրոգրադի Հայկական կոմիտեից ստացավ և կատարեց 10600 կոռը զանազան շորերի պատվերներ[75]: Բացի դրանից, Կոմիտեն ռուսական քաղաքների Միությունից և Կովկասի գաղթականական գործերի գլխավոր լիազոր գեներալ Թամամշևից ընդունեց տաք շորերի խոշոր պատվեր, որն ավարտեց 1916 թ. հունվարին, պատրաստելով 64200 կոռը զանազան տեսակի տաք հագուստեղեն՝ 170000 ռ. արժողությամբ[76]: Պատրաստի հագուստեղենն ուղարկվեց Գանձակ, Իգդիր, Ջուլֆա, Էջմիածին և Երևան[77]:

1916 թ. մարտի 17-ին, Թիֆլիսի առաջնորդարանում՝ Մեսրոպ եպիսկոպոսի նախագահությամբ, տեղի ունեցավ հայ գաղթականական ընկերությունների և հասարակական հաստատությունների ներկայացուցիչների երկրորդ ժողովը (առաջինը տեղի էր ունեցել 1914 թ. վերջերին), որի ժամանակ որոշվեց կազմել Թիֆլիսի հայկական գաղթականական հինգ կազմակերպությունների, այն է՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության և նրան կից գտնվող Կենտրոնական կոմիտեի, Նպաստամատույց, Հայոց գյուղատնտեսական և Ձեռնագործական ընկերությունների և Հայաստանի Վերաշինության հանձնաժողովի ներկայացուցիչներից բաղկացած և համաձայնությամբ կապակցված համաձայնեցուցիչ մի մարմին, որի խնդիրը պետք է լիներ՝ ա) իրազեկ պահել յուրաքանչյուր ընկերության գործունեության մասին, բ) գաղթականության օգնության գործի անհրաժեշտ աշխատանքները բաժանել համաձայնության եկած հինգ ընկերությունների միջև, գ) անհրաժեշտության դեպքում համաձայնեցուցիչ մարմնին ներկայացնել որպես լիազոր ներկայացուցիչ կառավարության և հասարակության առջև, դ) գաղթականական հինգ կազմակերպությունների համար հոգալ նյութական միջոցներ թե՛ կառավարական նպաստներից և թե՛ նվիրատվություններից, ե) ստացված նյութական միջոցները ըստ կարեաց բաժանել ընկերությունների միջև և զ) համաձայնեցուցիչ մարմնի որոշումները պարտադիր համարել հինգ ընկերություններից յուրաքանչյուրի համար[78]:

Սակայն ինչպիսին էլ լիներ համաձայնեցուցիչ մարմնի կարգավիճակը և գործունեությունը, այն, ըստ էության, ի վիճակի չէր համախմբելու գաղթականության հարցով զբաղվող բոլոր կազմակերպությունների գործունեությունը, քանի որ վերջիններիս՝ անկախ իրենց մատուցած մեծածավալ ծառայություններից, յուրահատուկ էին նաև կազմակերպչական սկզբունքային թերություններ: Այսպես, 1) բացակայում էր կազմակերպությունների աշխատանքի համաձայնեցումը, 2) կազմակերպություններից յուրաքանչյուրի գործունեությունը տարանջատված չէր մյուսից՝ ո՛չ տարածքային և ո՛չ էլ առարկայական առումով: Բոլոր կազմակերպություններն անում էին այն, ինչ կարող էին և գործում էին ամեն տեղ, որտեղ կարող էին: Այնպես որ, որոշ շրջաններում նույնիսկ առաջ էր գալիս գաղթականական կազմակերպությունների մրցակցություն, իսկ մյուս շրջաններում, դրանց պակասի հետևանքով,

---

[75] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 250, թ. 2:
[76] «Արև», 1916 թ. նոյեմբերի 27, № 265:
[77] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 250, թ. 2:
[78] «Հորիզոն», 1916 թ. մարտի 8, № 53, նաև ապրիլի 19, № 84, նաև «Մշակ», 1916 թ. մարտի 22. № 64:

գաղթականները կարիք էին զգում անհրաժեշտ օգնության, 3) ինքնուրույն, անկախ վերահսկողության մարմնի բացակայումը, 4) կազմակերպությունների անձնակազմը համալրվում էր ոչ թե ընտրությունների կամ էլ տեղական հասարակության երաշխավորության հիման վրա, այլ կենտրոնի կողմից:

ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. թեկն., դոցենտ

„ЭЧМИАДЗИН"

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(ИЮНЬ—ИЮЛЬ 1994г.)

РЕДАКЦИОННАЯ

1. Сошествие Святого Духа (стр. 3—4).

ОФИЦИАЛЬНЫЕ

2. Сообщение (касательно возвращения из Парижа в первопрестольний Эчмиадзин 8 июня сего года Католикоса всех армян Вазгена I), 10 июня 1994 г. (стр. 5).

3. Сообщение (касательно благодарностей, объявленных ряду лиц Католикосом всех армян Вазгеном I за оказанное к Его Святейшеству честное и заботливое отношение в период пребывания в Париже с 24 мая до 8 июня), 14 июня 1994 г. (стр. 6).

4. Энциклика Католикоса всех армян Вазгена I по случаю 80-летию церковной деятельности пожизненного почетного председателя Армянского Благотворительного Всеобщего Союза Алека Манукяна, 28 января 1994 г., № 2023 (стр. 7—8).

5. Торжество закрытия учебного года в Духовной Академии св. Эчмиадзина. Помещено также благословительное слово попечителя Духовной Академии св. Эчмиадзина архиепископа Нерсеса Позапаляна, 26 мая 1994 г. (стр. 9—11).

6. **М. Вартанян**—Ритуал присуждения сана верховного архимандрита (стр. 12—14).

7. Хиротония во архимандрита, 23 июня 1994 г. (стр. 15).

8. Биография архимандрита Аракела Карамяна (стр. 16).

9. Биография архимандрита Тадеоса Зирекянца (стр. 17).

10. В армянской епархии Грузии (стр. 18—20).

11. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за июнь—июль месяцы (стр. 21—23).

РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНАЯ

12. **Архиепископ Нерсес Позапалян**—«Эчмиадзин—источник вдохновения и патриотизма» (проповедь, 5 июня 1994 г. (стр. 24—26).

13. **Архиепископ Воскан Галпакян**—«Преображение Господне» (проповедь), 10 июля 1994 г. (стр. 27—29).

ИЗ СВЕТЛЫХ СТРАНИЦ ПРОШЛОГО

14. **Диакон Вазген Галстян**—Епископ Хосров Анцеваци (исследование). Помещено также одно наставление, адресованное армянскому духовенству, древне-армянский (подлинник) с переводом на современный армянский язык (стр. 30—50).

ИЗ СВЯЩЕННОГО ПИСАНИЯ

15. Разделы из Священного Писания (пророчество Даниила)—(стр. 51–56).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКАЯ

16. **Овик Айрапетян**—Твебник Вагаршапатский (исследование)—(стр. 57—67).

17. **Балабек Мелян**—Ованнес Строитель (исследование)—(стр. 68—74).

18. **Манук Манукян**—Мелодии народных благовестий (исследование)—(стр. 75—83).

19. **Азат Бозоян**—Христианский Восток—исследовательское введение языков и библиографий (исследование)—(стр. 84—90).

20. **Генрик Харатян**—Мкртич и Александр Джагетяны—основатели церкви св. Вардананц (исследование)—(стр. 91—97).

21. **Нубар Тер-Микаэлян**—Армянская община Египта в X—XII вв. и армянские церкви (исследование)—(стр. 98—109).

22. **Аветис Амаяаки Арутюнян**—Деятельность армянских переселенческих комитетов в годы первой мировой войны (исследование)—(стр. 110—123).

„ETCHMIADZIN"

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN

(JUNE—JULY 1994)

EDITORIAL

1. Pentecost (pp. 3—4).

OFFICIAL

2. Communiqué (about the return of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, from Paris to Holy See of Etchmiadzin, 8-th June 1994), 10-th June 1994 (p. 5).

3. Communiqué (about the expressed thanks of His Holiness to some people who have given noble and careful concern to His Holiness when He was found in Paris from May 24 untill June 8-th 1994 during the days of His recovery), 14-th June 1994 (p. 6).

4. Encyclical of His Holiness to Mr. Alex Manookian, honorary president for life of AGBU, for the occasion of the 80-th anniversary of his ecclesiastic activity, 28-th January, 1994, No. 2023 (pp. 7—8).

5. Festivity at the end of the school year of the Theological Seminary. It is given also the address of blessing of the rector Archbishop Nerses Bozabalian, 26-th May 1994 (pp. 9—11).

6. **M. Vardanian**—Delivery of the degree of Supreme Doctor (pp. 12—14).

7. Delivery of the special doctoral authority's crosier, 23-rd June 1994 (p. 15).

8. Biography of Father Arakel Karamian (p. 16).

9. Biography of Father Thadeos Zirakian (p. 17).

10. In the Armenian diocese of Georgia (pp. 18—20).

11. Divine liturgy services and sermons in the Holy Cathedral and description of church festivities in the months of June—July 1994 (pp. 21—23).

RELIGIOUS-ECCLESIASTICAL

12. **Archbishop Nerses Bozabalian**—«Etchmiadzin» soarce of inspiration and patriotism» (sermon), 5-th June 1994 (pp. 24—26).

13. **Archbishop Vosskan Kalpakian**—«Transfiguration of our Lord Jesus Christ» (sermon), 10-th July 1994 (pp. 27—29).

FROM THE LUMINOUS PAGES OF THE PAST

14. **Father Vasken Galestian**—Bishop Khosrov Andzevatzy (study). It is given also the admonition of Bishop Khosrov Andzevatzy (900—963 A. D.) addressed to the armenian clergyman, the original in grabar and the traslation in modern armenian language (pp. 30—50).

FROM THE HOLY SCRIPTURES

15. Sections from the Holy Bible (the prophecy of Daniel) (pp. 51—56).

HISTORICAL AND PHILOLOGICAL

16. **Hovig Hayrabedian**—The book of rites of Vagharshabad (study)—(pp. 57—67).
17. **Balabek Melian**—The constructor Hovhannes (study)—(pp. 58—74).
18. **Manook Manookian**—The canticles of popular good news (study)—(pp. 75—83).
19. **Azad Bozoyan**—The Christian Orient: introduction of study of languages and bibliographies (study)—(pp. 84—90).
20. **Henrik Kharadian**—Mekertitch and Alexander Djaghetians: constructors of Ghazakh's Holy Vardaniantz church (study)—(pp. 91—97).
21. **Nubar Der-Mikaelian**—The Armenian colony of Egypt in the X—XII centuries and the Armenian churches (study)—(pp. 98—109).
22. **Avedis Harootiunian**—The activity of the armenian emigrant committees during the first World War (study)—(pp. 110—123).

„ETCHMIADZINE“

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE

(JUIN-JUILLET) 1994)

1. **Editorial:** La fête de la Pentecote (pp. 3--4).

2. Communiqué du 10 juin 1994 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant le retour de Paris de Sa Sainteté Vasken Ier à Saint-Etchmiadzine (p. 5).

3. Communiqué du 14 juin 1994 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine où Sa Sainteté exprime ses remerciements à toutes les personnes qui l'ont soigné avec sollicitude à Paris durant sa maladie (p. 6).

4. Encyclique No. 2023 de Sa Sainteté Vasken Ier publiée le 28 janvier 1994 à l'occasion du 80e anniversaire des activités ecclésiastiques de M. Alex Manoukian, président d'honneur à vie de l'Union Générale Arménienne de Bienfaisance (pp. 7—8).

5. Cérémonie de clôture de l'année scolaire 1993—1994 au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine (Texte de l'allocution de l'archevêque Nersès Bozabalian, recteur du séminaire, prononcée à cette occasion (26 mai 1994)—(pp. 9—11).

6. **M. Vartanian**—Collation du grade de docteur majeur en théologie (pp. 12—14).

7. Collation du grade de docteur particulier en théologie et du pouvoir de porter la crosse (23 juin 1994)—(p. 15).

8. Biographie du Père Arakel Karamian (p. 16).

9. Biographie du Père Thadévos Zirékian (p. 17).

10. Nouvelles du diocèse des Arméniens de Géorgie (p. 18—20).

11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois juin—juillet 1994 (pp. 21—23).

12. **Archevêque Nersès Bozabalian**—«Etchmiadzine, source d'inspiration et du patriotisme» (sermon)—(5 juin 1994)—(pp. 24—26).

13. **Archevêque Voskan Kalpakian**—Transfiguration de notre Seigneur Jésus-Christ (sermon)—(10 juillet 1994)—(pp. 27—29).

14. **Diacre Vasken Galstian**—Evêque Khosrov Andzévatsi (étude). Texte des conseils de l'évêque Khosrov Andzévatsi (900—963) adressés au clergé arménien (texte original en arménien classique avec la traduction en arménien moderne)—(pp. 30—50).

15. Extraits de la Sainte Bible (prophétie de Daniel)—(pp. 51—56).

16. **Hovik Haïrapétian**—Le rituel de Vagharchapat (étude)—(pp. 57—67).

17. **Balabek Mélien**—Jean le Constructeur (étude)—(pp. 68—74).

18. **Manouk Manoukian**—Les mélodies des chants populaires consacrés à la fête de l'Annonciation (étude)—(pp. 75—83).

19. **Azat Bozoyan**—L'Orient chrétien: introduction à l'étude des langues et des bibliographies (étude)—(pp. 84—90).

20. **Henrik Kharatian**—Mekertitch et Alexandre Djaghétian, constructeurs de l'église Saint Vartan à Ghazakh (étude)—(pp. 91--97).

21. **Nubar Der-Mikaélian**—La colonie armenienne d'Egipte aux Xe—XIIe ciècles et ies églises arméniennes (étude)—(pp. 98—109).

22. **Avétis Haroutounian**—L'activité du comité des émigres arméniens au cours de la première querre mondiale (étude)—(pp. 110—123).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հոգեգալուստ 3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Հաղորդագրություն 5
Հաղորդագրություն 6
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս պատվո նախագահ Ալեք Մանուկյանի եկեղեցական գործունեության 80-ամյակի առթիվ 7
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 9
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Ծայրագույն վարդապետական աստիճանի տվչություն . . 12
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն . . . 15
Տ. Առաքել վարդապետ Քարամյան 16
Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանց 17
Վիրահայոց թեմում 18

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական բեմ. լուրեր 21

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—«Էջմիածին՝ աղբյուր ներշնչանքի և հայրենասիրության» 24
ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՓԱՔՅԱՆ—«Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» 27

ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷՋԵՐԻՑ

ՎԱՉԳԵՆ ՍՐԿ. ԳԱԼՍՏՅԱՆ—Խոսրով եպիսկոպոս Անձևացի 30
Բանք երանելոյն Խոսրովայ առ վասն եկեղեցականաց՝ «Զարհուրեցարուք բարեկեցիկք, տրտմեցարուք յանձնապաստանքդ, մերկեցարուք, կողոպտեցարուք, քրձազգեստք եղերուք» (Ես. ԼԲ 11) 38

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻՑ

Դանիէլի Մարգարէութիւնը 51

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ—Վաղարշապատի Մաշտոցը 57
ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ—Հովհաննես շինարարը 68
ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ—Ժողովրդական ավետիսների մեղեդիները . . . 75

ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆ—Քրիստոնյա Արևելք՝ լեզուների և մատենագիտությունների ուսումնասիրության ներածություն 84
ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ—Մկրտիչ և Ալեքսանդր Ջաղեթյանները՝ Ղազախի Սուրբ Վարդանանց եկեղեցու կառուցողներ 91
ՆՈՒՐԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Եգիպտահայ գաղութը Ժ—ԺԲ դարերում և հայկական եկեղեցիները 98
ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Հայ գաղթականական կոմիտեների գործունեությունն առաջին աշխարհամարտի տարիներին 110
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 124
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 126
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 128

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 17.05.1994 թ.: Ստորագրված է տպագրության 03.07.1994 թ.:
Տպագրական 8 մամուլ, թուղթ 70×108¹/₁₆, պատվեր 188:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան